

Nerasxarh

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Indra (1875-1921). Nerasxarh. 1906.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

ԻՆՏՐԱ

ԱՄԵՐԻԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՅՈՒԳՐԱԿՈՒԹՅԱՆ Ս. ՄԱՏԻՍՅԱՆԻ

1906

ՆԵՐԱՇԽԱՐՀ

Ի Ն Տ Ր Ա

Ն Ե Ր Ա Շ Խ Ա Ր Հ



Կ. ԳՈԼԻՍ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ, Ց. ՄԱՏԹԻՈՍԵԱՆ

1906



2008-124379

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՅ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինաներըստ եօզուշու, Կ. Պոլիս

معارف نظارت جلیله سنک ۳ ذی الحجہ ۳۲۳ و ۱۶ کانون ثانی ۳۲۱
تاریخی و ۴۶۷ نومرولی رخصتنامه سیه طبع اولمشدر

Առ ձեռնապայծառ խնացականութիւնը .

ՌԵԹԵՈՍ Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կռահր

Մտազիւն զգացուած, անկախօրէն խորհրդածուած շարժանի,
եւ անայրայր հիացման

Իր նախկին սանկն

Ի Ն Տ Ր Ա



Ն Ա Խ Ա Բ Ա Ն Ք

—

Ա.

Ն Ա Մ Ա Կ Ա Ռ Ի Ն Տ Ր Ա

—

Արեւիկա իմ Ինտրա,

Սր մը, երբ յայց ելած էի թաղային այն դպրոցին ուր դու
ուսանող էիր այն ատեն, դեռ չաշակերտած Պէրպէրեան վար-
ժարանին, լուսալի աչքերով աշխոյժ բայց արդէն խոհուն պա-
տանեկիկ մը, չարածճի հարցափորձող ժպիտով մ'ինձ ներկա-
յոցուցիր բառահանելուկ մը զոր դու յօրինէր էիր և զոր աղայի
միամտութեանդ մէջ կնճռալի անլոյծ հանգոյց մը կը կար-
ծէիր, որուն դէմ կը յուսայիր թերևս որ ի զուր պիտի ոգորէր
իմ վարժապետի պարզ խելքս ու դուն անոր անանկութիւնը
տեսնելով պիտի հրճուէիր, այդ հրճուանքին նախազգացմամբն
ալ աչքերդ արդէն կայծկլտուն: Բայց բառահանելուն ըստ
ինքեան ա'յնքան թափանցիկ ու դիւրին էր որ առաջին ընթերց-
մամբ կարելի եղաւ ինձ լուծել զայն: Թերևս, որքան ի սկզբան
տղայօրէն անվստահ մտաւոր զօրութեանս վրայ, նոյնքան ու
նոյնպէս ալ յեղակարծ մեծ զարմանք մ'զգացիր խելքիս պայ-
ծառատեանութեան վրայ որ ա'յնքան շուտ կը թափանցէր գաղտ-
նիքի մը զոր շատ խորը ծածկած ըլլալ կը խորհէիր, և կը կար-
ծեմ թէ այդ վայրկեանի մանկային տպաւորութիւնդ, անջինջ
Քնացած, — ա'յնքան ուժգին են առաջին տպաւորութիւնները—
իր բաժինը ունի այն «Մեծ ապայծառ իմացականութիւն» տիտ-
ղոսին մէջ որով զիս կը բարձրացնես՝ դերազանց պատիւն ընե-
լով ինձ միանգամայն ինձ ձօնելու ներաշխարհի: Այն օրէն
ի վեր քանի'ցս մեր իմացականութիւնք իրարու ընդխառնուե-
ցան, աշակերտութեանդ բովանդակ շրջանին մէջ ու անկէ

ետքն ալ երբ, ա՛լ մտքի բարեկամներ, յաճախ կը պատասխինք
 իրարու և մեր տեսութիւնները կը փոխանակենք մարդկային
 միտքը զբաղեցնող այլապան խնդիրներու վրայ, ու քանիցս այ
 շօշափեցիր անշուշտ ամպերն որք այլ և այլ կէտերու վրայ
 մտքիս տեսողութիւնը կը մթազնէին, և սակայն անվթար պա-
 հած պարտիս ըլլալ քու մէջդ գոյացած մանկային հաւատքը,
 Բայց ես կ'ամչնամ այդ վերագիրէն. աւա՛ղ, նոյն իսկ ո՞ր
 մարդկային միտք պիտի յաւակնէր այդ մեծապայծառ լուսոյն,
 երբ իր բնութեամբն ինքնին ա՛յնքան սահմանաւոր է մարդուն
 միտքը, երբ դարերէ ի վեր իրերու սկիզբն ու վախճանը այնքան
 յամաւորէն կը խուսափին մարդկային իմացականութեան ան-
 խոնջ հետամաուսթենէն, երբ գոյութեան, նիւթին, կեանքին
 ու գիտակցութեան յարուցած խնդիրներուն շուրջը ա՛յնքան
 մութ կը բարձրանայ: Այդ վերագիրին վրայ հիմայ դու իսկ
 պիտի տարակուսիս, երբ խոտաովանիմ՝ քեզ թէ «մեծապայ-
 ծառ» իմացականութիւնս անկարող եղած է գիրքիդ բոլոր
 էջերուն իմաստին լիովին ու յատակօրէն թափանցելու: Եւ
 տեր, որ պիտի կարգան քու գիրքդ և մի և նոյն մթարներուն
 պիտի հանդիպին, պիտի ըսեն գուցէ թէ քու միտքդ է որ լու-
 սաւոր չբմբռներ գաղափարները կամ խրթնութիւնը պիտի վե-
 րագրեն գրելու արուեստի թերութիւն մը. սակայն ես կ'զգու-
 շանամ այդպիսի գահավէժ դատումէ, մանաւանդ երբ դմայ-
 լանօք կը տեսնեմ բացատրելու կարողութեանդ ճոխութիւնը:
 Ո՛րքան դժուար է հոգիի մը ուրիշ հոգիի մը մէջ թափանցել,
 հետազօտել տեսնել անոր ամէն ծայքերն ու այքերը, զգայու-
 և խորհելու ամէն ուղղութիւններն իմանայ, անոր գիտակցու-
 թեան և ենթ գիտակցութեան բոլոր խաւերը պրպտել վերլու-
 ծել: Ո՞վ կրնայ գիտնայ թէ հոգի մը ի՞նչ բան շայկած կը
 բերէ առհաւութենէ, ի՞նչ ներքին զգացումներու շարքեր ապ-
 բաժ և ի՞նչ զանխույ մասածումներու փուլերէ անցած է,
 կեանքն ու աշխարհը և ընկերութիւնը նրբազան տպաւորու-
 թեանց ի՞նչ հոտանքներ անցուցած են իր մէջէն և իր յատա-
 կին վրայ զգայութիւններու և տեսիլներու ի՞նչ մրուր ու աւազ
 նստեցուցած: Եւ սակայն ասոնք բոլոր կը կազմեն նկարագիրը
 հոգւոյն, անոր խոհքին, անոր զգացման, անոր խօսքին իրենց
 յատուկ տարազը կուտան, և այդ տարազը կատարելապէս ըմ-
 բռնելու համար հարկ էր այդ բոլոր ներքին ու թաքուն հոգե-
 բանական իրողութեանց իրազեկ ըլլայ, ինչ որ անկարելի է

գրեթէ ։ Ահա ինչո՛ւ համար, հաստատելով առաջին անգամէն թէ գիրքդ մթութիւններ ունի իմ մտքիս համար և պիտի ունենայ հաւանօրէն նաև ուրիշներու մտքին համար, չեմ համարձակիր սակայն զայն պակասութիւն մը համարիլ քեզ, գիտնալով գերզգայուն ու թրթռուն սիրտդ և՛ ճանչնալով ինքնայատուկ նրբութիւններն իմացականութեանդ ։ Աերացումներու, համագրութեանց մեծ սիրահար, հակամէտ ես լայն ընդհանրացումներու մէջ ձուլելու խառնելու մասնաւոր իրողութիւններն ու երեւոյթները, և աստի՛ յաճախ հետախաղաղ խուսափումը հաստատուն դեմնին քու ստքերուդ տակ ու տարտամին մէջ անհետացումը մտածութեանդ ։ Համաստուածեան հակումները որովք խմորուած ես, իրերն ու էակները միակ էութեան մ'եղանակաւորումներն ու այլակերպ ձևաւորութիւնները խորհելու արամագրութիւնդ տեսութեանդ առջև իրար կը շփոթեն շնչաւորն ու անշունչը, երկնայինն ու երկրայինը, մեծն ու փոքրը, հանճաբն ու յիմարութիւնը, ու, աստուածացեալ տիեզերքին պատկերներուն առջև խանդավառ, երևակայութիւնդ կ'ելեւէջէ արագ նիւթէն հողիին, հողիէն ի նիւթն, իր յափշտակութեանցը մէջ ամէն ինչ սղեոր ու մտածուն զգալով, ամենայնի հետ սգեխառնուելով, համայնին մէջ մխրճելով սուղուելով, անհուն ոլորտին մէջ թալացեալ հե ի հե ճախրելով, վերացման անօր անգայտ մարդերուն մէջ կորսուելով ։ Աւ ա՛լ բազմայօդ օղակաւորումներով երկարածգուած ու մանրամասնուած պարբերութիւններու շարքեր են անվերջ, որոց իմաստներուն շատ անգամ տածանագին է հետևիլ, բայց որոց կոհակաշարժ մակընթացութեան վրայ հաճելի է օրօրուիլ, բառերուն վէտ վէտ փայփլումէն ու գեղասիրտ և ներգաշնակ ոլորումներէն գիւթուած ։

Ինչ որ ալ ըսուի, քու մէջդ բանաստեղծ մը կայ, Ինարս, նուրբ զգայութիւններով ու վեհ խոյանքով բանաստեղծ մը, ու երկդ՝ թէ և արձակ՝ ամբողջ քերթուած մ'է գեղեցկին, վսեմին, յոյսին, սիրոյն, անհունին, Աստուծոյ նուիրուած ։ Այս գաղափարներուն, այս բմբունումներուն և անանց խորհրդանշաններուն առջև հողիդ համակ թրթռում, հեք, բորբոք, հրրճուանք, երազ, սարսուռ ու ե՛րգ է ։ Թածալանջ Ան-Մովը ու կապոյտ երկնակամարը իրենց անձիր տարածութեամբ անասմանութեան տեսիլսմն գքեզ կը գինովցնեն, վարդ-շուշան աւաւօտները և սասուրտ երեկոյները ծունկի կը դնեն գքեզ

այգին ու վերջալուսին շքեղութիւններուն առջև. բազմաժխոր քաղաքը ուր ընկերային կեանքը կ'եռուզեալայ իր կիրքերու և պէտքերու պայքարովը և ամայեաց անմարդաձայն առանձնութիւնը ուր և'ս որոշ կ'աւնկնդրէ մարդ Աստուծոյ ձայնին՝ հաւատարապէս կը հրապուրեն գթեզ ու յոյզ ու խոհ կուտան քեզի, և Նուենագ չէ՛ այն քեզ համար ինչ որ կինն է սովորական մարդուն համար. մարմնացեալ խորհուրդ մը կը տեսնես դու անոր մէջ, սիրոյ սգին որ նիւթը կ'աննիւթացնէ և իր հպման ենթարկուած էակին թևեր կ'ընծայէ իրեն հետ յանհունութիւն թռչելու համար: Առ նա վերջին երգդ սիրոյ նորախանդ «Նրգ երգոց» մ'է, իր արատքին զգայականութեան տակ ա՛յնքան աւելի նրբացած որքան Սողամնէն ցայսօր սիրոյ զգացումը սրբացած է մարդկային հոգւոյն մէջ: Աւ քերթողին կը միանայ քու մէջդ նկարիչն ալ, որով և քնարիդ՝ վրձին մը որ այնքան գունազեղ ու բնատապ կ'երփներփնէ առարկայից ու տեսարանաց պատկերները զոր գրիչդ կը գծէ: Թէօֆիլ կոթիէին պէս՝ նկարչութեան բնաձիր հակումներդ զոհած գրականութեան անձնուէր մնայու համար, այդ հակումներդ իրեններուն նման սակայն գրական արատգրութեանցդ մէջ իրենց դերը կը պահեն՝ տեսութեանդ աւելի նրբութիւն ու ճշգրութիւն ապրով, ձևերու՝ գիրքերու և գոյներու ըմբռնումը և բացատրութիւնը կատարելագործելով և ընդհանրապէս նկարչական հանգամանք մը դրոշմելով սճիդ: Ահա ինչո՛ւ համար բոլոր պատկերներդ ա՛յնքան գեղեցիկ են Վերանգներու պէտպիսութեամբ և մանրամասնութեանց ճոխութեամբ. — Աւ-Ծովին վայրենատեսի պատկերը, իր անորոշ տարտամացած հեռաւորութիւններուն, իր մութ ծփանքներուն, իր խորհրդուամուտք վհերուն, աւաղած իր եզերաց փրփուրի ժանեակներուն, մտաւոր մոյրիներու և հեռաւոր լեռներու թանձր ու հսկայական պարիսպներուն մէջ նկարուած, վսեմին զգայութիւնը առւող ճարտարարուեստ կտաւ մ'է, և դեռ անոր քով կրնան գալ շարուիլ նկարագիրները յուսափառ այգերու և ծիրանեվառ արևամուտներու, նոճեաց ու շոճեաց հոգմակած անասուններու, եգիպտական երկնարեքձ բուրդերուն, Նեղոսէն ջուր առնելու գացող սափորարարձ պղնձի «արձանոյշ» ֆէլթահուհիներու, արեւելեան խայտարղէա հեշտոյտրա գուեհներու, և այլոց, որոց ամէնքն ալ լոյսի ու գոյնի բնագոյումնին օժտուած հոգիի մը կնիքը կը կրեն:

Գիրքդ մեծաւ մասամբ շարք մ'է արդէն պատկերներու, զոր կը ներշնչեն քեզ դեռ կարճ՝ բայց արդէն բաւական արկածայից ու տարուբեր կեանքիդ յուշքերը, որք զիրար կը ծընցնեն. սակայն յիշատակները միայն երևակայութեանդ ու սրբախիդ ցունց չեն տար, այլ իմաստասիրական խոկմունքդ կը գրգռեն անհատական և ընկերական կեանքի երևոյթներուն վրայ, ու մտօք կը սուզիս դու անոնց կազմած կնճիռներուն մէջ և քեզ չեա կը քաշես կը տանիս ընթերցողիդ միտքը : Նրբազգած սիրտ մը ու վերլուծող սուր միտք մը, որպիսի են քու կիններդ, չէին կրնար անտարբեր մնալ գոյութեան և սկիզբի ու վախճանի տանջող հարցերուն հանդէպ, և դուն, արդէն դիտեմ', մատաղ տարիքէդ կը սիրէիր խոհայից ճակատդ անոնց ծանրութեան տակ խնարհեցնել : Զգայի է մտքիդ տառապանքը հակընդդէմ գաղափարներու պայքարին տակ, դրականութեանէ յիսկապաշտութիւն, յուեռեստութեանէ ի լաւատեսութիւն իր այեկոծ աստանդումներուն մէջ : Ասկայն տիրական ուղղութիւնը մտքիդ գաղափարապաշտ կը մնայ յաւէտ, և թէև սրանեղ կենապայքարին դժնդակութեանց հարկադրած ատրնացումներուն հանդէպ, և անոնց դէմ իբրև պատասխան՝ խենդութիւնը, այ.բայր, մահը օրհնելու հակամէտ, բայց վերջապէս ու «ներէպպէս» կը մերժես յուեռեստութիւնը՝ իբրև սուտ ուրացում մը մարդուն հիմնական կենսաբաղձութեան, և ընկերային կեանքի պայմաններուն կարելի բարւոքում մը կ'երազես մարդկային խումբերուն աշխատակցութեան մի համերաշխ ու հանդարտած ձևին մէջ : Ա'օրհնես ձեռքը որ ձիւնապատ դաշտերուն սարսուռի մահաշունչ մենութեան մէջ իջեվանի տաքուկ բուխերեկը վառեր է, ու այն կէտը որ քու խուցդ է անտահման տիեզերքին մէջ և որ իր զամպարին հեղիկ լուսովը պատուհաններուդ ետեէն քեզ կը նայի ժմտագին ու աղջամղջին միջոցին մէջէն քեզ կը կանչէ մտերիմ : Ազուար ու վեհաշունչ են էջերն ուր կիրակամուտքի «Այս զուարթ » ին ու «Հայր դիժած » ին վրայ կը խորհրդածես, մանկութեան միամիտ օրերու յիշատակաց ու սուղիտ արոց գիտակցութեան խառնուրդով մը, լուսոյն բարութեանն հանդէպ Արահմանի մը սխրագին պաշտամունքով ու Քրիստոսնեայ աղօթողին մարդկային բազմազան տառապանքներու համատարած անդունդներուն վրայ գուրդուրտա թեւածող ու գիշերամերձ ստուերախառն այն պահուն «ամենայն արարածոց արարչին» ողորմու-

Թիւնք ամենուն, սղջերուն ու մեռածներուն համար պաղատող մեծ գութինն խոսվումովք հոգիք խորապզած: Մեռած հորդ ոգին «ստակալի ադա» ձեռքերուդ մէջ պահ մը շարչարուելէ յետոյ, կը հանգչի այն գիտակցութեանդ մէջ թէ կը վերապրինա ի քեզ և թէ անոր կը պարտիս դարձեալ էութեանդ լաւագոյն մասերը, և զբրոյկդ շքեղագոյն շիրիմը կ'ըլլայ հէք Գառար Զրաքեանին, որուն անհամբեր հօր արտունջները կը ցածուցանէի երբեմն, ըսելով. «Օր մը քեզ համար լաւագոյն գովեալը պիտի ընեն որդւոյդ հայրը կոչելով դքեզ»:

Այսպէս կը դառնան, մագական գանազանութեամբ մը, տեսիլներն ու մտածումները էջերուդ մէջ, ու կարգացողը՝ անոնց վերնաճեմ՝ բուռն վազքէն յոգնած՝ կանգ առնուլ ալ ուզէ, չէ՛ կարող սակայն՝ ամէն վայրկեան դրչից տակ ծնող անակնկալներէն հրապուրուած: Խորհուրդի ու պատկերացման սկզբնատիպ հանգամանաց բով՝ սկզբնատիպ է լեզուն զոր կը գործածես, զոր կ'ստեղծես պիտի ըսէի, ա՛յնքան նորութիւններ կան անոր մէջ, ա՛յնքան նորակերտ վերացեալ բառեր, ա՛յնքան նորօրինակ բարդումներ: Անկեղծօրէն պիտի ըսեմ՝ սակայն թէ ինձ, որ պահպանողական մ'եմ, հաճելի չեն այդ նորարանութիւնք, թէ կ'ուզէի յարգուած տեսնել երիտասարդ գրչի ամենէն մեծ յանդգնութեանց մէջ՝ ալ մեր լեզուին հնաւանդ հիմնական յատկութիւնները, և թէ արդէն գաղափարի ծայրայեղ անօրացումներէն ոչ շատ դո՛հ՝ դժգոհ պիտի ըլլայի անոնց յայտարար փոտած աղիկ բացաարութիւններէ: Յօրինած կարգ մը բարդութիւններդ, կեղծաւ ին (կեղծ-ծամ) տիպին վրայ, շինծու բառ մը զոր չեն ճանչնար Հայկազեան և Աստուծոն Բառարանները: Հայ լեզուի ոգւոյն սրշապէս կը հակասակին, ինչպէս՝ ժանսարերֆ, յոյսուլերոս, ժախրապոյր, սիսանուազայիկ, հրեշտակերպ, արձանոյշ, ծածկայուն և յն: Հայ լեզուն կ'ըսէ՝ մսասանց, ճարսարուես, մարդադաւ, յուսափիւռ, հրեշտակապոկ, առոգագաւակ, մեծածախ, գերերջանիկ և լն, և ո՛չ թէ մսանց, ճարսարուես, մարդաւ, յուսփիւռ և յն: Տարօրինակ են նաև բաւնցնող, ըսքադդող, սրացառկախ, քիհոճոյր, հիւլիհուսել, հիասոսկուլի պէս բառերը, որոց իմաստը հարազատագոյն կերպով կրնար բացատրուիլ մէկէ աւելի բառերու անթերաց բութեամբ: Ահաւանական ազատութիւնք շատ զգուշայի բան է, եթէ ոչ կրնայ լեզուական անիշխանութեան, որով և քայքայ-

ման առաջնորդել : Ա՛րքան կը փափաքէի որ գրելու ա՛յնքանի ձիրքերովդ լեզուին դասական հեղինակներուն մէջ գերք մը գրուելու փառասիրութիւնն ունենայիր, ինչ որ անկարելի չէ յուսայ քեզմէ, մանաւանդ երիտասարդ աւելնիդ հանդարտացումէն :

Ահա ասիկ, սիրելի Կնարա, իմ՝ գնահատումներս քու դորձիդ վրայ, որ ա՛յնքան ընտիր յատկութիւնները ի վեր կը բերէ մտքիդ ու սրտիդ, և որ ա՛յնքան խոսամենայից է, մանաւանդ երբ ի նկատ առնուի թէ ինչ որ կրնայ թերութիւն համարուիլ անոր մէջ՝ յատկութեանց առաւելագանցում մ'է յաւէտ և շափատէր ժաւկալ ճաշակի մը խոտապահանջութեանց ենթարկուած՝ պիտի փոխուի իրական գեղեցկութեան : Զօնիդ համար, որ պատուարեր և յուզիչ է ինձ, շնորհակալ եմ քեզ սրտադին, և գրական յուսափայլ առղանդիդ կը մաղթեմ պատկուիլ շքեղագոյն դափնիներով :

Քոյդ

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

7 Սեպտեմբեր 1905

Իւսկիւտար

Առ տաղանդաշատ Գրագէտ-Ուսուցիչն
Ազնիւ Տ. Էֆ. Զ.

Իւսկիւտար



Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

Այս գիրքը գրուել սկսած է 1898 ին և աւարտած՝ 1900 ին։
 Գրքին նիւթերը առնուած են գլխաւորաբար՝ հեղինակին երի-
 տասարդութեան այն փոքր մասէն որ 1894 էն մինչև 1899 կը
 տևէ, և որուն մէջ հեղինակը ունեցած է քիչ շատ վիպային
 ու զգացումներով հոծ կեանք մը։ Հետեւաբար այս երկին թե-
 րութեանց մէկ մասը վերագրելի է հեղինակին այն տարիքին
 ուր իր գրքին նիւթերն զգաց և ի գիր առաւ զանոնք։ Այդ թե-
 րութիւնք ըլլան լեզուական յանգգնութիւններ, մերթ անտեղի
 և կանոնազանց, բացասութեանց խրթնութիւններ, տպաւո-
 րութեանց չափազանցութիւնք, իմաստասիրական անորոշու-
 թիւններ, և այլն, կարելի է զանոնք բղխեցնել այն պարագայէն
 թէ հեղինակը իր ներքին վիճակներուն սասակութենէն հար-
 կագրուած է հաւատարիմ՝ մնայ անոնց, և ոչ միայն անոնց
 իսկութիւնը որտայայտել՝ այլ նաև անոնց գոյացման, երևման
 ձևը. թէ պարզապէս քիչ մը շփացուցած է այդ վիճակները.
 Ինչ որ եթէ խորհի կուտայ գրողին անկեղծութեանը՝ բայց
 կ'ենթադրէ նաև անկեղծութեան յասկութիւնները խաթա-
 րող անհամբերութիւն մը, և մանաւանդ եսականութիւն մը որ
 անկեղծութիւնը անհանդուրժելի կ'ընէ։ Այնպիսի ժամա-
 նակին առաքելի են նաև հեղինակին ինչ ինչ գաղափարները,
 որոնք յաչս անոր շունին այլևս այն երբեմնի կշիւը լզոր վերա-
 գրած էր անոնց. թերևս նոյն բանը պէտք է մտածել նաև ոճին
 համար, քանի որ ոճն այլ կրնայ պարագայական վիճակներու,
 առժամեայ գաղափարաց արդիւնք ըլլայ, քանի որ ոճն այլ
 գաղափար մ'է։ Բայց ինչ որ, վստահօրէն խօսելով, այս գրքին
 մէջ համեմատաբար հասարակաց է հեղինակին ներկային՝ ան-
 տարակոյս գաղափարները չեն անպատճառ, քանի որ անոնք
 նորանոր հանգամանքներէ կ'ազգուին, նորանոր ծանօթութիւն-
 ներով կը սրբագրուին, կը փոխուին, ու կրնան ջնջուիլ. այլ՝
 հոգեկան խառնուածքը. ընդհանուր արամագրութիւնները.

գլխաւոր ճաշակները . սպին . ինչ որ վերջապէս կը կազմէ մարդկային զանազանութիւն մը . վասն զի ստոնք նաւազ կ'այլլային : Այս պատճառաւ է որ կարելի է այսօր հրատարակու մը 5-6 տարի առաջ գրուած երիտասարդական երկի մը՝ որուն ինչ ինչ երևոյթներուն՝ հեղինակը նայի այլևս ո՛րքն ակնարկով որով պիտի նայէր՝ պատշաճագոյններու համար այժմ լքուած հնաւուրց իրերու զոր իր կենաց մէջ առաջին անգամ գործածած ըլլար, և զոր անցելոյն խոստովանութիւնը և թերևս հին բնատնութիւնն ալ կ'արգելէն հիմա ջնջել : — Բայց թէ իր թերութեանց առջև հեղինակին պատճառարանող գիտակցութիւնը բաւական գրաւական մը կրնա՞յ ըլլալ յետագայ երկերու լաւութեան՝ Բնորոտ վատահ չէ այդ մասին . թերևս ինչ որ ինքը տարիքի մը վերագրելով ժամանակաւոր կը կարծէ՝ տեական ըլլայ, վերաբերած ըլլալով խառնուածքին ու նկարագրին . կամ միւս կողմէ՝ գուցէ այդ պակասութեանց բարձումը կարելի ըլլայ ինչ ինչ յասկութեանց նաւազմամբ . . . : Այս կէտերը կը ճշգուհին բոլորովին՝ Բնորոտի գրելէ դադրելովը միայն, կամ անոր մահուամբը զոր ինքը ամէն բանէ աւելի կը տենչայ, ո՛րքնան՝ արդէն մահուան հետաքրքիր՝ միանգամայն կը բաղձայ ճիշդ դատուիլ, և պէտք ունի սիրուելու :





Ն Ե Ր Ա Շ Խ Ա Ր Հ

ՆՈՎԻՆ ձայնն է. նոճիներուն խորունկ գիշերուան հովին ձայնը: Գոց պատուհանին ետև, լամբարիս կէս գիշերուան լոյսին հետ որ անխլիրա կը վառի հովին մեծ շշուռնջին մէջ, մենաւոր ու անշարժ կ'երազեմ իր բոցին յաւած, ծխախոտի եղկածուփ շղարչներուն մէջէն որ զայն կը պարուրեն, իր լուսեղէն սոպակին ի վեր կը յածին, օրօրուն, մենութեանս ճրագին մեղանուշ բարութեանը մէջ ցնդելու: Քնացող սունին խորքերը ձայն չի կայ: Վարագոյրներուն ծալքերը սարտամօրէն կը ծփան: Բնականոն (norm.) հիքութեան մը խաղաղութեան մէջ, բնականոն ու հանդարտ վիշտի յայտակերպումներուն մէջ (manif.) իրերուն ու կահերուն, սենեակին բնակչին անաշխարհայնութիւնը, խոկուն, անոնց զանազանութեանց ետև աղօտապէս միացած և անսահման զրկանքի մը մէջ հեռացած անշրջագծուած երանական համադրոյթի մը կը

ձգտի : Կիսապրիաներու քանի մը սասեր , լեռի պտերներու խառն , ցամաք անօթի մը մէջ գօս , անսարսուտ կը սցուին , ու սրմին վրայ ցրուած իրենց խօլածե ստուերն ա՛լ անհնար հողմածփում մը կը քնարերգէ , լոին : Կազամարս , բերանաբայ , կը շանայ լամբարէն որ անոր խաւարը կը քաղցրայնէ հիրային կայծով մը : Գիրքեր , գոց . երինասի բրածոյ մը իր դարերու անհաւատալի կծիկը գմբեթեր է գիմայս , գրասեղանիս ծայրը պալարուած : Պատերուն վրայ քանի մը լուսանկարներ , ցանցառ . կարմրածաւի շոր սասի մը վրայ անցում՝ հեռաւոր վարդապետի մը կենդանադիրը կայ : Անդին , մէկը մեռած Ադամեանն է , Համլէթի դերին մէջ : Միւսը՝ մեռած հայրս . . . :

Վարինը Բեփրէն բուրգն է . և Սփինքսը : Յետոյ ուրիշ իրեր . . . — Ինչ ձայն . խորունկ շշուռք հեռուներէն կուգայ , կուգայ , յորդ , հոծ , դժնդակ , հզօր . յանկարծ տարօրէն . մինչդեռ իր աղեկտուր ահագնութենէն կը խայտամ , երջանիկ : Ահ , հողմակոծ գիշերը :

Շնագայլի փոստս ցրուած է բազմոցին վրայ . ցուկը կարկառուն . ականջները ցից . կոյր , տափակ , կորսուած : Բուրար նոճիներուն մէջ կազկանձիւններ կը լսուին . մեռած շնագայլին ականջներն իր ընկերներուն հաջիւնը կը լսեն ճարձատու ճիւղերուն վայրի հեծիւնին մէջ . խեղճ անասուն . հանդարտօրէն պառկէ մեռելութեանդ յաւիտենութիւնը . սենեակիս իտէապաշտութիւնը , — վայրենի արձակութեանդ դամբարան — , կորսընցուցած որջիդ ստորերկրութեամբը լեցուն գերաշխարհային վիճակ մըն է , անհուն հողմակոծ գիշերին մէջ տարուած :

Յետոյ տակաւին ուրիշ բաներ ալ, որոնք խմս են, անասնման քաղցր սարկութեամբ մը խմս են: Ճամբորդութեան մախաղիկս, պարապ, փոշոտ, կախուած է պատէն. ճամբորդութեան մախանդ: Ի ուրսը զմայլելի արհաւիրքն է գիշերտան հովին. ս'ւր են անձանօթ ապաղերներն ամայի ժեռափունքներու, անձանօթ ալիքները ս'ւր են: Յայտող ցրցքնուող փրփուրներու աղին տեղ՝ աւատտաղին փոշին պատեր է մախաղը: Կը յիշեմ . . . անա կը զգամ իր կաշիին հոտը. — անցած կորսուած հաճոյքը կաշեհոտ խատամբեր մենութեան մը, տարտամօրէն ու երանաւետօրէն անասնային, մեծ՝ երկրային՝ տիեզերական ծննդավայրին տեսիլներուն մէջ ազատ ընդհանրացման մը պայծառութեամբը լեցուն հաճոյքը:

Բայց, ահ, իրաւ. ի՛նչպէս ջէի դիտեր: Մութ պատուհանին ապակիին մէջ՝ գիշերին վրայ բացուած վարագոյրներուն միջև՝ կողմնակի լուսաւորուած ստուեր մը կայ. — իմ ցոլքս է. ես եմ. ես է. ի՛նչ զուարճութիւն, եթէ ո՛չ տրտմութիւն: Նոճեղէն խաւարին մէջ աղօտագծուած Եան է: Մարմինիս պէս կը դիտեմ զինքը, որ իմ աննիւթացումս, իմ խտէական էութիւնս կը թուի. իսկութեանս մէկ արտաքնուամբ: Իր գիծերուն ճրկուն ու զուսպ խաղին սառչումը կը միանձնացնէ գայն մութ զգեստներուն տարտամ սուգին մէջ որ անորոշապէս կ'էլախառնուի անճրպետին մրրկալի սեւութեան, և ուրիշ կը պապիրանայ կողմնահակ գլխուն ռամպրանկարը, տմոյն, իր տեսլային անգայտութիւնը նոճիներուն գիշերովը թափանցուած:

Իբր իմ մարմինս՝ ես՝ վայրկեանս մը անոր բուլոր իսկանուշութեանն ինձմէ՛ կախմանը կ'արդահա-

տիմ . ինձի հետ իր ունեցած բացարձակ , բացարձակ յարնչութեանը կը ցաւիմ . ինչպէս մի՛շտ , ինչպէս մշանջնեապէս պիտի մեղքնամ կուտական հողեղինութիւնս , մարմինիս համբիշտ , աղախին : Եւ այս արգահատանքը՝ գուցէ անո՛ր համար նաև որ յիմարարար կը տենչամ պատկերին կամայն ա-նէութեանը , անոր գեր .ութեան վիճակին , որ տենչացած նպատակած բոլոր վիճակներուս մէջ կ'անդրանկարուի , իտէպի մը պէս , — վասն զի խուցիս գիշերուան առանձնութեան մէջ վերատա-ցուած ինքնութիւնս է ան , նոճիներուն մ'ջ ու-րուաւիսի . իր անօտութեան հոժմամբն ու տար-րումովը մրրկալի գիշերէն , ինչպէս երկինքին լոյ-սէն՝ գոթական հոյսպակիի օր սրբանկարը կը հոժ-ուի անդրաշխարհով :

Եւ խուցս լեցնող այս իրերէն ոչ մէկը նայ-ուածքս կրնայ տանիլ ներկային , իրականին . ա-մենքն այ տրամադին , ըզձագին խորհրդանշանում-հեր են Անեղրութեան : Երեւութապէս տարամէտ ուզղութիւններ՝ շախիզներու պէս կը մեկնին , խա-ւարածին , սատկրածուի ու լրտաչանդ շախիզնե-րու՝ որոնց չուկէան է խեղճ կտտ , ու վախճանն է Աստուած :

Հեռուներէն գիշերապահի մը մահակին հեծկը-տտ քները գիշերուան ժամը կը պատմեն . ու հո-վին մէջ կը մարմրին : Կէս գիշեր է . կէս Գիշերը . գիշերին՝ խաւարին հոյակապ համայնութիւնը : Հովր , անվերջ , անհատնում , նոճիներուն մութը գզրգելով , ալեծփելով կ'անցնի . և խառվայտիչ նո-ճիներուն խորերէն խոպտա հեծիւններ կ'ելլեն .

սարսուալի մարդկայնութեամբ մը ուրուային : Լամբարիս հանդարտ , երազմայլ բոցին կը նայիմ , գորովային վայելքով . անոր երանատէտ այրմանը , ուր երազանքն կը մխրճի , կը հանդչի՝ անորակելի սպառմամբ մը , իբրև թէ զտուէր , իսկանար հոն , ինչպէս օճախի մը ախտիանքին մէջ : — Ի՛նչպէս լամբարս , որ թշուառութիւնս կը լուսաւորէ , գիտէ զայն՝ մուսայման շլացում մը կը ճառագայթէ . զերծում և իսէա՛հանութիւնս : Ո՛վ իմ առանձնութիւնս :

Կը ճաշակեմ , կը հրճուիմ զայն . յուշքերուս , խորհրդածութեանցս , երազներուս լեռնաբուրմամբը , ծովահոտութեամբը լեցուն , իմ տարաբաղդութեամբս ու երանութիւններովս , իմ ներէական գաղջութեամբս առլի առանձնութիւնս : Մինչև լոյս , մինչև որ լաժուարիժ արշալոյսին յամբայայտ , որոշիչ հոլանումը նոճիներուն ետեւէն բարձրացած՝ ճշդէ , ծառայնէ անոնց մուայլութիւնը , և գուցէ լայ նորէն բոյոր վիշտերը՝ զանգակածայն , ազուաւաչ սկսող անժանօթ ցաւագին այսօրուան մը որու անձուկին դառնութիւնն աղօտապէս կը հեռաշնչեմ արդէն , բայց որու հեռաւորութիւնը հրճուանքով կ'զգամ դեռ , օրերէն ազատ գիշերիս մէջ որ ոչ այսօր է ոչ վաղը՝ այլ անցած ու ա՛լ չխռովող երէկի մը տեւումը . , մինչև որ արշալոյսը ծագի՝ լամբարիս լոյսին մէջ զտուող ինքնութիւնս պիտի ապրիմ , ցորեկուան կենցաղի իրերու վարակումէն , ծրդումէն զերծ , առանձնութեամբ առաքինի ինքնութիւնս , — պատուհանիս մէջ ցոլանկարուած Եսս , ցայգատեսակա՛ն ու ճիշդ , գուցէ իբր երազ մը միայն , ա՛հ , իբրև իրականութիւն մը՝ գիշերուան հովին ցնորականութեան երաժշտական անձրպետին մէջ երազացած :

Հովին հզօր իրականութիւնը կը թափանցէ
խոհալքը ուր անցած կեանքի մը անթեղուած դրո-
ւագները կ'արթննան . մտքիս մէջ յուշքեր կ'ար-
ծարծին հովէն որուն շտանջներովը լեցուն ու սար-
ուազին է անցեալս : Ա՛հ , յիշողութիւնս կը ներ-
շնչուի հովէն : Երեւակայութիւնս կը պտտի յուշ-
քերուն մէջ , սրանք կը ծրագրուին , կը լայննան ,
կը պաշարեն զիս , թօշնած պայծառութեամբ ,
ուր ներկային , ապագային անխոյժ քուն մը կը
մարմրի , ուր կենցաղէն անխոյժ կենտաւէտութեան
մը սրբութիւնը կը թրթռայ : Յուշքեր են թէ
երազներ , յղացքներ : Վասնզի անոնց մէջ թա-
քուն բարախող կենտական ընդհանրութիւնը անոնց
մասնաւոր ու ունացած տարրերուն մէջ հիւթի մը
պէս կը ծաւալի ու կը նորաստեղծէ զանոնք : Յի-
շողութեան երեւակայութիւնը կը զտէ , կը կատա-
րելագործէ , կ'ընդհանրացնէ յիշատակները . կար-
ծես միայն ապրելու անցեալ յոյզի մը , անցեալ
կեանքի մը գոհունակութեանը կը վերածէ զանոնք .
հաճոյքի վայրկեանին ու յաւի վայրկեանին հասա-
րակաց այն ինքնին հանդարտ արտիւնին որ անոնց
ընդդիմակութեան մէջ միամիտ ու խորին միութիւն
մըն է , — կեանքի զգայութիւնը , — և հակառա-
կութիւններ չկան արդէն այլ տեսակներ կամ տա-
սիճաններ , — և երազացած յիշատակներուն մէջ ,
հրճուալի թէ տխուր՝ ա՛լ կեանքի զգայութեան
ընդհանրութիւնը յիշատակներուն ձեւին մասնաւոր-
ութեանը կը վերակշռէ , Անցեալին հեռաւորու-
թեան մէջ ուր հակառակութիւններ կ'աղօտին մե-
լանուչ միատարրութով , իբրև ներկային չափերէն

զերծ Անհունին մէջ ուր ա՛լ այլազանութիւն չկայ : Բոլոր յիշատակները կեանք միայն կը պատմեն . և , ա՛ն , որքա՛ն ճիշդ պիտի ըլլար ներկայի իրողութիւններու մէջ , ցաւագին թէ երանաւէտ՝ փնտռել կեանքի զգայութիւնը միայն , փոխանակ անոնց երեւոյթներուն անձնատուր ըլլալու , բոլոր նպատակներուն մէջ դէպքերու այլազան երեւոյթին տակ համարուիող կեանքին ներշնչուել երանութեանը միայն ձգտիլ , պարագայական հաճոյքներու կամ ցաւերու անտարբեր , որովհետեւ վազանցուել են անոնք տիեզերքին ինչպէս յիշողութեան մէջ ուր անոնց յոյզը , — կենսաւէտութիւնը — միայն պիտի անմահ մնայ , և անցեալէն խալառ որբացած սիրտը անոնց ընդհանրութիւնը միայն պիտի ուզէ վերապրիլ , — անցեալ դէպքերու տարագին եղծական դիպուածայնութեան , մասնաւորութեան մէջ անհեա ընդհանրութիւնը :

Եւ ո՛չ ապաքէն ինքնութիւնս որ՝ օրէն զերծ գիշերիս մէջ վերադարձած , իր ընդհանրացած , կենսացած յուշքերը կը գտնէ իբր իր կազմիչ տարրերը , հովին անհատնում շշնջիւնին մէջ , ո՛չ ապաքէն իմ ինքնութիւնս ուրիշ բան չէ արդէն այլ իմ ընդհանրութի՛ւնս :

Իմ վայրի հանրէականութի՛ւնս . զոր հիմա կ'զգամ թէ ապրեր եւ լիովին տարաշխարհի ան գեղջուկ սենեակիս մէջ առաջին խանդավառ պանդրխտութեամբ մը մինակ՝ լեռնավայրի ձմրան մը մռնչիւնին մէջ կծկուած , — ներքնապէս սաւառնաթիւն :

Ա՛ն , գեղջուկ սենեակը : Փամուն թափուր

պարտէզին ներսի մէկ անկիւնն էր , խեղճուկ գրպարոցին ներքե , դեաննէն հաղիւ բարձր՝ ծերուկ , հազայող ժամկոչին խուցին կից : Դէմի անկիւնը , անկիւնապծօրէն դիմացի կողմն էր եկեղեցին : Քանի մը տերև օթափ ծառեր , լերկ , ձիւնոտ , կը ձգաձգաուէին պատերուն դէմ , անջրպետին տխուր դատարկութեանց վրայ : Շինական քաղքին մեծ ճամբան որ մտակայ ամալութիւններուն կը հանէր , պարտէզը կը քերէր իր քաղաքածայրի լուսթեամբը , լեցուն՝ սարսուռովը ձմեռնային առանձնութեանց , որոնց կ'անջատակցուէր արտում պարտէզը կքուն պատով մը , ու անոր հին դուռովը զոր ոչ ատեն , հալալով , ծերուկ ժամկոչը կ'երթար ալխելու :

Ա՛լ վայրենի գիշեր մըն էր հոն . ձիւնապատ , անմարդաձայն : Պարտէզին ճերմակ խաւարը լեցուն էր մտածմտիւր ժամուն գորշ կոյտին , որ հոն , գիշերայած մտածութիւնները կ'ամփոփէր կը տարրացրնէր , որ կը հեռաշնչէր մտախոհութիւնը մթութեան մէջ անհետ հոյարրգուած Նէպիանին հովին . — կորդերու սառնային անջրպետին մէջ երկարաձգուող ողբաձայն երազանքը շնագայլներու կաղկանձիւններուն , — հիւսիսային հեռուներէն մինչև փակ դուրս համաող աղօտ մուռնչը Աև Մովուն հսկման . , և իմ նժդեհի ու բնամարդու անբըջանքս կը ծծէր , կ'իւրացնէր , անոնց ստուերային զանգու մը , անոնց շքանդրումը կը յօրինէր , զանոնք միանգամայն կ'ըլլար , և պատուհաններու ս ցայգատեաութեան հանդէպ , ամալի պարտէզին անկիւնը կուտուած՝ գիշերին մէջ իր իսկ խորհուրդին կը վերածուէր տակաւ :

Բայց որչա՛փ քիչ ապրեցայ ես հոն , պանդխ-

տութեան առաջին սենեակին մէջ ուր ես, ինքս կը բնակէի միայն: Միտքս կուգայ իրիկուն մը, ուչ ատեն, լամբարս վառելէ ետքը դուրս ելլելս, պարտէզէն ալ դուրս, մուցած ջուրս երթալու առնելու համար մեծ ճամբուն աղբիւրէն, ուրկէ, լեյուն կուծերը ուսերնին՝ գեղջուկ աղջիկները շատոնց հեռացած էին. վերջալոյսին մենութեան մէջ աղբիւրին յարգաջուր հոսեցնելն իր անդուլ խոխոջը, կուծիս շլօշլօխո՛ւրչ լեցուիլը, և շտապով դառնալս պարտէզը, ուր մանելով ծանր դուռը գոցելս, ու սենեակս ուղղուիլս. բայց, երկու քայլ հառած՝ կանգ առնելս, պատին տակը՝ դիմացս, պարտէզին խորը նայելով. անակնկալ հիացումով մը յուզուած, ապշած. վասն զի պատուհաններս տեսեր էի, ներսի լամպարէն լուսաւորուած . . . :

Այդքան քաղցր բան էր ուրեմն անհուն աշխարհքին մէջ մէկ տեղ մը, մէկ բնակարան մը ունեցած ըլլալը: Իմ, միմիայն իմին սենեակիս գիշերուան լոյսն էր. ոսկեգոյն, վարդագոյն. իմ մենաւոր լոյսս: Եկեղեցիի շրջափակներու անհուն առանձնութեան մէջ քաշուած, իբրև անեղբրութեան մէջ ներկայ, իբրև անեղբրութենէն շնուցուած իմ գոչութիւնս: Ահ, տմոյն, ու սիրելի, նո իրական ճառագայթումը: Ի՛նչպէս տակաւին չեմ գիտեր եղեր ի՛մ երանութիւնս. և ի՛նչպէս, զայն տեսնելու, գիտնալու համար պէտք եղեր էր որ բնակարանէս դուրս ելլեմ, ու գիշերամուտին ցրտին ամայութեան մէջէն նայիմ անոր նշոյլին, որբի մը պէս, անտուն տարարազդի մը պէս: Վարդագոյն լոյսը որ երանաւէտ մեղմութեամբ կը նշուէր հոն, իմ կենսական բոցս, իմ ընտանի հոգիիս մելամաղձիկ ժպիտը կը թուէր. բնամարդկային

լաւ տեսաւ թեանս հանդարտ հիացած խաչտանքն
անհուն տիեզերքին մէջ . մենա թեանս ազատա թեանս
մէջ խաղաղած արեանս գաղջ շառայլը : Լուսաւոր
պատահաններէն նշու լոյ անպատում հանդիսար իմ
կեանքս էր :

Երբեմն , գիշերք , կրակարանին առջև կկգած
կ'երազէի . Նէպիանին հովը կ'անցնէր սառուցիկ
ամայութենէն , պատահաններս կը ձգրտային . վա-
րագոյրները դոյ կ'եղէին թեթեակի . դուռը կը
ձոնչէր . լամբարս կը քթթէր , երկնազով . ու
ճննդավայրի պատկերները նսգեհո թեանս տեսիլնե-
րու հետ մեղկօրէն խառնուած՝ պահ մը կը վարա-
նէին , կը քայքայէին , ու վերասին , երբ ապակի-
ները ձոնչելէ կը դադրէին , ու լամբարը կը սուզ-
ուէր իր երազանքին մէջ՝ մտապատկերները կը վե-
րադառնային , դանդաչոտ , խորհրդածութիւններուս
մէջ ծփանուտ . հովին հետացող մանչիւն մէջ օրօր-
ուած . կը ձեւանային , կը վերակազմուէին , կը բա-
զադրուէին , ու կ'անցնէին , անհասնում , երազուն
տեսողութենէս , գոյանաչով ու մարեչով ամենու-
րեք ուր կը յառէի . կաղին լոյսին մէջ , կրակին
վարդապոյն խտուչներուն մէջ , ուր մխրճիլը , հա-
ղեւին , այնչափ հմայական երանութիւն մը կը
թուէր . կենսական ջերմութենէս յղացուած երա-
նութիւն մը . — մերթ կը տեսնէին , առկախ , ու
կարծես ոչեւոր ու խօսուն , ծանօթ բառով մը զոր
կ'իմանայի չանկարծ , անիմաստ անջնջելի խօսքով
մը զոր նայող տեսիլը կը կրկնէր , մինչ մտախո-
հութիւնները , անօտր , անկապակից՝ անիմաստ ա-
ւրնչութիւններով շղթայացած , աննշան գիպուած-

ներս անզգայի շունչերէ քայքայող, ու խուսափուկ, կը սահէին անտոյժ հողիին մէջ, մերթ լուրջ խնայող մը յանկարծ նախադասուած, ու դէմ-յանդխմանական հիակազմութեամբ մը երեւելով, հարկադրուելով . . . և հովը, ծերպերուն մէջէն, անաղահար մենատրոփմանս կը շնջէր, կը սուլէր իր երազային ներշնչողութիւնը : Վաղընջուց սենեակիին մէջ, զոր Ն՛պիանին կնդուղին լեռնավայրի խնայականութիւնը կը լնուր, կը առգորէր՝ պանդուխտի տրամութիւնս կը տատամսէր, կ'երկրայանար, կը դադրէր գիշերայած ձայներուն խռովիչ նախնականութեանը մէջ որու այնքան հեշտութեամբ կը ձգտէր Եսիս սգին, իբրև հնէութեան յիշատակներու, աւելի խորին վերաբերմամբ քան որչափ չէր տխեղծ յողը որով կը տարուէի ծննդավայրի յուշերու քաղաքայնութեան, նուազ ներէական վայելք մը զգալով պատկերացումէն բացակայ սիրելի իրերու, քան ընդերկար տենչացուած աննզրութեան ձայներ,ն՝ որ կուգային բաղխելու բնակարանիս, ու կեանքս թափանցելու, — քան շնագայլներուն հեռալուր հաշիւներէն, ցախաստաններու խաւարամած բացաստաններէն մինչև բայձախտաւոր հնէութիւնս երկարածգուած, — քան պոնտական հովէն որու անասման հեւքին մէջ կը կծկուէի, կը մտմտայի, կարծես ծնրադրած մինչդեռ բնակարանը կը հեծէր :

Եւ քան Սեւ Մովուն հեռաւոր որտաւմէն . . . :

Եւ հովը կը դղրդէր յանկարծ ապակիները, ու կը ճարձատէին, աղիւղորմ, վարագոյրներէն տենդ մը կ'անցնէր. լամբարին պղտիկ բոցը ընդոսա կը դողդոջէր միսալով. ու դուռը իբրև ուսի անողոք յեցումէ մը կը հրուէր, կը տքար :

Տրտիւուն , կը կծկուէի , կը նայէի . մտքիս ըն-
տանի տեսիլները կը փախչէին կը կորսուէին զիս
ողողող անդրհայրենական սարսուռներուն մէջ . և
ահաւոր հովին տիրապետութենէն հրճուանքով
ճնշուած՝ մտիկ կ'ընէի անոր իբրև լեռան ձայնին ,
որուն անեզրութենային միութիւնը ծաւերուն սազ-
նապին մէջ հիւսալուծուած , ճզճզուած , սանիքին
ծերպերուն մէջ տարրազաւրուած՝ վերլուծուած՝
մենարանիս խորշումու ճգնութեանը , առաքինա-
կանութեանը կ'եւողերգէր լեռներուն ողբմղակա-
նութիւնը . ճիւղախաղաղ լեռներուն համաստուած-
եան բարոյականը :

Բայց , հովը սաստկացեր է . ճիս . ի՛նչ գու-
ղաշնակութիւն . ի՛նչպէս կ'ապրիմ :

Սրտատրտի կ'ելլեմ սարսուռն վարագոյրին
բացուածքէն վայրկեան մը նայելու : Պորունի գի-
շերին մէջ հոճիներուն մութին թանձր սատանումը
կ'ընդհնմարուի , մոլեգին : Եւ միայն իմ խուցիս
լոյսը կը հսկէ ցնորական գիշերին մէջ . անջրպետին
վիճին վրայ՝ պատուհանիս տենչայոյղ նշոյլը միայն
վառ , սեւաուն :

Ճիւղի մը ճարճատիւնը վերերէն կ'աղաղակէ ,
կը հեծէ . ծառ , ծառ հոճիներուն ամենի սուս-
ւիւնին մէջ . և բոլոր անանութիւնս կը կայտաւ ,
կ'ոստնու :

Ո՛ւր ես , Իսկ'նա : Գոց պատուհաններու գ-
ետին հիմա կը քնանաս կոր դուն , երազածուի ,
հոճիներուն խաւարակոծ երաժշտութեան մէջ : Չե՛ս
գիտեր թէ պատուհանիս անքուն լոյսը կը սուզի
հոն , թէ հոն կը բարախէ գիշերային էութիւնս :

ԻրճՔ, ջն՝ս լսեր հողիս ձայնը, արտիս ճարճա-
տիւնը սև, վեհապանձ հոճիներուն գոռումին մէջ
ուր սառեր հուրիի նիրհդ կ'օրօրուի. իմ խակու-
թեանս բնութեամբ առլի բուերգին հծծիւնը
հնձարանիդ կափկափող պատուհանիդ վրայ
ջն՝ս երազգար հիմա, ճերմակ բարձիդ մէջ հալած
աղջիկ: Փակ աչքերդ ջն՝ն ընդհնմարեր հիմա
պատուհանիդ մէջ երերուն տեսիլս որ իր նոճա-
սարսուռ բնեականութիւնը կը բերէ, բնասառուա-
ծութեամբ դողդոջուն իր ոգեկանութիւնը կը բերէ
ընծայելու անըջակոժ հոլանութեանդ:

Նիրհէ, իմ սէրս, և ցայգարչաւ մրրիկը ուր
մենապատ լոյսս կը ծփայ, ուր սիրսս իր հրայրքը
կը բաղհիւսէ, ուր հնէութեանս լուռ աղաղակը
կ'էախառնուի՝ թող բնութեանս գաղափարին հան-
գի՛սար իբր օրհնութիւն մը շշնջերգէ իմայակա-
հութեանդ:

Աս ձայնը սակայն. հոճիներուն վերթեւումին
մէջ խտեականութեան ի՛նչ ծով մը կը սանձուի:

Գո իններու վրայ մեռնող զարհուրելի կոհակ-
ներու ձայն մըն. — Սև Մովսէն ձայնն է, որու
բնասառուածային կոչը երեւակայութեանս կը բողխի,
կը բողխի, զիս իր անհունին կանչելով զայն հե-
ռարձակելով, վայրենիւածայն, իր անմուսանալի տե-
սիլին մէջ, որ սճա կ'ընդերեայ հորէն, մանկու-
թեանս անթատ սմ անուրջը, բանաստեղծի ման-
կութեանս անուրջի սնճառ մեծութեամբը:

Սրտագին բմբուշխուած, հեշտաղխառուած տե-
սիլը, գաղափարն, ուր կը նետուիմ, կը սուզիմ,
դողդղայով, ցնցուելով կ'առածգիմ՝ ապրելու,

զերապրելու համար հոն, իբրև թէ բարի մահիճս
նկատէի, անոր սարսապի պարտութան մէջ ցնորած
ճերմութեանս երանութիւնը իննդայով, թշուառ-
թիւններէն զերծ՝ քունին, երազին հեշտակենաու-
թեան զգացմամբ, անկողիններուն պարզեւած
ազատութեան գիտակցութեամբը ցնծալին: —
Աւ Մով:

Անձնը, որ մանկութեանս ինծի շեմ գիտեր
ի՞նչ վրդովող անծանօթի մը խորհրդանշանու մը կը
թուէր, և որ, գիտեմ թէ Անհունին առաջին
ըմբռնումն էր իմ պատկերամոյ տղայութեանս,
առաջին հեռագրագոյ մը տարտամօրէն այլ արդէն
հարկադրօրէն երկրպագելի Անեղրութեան: Անոր
տարածութիւններէն, անոր ալէկոծութենէն եկող
ու ծնողքիս հայրենակից ճամբորդներու ծովակէզ
զէմքերը՝ որոնց ցայտող մէկ ասանձնյատկա թիւնը
ևս կը վերագրէի ան ծովին, որոնց գիմախաղու-
թեան մէջ ինծի կը թուէր տեսնել տարտաին ու եր-
ջանկութիւնն ան ծովը տեսած, կրած, ան ծովը
գիտցած ըլլալու, — կամ վերտաին ընթերցում մը,
խանդազաստալից ու արամազին ընթերցում մը՝
Այվազովաքիին Խրիմի ափունքներուն վրայ թա-
փառկոտ պղտի տարիքին պատմութեանը՝ կը խռո-
վէին ու Աւ Մովին կը ձգտեցնէին սիրտս, որ, ահ,
չի յիշեր հիմա մեծագոյն տարտաինը մ'ունեցած
ըլլալ ան տմբութեան ասունին մէջ, սիրտս, որ
անոր հուժկու ներշնչումովը դեռ անյապ նկարչին
փառքէն կը արամէր, ու Մովուն անուանը մռայլ
խմաստէն կը շլանար: Առաջին պաշտամունքս,
առաջին եղջերուաքաղս էր ան, իմ առաջին
յուսահատութիւնս: Ի՞նչպէս կը հարցափորձէի ճամ-
բորդները, որոնք յաճախ երեւակայած զգայու-

Թիւններէս նուազ արժող տալաւ որու թիւններով կը հիացնէին զիս, իրենց աղքատ իսկ, դատարկ իսկ իրականութեանը, զգայարանականութեանը համար, ու զէթ անոր համար որ կը ցուցնէին թէ չէր սխալիւ իմ երեւակայութիւնս: Չգոհացնող բաներու զրգիւր միայն կուտային իմ երազիս, զոր չէին կրնար բնութեւն, փոթորիկէն ազատած ըլլալնուն համար միայն ժպտուն, իրենց վախին զիւցազնութեանը միայն լի. — և զոր սակայն ևս անկարող էի բացատրել իրենց, քանի որ չէի կրնար վերլուծել զայն, չէք երանաւէտ տղայ: Գիտակցութիւնս այս անշարժ ձգտումին մէջ չէր կրնար ճանչնալ մեծ թռիչք տենչանքին զէպ ի Բնութիւնն ու Միտքը, զէպ ի հանճարին սարսուռն Անհունին բարախման մէջ. յաւիտեանական տենչանքին սլացքը զէպ ի Նիւթին ու Գաղափարին ձոյլ հզոր առանձնութիւնը: Ամբաւ անունէն՝ Ան Մով՝ որ յաւէտ կոչական ձայն մ'է մաքիս մէջ, էութեանս ամենէն վերացող տարրերուն հաւաքական կոչը՝ ինչպէս Քանոփոնի զօրականներուն միահաղոյն աղաղակը Պոնտոսի բարձունքներէն՝ պիտի սարսուռազին սեւաշարիմ տակաւին: Իմ բնութեամբս Մովն ան պիտի ըլլայ միշտ. քանի որ մանկութեանս առաջին յղացումն եղաւ Մովուն: Եւ, թերեւս, ո՛չ Միջերկրականին անպատմելի շափուզան, իր եղերտքին (litt.) պատմութեան փառքին հին ոսկիովը հեռապատուած, ո՛չ Ասպաղականին . . . անո՞ւնը, ո՛չ բեւեռայգերով բոտորանչոյլ մենութիւններն Արժային Մովերուն, ո՛չ Բօէի պատմած երբեմնակի ցնորական թափանցկութիւնը Ածնտի արշիպեղագոսին, ո՛չ Մովսէսի՝ Կարմիր Մովին եզրերուն վրայ յաժուն վերակոչուող հսկայական ուրուականը, կամ Մեռ-

եալ Մովսէս թանձրածուփ ու երկնալճիտ պակաս-
ցումը՝ քառեակ քաղաքներուն կործանմանը վրայ
մշտնջենացած աստուածպաշտո թեան մը պէս, ,
և գուցէ ոչ Գալիլիոյ Մովսէս անդրաձայն մրմունջը...
պիտի նսեմացնեն անոր անուան շքեղ ստուերը՝
ա՛լ էութեանս ընդխառնուած : Մովսէ և , յաւերժա-
կան : Ինչ որ անոր երազին մէջ անդրասունչ ման-
կութիւնս կը նախազգար խռովելով՝ անդրասունչ
երկասարդութիւնս դիտէ , զգայարանօրէն , ու
Մովսէս միժնչազ վսեմութեան տարբապայրուած
մուայլ ծիածանին մէջ կ'երազէ :

Վասն զի օր մը տեսայ ես Աւ Մովր : Անյիշա-
տակ օրերէ ի վեր զայն մտմտալէ ետքը օր մը ,
Խաչ-Յունացէն վեր սրտատրոփ խոյացած՝ առաջին
անգամ տեսայ զինքը , հեռուն , հիւսիսի վճիտ հո-
րիզոնին մէջ տարածուած , երկնային եղկութեամբ .
ու սիրախ հուժկու զարկը որ սոճունեցուց զիս՝
առաջին մեծ սրտիխնս եղաւ Աստուծոյ առջև :
Բայց , խորամանկ յուշկապարիկի խաբէութիւն թէ
Նեպտոնի գորովագին խոստում . . . իմ երեւակա-
յութենէս երազուած , անըջատանդծուած իրականու-
թիւնը չէր Ալէմտաղիի տեսիլին կապոյտը . որու
երկնայնութիւնը թաւեր թէև ահեղ Մովսէս խմաս-
տին ընծայումն ըլլայ ցնորակո՞ծ ու իրեն համար
ստուապած պատանութեանս՝ ինչպէս Աստուած Ան-
հունին ընծայումն է խեղճ խնայտ'անութեան , —
բայց նաև անոր արհաւիրքին քայքայ հերքում մին
էր , որո չէի հաւտար : Ես բաղձացած չէի անոր
իրբև հեռուներէն ժպտոյ երանութեան մը :

Եւ իրօք , ուղեմ'ը այլ ևս օր մը դէպ ի Աւ

Ծով՝ նոյեմբերի անմուռանալի, ու անդարձ իրիկունս մը, գիշերամուտին, Վոսիսի վերի ժայռերուն սարսուռալի բացուած քէն մտայ անոր մրրկալի մթընշաղը, իրական ու ճիշդ, ուր շոգենաւը կը սուզուէր խելայեղ սուլիւններով իր կայմերուն մէջ. մինչդեռ հիւսիսին մէջ երկարած տմոյն փեռեկատու մը նշոյլով կ'ընդհնջմարուէր գիշերին մէջ, Ան Ծովուն հանդաշն անտահման սաւառնումը . . . :

. . . Ամպոս հողմակոծ առտու մըն էր : Ծովուն խռովայոյզ ասիունքէն մեր վաչը կը վազէր մսկոտ ու մենաւոր : Երիվարները միակերպ դովիւնով կ'ընթանային թաց հարթ աւազին վրայ՝ խորտակուող կոհակներուն սողալով սրափալով սառող փրփուրին մէջէն : Գլանաձև ծածքին . . . — որովհետեւ ո՛ւրիշ մանաւանդ կրնայ զգացուիլ Ծովը քան ծովեզրէն, քան սահմանաւոր ծովեզրին տրտում մարդկայնութենէն : Ափունքը տողորուն է Ծովուն նախապաշարումով : Կոհակին եզերագայումը Ծովուն ամբաւութեան վերաշուք ու խռովիչ հպանցքն է միայն մարդկային, ու բաղձախտային ցամաքին առջև : — Ծածքին, կ'ըսեմ, ցուրտ պատուհանէն անընդհատ կը նայէի պղտոր մրրկալի Ծովուն : Ծփանքներու միակ գոռում մը կը բարձրանար, առանձին, անվախճան :

Գէպի ձախ, հեռուն, Պոնտական լեռներուն յետին թաւաստե կատարները ձիւնախաղաղ՝ կը նկարուէին ասորամած անջրպետի մը բարձրերը, սատափէ ցնորական վիճերով որ կը պեղուէին, աւկախ, անոնց բարձանց մէջ : Վարերը, մթին ստորտաներուն վրայ, տերեւաթափ անտառներ կը դիզ-

ուէին , անձայն անտառներ , աշնային յետին շիկու-
թիւններով երազուն , գորշ լերկ ամայութիւններ
անանուն անտառներու , հեղեղատներու մէջ ընդ-
խառնուած , ցանցառ՝ տատամսոս՝ դէպ ի մերկ
մոխրագոյն դուիններուն երկայնքը , որոնց առաջ-
քէն մեր սայլը կը վազէր իր անլիրջ աւազէ ճամ-
բան , խորասկուռոյ ալիքներուն դահավէժ ժան-
եակներով ողողուն , որ անծայր ափունքէն մինչև
հեռուները կ'երկարաձգուէր , մինչև երկրայական
վայրերու մէջ անհետելու , անստոյգ երանգներու
խորը , ուր մշուշէ հրուանդաններ , — Ալիսի տա-
փաստաններու նուազուն մենութիւններն՝ իրարու
կը յետադրուէին , անօրացած , կորսուած՝ հեռու-
ներու յաւիտենական երազանքին մէջ : Եւ անսահ-
ման առանձնութեան մէջ ալէկոծ Մովը կը պօռար :
Հեռուներէն ալիքները կուգային , իրարու
ետե ուռած , մետաղափայլ ձոյլ սապատումներու
հուժկու ելեկէքով կը թաւալէին իրարու ետե . կը
բարձրանային , կը քսամնէին , ժուային ցտուն
ցցունքներով սարսուազին , և ահարկու վարանմամբ
մը կը ծռէին , ու կը փլչէին , իրարու ետե ան-
ընդհատ կը փլչէին կը կործանէին միահաղոյն պայ-
թող կատաղի ճերմակութիւններու մէջ ընկլուզ-
ուելով . ու մինչդեռ ծանծաղներու մէջ կը շկա-
հէր անդուլ իրենց որոտալիր թոպումը , ու փր-
փուրներու լայնալիճ կորանքը լուսաբորբոք կը թե-
ւէր եզրին երկայնքէն , ու խիճերուն , աւազներուն
վրայ կը խուժէր . , մինչդեռ շաւաշիւն մը , հզօր ,
անիւներուն գլգլունքն ու սմբակներուն դրոյթը
կ'ողողէր յանկարծ՝ և ընկրկող ջուրերուն լորձուն-
քին ծուատ ցրօնքը աւազին վրայ կը սառէր ,
արափուն , վանակնէ , ձիւնէ ողկուզումներով , —

ծովուն մութ որոտումէն ծնած կուսավճիտ խօշա-
տեղծումներ ուր ծիածաններ կ'աչէին, քթթելով,
ու կը մարմրէին՝ — հեռուն, մոյզ շարժումներու
մէջ, անընդհատ, անընդհատ՝ խուժող ու ծռող
կոհակներուն ճերմակ կործանումը կը թնդար:

Նաւ մը չկար հորիզոններուն յաւիտենու-
թեանը մէջ: Հեռուները փրփուրներ կը վառէին,
ու զառանցող միտքը կը կարծէր տեսնել շարժումը
հորիզոններուն մռայլամած անեղրութիւնը բնակա-
ւէտող ուրուային անանուն բաներու, — և փր-
փուրները կը մարէին, դատարկութիւնը բացարձա-
կելով. փրփուրներուն սոսկալի ոչինչը կը սարսուար
հոն. Մովն էր միայն. միմիայն ամբաւ Մովը: Եւ
նաւ մը չկար. ոչ իսկ վերացող ծուխ մը: Ցամա-
քին վրայ ոչ իսկ կորսուող մարդ մը: Լեռներուն
ճիւղառապիտակ վեղարները կը խոկային. հեղեղատ-
ներու կնճիռներուն մէջ անտառներուն դորշ երա-
զանքը կ'առկախուէր, վերացած. ամայութիւննե-
րուն մէջ միտքիք ու շքեղ սարսափ մը կ'ապշէր:

Եւ սայլը կ'երթար, անվախճան ճամբուն թուխ
տամուկ երիզին վրայէն, որ անտառներուն մա-
ռախլային գորշութեան ու Մովուն կապարագոյն
մրրիկին մէջէն տիրօրէն կորագծուած, հեռունե-
րու մէջ անկրկոյթ ամայարնակութիւններ կը կա-
պէր իրարու, տիւզերապէս մարդկային զգացում-
ներու մեղամաղձոտ յօդագիծով մը, որ կ'երկարա-
ձգուէր դէպ ի մառնը հեռադօտ անձանօթներու,
Մովուն թեատարած արշաւին ու ցամաքին ան-
մռունչ արբշուութեան մէջէն, վերջնական վհա-
տութեան մը պէս անձայն, պարզ, հանդարտ,
դէպ ի հեռանկարներուն երանաւէտ անստուգու-
թիւնը, ու կարծես ալ տակի հեռուն, անաշխար-

հային ամպումներու մէջ . — Մովուն յաւերժա-
ձայն Գաղափարին ահագնութեանը դասապարտ-
ուած շաւիղին յուսահատականութենէն՝ վաչը՝
սարսուռն , գինով , համճարեղ , խեղճ՝ սարսափա-
հար կը թաւալէր :

Կծկուած , տառապագին , ու թերեւս դեռ
ժպտուն , ռուսներս անջրպետին հլօր աղի շուն-
չին՝ որ անհաւրաղի բացարձակէ մը կուգար՝ տեսի-
լին ամբողջ համադրական գաղափարին կը նայէի .
յաւերժափառ տիրապետութեանն անքննադատելի՝
ճնրագրելի ան ամբողջութեան , ուր քահքահներով
կը ցնորի երեւակայութիւնը , ուր համճարին ջղա-
գարութիւնը կը մոլեզնի : Մովն էր . համասեռ մըշ-
տանոցն թախծութիւն , զարհուրելի , երջանիկ : Ա-
լիքները կուգային , կուգային : Փլուզման ու
վերականգնումի անյագ արբշուութեամբ մը կու-
գային ալիքները . հառաչալիր կործանումներուն ,
փշրումներուն տակ վերթեւելու միահաղոցն վհա-
տութիւն մը կը խորդար . ընկղուզուելու միահա-
մուռ անյուսութիւն մը կը շնչասպառէր ջուրերուն
պղտոր սարսուպայտ կանգնումներուն մէջ . աղէ-
տալի սպիտակութեանց մէջ կը ամգունէր , դիւսա-
տուածային յայտնութիւններով կը ճերմկնար Մովը :
Կոծապարու կոհակներուն մէջ նախնական ու յա-
ւերժական յոյզ մը կը շարժէր . անտատին պէս բիւ-
րային , երկինքին պէս մէկ : Վիհերը կը թեւէին ,
փրփուրներով բռնկած , և անհուն ցնորքի մը տաւ-
ղումին մէջ կ'անհետէին : Իր փրփուրներուն հառա-
չին նշուլմամբ , իր ցեղքերուն խած թուխտովը
խուռչուտ՝ Մովը կ'անցնէր ամեղերքէն անեղբ
խորհուրդի մը յարակայքովը , յաւիտենական կարո-
ղութեան մ'ամենակալ ճախորդ՝ ամբողջ միջին թեւա-

հատամի մը (ptéranod.) հախաատուածային թռչող : Լեռները ճերմակ հայեցողութեան մը մէջ կը վերանային . անտառները կ'ընկղմէին իրենց անըրջանքին մէջ . հորիզոններն իրենց անաչխարհայնութեան մէջ կը հեռանային : Սայլն իր ոչնչութիւնը կը փախցնէր դողդղալով , մոլորուն : Լեռներուն տրտում օծութեանը՝ Մոյն իր անդունդներուն երանաժայրի հեթանոսութիւնը կը պուար :

Եւ ժամերով , իր տխուր ճամբէն , դողդոջուն , մարդկային սայլը կը խուսափէր կարծես ազօթելով :

Ձիերը կ'ընթանային , թօթվելով բաշերնին . տխրածայն արշաւնին տրոփելով , ու տաժանագին գոլորչի մը կ'արտաշնչէին :

Դիմացը , անտառին առջև , անտառին տակ , հեռուներու լուրթ յատակի մը վրայ սկսեր էր , անհաւատալի՝ նշմարուիլ կքուն , իրական երդիքի մը թուխ կղմինտը , աշնահար ճիւղերու մէջ : Ըսի կառապանին : Պզտիկ իջեւան մըն էր , խան մը , ուր սայլերը պահ մը կանգ կ'առնեն , ու ճամբորդները վայրկեան մը կը հատին տաքնալու , կրակին դէմը : Ինչպէս ողջունեցի անոր լուխերիկին կապոյտ ծուխը որ կ'ելլէր , կը սարսուար , ու ապշահար կը փախչտէր :

Երդի՛ք մը , ծո՛ւխ մը . ասիկա կը նշանակէր սուն , օճախ , ջերմութիւն , հանգիստ , ամփոփում : Լռիկ խո՛հեմութեան ու բարութեան հէք ակնածելիութիւնն ունէր հեռասքող երդիքը : Տանիք մը ու օճախ մը , հո՞ս . . . : Ուրեմն ամբաւ ժխտումին մէջ հաստատական , — խանդաղատական կէտ մը կար . ջերմութեան , գորովի վայրկեան մը՝

տառնային անեղբութեան մէջ . մահաշշուռնջ անհու-
նին գիրկը սիրոյ , յոյսի կենսաւէտ ըջիջ մըն էր ան :
Հոն , վայրի ափուռնքներուն վրայ , մռայլ անվախ-
ճան գաղափարին տողորումովը ամքած , կկզած ,
ու է յաւակնութիւն շունէր անշուք մինակուկ
խանը . ս'րքան կը նմանէր ան վայրերէն անցնող
մարդուն : Շրջապատող անողոք ջնջման մէջ բա-
րութեան այս շամանդալը պէտք էր : Բնաստուա-
ծութեան հրաշագեղ վսեմին վրայ անհրաժեշտ էր
այս շեշտը , ու դուցէ ինքը երբեմն խմասան իսկ
էր անոր : Տերութեան մը մէջ սքողուած , Ան-
հունին մէջ երկրայական խոնարհ միջառի մը յա-
մառ կենսականութեամբ առի չոգի մ'ունէր ան ,
խեղճուկ մարդկային պէտքը . մարդկային հէք այդ
երկիւղը . իր զգուշութեան դրական երանութիւնը
շրջապատող անեղ զօրութեան մէջ կծկած : — Եւ
բուխերիկը կը միտար , կը միտար , հորիզոններուն հո-
վին տակ իր ջերմութեան երազը մարմնելով . ու
կապոյտ ծուխին խօշ թռչկոտումով կ'ոգորէր , այ-
լասէր անճնապահանութեան երջանիկ զգացում
կորուստին , անէացման դէմ որ անջրպետին մէջ
կ'ուրուածայնէր անընդհատ : Բուխերիկը ցուրտ
դատարկութեան մէջ իր բարութիւնը կը խնկէր :
Խմաստուն խրտուիլակ որ մահուան գաղափարը
կ'աշխատէր վանել :

Վաչը մօտեցաւ , տատանելով : Հաստ իա-
նին : Սայլերդիքի մը ապաստանին մէջ կանգ առաւ :
Ծառերուն ու դուիններուն ետին կորսուեր էր
Մովը , և ա՛լ հեռու էինք որոտացող աւաղափուն-
քէն , ծերուկ խանին թեւերուն տակը : Այս տե-

դուկը աղէտներու մեղամաղձիկ հաստատումն ու հրճուալի բացատութիւնն էր : Անասուններու թրիքի գեղջուկ բարեկամ հոտ մը կար սայլերդիքին խոսնաւ անկիւնները , մութ դրան մ'արտաշնչութեանը մէջ , և ամայարնակ կենսահոծութեան մը սիտիիչ գաղափարացումն էր : Սայլէն իջայ , ու մտայ , կ'իտա քայլով , հեռուէն բերկրութեամբ ընդնշմարուած պզտի խանին մէջը : Մթնշաղ սանդուխէ մը ելայ միակ յարկը . փոքր ցուրտ սրահ մըն էր . տախտակամածը ծուռ . բրտօրէն վանդակուած մեծ լուսամուտներու նախնականութիւնէն մեծ հովը կ'անցնէր , սուլելով , ու սատափէ լիւնները , ամպամած , կ'անըջանային գորշ անտառներու սպառումներէն վեր : Տունին մէջ կ'զգացուէր հզօր դուրսը . խանը անոր հալածանքէն տարտամօրէն կը դղրդէր :

Սենեակ մը մտանք . օխ , տաքուկ միթին խուցը : Կոփածոյ ջերմոց մը կը վառէր հոն , ցած մրճոտ առաստաղին տակ բեկանելով ծուռ խողովակը՝ պատին խաւարին մէջ անհետ : Ջերմութեան փայփայանքէն սարսուռն՝ նստայ աղօտակի հրաշէկ ջերմոցին դրան վառ ծակին դէմը : Պզտիկ ախժոտ լուսամուտներուն լոյսը խանին լոյսն էր քան անջրբակաին . տունին մեղամաղձոտ գիտակցութեան նշոյլը : Իջեւանին տենչալի խորհուրդին մէջն էի ան , մտածումին մէջ հինօրեայ խանին որ Անհունութիւնը գիտէր : Ո՛րչափ դոյզն բան էր աղկաղկ անակը , և ինչպէ՛ս կը բաւէր Անհունէն վաստակաբեկ ուղեւորին մշտանոյն մարդկայնութեանը : Իրօք քիչ մը հանգիստ էր ան : Իր գաղջ միթնշաղին կարեկցութիւնը ճամբորդը կ'սիտիէր : Ամեն ինչ նախնական էր հոն . և ամեն ինչ կը դիմադրէր ամբաւ դուրսին : Ամեն բան վստահ ու անդորր

ներքի մը յայտակերպումն էր, հրճուալի՝ քանի մը լծորդ պէտքերու պարզ ու ճիշդ գոհացմամբ, — տենչալի՝ ենթադրութեամբը մեծ ամայութեանց անարկութեան, այլ հասե անոր ամօքմամբ ու հեռացմամբ՝ որ մրրոտ լոյսին խնայականութեան մէջ կը քաղցրհայէր, շինական բազմոցը կը խորգապատէր, անկիւններու խաւարին մէջ կը թանձրանար, ջերմոցին բոցավառ կրակին մէջ կը ձայրտար, կը ճարճատէր, կը սուլէր, ու թուխ որմին վրայ կախուող լեռնավայրի զինարդի (panopl.) մը հանդարտութին մէջ կը լուսագծուէր լուելեայն: Անուակին մտամփոփման մէջ վանական մտածում մը կը խառնուէր լեռնային զգացման մը, և երանութեան սարսուռով մը ողնայարէս կ'անցնէր: Կրակին քովը նստած ճերմակ կատու մը կար: Հեռուն Մովը կը գոռար: Ճերմակ կատուն երեսս կը հայէր, անձայն:

Մարդ մը ներս մտաւ, լեռնազգեստ, պարսիկ մը, — խանձին: Բարեւեց մեղի մեղմ ձայնով, — Բարի եկեր էք, ըսաւ: Մեզի կը ճանչնար, որովհետեւ անջրպետին կծու ցուրտէն ու անուզրութեան սոսկումէն թափանցուած մարդեր էինք: Նուրբ, բարձր, անարտայայտ, բայց մեղանուշ ժպիտով մը ակնածելի՝ մարդը լեցուն էր միադէք օտարութեամբ մը: Գունատ գօշ կերպարանին մուսանդրիի հալանրբութիւնը տարտամ անաշխարհային վարանք մը ունէր: Մոխրագոյն աչքերուն մէջ հեռանուաղ անդրհայեցութիւն մը կար: Ան բուխերիկին, աս պատուհաններուն միջնադին ընակիչը, հեռուն խռնտացող յաւերժութեանց եզրը թառած այս ապաստանին մենակեացն էր լռին

պարսիկը : Շատ չխօսեցաւ , ա՛հ , Անհունին ձայնին
ընդերկար ունկնդրած մարդը : Իր որձև-իգային
դէմքին վրայ խաղաղ երկիւղածութեան մը կնգ-
զաստուերը կ'զգայի : Նայուածքին լրիժաղօտութեան
մէջէն մշտնջենապէս կ'անդրանկարուէր անջրպետին
ու Մովուն անեզրութիւնը : Իր լուծիւնն աղօ-
թակերպ արձագանգ մ'էր ամբուութեանց յա-
ւերժանուագին : Ես , քմահաճ ուղեւոր՝ պիտի անց-
նէի երթայի . լւին մարդը հոն պիտի մնար . պի-
տի շարունակէր ապրիլ հոն , մենաւոր վաղընջուց
խանին մէջ իր անվրդով անդրհայեցութիւնը : Ես
զրկանքը պիտի կրէի՝ միա՛յն երազդալու , մտա-
պատկերելու ա՛ն վայրենական քերթուածը զոր
ինքը պիտի ապրէր , պիտի կայածէր (végét.) հոն .
քաղքենութիւններէ դերձ , վարժաամամբ ու մո-
ռայամամբ , — անմեռ և անկաշկանդ յարածուն
մարդասիրութեան մը քաղցրութեամբը տոգոր-
ուած , իրրև խիճերուն , խութերուն սայրաւորու-
թեանց անընդհատ ողորկմամբ անեզրութեան յա-
ւերժաձայն ծփանքներէն :

Խանին մուղտ ու փակ լուսամուտներէն մեղ-
մայած հեռալուր շշուճով՝ Մովուն ձայնը կը հնչէր
միատարր ու խորին : Ջերմոցը , հրաշէկ , կը հեար :
կ'զգայի , մրրիկին մէջ , երանաւէտ խաղաղութիւնը
մոռայման մը : Ահ , բարի վայրկեանը , մենակեացին
կեանքէն շնչուած , վայելուած : Ճերմակ երանաւէտ
կատուին կը նայէի : Անհունին գաղափարին մէջ
ընկղուղուած պարզ էութեան մը խաղաղութիւնը
կը պարուրէր , կը միաւորէր (unif.) զիս :

Քիչ մը ետքը , վաչր՝ խօյ՝ մեղի կը տանէր ,

մշտանոյն ափուռնքին վրայ, նոյն հզօր կղերագայ-
մանց սպիտակութեան մէջէն: Տէրէ-Քէօյի խանը
ցուրտ միայնութեանց մէջ անհետեր էր մեր ետին:

Գարձեալ հո՛ն, նոյն հեռարձակ ամբաւութիւնը.
նոյն կատաղի գորշը: Տարտամութեան մէջ կրկա-
րած հրուանդաններու նոր միգանկարներ կ'երեւու-
թանային միայն: Բայց . . . անորոշ ատենէ մը ի վեր
աւաղափուռքը սկսեր էր առնել նորանշան կերպա-
րան մը զոր անգիտակցարար չէի ուզած դիտել՝
մեծ գաղափարին համասեռութեան մէջ մերժած
ըլլալով տեսնել օտար, առածոյ տարր մը: Այլ
աստիճանաբար ու յամառօրէն յաճախացած, ու յան-
կարծ բացատրուած՝ ա՛հ, ա՛լ օտար չէր սն Մո-
վէն. և իրօք, ոչինչ պիտի կարենար անկախ
ինքնութիւն մը դիմակայել հոն Մովուն անբաւ
ինքնակալութեանը:

Աւաղներուն կրկայնքը, ջուրերուն յետին սահ-
մաններուն խօշ կորագծին վրայ, ցանցաւ, քար-
իւղի ծռմրկած թիթեղ անտուկներ նետուած էին,
պարապ, անշարժ՝ կիսովին խրած՝ խիտւմ աւաղին
մէջ: Արդէն տարտամօրէն ժանգոտ՝ իրենց ճմրութ-
կուած կափուած թիթեղի անկիւններուն վրայ դեռ
աղէտալի փայլ մ'ունէին: Զամազան դիրքերով
ու հաւասար պակուցման մը մէջ սառեր էին հոն.
ոմանք սարսափահար կծկումներու մէջ կուզուեր
էին. անդին խռոչուած որովայնի մը ապշահա-
րութիւնը կը շողար: Տառապագին ծամածռութիւն-
ներ կային, անշարժ: Տժգոյն սպառնալիքի մը մէջ
անխլիրտ անկիւններու ժանիքներ, դեռ ցցուած.
բրգացած խորանարդներ, կատաղօրէն տրապիղ-
ուած քասակուսիներ կային: Վաչը անոնց մէջէն
կ'արշաւէր ու կը տեսնուէր դեգերումն իրենց խողոր

հշոյլներուն պաղած շնչոին՝ դէպ ի ամպամած երկինքը , դէպ ի ցամաքը , դէպ ի Ծովը : Իրենց հէք սպառնալիքը կը հայէր , առկախ , անպատասխան , սղաչանքի մը պէս : Պարապ էին , ծաղրական ու ողբալի թշուառութեամբը պարպուած նետուած բաներու . և իրենց տապալած , գլտորած , ջախջախուած , ծուռումուռ ու դժնդակ շարքը հեռուներէն սկսելով կ'երկննար , անհատնում : Եւ ասոնք բեկորներ էին . վասն զի քանի մը օր առաջ քարիւղ տանող հաւ մը , հոն , բացերը ընկղմեր էր :

Եւ պարտը վիհերուն մէջ ընկղուղուած հաւո՞ւն սարսուռովը կը հայէի կոր Սև Ծովին : Հեռածուփ փրփուրները կը վառէին , կը վառէին և անոնց ձիւնափայլ խօլածաղկումն ուրիշ բան չէր այլ խուսափուկ անյուշ գերեզմաններու սարսուալի կարելիութիւնը : Եւ մինչդեռ աւազափունքին երկայնքը կնճռադէմ թիթեղներուն շարքը կը կորածգուէր , աղիտանշոյլ , իբրև Ծովուն վայրենական մէկ ակռամանեակը , հոն , հորիզոնին փարսախսներուն մէջ Ծովուն խղճմտանքը կը յածէր , ամենաաղօր , ու անպարտ :

Կծկուած , սայլին խորը , որ կ'երթար արհաւիրքին յարածուն մեծութեանը մէջ , մտիկ կ'ընէի մենամուլ Ծովուն առասպելային բառը , ողբաձայն արձագանգներով երկարածգուած :

Իր միակ անհուն բառը , իր համադրահոծ անվախճան վանկը կ'աղաղակէր Ծովը . ի՞նչ թովիչ ոգում էր ա՞ն . իմաստներու ի՞նչ զարհուրելի սաւառնումով մը լեցուն էր մշտնջենաւոր կորձային բառը , զոր Ծովը , ձեանհիւսքերով վագրչերտուած ,

հորիզոններէն կուգար թաւալակոծ ունալու թախ-
ծալի ցամաքին, զոր լեռներնուն վրայ խոռանոծ
արշաւող փրփուրը կը շնջէր, զոր ալիքներու սա-
ւառնաթեւ շարքերուն կործանումներով կուանօրէն
կը տրոփէր յիմարական ու աստուածային Մովր:
Միջոցին տրտմութեան մէջ փրփուրներու լուսեղէն
բառը կ'երկարաձգուէր արձագանգներու խժաձայն՝
երազակոծ հաստատութիւններով (aff.) և հեռաաքօղ
հրուանդաններուն անդրհայեցական կարգերը, ու
նսեմ խաչականութեան մը վերնաշաւիղներուն մէջ
վերթեւած ճերմակ լեռնակոյտերը, և գորշ անտառ-
ները՝ լեռներուն խորերը անէացած, իրրեւ ծանրա-
պարոյր պտոյտի մը (vert.) անհուն մշշածփումով,
արբշիւ՝ կը շնչէին, կը ռնգազգային խաժ օչինդ-
րեշտանքը լուսնոտ անդունդներուն բառին:
Անյատակ որոտում մը կ'ելլէր կոհակներուն վաղըն-
ջուց խաւարներէն, ու պատուտուելով կը մրմռար
կը հեար անագորոյն անապառութեամբ. դալկատիպ
պոռոչիւններ կը փրթէին, կը ռմբարձակուէին մո-
ղոչային հեռուներէն, վայրենաձայն կոչումներով
կը խուժէին դուխններուն ամոյն լանջին վրայ ան-
վերջ խօշիւններով մեղեդիանալու. խաւարամած
հեռաւորութենէն սպառնազին դանդաչանք մը կը
զառանցէր, տապալելով, և ահուելի հրճուայեղ-
ցումներու անյաղ շշունջի մը մէջ կը խանդաղա-
տէր. օրհնաձայնութեանց ու վայերգութիւններու
անդուլ միահամուռ մուռնչ մը. անխժաղու ալե-
լուխաներու վիրապային երգիտնում մը կ'ամբառ-
նար Մովէն. յաւերժական աղէտի մը կոծը կամ
անթառամ երջանկութեան մը փանդուումը կը լրս-
ուէր. յաւիտենական կորուստներու զօլանջներ ան-
մահութեան զմայլումներու մէջ կը նուազէին: Մո-

վուն հոյակապ աղջամուղջը ափունքին հրաշալի սպիտակութիւններուն մէջ կը լուսատարրուէր . վիհերուն արհաւիրքը աւազին սառնադրուագներուն շքեղութեան մէջ , դուիններուն վրայ յուշկապարող ծիածաններուն հիանուշութեանց մէջ կը հեասպաւէր , կ'երանար . . . : Ծովն իր անհուն շիրմայնութիւնը կը պատմէր ցամաքին՝ ստեղծագործութեան հմայաչխարհ մը վիպող ոգիի մը պէս :

Եւ վաչը կ'շտապէր , մուրրուն , մուկգին . — մինչդեռ սեւռախոհական անունը կը կրկնէր , կը զարնէր մտքիս մէջ իր անեղ կշռոյթը . Սև Ծով . . . Սև Ծով . . . — անդրատենչութեանս երազը՝ մռայլափառ իրականութեամբ մը վերստին ցնորացած :

Ընդերկար գացինք այն վայրերէն . անդգալաբար ցախաստաններու մէջ մխրճիլ սկսեր էինք . հետզհետէ թախծագին երեկոյացումը անորոշ խորհուրդներով կը թանձրանար հոս հոն , անտառներուն , ձորերուն մէջ , ցամաքին անձայն անստուգութեանց մէջ , ու Ծովուն վրայ գիշերի ծփումներ կը թաւալէին : Ափունքին տխրատեսիլ կորագիծը կը լուսատարրուէր կոհակներուն սպիտակութիւններով որոնց չարաշուք յոյզը կը նուազէր ու ու կ'աճէր անդադար : Ծովը կ'սքողուէր դուիններուն ու ցախերուն ետեր , ու մութ պատառուածքներէ յանկարծ կ'ընդերեւար . վերստին կը ծածկուէր . տարօրէն արչտատոյր ձերմակութիւններու շունջներով կը պարզուէր կրկին ու կը խաւարէր , կը թաղուէր յամբօրէն : Արձագանդները շփոթ հծծիւններով կ'երկարէին անագին սուսնձնութեանց մէջ : Գողգոջուն սայլը կը շրջապատուէր ու կը հալած-

ուէր ծովային անըմբռնելի իրիկունէն : Մացառու ահողերուն հաին վերջնապէս անհետեր էր Մովը . ուտակա իր աղէտաւոր մղոններուն ձայնը հեռաւոր գոռումներով կր խորունկնար :

. . . Ամիսներ հաքր սակայն , երբ վերջապէս անախունքներէն կր հեռանայի խաղառ , շողենաւի մը նաւակամութիւն վրայ երազածուփ յախշտակուած տարուած Աւ Մովու վերջին իրիկունին շշունջներուն մէջ , սարօրինա՛կ բան , մանկութեան իրագործուած երազին ցնորական վերիտէացումը — խորին , ներէական երազներու ճշմարտապէս անիրագործելի իտէականութեամբք անյագ՝ յաւերժական երազին , — անզգալապէս տողորուեր էր , նորօտար զգայութեամբ մը ուր Աւ Մովուն գաղափարին վայրենութիւնը երկնակապոյտ օժմամբ մը կ'այերանար : Աւ Մովուն բոլոր մուայը՝ ալ յիշատակ ըլլալու պահուն՝ հէքեաթային երանութեամբ մը կր քաղցրախառնուէր : Հրաշալիպական Մովը զոր սիրէր էի , զոր պիտի տենչամ յաւիտեան՝ աղջկան մը , ծովանոյշի վեհութեամբ մը լուսողող էակի մը տեսիլը կր պայրնծայէր ինծի , իբրև իր անդրաշխարհին մէջ իւրաստեղծ մարգրիտ մը զոր սրախ կր յեռճւր , — և Աւ Մովու պաշտամունքս անայլափառ գորովով մը նորաստեղծուած , կր հայէր , միթին ջուրերուն ամայութեանց վերև արուսեակնարկո՛ղ անկերպարանքին ուր անխորանալի Մովուն գաղափարը կր մեղմանար , և երանութեան մը պէս կ'ըմբռնուէր : Աննիւթական սէր մը կր իսայտար հիմա վհախոյզ անդրատենչութեանս մէջ : Մովին յաւերժաձայն շշունջներուն մէջ տարուած՝ կր զգայի մրտ-

քիս մէջ ցաթիլը լուսեղէն իգութեան մը բարութեան՝ Մովուն խաւարներուն սունավայրի զօրութեան վրայ. Պոսիդոնին վսեմութեան մէջէն Ամփիդրիդի մը գեղեցկութիւնը կը փթթէր, ու խանդաւառանքով կը թրթռար խնկացող զմայլումներուն մէջէն: Ահ, վերջին իրիկունը: Մովը կը ծփար լայն ու խորին խաղաղութիւնը շափուղայ ջուրերուն զմրուխտ թափանցկութեան. երկինքի մը մէջ հալած անառա՛ որուն հմայքին վրայ մեծ նաւը կը սահէր կ'երթար: Նաւառաջքէն ընկրկող ծփանքներուն շշուռը կը թռչէր իրիկունին մէջ ուր թալացման (pâm.) նայ երանգներ կ'երկնածաղկէին. արեւմուտքին մանիշակ, ծիրանի երազանքին մէջ սուզող արեւը Անաստօլունին վահաշուք կարկառները դեռ դիւթերփնէր հիրվարդ ծխիւններով: Հրահալած գոյներու շունչեր վերթեւելով կը տատամսէին դժնէ բարձունքներուն վրայ հրուանդաններուն ափափայքին, որոնց սորերուն մէջ լաժուարթ ստուերներ կը մթազնէին արդէն. մինչ իրենց ընկրկած արտեւանները յամբօրէն կը կապուտնային, կը լուծուէին լրթաղօս դատարկին մէջ արեւելեան հեռուններուն ուր նաւուն ճերմակ ծիրը կ'երթար դեզերելու նուրը հառաչի մը պէս, հետախաղաղ աներեւոյթ ափունքը փնտուելով, և ուր մենածուփ անօսրութիւններ հրային երանգներու՝ կը հասնէին խորերը գիշերուան երազ ովկէանին որ եթերին մէջ կը բարձրանար:

Վայրկեան մ'առաջ՝ ուղևոր միւսլիմաններ Հարաւին հանդէպ լութեամբ ծնրադրեր էին խըմբովին, և անհուն ժամուն մէջ ծովաշշունջ իրիկնածուփ անդրաձայնութեանց ունկնդրեր էր պահ մ'անոնց ծանրարեկ միահաղոյն երկրպագութիւնը.

իրենց վերջալուսական աղօթքը ըրեր էին : Շողե-
նաւը , տրտիուն՝ յորդ ու խորունկ սօսաւիւնին մէջ
կը թեւէր վերջալոյսին գողորշիներուն : Թափանց-
կութեան անեղբութեան մը մէջ կրեակայութիւնս
կը ճախրէր կը թռչկոտէր դէպ ի ամենուրեք , դէպ ի
ամէն բանի վերնութիւնը : Անհունին մէջ մուրաժ
բեկորի մ'արբշյու երազկոծմամբ , առաջին ընկէց-
քին , խոյաղքին անսպառ այլ եղկօրէն ըստբաղդ-
ուող աւիւնովը կը տարուէի դէպ ի գերաշխարհային
անորոշ ոլորտներու ապաւնի մը , զոր մեծ զգայ-
ութեանց անյագութիւնը իւրացումս կը խոստանար ,
և զոր Մովուն շշնջիւնը կը խորհրդաձայնէր : Ան-
դորր վհատութեան մը մէջ բաժանմանս անհաւա-
տալի իրականութեան հետ ոգորելէ դադրած՝ վեր-
ջին յուշքին բարի ցնորքովը կը պարուրուէի , անոր
անուշաբոյր անջրպետը տանելով ինձի հետ : Հեշ-
տալի հծծիւն մ'ունէի . սիրելի թշուառութեամբ
մ'արտաշնչուած անուն մը կը հառաչէի ծածուկ :
Կարծես քաղցր անունին վանկերը եթերային ալիք-
ներով ողողել , ընույ կարենային անսահման ան-
ջրպետը , որ կ'աղօտանար յիշատակին մեղանուշ
իրականութեանը մէջ : Իբրև տարմորորի թեւերով
կեանքս կ'երթար , ան վանկերուն թռչականու-
թեամբը՝ բիւրեղաձայն անդրաշխարհի մը կապոյտ-
ներուն , նաւունս պաղքէն անկախ , կորսուած հո-
սանուտի մը պէս , անշարժ , ինչպէս ամէն շարժում
անհունին մէջ : Եւ անուշ անունն ա՛լ զգայու-
թիւնն էր գերազոյն վիճակի մը , հաւաւրոյց յաւեր-
ժական հեշտութեան մը խոր ու համատարած
սփիւռսին :

Ան աստե՛ն զգայի , տեսայ , ցամաքին լար-
ձունքներէն վեր՝ սուկախեալ կրկարածիզ քօղերու

մէջ , երազուն , թալանչոյլ , լուսնի արծաթ լոյսի մը շողալը . — վարը , ջուրերուն խաղաղքին մէջ , անզգալի , դողդոջուն ցոյքերու ցնցղութիւն մը կը թրթռար փախչտելով : Յիմարարար՝ վերացմանս ազատութեամբը ծփանքներուն վրայ հակած , թռանցնող լուսերամին մէջ մուրումն՝ կը ժպտէի , երջանիկ , հանրանուշ շողիւններէն թափանցուած յանկարծ իբրև լոյս արովներով : Ծովը սարսուռ գին կը նշուլէր , կը պապղար . ան իմ սէրս . ճերմակ գիշերին մէջ պաղպաջուն ջուրերը կը հնչէին , կը հնչէին : Ծովէն անօտը տենդ մը կը լուսածնէր : Ու նաւուն մեծ տոուերն աննպատակ կ'երթար ճերմակ խնկալի գիշերին մէջ . ամէն ինչ գոլորշացում էր շուրջս , իմ տարփանքս կը գողանչուլէր լուսաբորբ Ծովէն . նուազուն հայեցողութեամբ , անձառ տարրի մը , անվախճան լուսաշաւիղի մը մէջ կը սլանայի , լրթարծաթ եթերին մէջ տանելով , դմայլուամէ թրթռագին , լուսափայլ վարդերանդ զգայութիւնը , ծիրանի , հիրային մտապատկերը , որուն շուրջը կ'ապառէր , կ'եթերանար միտքս : Սե՛ Ծով , որքան՞ն շքեղ էր Ծովանոյշը , ընծադ : Երկինքին ու խնայականութեանս երազայնութեան մէջ ճըշմարտութիւն մ'էր , վճիտ , լուսեղէն . և միայն անոր անունը , վհատօրէն իր անունը միայն կը հեւայի իբրև դմուռս անոր :

Ոգին , երջանկութեան Ծովուն դաշնակութեան մէջ իբրև իմ դմայլմանս լուսութեանը մէջ կը սարսուար , կը մարմրէր . ալիքները կը շշնջէին , լուսածուփ . սաղի խոէտոյած հնչիւններ կը հեծէին նաւուն խորէն... , և լուսածուփ ալիքները կը շշնջէին , լուսնագիշերին շողակներով կայծկլտող երանաուէտ ալիքները . գիշերին անեղբութեան մէջ Ծովուն խա-

զաղութեան անուրջը կը սաւառնէր : Յամաքէն երկինք՝ խռովիչ փոխանցում մ'էր դողդոջուն Մովր : Մածանող անդունդներուն մէջ լուսարտօսը հիացում մը կը հեծկատար : Անհուն Մովր Երկինքը կ'երազէր :

. . . Հիմա նոճիներուն հովին ձայնն է , որ գիշերէն կ'անցնի , անցեալով լեցուն , ցնորական . — կարծես Աւ Մովուն հեռալուր ձայնը՝ ապագայով լեցուն : Իմացական կեանքիս ջղային արարելուսքը իր անյայտ սկիզբը կը թուի առած ըլլալ անոր անհունութենէն . ինչպէ՞ս կը ճանչնամ իտէական անվախճան ձայնը , զոր ա՛լ իրապէ՞ս չեմ լսեր , բայց որուն իւրակերտ ու իւրացուած նշանակութիւնը պիտի հնչէ գիտակցութեանս՝ ցորչափ Անհունին բաղձանքը տառապիմ :

Ահա նոյն կարօանն է նորէն : Հասարակ կենցաղին ճանճրոյթներէն անդին հեռանկարուած , վսեմ վայրենութիւններու մեղեդային կոչերով կախարդող Անեղրութեան կարօտը՝ անբաւական հորիզոնի մը միջև գալարուն , ցաւագին : Հասարակ կենցաղին պարտադրումը կը փակչի էութեանս՝ ժանգի մը պէս , որ անոր կ'արգիլէ տիեզերական լոյսն անդրադարձնել , հրճուաղին . անապառօրէն բեղմնաւոր Յաւերժութեան սեւիլէն թափանցուիլ , և զմայլած անդրադարձում մը զեզուլ :

Երկար ատեններէ ի վեր անտուտղ , հայրենախտաւոր անդրատենչութիւնս զիս մանկութեան երազին իրագործմանը մղեց , ու մեծ ծովաշշունջ զգայութեանց մէջ արտասուաղին դողերով ապրեցաւ , վայելեց իր ձգտումին իրաւունքը . ծովածուփ տարփանքին մէջ հեշտալի միտումով մը , Մովուն

վիճերէն մարդբառուող, փրփրածնող այն էակին ճառագայթին մէջ թրմամբ մը վերակառ ապրիլ անիկա, անդադար ձգտելու համար այն անձկալի ազնուացման զոր յաւերժական տեսիլներու հոյակապ բարոյականութիւնը — գեղեցկութեան բարոյականութիւնը, — կը խոստանայ անոնց որ հիանալ գիտեն: Աւ Մովուն ալի հոծութիւնն իմ գերածուծ արամադրեց: Կեանքը զոր յուզուեցայ այն օրերէն ի վեր՝ բղխեցաւ այն Մովուն մռայլէն և այն աղջկանը լայսէն: Այն անցած օրերը յագեցած են հիմա իրենց հետեւող և իրենց արժանի կեանք մը արտադրած ըլլալով, վիճակներու ճակատագրական սերնդածնութեան մը մէջ սպառած ըլլալով ինչ որ կար հզօր ու բեղուն իրենց հնաւոյգ յոյզին մէջ:

Վասնզի Աւ Մովու տենչս ինքնութեամբ լեցուն բաղձանք մը եղաւ. իմացական անձնապահութեան խորհրդաւոր շարժում մը: Վիպային էութեանս տարտամ ու ճիշդ ծանօթութեամբ մը ես ընդերկար երազեր էի Աւ Մովը, անոր շունջներուն մէջ կեանք մը, ահա արդէն իրագործուած: Այնքան ներշատուկ, ինքնարուխ էր այն բաղձանքը որ իւրեւ նախազգացմամբ մը յամտուեր կը տեւելու: Ամէն այդքան ներշատուկ իզձ նախազգացում մը կը թուի, քանի որ անհրաժեշտ մէկ պէտքն է, մէկ ծարաւն է, կսին որ անոր գոհացումը պիտի փնտռէ անողուլ, պիտի կամի, պիտի օր մը սկսի զայն, անոր յագեցման անձշղկի հետեւոյթներուն աւելի կամ նուազ պայծառօրէն գիտակից: Եւ երազներու սուածացումը յիմարականութիւնն ուրիշ բան չէ այլ մէկ հէք յղացումն անոնց որ հզօր պէտքեր զգալու չափ ընդարձակ հոգի կրած չեն, որ երազունեցած չեն. ճշմարիտ երազը որ անխախտ և

ուժգին ինքնութենէ մը կը բղխի . որ մաքին՝ հոգին անհրաժեշտ բարեշրջութիւնը կը ծրագրէ , կը նախազգայ , և այդ բարեշրջութեան կանխանշանը կ'ըլլայ : Երազներուն իրագործման պայմանն՝ անոնց ըլլալն է այնքան բնաւ քմայական , գրեթէ այնքան հզօրապէս կենսական , որքան են բնական մեծ պէտքերը , — թէև երազ մը՝ այն ներկային մէջ ուր կը ծնի՝ չձգտի անյնքան անմիջական : Գոհացման մը որքան մարմնական պէտքերը կը պահանջեն : Երազները կ'իրականանան՝ ցորչափ ինքնութեան պահպանմանը կը ձգտին , գիտակցաբար թէ ոչ : Եւ իմն անպէս էր . անձնապահութեան աւիւն՝ որով կոհակներու և տրտմներու մէջ կստ ինքզինքը հաստատեց , ապրեցաւ , իբրև անգիտակից ուխտով մը՝ իր տեսակին , հասարակ կենցաղէն տառապող իր տեսակին մէջ յարակայելու :

Եւ անաւասիկ կը գտնեմ ինքզինքս , հողմակոծ նոճաստուեր պատուհանին մէջ ցոլանկարուած վերացական ու տարաբազդ ուրուանկար՝ զոր անհնարին խոնկենցաղի մը ցնորքը կ'սպասէ , կը ստուերախառնէ և ի զուր կ'անջատէ դժնդակ քաղաքակենտութենէն՝ զոր իբր մարդ գուցէ դատապարտուած է ապրելու . — և որ մտիկ կ'ընէ հովին , հովին հուժկու դաշնհիւսքին մէջ ծփուն դաղափարային բաներու . զոր գիշերը կը վկայեցէ ժամերով :

Հովր գիշերուան միութենէն , անեղբրութեան համայնէն կուգայ ու բազմութենէն , թիւէն զերծն՝ և անձնացում կը թելագրէ :

Իմ տանջանքս է բնկերութիւնը , ցորչափ ստորնացնող վիջողութիւններ կ'ենթադրէ , — իրաւունք-

ներու խօշ վաճառումներ՝ ապուշ պարտականու-
թեանց փոխարէն : Հասարակութեան ամբողջու-
թիւնը կազմուած է խորապէս անհատական , ինչ-
պէս յաճախ նաեւ էապէս մարդկային պէտքերու
չարաչար զեղջման շնորհիւ : Միջավայրին համա-
կերպութիւնը որ անոր հաստատութիւնն է՝ ուրա-
ցում մ'է՝ (ի՛նչ տառապանք՝ եթէ գիտակից ,)
անձին լուսն արժէքին , առաջին մանկութեան մէջ
ծրագրուած սպագայ մարդուն — որ երբեք սող-
մին տրամագրածը չէ իրականութեան մէջ , — Եսին
բոլոր սղատ ու բարերար կարելիութեանց : Աւելի
կամ նուազ կորսուած անձնականութիւն մ'է ա-
մէն անհատ : Երանաւէտ սողմերուն արգանդա-
յին կեանքը կը նիրհէ՝ անտեղեակ՝ ու դեռ զե՛րժ
այն փոփոխութիւններէն որոնց պիտի ենթարկուի ,
երբոր ծնին , իրենց դեռ լոկ գաղափարուող կեան-
քին կոյս ու ներդաշնակ , ու ճիշդ ամբողջը : Ան-
շուշտ քաղաքակրթութիւնը կը ծագի մարդերու
բազմապատկութենէն , և մենութիւնը «վայրենա-
կան» է , բայց քաղաքակրթութեամբ Եսին ճոխա-
ցումն , ընդարձակումը՝ Եսին անկախացումը կը
պահանջէ : Ճակատադրի ի՛նչ սղքատութիւն՝ եթէ
մարդ չլլա՛յ ընկերային տարրերուն մէկ ընտրական
հաւաքոյթը , ընկերութեան մէկ համադրոյթը չլլ-
այ , ինչպէս ընկերութիւնը մարդուն վերլուծումն
է . երբ մարդ չհասնի իր կարողութեանց միահա-
ղոյն մէկ բարձրակէտին , ընկերութեամբ մը շրջա-
պատման յարաբերաբար անկարօտ վիճակի մը , որ
անհատին անձնապահութեան բնազդին խուլ իտէ-
ալն է , անո՛ր մանաւանդ մատչելի՝ որուն կը զլա-
նայ ընկերութիւնն այն ազատութիւնը որ ի՛ր իսկ
ընծայած կարողութեանց կիրարկման անհրաժեշտ

էր : Առանձնութիւնն ուրիշ բան չէ այլ նկարագրին , ինքնութեան ազատութիւնը , ազատագրութեամբ մը թշուառութենէն , որ ընկերութեան մէկ սեպհատը (idiop.) , ընկերութեան մէկ բնակային (endém.) խօթութիւնն է : Եւ դեռ մարդուն ընկերական էակ ըլլալը կը պատմեն իբրև թէ ինքնին բարոյական առաւելութիւն մը ցոյց տային մարդուն վրայ . մինչդեռ մարդուն ընկերականութիւնը հարազատ հետեւոյթ մ'է մարդուն հօրենական կապկողութեան ու երկչոտութեան : Ահա՛ ընկերականութեան բոլոր սրբութիւնը : Եւ այս հիմին անդու ներկայութիւնն ընկերական կենցաղին մէջ՝ կը վարէ կեանքը նոյն իսկ անոր որ մերթ պարզմտութիւնը կ'ունենայ յարաբերաբար անկախ կարծելու իր ցաւատանջ ինքնութիւնը :

Ճսխացող , բազմամտուող , կարծեա տեսակացող անհատին կեանքի եղանակն է առանձնութիւնը , ինքնեղ , առաքինի , ու բեղուն , ուր չի կրնար իշխանութիւն ունենալ ինքնութենէն կազմիչ տարրեր յապաւող ընկերական հարկը , ուր՝ թելադրականութեամբ , տպաւորականութեամբ իսկ նմանելու , նմանած ըլլալու զայրոյթը չի կրնար զգացուիլ . ուր հոգին կրնայ ծաւալիլ , անկաշկանդ՝ անտառին ծայրը , անտառէն դուրս մենացած ծաւերու հզօր ծաւալմամբ , — կարենալով իր ուժերը մարդել՝ երջանիկ ինքնութիւնն ապրելու որ այն ատեն միայն դժուղակ է երբ հարկադրուած է պատշաճելու , այսինքն ինքզինքը ժխտելու , և որմէ ա՛լ չամչնար մարդ քանի որ բազմութեան տեսողութենէն անմասն՝ իր ընամարդու աչքով կը դիտէ , կ'ըմբռնէ

զայն , որու անարգել յայտակերպումները կ'ապրի
առանց դառնութեան , որովհետև առանց այն երկ-
բայութեան զոր կանխակալ կարծիքներ , ընկերա-
յին կենցաղին յատուկ գծուձ չափեր համեատու-
թեան կը թելադրեն : Հոն , առանձնութեան մէջ ,
բանականութիւնը կը դադրի իր իսկ վրայ գարշաղ-
գալէ զուարճալիքը ընկերական ոսկեզօծմանց ,
որոցմով նողկալի անտիքներ կը նուիրագործուին ,
և ա՛լ չի թելադրուիր անդգալարար սուղուելու մե-
ծարոյ բղջախոհութեան մը քաղաքակրթական շի-
նականութեան մէջ . և փորձութիւնները կ'անհետին
խմաստասէրի վճիտ՝ յայտնատեսական աղքատու-
թեան մէջ որ ժուժկալութիւնն է , և որ հո՛ն կըր-
նայ իշխել այն առողջ լիութեամբը որ յատուկ է
իրեն , կենսալի բուրմամբը շնական խմաստասէրնե-
րու միրգին , կամ Աշակերտներուն հացին՝ զոր կի-
սաստուերին խորութեան մէջ աներևոյթ Յիսուս մը
թերևս օրհնէ : Քրիստոնէական քաղցրութիւն մը ,
Անհունին տեսիլէն բղխած՝ ինքնաբերուած , Եպի-
կուրոսի մը անդորրովը զուարթ , կ'ամոքէ հոն
առանձնութեան մթնոլորտին կամարացուրտ կալ-
վինայնութիւնը , զոր յօրինած՝ բիւրեղած ըլլան
Անհունին օրէնքները : Հո՛ն թերևս , ընկերութեան
ու տիեզերքին հետ աններդաշնակ ու իր խղճին
հետ անհաշտ մարդը կրնայ տեսապէս պատշաճիլ
ամենուն ու հոն թերևս կրնայ իր խղճին հետ նոյ-
նիլ : Հոն լուսամուտը կը բացուի տիեզերքին վրայ .
և անոր դաշնակութիւնները , սարսուռները , երանգ-
ները կուգան կը մտնեն հոն իբրև ներշնչարանի մը
խորը , և իտէացած քաղհիւսեալ արձագանգներով
կ'անդրաթեւեն անկէ իբրև աղօթարանի մը ծոցէն .
և Գիշերը , երբ աստղերը կայլակէ , բոյրերը , շշուկ-

ները, սօսախօսներն արտաշնչէ ու մեծ լուսթիւնը
խոկայ՝ հոն կը ծնի, կ'անըջատեղծէ հոյաթե դա-
զափարներն իբրև ճիշդ աղօթքներ: Զգացումը
խորագոյն է հոն. խորհրդածութիւնը լայնազատ,
յարակարծիքը բնական, յղացումը մեծ: Իր պատ-
կառելի զգուանքը կը մտածէ հո՛ն Միաաբեան. Ալի-
շանի բարձրախոհանքը հոնկէ («կը դառնայ Արեւին») .
զինւորներու շաինդէն աներկիւզ՝ Օրէ՛նքը կը գտնէ
Արքիմեղէս. Քարլայլի յուսանաութիւնը հոնկէ է
որ ընկերային ծանծաղուտները կը խորաչափէ այն
զուարթ դիւրութեամբ որով բարձրացողը միայն
կրնայ յատակները զննել. Վոլթէն իր երգիծանքը
կը սլարձակէ նախապաշարումներու և անարդարու-
թեանց. Լուտեր՝ իր կաղամարը կը նետէ դէին
ինչպէս իր զայրոյթը կրօնական աւատականու-
թեան. հոն Միլլէի վրձինը, խաչի մը պէս, քրիս-
տոնէական խաղաղութիւնը կը ստուերարկէ վա-
տակարեկ հոգիներու. Նարեկացին կոյս կատարե-
լութեան կը ձգտի, բոցեղէն աղօթք. հո՛ն բնու-
թիւնը, լեռները՝ քաղաքակրթութեան մ'ու դաւ-
տիարակութեան մը յղացման կը փոխուին Ռուսօի
խմացականութեան մէջ. իր արտօսըին նշոյլով
աստղերու երկնաշաւիղները կը գծէ հոն Նիութոն.
Հիւկօ՝ թշուառութիւնը կը սրբագործէ ովկէանին
ձայնին մէջ. Պէթոֆէն՝ անտառին մէջ՝ կ'ունկնդրէ
Անհունին զոր մոլեգին կ'իւրաստեղծէ. հոն խոր-
հրդաւոր, ուրուային մարդ մը Նմանութիւնը կը
միայ. Յովհաննէս Աւետարանիչը հո՛ն է որ, Պատ-
մոսի անձաւին դէմ հեռանշոյլ Եգեան ծովէն կը
կոչէ նհանգըթե Յայտնութիւնը . . . :

Այն հոգիները, որ ըստ Նիցչէի բացատրութեան
«ուժերու կուտակում մ'են», կը ձգտին առանձ-

հութեան իբրև միութեան ու ներդաշնակութեան պահպանման, իբրև հզօր կեդրոնացման մը բեղմնաւորութեան: Ոյժերը կը կեդրոնանան, կը արոհուին. հաւաքումները կը ձգտին միութիւններու: Քաղաքակրթութեան խմացական գումարումները կը խտանան զօրեղ խմբակներու, ներոյժ միութեանց մէջ, որ հոն ակումբներ, հոս կարգեր ու անհատներ են, սիւնակայքերէն (périst.) մինչև մենաւոր, անկախ փոլիտիան, հովիտներու մէջ ընկղմած վանքերէն մինչև հետակորոյս մենարանները. մտաւորական խմբակներու մէջ, որոց ջղաջին կեդրոնը Քլօբշթօք մը ըլլայ, կէօթէ մը. Արթեհիսեան սրահներու պչրոտ քաղաքայնութենէն մինչև Լէմանին ժեռափունքներուն վրայ թափառական բնամարդուն, Ռուսօին վայրենութիւնը. — սուրբերու, տեսանողներու վայրենական առանձնութեան մէջ. մոգերու ծածկենցաղին, մեմփեան նուիրապետութեան թանձրապարիսպ խորհրդակենսութեան մէջ. Սաքիամունիին անապատականութեանը. Մովսէսին լեռնակեցութեան մէջ. Մեռեալ Ծովուն եղերքներուն վրայ թառած Եսսենեանց առաքինի նախաքրիստոնէութեան մէջ. անլմբունելի մեկուսացումներուն մէջ որոնք ճշգեցին, լրացուցին Յիսուսը: Մահաժանիողներուն հետ կը հաւտամ, առանց վհկային երանդի՝ թէ «գերբնական» կարողութիւններ կ'աճին առանձնութեան մէջ, որք սակայն ուրիշ բան չեն այլ զարգացումը մարդուն բոլոր կարելիութեանց. անժանօթ, մուցուած, գուցէ վախցուած ներմարդուն միատարր ու գեղեցիկ երեւումը:

Հանրային հայեցակէտէն՝ մենութիւնը մերթքեմ մ'է, որու միջոցաւ խմացական ուժերու ամփոփ-

ու՛մը միակ անհատի մը վրայ՝ պիտի վերստին քայ-
քայանջատի բազմութեան մէջ : Անհատական տեսա-
կէտով՝ բազմութենէն ազատագրուող այս մեկուսա-
ցումը տիեզերքին լիազոյն ներաշխարհացումն է
անոր մէջ որ ամբօխէն կը հեռանայ հանրէութիւնն
ընդգրկելու ու մտքին մեծ մերձեցումն ընդհանրա-
զոյն դադարիարին , և ինքնութեան յետին հանրաց-
մանը բարոյականին : Հո՛ն մտածումը ճշմարիտ բարձ-
րախոհանքը (anag.) կ'ըլլայ , և մինչդեռ , մատուա-
յին՝ անձաւային կիսատուերին մէջ գերզգայնացած
բուհականային ցայգատեսութիւնը կը սուզի աւելծ-
ուածին մէջ , քրմօրէն , խորհրդագիտօրէն , մինչ-
դեռ առանձնութեան բարձունքին մէջ գերասրուած
արծուերիւ լուսնայեցութիւնը ճշմարտութեան կը
յառի՝ հոն ամէն շունջ Յաւիտենութեան պատկա-
ռանքը կը հծծէ՝ թելադրելով ճշմարիտ համեստու-
թիւնը կամ ճշմարիտ հպարտութիւնը՝ որոնք միեւ-
նոյն բանն են , — հանրացած Եսին ճիշդ գիտակցու-
թիւնը , — և , տարաշխարհ ուր կատարելութիւնը
փթթի , երկնածաղկի երբեք՝ հոն կրնան գիտունը ,
բանաստեղծը , կրօնաւորը , փիլիսոփան դաւանիլ
թէ մտքին ըտլոր տարաշաւիղ թռիչները կը ձգտին
յանդելու իմաստութեան միայն :

Ո՞վ պիտի տար ինձի , բարէ՛ , խրճիթ մը , Սև
Ծովուն մէկ վայրենի ափունքին վրայ մէկ խրճիթ
մը՝ ուր ես բնակէի , ուր խիղճս բնակէր . — խտե-
ացած տիեզերքին անսկիզբ ու անվախճան շունջ-
ներուն մէջ երազուն խրճիթ մը . . . :


Բայց գիշերը կապուտցեր է , արշալոյսն է ար-
դէն : Լմնցա՛ւ , առտուան յամր , տարաւագին նը-

չոյլը՝ տատանող նոճիներուն ետեւէն, յուետեա
համոզման հակումներով ծառող նոճիներուն ետեւէն
ճղքուեր է եղեր :

Գիշերը կը տժգունի, կը հալի ամպոտ աւօտին
մէջ որ ահա կ'ելլէ, կ'սպառնայ, մղձաւանջի պէս :
Օրն է, դժնդակ : Նա՛, նոճիի մը կատարէն որի
մը կը կռնչէ, որին իրականութիւնը կը պօռայ :

Կամայ կամայ երանաւէտ ճրագը կը թռամի :
Եւ անդգալարար լուսաւորուող պատուհանիս մէջ՝
ինքնութեանս, խիղճիս տեսիլը կամայ կամայ կը
հիւծի . կ'անսուրանայ . կը ցնդի :





ԴԵՆՏ մեղմօրէն կ'անձրեւէ նոճիներուն մէջ .
բոլոր ցաւերը արթնցած են յօրանջելով . հինաւուրց
ահարկու ձանձրոյթ մը պատուհանս կը գունատէ :
Վերը , նոճիներուն թախծալի երեքքին ու աշխարհ-
քին վերեւը միապաղաղ գորշութիւնը թախծու-
թիւն կ'արտասուէ . անհուն թախծութիւն . վիշտե-
րուն յամբ ու լռին լացովը զոր կը հոսէ անշշուկ ,
վերի մեռելական գորշութիւնը կ'արցունքօտէ ամէն
բան . իզրե յուեռեսին յղացած , յուեռեսին սպա-
սած մահուան երանգը , որ աշխարհքին վրայ իջած
ըլլայ մուսլամած ճշմարտութենէ մը . պակուցիչ ,
անխլիրտ տիրականութեան մը գոյնը , միակտուր
ու վերջնական , ուր ամէն երազ կը խղզուի : Կ'անձ-
րեւէ , կ'անձրեւէ մեղմօրէն , սեւ ծառերուն երեք-
ման , նոճիներուն մեծ սգերեքքին մէջ մեղմօրէն
կ'անձրեւէ : Եւ մանրամաղ անձրեւին իրականու-
թիւնը անգայտ ծխայնութեամբ մը կը հիւլէհոսի ,
ու նոճիները կը պարուրէ , կ'ողողէ . անջրպետին
անսահման մշշային սահմանողութեան մէջ նոճիներ-
ուն սլացառկախ անդրատենչութիւնը շլմորած կ'ե-
րերայ : Հովի ընդհատ , անզօր արծարծում մը
ստուերներ կը խուսափէ նոճիներուն ներքե լճա-
ցած ջուրերու ցրտին անփայլութենէն . թրջած ,

սրտիուն ծղօաներու շուրջ անշարժ առուակներու շեղբային երեսէն . մինչդեռ հոծ նոճիները հովին տակ կը սարսուան , կը հիւսալուծուին , ու անծալ գորշին վրայ իրենց ճօճուն կմախներուն սարսափը կը սեւագծեն : Կռիչներ կ'արձակուին , պաղած բարձունքներէ , նոճիներուն թախծալի ծայրերէն , ու թառղ սե որիները կարծես թէ պատառներ են որ կը փրթին անոնցմէ . իբրև թէ նոճիները որիներ հառաչէին : Եւ անձրեւը անրնդհատ կուգայ , բարակ , մանրամաղ անձրեւը . գգուանքի մը պէս , ինքնազրաւման գաղափարի մը յամառ գգուանքով կը ցօղի՝ սոսկալի , անհաւատայի անձրեւը , վերի գորշութենէն , իբրև բոլոր յուեանտութեանց ձոյլ սառչումէն , տարածութեան մէջ իր հալածանքը ամպած : Հոգւոյն մէջ յածող յետամնաց պղտի հրճուանքները կը մարին . երբ որ կայծի մը վրայ ջուր իյնայ՝ կայծը Քաս կ'ըսէ , կայծը վա՛խ կ'ըսէ՝ կը մարի . ահաւասիկ անձրեւէն մարած են բոլոր հրճուանքները , բոլոր կայծերը որ սրտիս ա՛լ սեւամաղձոտած արամութիւնը կը մխիթարէին . և ուղեղս մոխիրի ցեխ մ'է :

Կ'ուզէի , պիտի ուզէի , ի՛նչ սպուշ փափաք , պիտի ուզէի որ հոնկէ , հարաւին բարձրերէն՝ ամպը պատուէր քիչ մը , և արեւը երևար . երկինքն կապոյտ , կապոյտ երկինքը քիչ մը տեսնուէր հոնկէ : Այն ստեն այսքան տխուր չէի ըլլար , ա՛յսքան անկարող , եթէ երկինքը ամպի մը բացուածքէն քիչ մը երևա՛ր հիմա : Պէտք է որ գլուխս կախեմ աշխատիմ հիմա , ինձի զծել յանձնարարուած պղտիկ պատկերի մը ահարկու աշխատու-

թիւնը սկսիմ, և աւարտեմ իսկ, զայն նոյն իսկ սկսիմ: Հիմա իմ թշուառութեանս վրայ կ'աւելնայ կը ծանրանայ կարելի լաւատեսութեամբ մը հնարաւոր կարողութիւններու զրկանքը: Ի՞նչ կըրնամ ընել ես: Հիմա իմ թշուառութեանս վրայ կը ճնշէ անոր գիտակցութիւնը, և անվանելի ինքներկրայութիւն մը: Ամէն բան, ամէն բան իմ հիքութեանս, իմ ապիկարութեանս մեծութիւնը կ'ըսէ. նոճիները որ կը տատանին, խոտերը որ կը սարսուան, կռնչող թռչուններու սոսկալի զուարթութիւնը, սենեակիս ստուերին մէջ սուղուած անշարժ իրերը, ամէն բան, հովին ձայնը որ ֆհո՛ւ ֆհո՛ւ կ'ընէ, և բոլոր մտապատկերներս, յուշերս՝ որոց վրայ կը խղճամ, և զոր կ'արհամարհեմ, խաբուած խաբեբաներ, խիղճս, ատելի, հեռալուր դժնդակ աղաղակները, գորշ լռութիւնն ուր լսողութիւնս ապշութեամբ կը մխրճի, և ուր դեռ անգամ մ'ալ, մեղմօրէն, նոճիին կատարը կ'երևոյ, նաև իմ չսիրած բաներս, մանաւանդ սիրածներս, ամենքն ալ կը շշնջեն, կը լռեն, կը պօռան իմ հիքութիւնս, և անշարժ, անկարող, կը կարծեմ թէ իմ յանցանքս կ'ըսեն ինձի անոնք:

Հոգիս լեցուն է ընկերային զգայութիւններով: Նողկալի խեղճութեամբ մը կ'զգամ կոր որ կենսապայքարի, կենցաղի տեսակէտ մը հարկադրուած է գիտակցութեանս, փոխանակ կեանքին՝ անկարելի կեանքին տեսակէտին: Ինքզինքս կը տեսնեմ ըստ հանրային չափին, ըստ մարդերու ու կնիկներու իրերհայեցութեան: Ի՞նչ եմ ես, ծաղրելի ցնորակո՞ծ մը որ կ'երեւակայէ թէ կրնայ զերծանիլ ընկերութենէն, և անոր ամենէն յիմար հանգամանքներէն, որ տակաւին կը յամառի կարծելու

թէ կրնայ անզգած այսինքն գերիւիւք մնալ սպարողներու, «յաջողող» ներու ործացնող երանութեանէն. թէ կրնայ մեծ ըլլալ առանց կողոպտելու, և առանց գիրնալու. թէ կրնայ ընկերութեան հարկադրած պայմաններուն թշուառութենէն անաղարտ մնալ: Ահ. եթէ աշխարհայնութեան նեխած տրամադրութիւններ չըլլային մէջս՝ կենցաղի մտածութիւններ չէին գոյանար, չէին յամեր հոն, աղբիւսներու քով յածող շուներու պէս:

Չկա՞յ բան մը որ զիս ազատէ պղտիկ բաներէն, յամառութեամբ ահագին, որ առակին ճանձէն խայթուող աւիւծին կատաղութիւնը կուտան մարդուն: Ահաւասիկ կը գիտնամ թէ ոչինչ պղտիկ է ինչպէս բնութեան՝ նոյնպէս ընկերութեան մէջ. և թէ բոլոր պղտիկ բաներուն տիրապետութեան տակն են բոլոր մեծ բաները, մեծերուն տառապանքն են պղտիկները, եթէ ոչ միշտ զուարճաւիքը. ապրողը պէտք է որ անջնջելի նշանաբան ընէ իրեն յարգել բոլոր արտագին արհամարհելի բաները. խոտովանի, անընդհատ, անոնց անձգմելի, անսպառելի կենսականութեան մեծութիւնը: Ինքզինքր մեծ զգայէն աւելի տառապագին բան չկայ: Ահ, եթէ համեստութիւնը տգիտութիւն ըլլար:

Եւ տիտիիչ բան մը չկայ. տխուր, զարմանալի, անազորոյն պարապութիւն մը. տա օգին՝ թռչունները փախած են, անհետ են. ո՛վ գիտէ ուր են երգող թռչունները. բայց շուները փողոցն են. խխում, աղտեղի, յամառ, կը պտտին. վայրենի ընտանութեամբ մը քաղքին փողոցներն են, թափառական. անձրևոտ հեռուէն մերթ անոնց հաչիւնը կը լսուի. կերկեր, կաղկանձոտ. մինչդեռ թռչունները չեմ գիտեր ո՛ւր են: Ո՛չ մէկ ցնորք,

ոչ մէկ երգ : Եւ ինքզինքս զզուելի կերպով թըշ-
ուառ կ'զգամ . բոլոր աշխարհքին հետ զիս ալ ազ-
տեղի . լեցուն եմ անորակելի , կարծես անառարկայ
ատեցողութեամբ մը , որ կը նողկացնէ զիս . իբրև
թէ հողիէս անհասնում կոյառու մը անցնէր . և ա՛լ
ոչ զոք կը սիրեմ :

Ո՞վ . իւենա՞ն : Ո՞չ . ալ բան մը չըսեր ինձի
իր ստուերային գեղեցկութիւնը . զարմանալի բան .
ոչինչ՝ իր էութեան անբարբառ լեզուն որու մտիկ
կ'ընէի , մտիկ կ'ընէր մարմինս , հիացած , իր քովը ,
իրմէ հեռու : Աննիւթ բանը որ ինձմէ յիմարարար
կը սլանար իրեն , և իրմէ , խօլ , կուգար զիս թրր-
թուացնելու՝ կ'երևայ թէ նուազեցաւ , — ճ՛ն , ար-
զէն շատ աննիւթ չէ՞ր , — ցամքեցաւ , չորցած ազ-
բիւրներու անողոքելի չկամութեամբը . թերևս՝ ա՛լ
չորցած աղբիւրներու անպատում չքաւորութեամբը :
Քնարերգութիւններն ալ կը լռեն , որքան ալ ան-
միտ եղած ըլլան : Ի՞նչ կայ վախճալու . աս չէ՞ր
ըլլալիքը . և մի՞թէ չկար այս վախճանը տար-
փանքիս առաջին դողերուն մէջ , թէև չյիշեմ այդ
սկիզբը . . . : Չէ՞ մի որ ամէն սկիզբ երազով այլա-
կերպուած վախճան մ'է : Չէ , ալէկ է ասանկ . քանի
որ ասանկ միայն ճիշդ է : Կենսապայքարն ամենու-
րեք է : Ներաշխարհին մէջ պէտքերը , զգացում-
ները , գաղափարները կ'ընեն ինչ որ ամեն էակ
կ'ընէ . կը մրցին , կամ մրցած կ'ըլլան . անհասա-
կանութիւնն աննկող (intolér.) է ամենուրեք .
անցնի՛նք անգամ մը ամէն սեռակէտներէ , վիճակ-
ներէ , ներաշխարհը կազմող անհասականութիւն-
ները կշռելու համար : Սրտիս մէջը ինկաման մը

կար . որ անշուշտ աստիճանաբար կը պաղէր . որու շիջումը կ'աքօղուէր սարսամ գմայլման անօսրութեամբն իր դեռ տեղը բայրին որ ահա ցնդեր է բողորովին . ո՞ւր է խնկամանը , ո՞վ գիտէ ո՞ւր են անօգուտ բաները : Խնկամանին տեղ հիմա բան մը կայ որ դատարկ դրամապանակի մը կը նմանի : Քսակ մը ունիմ եղեր :

Ա՛հ , յանցանքը անո՞րն է միթէ : Կծկուած , ներամիտի՞ ալ ո՛չ խանդաղատանքի , ոչ հիացման , ոչ անձնուիրութեան կարող կ'զգամ ինքզինքս . — ահա այս ներկան ճիշդ վիճակներուն ժամանակն է , — ուստի ոչ ալ սիրային վերացումներու — օ՛հ . ցնորական բառեր . արծուաթեիլ հաւտայող բաղի զուարճալի թեաքախումներն իրենց մարմիններէն անտեղեակ հողիներու :

Եւ արդէն ո՞վ եմ ես որ սիրեմ . . : Միայն , մայրս կ'ողբամ :

Ամենուրեք տեսածս է գձձութիւն . թշուաւութիւն . ատելութեան փակ կզակները . իրական , զուտ , առանց երկինքի , ժպիտի անկարող , ժպիտը ուրացող փոս ու պիրկ այտերու ատելութիւնը . վասն զի երբ երկինքը կը ծածկուի՝ աշխարհքին աղտեղի սեռութիւնը երեան կ'ելլէ : Հեռուէն աքաղաղի մը ձայնը կը լսուի . և աքաղաղին ձայնն անգամ տխրալի աղաղակ մ'է որ կ'ուզէ երկարել , և խայտառակօրէն կը լիննայ : Ա՛խ . ի՛նչպէս վշտագին , զայրացնող է բան ծախողի սա հեռաւոր կոչը : Քաղաքին ժխորը խոնաւ , աղէտալի մռուռչի մը պէս կը հասնի , կը թափանցէ ինձի , որ ոչինչ կրնամ բնել : Միթէ , անջրպետէն ծորող զրապաշտ

կենսազրաւման մը գաղափարը տողորած չէ՞ ապ-
րողներուն ողորմուկ զեռումը . և իմ յուսահատ
ջղայնացումս : Չէ՞ մի որ նողկալի , ահաբեկիչ մահ-
կանացութիւն մը կը նայի անջրպետէն : Ահա մարդը
նորէն կը պօռայ . ձայնը , տառապագին , սուկալի
սոււայտանքով մը կ'երկննայ . հիմա պիտի մեռնի
տարօրինապէս թշուառ մարդը :

Հովը կը փշէ . նոճիները կը ծռին . կը ճօճին ,
անբացատրելի թախծութեամբ . նոճիները կապոյտ
երկինքը կը կանչեն . իսկ երկինքը մարած է : Պա-
տուհանս . գորշ լոյս մը ունի որ տխուր ու անճո-
ղոպրելի բաներու վրայ մտածել կուտայ : Այսօր
յայտնի է բոլոր իրերուն անզօրութիւնը , հիքու-
թիւնը , և իմ բոլոր ահագին խեղճութիւնս . ուրիշ
բան չկայ . ամեն բանի ստութիւնը , ծանծաղու-
թիւնը , աղտոտութիւնը կայ միայն . ընդհանուր
վիշտ մը կ'զգամ , առեկն բակի վիշտ :

Եւ ցաւերը կը խլրտին , կը զեռան . սրտիս ,
գլխուս մէջ անոնց մակարոյծի սողը կ'զգամ . եղ-
տիւրներու ցեխին մէջ բնակող ճեղքիկներու պզտիկ ,
կակուղ , անողորմ սողը որ զիս կ'ակօսէ : Եւ աչ-
քերս յառած անձրեւին մոխրագոյն ստուերին որ
կ'իջնէ , կ'իջնէ նոճիներուն խաւարին ծալքերուն
մէջ՝ կ'ըսեմ ինքնիրենս թէ ա՛լ ոչ զոք կը սիրեմ .
և թէ այս ա՛լ անիմաստ վիշտերէն , սա պատկերէն
ալ ազատելու համար , իմ անձիս բոլոր տգեղու-
թիւնը , բոլոր գարշելի խաբուածութիւնը , անջրն-
ջելի՝ յուսահատական պատրելութիւնը , իմ բոլոր
անձիս տաղտուկը մէջտեղէն վերցնելու պաղ չքա-
մոլութեամբ մ'ինքնիրենս մեղմօրէն կ'ըսեմ որ ա՛լ
ահա այսօր մեռնելու է : Կեանքերը ճնշող , ծիւ-
րող , կեանքերը սահմաներգեող այս անհուն գոր-

շուժեմէն՝ որ բոլոր վրկանքներն ու բոլոր յուսահատութիւնները կը մզէ, կը սրսկէ, բոլոր վայրենի վիշտերը կը ծորէ թշուառութեանս լուին ապշահար դիտակցութեանը վրայ, որ կարկող, խոնարհեցնող բացարձակութեամբ մը միջոցին մէջ յաւիտենական թշուառախար կը մանրամաղէ, թշուառախտին ծծմբաջրատային ժանտարերքի (miasm.) նուրբ, չարաշուք անօսրութիւնը՝ բոլոր կարողութիւնները կը կորսուին, բոլոր յոյսերը մէկիկ մէկիկ կը մղձկին, կ'ոգեւարին, և ինծի անանկ կուգայ որ ա՛լ ոչինչ կայ, ալ բան մը չկայ . . . թէ ա՛լ պէտք է մեռնիլ :

Տարօրինակ բան . ճառագայթ մը . աղօտ, գորշախառն ճառագայթ մը . տատամտա . . . :

Սենեակին խեղճ իրերը ճառագայթին կը նային . ցուրտ, երկչոտ հրճուանքով մը . պատուհանը երկբայող զուարթութեամբ մը կը մելամաղձոտի : Ոչ, չի կրնար տեսել . ո՛րքանս պղտոր է երկինքէն իջնող ճառագայթը, հիմա պիտի նուաղի : Խենդ եմ . ո՛րչափ խեղճ եմ, միթէ կրնա՛յ տեսել :

Ահաւասիկ ամէն ինչ նսեմացաւ նորէն . ճառագայթը գնաց . ամէն ինչ նո՛յն է :

Եւ ես կը շարունակեմ իմ հիւանդագին անշարժութիւնս . անդիմադրելի կերպով, ախտային վիճակի մը պէս ներսս կը խորհուի կոր որ այն պզտիկ պատկերը անպատճառ պէտք է շինուի : Պզտիկ պատկերը շինուիլ կը պահանջէ ինձմէ . և ջլատ ապիկարութիւնս ի զուր կը ճգնի այն կողմը չնայիլ . անզգալի կերպով հեռանալ, աղատելու

համար այդ պատկերին լիւումէն, պատկերին որուն չգոյութիւնը սպառնապին կը հայի հողին, կարծես վիզէն բռնած, և անդին չե՛րթար. անդին չե՛րթար: Տէ՛ր Աստուած. միթէ ես կրնամ գծել. ինչ անհատաւորի տխմարութիւն էր որ ըրի՞ հաւանելով այդ անհնարին բանը ընելու: Իսկ անիկա, պատկերը, ջղագարներու անձև ու խղղող խաղրկիկին պէս մարմնոյս, հողին վրայ հասած, կը հայի, այլանդակ, անհեթեթ պզտիկ պատկերը:

Աւանդ, պատկերը զոր դասապարտուած եմ շինել, մինչև հիմա կը կորսուէր կ'երթար եթէ ներքին բան մը եղած չլլար. եթէ ակտային վիճակի մը՝ թշուառախտի ցաւի մը յատակերպումն եղած չլլար: Վասնզի որքան ներշնչուի է աղքատութիւնս՝ այնչափ անվտարելի է ան:

Միակ խայտառակ քաղցրութիւնը զոր կարելի ըլլայ յուսալ կենսաչափութեան անզթութենէն՝ իր նուազ ցաւագին ճնշումն է սիրտիս վրայ այն պահուն որ պզտիկ պատկերը հոյն իսկ գեղեցիկ շինած ըլլալու հիքութիւնս հաստատած ըլլամ, այն պահուն որ վճարուելու գձուձ երանաւէտութիւնը վայրկեան մը շփոթեմ մուցում ու անստահալի ու ճշմարիտ հաճոյքներու հետ. երբոր գայած ըլլամ փարա վաստկելու. ցուցնելու, հասկնալու իսկ համար թէ կ'ապրիմ կոր այն բոլոր մարդերուն պէս որ քաղաքներուն աճարեկ, նենգաւոր ու գեռացող բաղմութիւնը կը կաղմեն: Չէ՞ մի որ ապրելու բնազդը մարդոց եղունգներովը սրբագրուած ու փոխուած է փարա վաստկելու բնազդացած պէտքին. ապրելու իրաւունքն ապրելու խնդրուածք մը չէ՞. ապրելու պաղատանքի մը պարտաւորութիւնը չէ՞: Քաղքին բզղուն ու հա-

ուսչալիր ժխորր չէ՞ մի որ մեղմացած՝ բարոյաաքօղ-
ուած հանդիսն մ'է որ արծաթին անհուն արժէքը
կը պատմէ՝ կատաղի եղեռնական երգով մը որ մար-
դազոհերով փառարանուող երբեմնի աստուածներու
տօներուն կարծեցեալ ջնջմամբ մը մուչուած աւի-
նին դեռ գոյութիւնը կը յայտնէ՝ ապրելու պէտքին
հետ շփոթած, ապրելու ոճրագործ մոլեռանդութեան
մը վերածուած: Եւ ես ի՞նչ տխուղ ճանաչմամբ իմ
էութեանս բղղիւնին իրաւունք ունեցած ըլլամ վե-
րագրել դրամին ձգտումէն գերիսկեր կամ հոյն խակ
տարրեր ձգտում մը, ո՞չ ապաքէն անկէ քանի ա-
ռաջ աղքատ մ'եմ ես, տժգո՛հ իր աղքատութենէն,
ի՞նչ տեսակէտով որ ըլլայ, և չէ՞ մի որ կը խորհիմ
թէ, այս մութ՝ արտասուող, կենազրաւող օդին՝
պէտք է որ գտնեմ հարկաւօր զօրութիւնն անխու-
սափելի գործ մը կատարելու, իմ ինքներկրայն՝ զ
մարդու անկարողութեամբս, և ո՞չ ապաքէն վաղն
աւատ՝ պղտիկ պատկերը աւարտած — իրա՛ւ,
աւարտած — դուրս պիտի ելլեմ սենեակէն, սու-
նէն, վտիտ ու մտամոլոր՝ կենսապայքարին անըն-
դունակ օտարական որ սակայն անոր հարկը խոս-
տովանելու պիտի երթամ կատարեալ համողմամբ,
կատարեալ աղքատութեամբ: Չէ՞ մի որ վար, մայ-
րաքաղաքը պիտի իջնեմ այն զառիւթայրէն ուրիշ
անցած եմ այնչափ անգամ, — թէև ամէն մարդ
ինձմէ շատ սուելի յաճախ, որովհետև միշտ անցած
է անկէ, — իմ տարարազդութեանս իջամուայլ ճամ-
բայէն, այն քայլով որով այնչափ անգամ իջած եմ
այդ անկումը՝ դէպի ներշնչազուրկ գործերու կեն-
սաչահական ճարպիկութեան վարձատրութիւնը. —
Իռենա՛, որ շեռ տեաներ այդ էջքը, ու շեռ ար-
տասուեր պատուհանէդ՝ շտեանելով թէ որքան

անկում մ'է անիկա, դէպ ի մարդոց անմիտ թիւէն
քաջալերուած մրցման անասնականութիւնը, առնու-
չական կեանքի ստորնայուճներէ խուսափմամբ՝
խղճի խորագոյն ստորնայումը, քաղաքացի ան-
հատականութիւն մը գնելու համար դէպի լեռնա-
վայրի ինքնութեան վաճառումը :

Պիտի ելլեմ երթամ շողենաւին հասնելու, այն
խեղճ մարդուն պէս որ ինձմէ առաջ կ'երթայ, ինձմէ
առաջ մեկնած, նաև այն միւս մարդուն պէս որուն
ոտնաձայնը պիտի լսեմ ետեւէս, իբրև մէկը բոլոր
այն մարդոցմէն որ կ'իջնեն անկէ, և ուրիշ ճամ-
բաներէ՝ մեծ մռայլ մայրաքաղաքին մէջ կորսուած
նպատակներով որոնց տարտամօրէն ունայող ձայնը
քաղքին գորշութեան մէջ կը բարձրանայ՝ մինչդեռ
էջքիս ֆիզիքական խոնջէնքն ու արգահատելի մէկն
ըլլալուս գիտակցութիւնը զիրար պիտի սաստկա-
ցընեն՝ զիրար արտադրելով : Յամբաքայլ իջնել
սկսած՝ հետզհետէ պիտի երագեմ քայլս, ու զա-
ւագին, գրեթէ պիտի վազեմ զառիվայրէն ուր
կքուն հասակս կը հակի աւելի, ա՛լ ատելութեամբ
լեցուն նկատմամբ շահին որու վրայ պիտի երկ-
բայիմ, ինչպէս արդէն հիմա, աղքատ ըլլալուս
համար : Ա՛հ, տաժանելի էջք, որու աստիճանա-
կան երագումն իր ստորնայնող նպատակին անհրա-
ժեշտ ձգողութիւնն է կարծես, մինչդեռ ոտնաձայ-
նիս խօլ դուրիւնին մէջ պիտի կարծեմ զգալ պա-
րանոցիս վրայ՝ շահուն հետեւող կամ առաջնորդ
այն ընկերային ու ներքին նուաստացումներուն հար-
ուածը՝ որուն կոպիտ իրականութենէն պիտի փախ-
չիմ կարծես, և որ պիտի սաստկանայ, ու հալածէ
պիտի զիս, որ պիտի վարէ զիս իբրև թէ Եսս ըլ-
լար : Եւ իրօք, իմ ընկերային Եսիս, իմ անխու-

սափելի ու ողորմուկ քաղաքայնութեանս գիտակցութիւնը չէ՞, իր ինքնութեան լրջութեանը վրայ տարակուսող՝ իր ա՛լ կեղակարծ թուող ինքնութենէն ամօթահար եսի մը տրուիր չէ՞ զառիվայրէն իջնող ոտնաձայնս :

Մարդերու թիւ, որ մարդկային անամնականութեան ծաւալն ես, որ արդէն անանուանելի անկաշկանդութիւնը նուազելով թշուառութիւնը կ'աւելցնեն, գիտե՞ս ինչպէս կը սիրեմ ծուլութիւնը . գիտե՞ս ինչպէս կ'ատեմ կենսաշահութիւնը . — քու եղերաղաւելտ «յառաջդիմութեանդ» այդ նշանին անբարոյական ճակատագրականութիւնը գիտե՞ս ինչպէս կ'արհամարհեմ :

Դարձեալ ճառագայթը . օ՛ն, օ՛ն, աւելի՛ շատ . աւելի՛ պայծառ : Իրերը ի՛նչպէս կը լուսաւորուին, ինչ խեղճուկ երանութեամբ . մարդերը ի՛նչպէս կը կանաչնան : Ո՛րքան պիտի զուարթանամ, ուրա՛խ պիտի ըլլամ հիմա, եթէ նորէն չկորսուի աս լոյսը :

Ի՛նչ պարզմտութիւն, ահաւասիկ ճառագայթը կը խաւարի . կը խուսափի . անհուն անգլխութեան կը թողու զիս նորէն : Աստուած իմ, պիտի տեւէ՞ այս ամպամածութիւնը : Աշխարհքին արտաշնչութեան այս մոխրային, այս տղմային թանձրացումը պիտի շարունակէ՞ լուսապայծառ երկինքին տեղը բռնել . ա՛հ, ինչպէս աշխարհքը արժանի է իր ստեղծած այս մուայլ երկինքին :

Լմնցաւ, խաւարեցաւ ամէն բան . ամէն բան իր թշուառութեանը վերադարձաւ :

Եւ աշխատիլ պէտք է . վանց ինծի . աշխատիլ
այն խնամտով որով աշխարհք կը հասկնայ աշխա-
տութիւնը . կուզի կամ լուսանի նենգաւոր կամ խի-
զախ կենսաաշահութիւնն ստուերին մէջ : Որովհետեւ
խարէութեամբ կամ բռնութեամբ շինուած կռիւն
է միայն ինչ որ աշխատութիւն բառով կը հասկնան
և անոր սրբութեամբն ու խաղաղութեամբը սքո-
զած կը պարտադրեն : Ամենուրեք հակաաականու-
թիւն , ստութիւն : Մարդկութիւն բասին մէջ պահ-
ուած քաղցր խնամներն անընդհատ կը ժխտուին ,
կ'ուրացուին կենսապայքարին անհրաժեշտ նկատ-
ուող ազեղ պայմաններէն , ու կենսապայքարէն
խակ , քանի որ այս անդուլ կռիւր փոխանակ բնու-
թեան ու մարդուն միջև սահմանափակուելու՝ կը
զինուի մարդկային անհատներու , խումբերու միջև ,
որք սակայն տեսապէս ցուցունեն , ցուցադրեն իրա-
րու սիրոյ գաղափարներու արացում մը տիեզե-
րական Օրինաց ճանաչմամբ :

Թողլով որ մարդկային Օրէնքը , անհետեւելի
մեծամասնութեանց սովորոյթները ներկայացնող ,
անհատներու բազմատմամբ շատ դանդաղ կը յա-
ռաջդիմէ , և խնայական ու բարոյական անցեալի
մը պատկերն է միայն , փոխանակ խնայական ու
բարոյական իտէպ մը , մատչելի , ճակատագրական
ապագայ մը ներկայացնելու , ահա մարդասիրու-
թեան , հաւատարութեան , անկաշկանդութեան , և
դեռ չեմ գիտեր ի՞նչ այսօրինակ գաղափարներու
կը յենու , աւանց գիտել ուզելու , գիտել կարենա-
լու թէ այս կերպ մտապատկերները կը ժխտեն զի-
րար յաճախ , այնքան որ ոչ միայն Օրէնքին յա-
ւակնութեան և իր գոյութեան պայմաններուն մի-
ջև է հակաակութիւնը , այլ նաև իր արամադրու-

թեանց իսկ մէջտեղ : Անհատականութեան ամենամեծ գործնականացումն է մրցումը . և ասիկա չի բաւեր հաւասարութիւն ըստածը բոլորովին բաւհարու , եթէ երբեք այդ ցնորքը կարելի էր : Ժողովարդները մրցման կաշկանդիչ սահմանափակումէ մը զերծ պահելով , և մրցման անկարողներու հարկաւոր միջոցները չքնծայելով՝ մարդկութիւնը չի յանձներ զմարդիկ մեծագոյն ճնշման մը , որ մարդոց բնական անհաւասարութիւնն է : Եւ ի՞նչպէս կրնայ մարդասիրութիւն պահուիլ տակաւին մրցման ազատութեան մէջ , որ կենսապայքարի փառք օրէնքին հաստատումն է . միթէ կենսապայքարին բռնութեան մէջ կրնա՞յ բողբոջիլ ու չոսնիլ մարդասիրութեան ու հաւասարութեան այսինքն եղբայրութեան խաղաղասէր զգացումը , որու երկնային ներփթիթումն է միջոցն ու խորհրդանշանն ապառնի երանութեանց աւետարանական ու ներկրօնային (ésot.) յոյսին , կամ նոյն իսկ երկրային կեանքի մը զմայլելի իրականութեան : Ինչ որ է անտարակոյս անհատին յօժարութեանց վերև անհատական բարոյականը , նոյնն է մարդկութեան ձգտումներուն վերև հաւաքական բարոյականը , որմէ՛ միայն մարդկութիւնը պարտէր բղխեցնել իր կանոնները , և ո՛չ նախապատմական՝ նախամարդկային սովորոյթներէ : Ահա ասիկ մարդկութիւնը կը թողու որ կռուին մարդիկ , թէև կեանքին իրաւունքը կը պաշտպանէ , կը հուշակէ , — և անուղղակի՝ վերածելով կենցաղն աղէտայի , անհասկնալի տաժանքի մը՝ մահն է , որ կը քաջալերէ , մահը , զոր կը ներարկէ կեանքին , զոր մարդկային կքուն ու զեռացող կոյտերու ապրիլ կուտայ : Մարդ՝ մարդկութեան մէջ ունի ա՛յն վիճակը զոր

նախամարդը, լեռնական՝ ունէր բնութեան զօրութիւններուն մէջ: Ահ, արտաքին բնութիւնը նուաճած՝ մարդը դեռ չի կրնար ընկճել ինչ որ ստացած է անկէ վայրի, տարերային: Ներքին բնութիւնը դեռ աննուաճ, նախնական, կ'ապրի դեռ մարդկութեան մէջ իբրև քարանձաւի մը մէջ: Քաղաքակրթութեան արդի տեսիլներն անհունօրէն աւելի աննման են լճաբնակներու քաղաքակրթութեան՝ քան արդի գերեզմաններուն կմախքներն ու գանկերը՝ անձաւներու բրածոյ սակերտօիններուն: Կենսապայքարը հազիւ առած է յառաջդիմական քայլ մը, իբրև անսահմանօրէն վաղընջական սովորոյթ մը, իր յափշտակիչ ոգւոյն մերկութիւնը կորսնցնելով, և անոր փոխակայելով նենգութեան, խարերայութեան քաղաքավարութիւնը: Քաղաքակրթութիւնը պարտէր բխացնել, նախնամնաց գործարանի (org. rudim.) վերածել ինչ որ մարդոց մէջ շանակուայ, ժահանօթ է հանդէպ իրարու. և անհատական բարեկեցութեան մը ճշդաբաւ շրջանակին՝ բազմութեան և սանձարձակ անհատականութեանց մէջ սեղմուիլն ու նախանձոտ արտաշնչութեամբ մը թունաւորուիլն արգիլել: Շօրէնհատերի կարծեօք՝ ոչ ոք պիտի ուզէր աներկբայելի թշուառութեան մը լքել իր սերունդը՝ եթէ հայրութիւնը բնագոյի գործ չըլլալով՝ խորհրդածութեան արդիւնք ըլլար: Անտարակոյս ինքնապահութիւնն ալ ոչ զոք պիտի մզէր կեանքը շարունակել եթէ բնազդական չըլլար, այլ խորհրդածութեան ու կամքի գործ: Ինչ բան արդեօք աւելի պիտի վայլէր քաղաքակրթութեան՝ քան իբր հզօր ու բարի մտածում մը՝ ինքնապահութեան հաւաքական մեծ բնազդի մը պէս՝ չթոյլատրելն անհա-

տական ինքնապահութեան չարաչար կաշկանդումն ու հրէշօրին սանձարձակումը : Քաղաքակրթութիւնը մի՞թէ խիղճը չէ՞ Մարդկութեան :

Չէ՞ր կրնար ըլլալ որ, քանի որ կենսապայքարը մարդկութեան մեծագոյն չարիքն ու ամօթն է, զայն ոահմանափակելու համար միայն Մարդուն և Տիեզերքին կոյր երևոյթներուն միջև, ու դադրեցնելու համար զայն ըլլալէ մարդոց մէկ աններդութիւնն ու չարակամութիւնը հանդէպ իրարու, Քաղաքակրթութիւնը պարտաւորիչ ընէր իւրաքանչիւր անհատի՝ անդամակցիլ անհուն գործաւորութեան մը, իր տաղանդին և ո՛չ յաւակնութեանց համեմատ աշխատելու համար հանրութեան պիտոյքներուն հայթայթման, և միայն քանի մը տարիներ, ու այս պայմանով իւրաքանչիւրին ապահովէր ցմահ անպայքար կեանք մը որու կատարեալ իրաւունքը շահած ըլլար իւրաքանչիւր մարդ իր ժամանակաւոր ծառայութեամբ : Ի՞նչ երանութիւն կամ մանաւանդ խաղաղութիւն պիտի ըլլար այնուհետև կեանքը, երբ իւրաքանչիւրն առ հանրութիւնն իր պարտքին հատուցումէն դարձին՝ ինքզինքը տար իր սիրական աշխատութեանց, կենսապայքարի քրտինքներով չդառնացող, ու կենսապայքարի դժնդակութիւններէ անարգել ու անվհատ, և մանաւանդ անոնցմով շանրարոյացո՞ղ ու չզատածող մտաւորականութեան մը, բոլոր այն այլազան ուղղութեանց մէջ որոնցմով մարդկային հանճարը կը ձյտի ճշմարտութեան ելլել : Ի՞նչ գեղեցիկ բան . ի՞նչ արդարութիւն : Ո՞վ չէր ուզեր այն ատեն երթա՛լ աշխատելու . իր տաղանդը սրը-

աագին ու լիովին ընծայելու մարդկութեան, ցկեանս
անդորրի մը, ցկեանս նոյնինքնութեան մը յոյսը,
ստուգութիւնը զ՞՞վ չպիտի մղէր եռանդագին պար-
տահատուցման, և աշխատութիւնը սիրելու, աշ-
խատութիւնը նկատելու արդար ու քաղցր գոր-
ծունէութիւն մը, գիտական ու բարոյական վիճակ
մը, գերազանցապէս անզանցառելի նրահանգ մը
(pratiques) այն զմայելի բարոյակրօնութեան մէջ
զոր այսպիսի մարդկային կազմակերպութիւն մը
պիտի ենթադրէր: Այն ատեն, այնպէս չէ՞, ամե-
նէն աւտամիտներն ամենէն ծառայականներուն
գործակից, պարտակից ըլլալէ չպիտի խորշէին,
այն ատեն, գռեհիկ կենսապայքարին անընդունակ
երազող բնաւորութիւններն իրենց վերացմանց
անհրաժեշտ հիմնապայմանը պիտի նկատէին իրենց
ինքնութիւնը չուրացող ու զայն ապահովող այս
գործունէութիւնը: Այն ատեն, այնպէս չէ՞, Թու-
թոյը հո՞ն կ'երթար հագնիլ իր երկրազործի պուզը.
ՍուիՖիթ գրագիր կ'ըլլար հոն. Չէսվանդէս, ծառայ-
Ռուսօ զգեստի լարէր (lacet) կը շինէր, ուրախու-
թեան մը այս անգամ. Մոնթէսքիէօ հովիւ կ'ըլլար.
Իսկ Պըրնս մշակ, ու Ռպուլ հացապարծ. Սվետոնպօրիկ
իրը հանապէս կ'երթար հոն. Տիկին ար Մէնդնոն
տեսչութի կ'ըլլար. Հանս Սաքս կօշիկ կը կարէր ...:

Ա՛հ. ի՞նչ հիքութեամբ կը փարիմ ստուերայի
ճառագայթներուն, որոնց տկար լոյսը կ'իջնէ, վա-
րանտա, ու կը խուսափի, կը խաւարի. — ինչպէս
բարոյականին, բարոյացման գաղտնիարին, յուսակե-
տութեամբ պղտոր, որ չեմ գիտեր ինչպէս կ'ապրի
ու կ'արթննայ ներսիդիս:

Նորէն . — վերջինն է արդեօք : Ինչ է ճառագայթին այս խաղը՝ հողիներու , համոզումներու հետ . ինչո՞ւ կուգայ անգլիօրէն երկինքը յիշեցնելու : Ա՛հ , բայց ինչ աղէկ է սասանկ : Որչա՛փ վճիտ է ճառագայթը , այլևս իրապէ՛ս երկնային՝ փետեկտուած , ցրտո՞ղ ամպերուն մէջէն : Երկինքը ահաւասիկ , կապոյտ , կապոյտ . ո՛րչափ գեղեցիկ է , ո՛րչափ գեղեցիկ է . — Մ՛հ , ոչ , ա՛լ չի կրնար ծածկուիլ : Ինչպէ՛ս պէտք ունէի այս լոյսին . կանանչներուն , ո՛րչափ այս երկինքիումին անուշութեանը կարօտ էի . և ինչպէ՛ս յաւէտ ծարաւ եմ երկինքին : Նոճիները կը թաւշափայլին , շշնջալիր . արևուն լոյսն անոնց խորքը կը սուզի , խանդավառ ու հանդարտ բարութիւն մը կը զեզու անոնց գիրկը : Մարգերուն վրայ երանութեամբ երկարող անոնց մեծ շուքերուն մէջերէն հրեղէն կանանչներ կը փռուին : Սենեակս եղկանուշ լոյսով մը կը լեցուի , խեղճ սենեակս : Ճլուրջիւններ , արդէն , կը հնչեն նոճիներէն . ա՛հ , գեղեցիկ օդերու ճլուրջիւնները . թռչնիկները հոն են եղեր . նոճիներուն մէջ ապաստանած , թաքուն — ինչպէ՛ս թեաւոր զգացումները , անմեռ , կը թաքչին տրտում մտածութեանց խորը . — ահա վերսկսեր են երգել իրենց աղւոր օրերու զուարթութեամբը : Ըսէք , կանչեցէք ճառագայթին , թռչնիկներ , որ չփախչի , չլքէ՛ երկրի գծրապղնները : Ա՛լ չա՛պտուէր . վասնզի այն ստուն գործունեցած է : Շատ զէշ բան մը կ'ըլլար ատիկա . ա՛լ անհաւատալի անգլիօթիւն մը կ'ըլլար , եթէ երկինքը , այս երկինքը ծածկուէր այն գորշութեամբը : Ինչ աղւոր է հիմա , ինչ կենսաւէտ , սիրալիր՝ բոլոր այս անուշութիւնը : Քայքայուած , վտարուող ամպերուն հուսկ ստուերները յամբօրէն կը սահին

կ'անցնին դաշարիներուն , նոճիներուն վրայէն : Ան-
չար , զարհուրելի արամութեամբ մը պիտի սառա-
պիմ եթէ , երկինքը կորսուի նորէն : Եթէ ճառա-
զայթը գիտնար թէ որչա՛փ խեղճեր կան , որոց
յոյսն ու դօրութիւնն է ինք , որոց երկնային մխի-
թարութիւնն է :

Սակայն ճշուրլիւնները կը շատնան . պայծառ
ու քաղցր : Միթէ չեն գիտեր , միթէ կը սխալին
անոնք . — կը սասականան , կ'ընդխառնին նոճի-
խումբերու սեպ ու մի՞թիւ կոներուն մէջերը , որոց
դժնէ կողերն ի վար լոյսը մարգային խածութիւն-
թիւններ կը փթթեցնէ , — ու կը դայլայլին , կը
դդրչեն , հրճուալի , թրթռոլոր , երկարաձիգ , ընդ-
հատուած՝ վճիտ լուսթիւններով ուր նոր ճռու-
ղիւններ կը ժայթքին , կը խուժեն հեռուէն , փա-
փուկ անդորրութիւններէ ուր նոճիներու խատու-
թիւնը կ'եղկանայ , հեռաւոր կանաչութիւններու ,
ծաղիկներու շնչակերպ անօսրութիւններէ վեր բարձ-
րացած , լամիոններու մեղմ երանգներու սիւլունե-
րուն մէջէն , ծիրանի լամիոններուն որ լուսո-
ղող դաշարիները կը տոգորեն , ու ճերմակ ծխային
քօղերուն մէջէն ծտապաշարներու բազմութեան ,
որ կը մշշոտեն նոճեաց կանանչ մարգտղետինն՝
իր այտումներուն ու կքումներուն վրայ ձկող
մեծ շուքերու գօտիներով ստուերարկուած , երա-
զուն ջուրերու պատառներով արծթերիզուած , որոց
եզրը ճոխ , երջանիկ ելուզումներ , մերթ պզտի ծա-
ղիկներով , պզտի վաղենիկներով ոսկեխայտ , ոսկե-
հուռ , կը ձգտին արեւին , մինչդեռ գոյները , կեն-
դանացած կը վառին , ու նամէտ ստուերները , լու-

սոս , կր սաքնան , մինչդեռ ամեն ինչ արդէն խա-
ղաղ է , հիացած՝ գորովագին լոյսին մէջ որ կը
պարուրէ , կը թափանցէ , կը կենսաւէտէ իրերը ,
խելճուկ արցունքոտ խոտերէն , կրկրի բոլոր հէք ,
սիրելի կենդանութիւններէն մինչև անջրպետին վե-
րին սարսուռներն , ուր թիթեւ ամպերը , հեռան-
գայտ , զուարթ դուռզներ՝ (circ.) ճերմակ հոյլերով
կ'ընկրկին անհուն շափիւղային երկինքին մէջ , որ
կը ծաւալի , ջինջ , լուսապայծառ , և անպղտորելի
երանութեամբ մը խորին , և դէպի ս'ւր ծանրա-
շարժ , հեռադու հեքերով սօսափող նոճեաց ծայրերը
կը վերանան , հեշտօրօր : Ինչպէ՞ս ամեն բան գեղե-
ցիկ է , տառապանքէն կտքը : Ինչպէ՞ս կը ջանկու-
թիւն կ'արտացոլայ բոլոր այս վերածարժ առուգու-
թեանէն . և ս'րչափ այս լոյսն է ամենուն կրագը ,
ափոփանքը , ամենուն կրկնային պայմանը : Թրուչ-
հիկները կը ճուռուղեն . կը ճլուրլան զմայլած վստա-
հութեամբ . սուիչներու շիթերով , դողդոջուն հրն-
չիւններու հրճիւով կը թրթուան նոճիներուն լոյստ-
ուերոտ խորութիւնները . ծաղիկներով խոնուած ,
ծաղիկներու հեկրփնումներով շղարշուած կանա-
չութիւնները կը խաղան , կը սարսուան կրանու-
թեամբ , թռանցնող գարնաբոյր շունչերէ : Հեռու-
ներէն աքաղաղի երգ մը կը ցայտէ , կ'երկննայ
ճուռուղիւններուն մէջէն . ս'հ , ոչ , առաջուան աքա-
ղաղը չէ անիկա :

Տաք , զմայլած կենդանութեամբ մը կը լեց-
ուիմ , ծագող լոյսը խմելով . բարութեան հեշտալի
երանգներով գեղուն անապական լոյսը . չն՞մ գի-
տեր միթէ , երբեմնակի հիւանդագնութիւնս չի՞ գի-

տեր թէ անխիա կենարար վերանորոգիչն է յողնա-
քեկ հողիներուն, բայց վշտալի կեանքերուն ողոր-
մած սիրտիանքը. վհառ հառաչալիք ճիգերը երգա-
խառնող յոյսն է: Ամէն ինչ զմայլմամբ եթերին
կրնայի, ու անեղբու-թիւնը կը շնչէ ազատօրէն,
էութեանը խորէն կ'զգայ թէ անոր կը վերաբերի:
Ամէն ինչ գեղեցիկ է, որովհետեւ երջանիկ. ամէն
ինչ իմաստալից, ու կարող հոգւոյն մէջ թափան-
ցանց նրբազղ ումներ հոսելու. արծարծելու, խռո-
վելու համար հոն կեանքի փեղերական ու զուտ
ուրախութիւնը, որ նրճուանքներու իմացական,
բղձակերտ, տառապալիքն զարտուգմանց հետե ան-
հետ ահա կը յաւնէ արտիւղու մեղմօրէն իր հին
օրևու երգը: Գարունը որ կը զեղու դուրսը և հոգ-
ւոյն մէջ կը խռովի՝ կեանքին զաղասիարը կը ներ-
շնչէ, կեանքին արհամարհուած՝ իսկանուշ գաղա-
փարը կը շաղէ կը նշուհոսէ մտքին մէջ, ու մեղմ,
հինաւուրց եզանակներ կ'զգամ ներսերէս, արտաշ-
խարհի գաշնակութեանց իսկացող արծազանդը, և
գարնային քաղցրութեանց զուգակից բերկրանքնե-
րու ճիտալը կ'զգամ իմ սրտիս ալ մէջ, ինչպէս
ամբառ հանրէութեան հոգւոյն մէջ, ու թռչուննե-
րու պայծառ ճռուողիւններէն թափանչուած, և
զեփիւռէն որու թռչտուն կենասուէտութիւնը կ'ընդ-
խառնուի ներածուփ մանկական շունչերու խօշու-
թեան, կը դադրիմ տառապելէ յիշատակը քաղա-
քին՝ որ անշուշտ լոյսերու մէջ կ'ընկղմի հիմա, և
բնութեան գարունին նշտութեան մէջ անկաշկանդ
բնէացում մ'ապրելու կը ձգտիմ, տարակոյսին,
երգիծանքին ներքնակից ցաւէն հանգչելու, կեն-
սապայքարի ցաւերն ու ամօթը մաւնալու. — և մտ-
նալը սրբան նշտին ուրաջում մը կամ արդարաւ-

ցում մ'է . , թաքուն ու անկեղծագոյն հնէութեանս
բնական , անդրեասական պատշաճեցմամբը տիեզե-
րական մեծ հայրենի վիճակին՝ ընդխառնուելով
տարտամօրէն Անհունին առջև հոծուած , կապուած
անցն հախկին յաւերժական եղբայրութեան զոր
եթերին , հեռուներու լեռներուն սարսուռներէն
հոսող ծաղկաբոյր երանութիւնը կը փափայ սիր-
տին : Ինչ մեղմ է անուշահոտ ու հշուլող օդը .
բնութեան աննդականութեամբը հոծ , ուր ոչինչ
կը ծփայ անհեաացած չարաշուք թշուառութենէն :
Միամիտ վստահութիւն մը , ինչպէս ամէն վստա-
հութիւն , կը լեցնէ զուարթացած հոգին որ եր-
կինքը տեսնելով կարծես սիրեցեալ բարեկամ մը
կը գտնէ և յանկարծ ա՛լ վիշտ չունի : Իրօ՞ք կը
տառապէի կոր ես . իրօք աշխարհը լեցնող ու ճնշող
թշուառութի՞ւն մը կար ուր մղձկիլ կ'զգայի կոր :
Հեռալուր ձայները որ երազուն , եղկօրէն շփոթ
աւաչերով հեռուները կ'ոգեւարեն , իրօք հեծիւն-
ուն՞ք էին : Ինչպէս կը ցնդին տառապանքները .
ինչպէս կը հալածին : Երկինքին կապոյտը հեռա-
ծուփ ամպերուն վերեւէն կ'երևայ , անեղր ու դե-
ղեցիկ , և , ճնշումէ ազատ՝ վարի հոգիները հեռա-
լով կը ծաւալին , կը բարձրանան : Երանութիւն
կայ դուրօր . հոճիներուն յամօրէն քթթող բայ-
տածքներէն խորունկ երկինքը կը զողզւայ . թրու-
չունները թեւաւոր հայուածքներով կը հային անոր .
խօղ ճնձղուկները , որ կը ճվճվան , կը ճռուողեն ,
վճիտ , վստահ , երկնային ճիչերով . ստուերներէն
թեարափումներ կը թռին , լուսալող թափանցիու-
թեանց մէջ բարձրանալով . մեծ շուքերուն հովան-
ւոյն մէջ բոյսերը կ'զգան հեռաւոր երկինքը . ճա-
ռագայթներուն տակ վայրի ծաղիկները կը բանան

անոր իրենց փափուկ գիտակցութիւնը . շնչիւն-
ները մեղմածուփ կը սահին . բուրումներու լեռնա-
կան անպատում սիււղեր յամբ ու յորդ ալիքներով
կ'անցնին անորակելի բազմաքներով լեցուն . կար-
ծեա իրադործելի բազմաքներ , անցեալ իրադոր-
ծուած տենչերու աղօս յուշաւորութեանց պէս ,
օղին անհուն անուշութեանը մէջ կը խռովին և
ամենուն ալ խայտանքը կը ձգտի հեշտաւէտ իւ-
րացմանն անճրպեօին կապոյտին մէջ էացած խաւա-
ցած կենսականութեան մը , որ էակներուն կենդա-
նութեան երանութիւնն է : Բնէական կենցաղի մը
մանկական վատահութիւնը , երջանկութեան նոր ,
կարծեա անծանօթ ու անճառ հնարաւորութիւն մը
կը թրթռացնէ սիրտս . . . : Իսկնա . . . :

Չէ' , չէ' , կը սիրեմ դեռ քեզի որովհետև միշտ
կը սիրեմ քեզի , Իսկնա . ան' , զքեզ վերատին կը
գտնեմ պայծառութիւններուն մէջ . քաղցր վերա-
ցականութիւնն զոր կորսնցուցեր էի , սիրուած յի-
շատակներու , տենչերու , մեղմ զգացումներու հետ
անա կը գտնեմ զքեզ իմացականութեանս , մարմ-
նոյս մէջ իջած : Ինչպէս կը հաւատամ գեղեցկու-
թեանդ , հաւատալով լոյսին , երկինքին , — բայց
մանաւանդ այն խուլ կարօտին զոր անծանօթ նե-
րէութիւնս դատապարտուած է զգալու քեզի հա-
մար , շքեղ ու մութ աղջիկ , գարնային սառեկնե-
րու պէս տարփագին , ու խռովիչ : Ա'լ անա կը յանկ-
չիմ (s'orient.) լուսաշաւիղներու մէջ , ու կը գրո-
նեմ իտէական ինքզինքս որ Անեղբութիւնը : կը
տեսնէ , և ամէն բանի անդրազոյն իմաստը , ար-
դարացումը , ներումը կը բնազգայ : — Ամէն ինչ
ճիշդ է , մի միայն ճիշդ . . . :

Մեղմօրէն կը ժպտիմ, նայելով, և ժպտան, անդայտ զրովարդ (égl.) որ կը ծաղկի կերպարանքիս քաղքենի ու կարծես մշտական յուետեաութեանը մէջ՝ կ'զգամ թէ իր արմատն ունի անխեղաթիւրելի խորքին մէջ, նախնի, լեռնարոյր բնազդականութեանցը մէջ եսին, — հոգւոյն լաւատեսալքը, և թէ ծաղիկներուն անբացատրելի վատահութեամբը կը փթթի ան: Կենդանութեան անցքին տակ որ կը շրջի մէջս՝ կ'զգամ թէ որքան բարի բան մ'է ժպտա մը, և լաւատեսութիւնը որքան ժպտա մ'է, — ժպտաի մը խորհելու կե'րպը: Ահ, եթէ մարդ ուրիշ բան չուզեր բաց եթէ ժպտիլ, — եթէ մարդ ինքնին լաւատես է, գոնէ տեսապէս բարի չէ՞ արդեօք մարդ: Վասնզի ո՞վ իրապէս, այսինքն ներքնապէս, յուետես է: Մհ, կեանքին, կեանքերուն անհուն ժամանակներուն մէջ պզտիկ, դոյզն բաժի'նը մարդկային յուետեսութեանց, բաղդատմամբ լաւատեսութեան որ տիեզերքը կը լեցնէ, կեանքերն արտադրելով: Վասնզի իբր կեանքի հայեցակէտ՝ լաւատեսութիւնն է, որ տիեզերական է միայն, քանի որ իբր կեանքի պայման տիեզերական է արդէն, փիլիսոփայութիւնն ըլլալէ առաջ կեանքին ուժն իսկ, ու գոհունակութիւնը, գոհարանութիւնն ըլլալով, — զգացում՝ որ կը լեցնէ նոյն իսկ յուետեսօրէն փիլիսոփայելու բերու մը, գործը: Լաւատեսութիւնը հանրէական, կենսական է, մինչ յուետեսութիւնն անհատական: Քաղափարներու պահպանման ու ծաւալման քաղաքակրթական միջոցներուն՝ անբնական կամ ոչ տիեզերապէս և ոչ ար-

դարեւ մարդկօրէն բնական գաղափարներուն ըն-
ծայած ընդհանրացումն ու անւողութիւնը՝ կրնան
դիմադրուիլ իրապէս հանրէական ու յաւիտենական
զգացումներու : Վարակումները կրնան փոխարինել
բնաստաց վիճակները , և որքան կրնան կեղծիւ ,
ձեւայնել զանոնք :

Ինչպէս ամէն մոլութիւն որ առաքինութեան
մ'այլատերումը կամ նուազութիւնն է՝ յուսու-
տութիւնը քաղաքակրթութեան ցուերու սակ
միժագնած , սղտորած լատատեսութիւն մ'է ուրկէ
բացակայ է բարութեան ուրախութիւնը : Կենսա-
կան ուժին նուազումը , անձնիշխանութեան , ներ-
գործութեան , — կամքի ու գործի նուազումն է
այն : Մեծ զրկանք մ'է անիկա : Նուազած , սկա-
րացած ուժին հառաչանքը , չարակամութեամբ
լեցուն : Մեռելի մտածում : Աւանդ , կը հաւտամ
որ մտածումներու ազրիւրը սիրան է , ուր կը
արտիէ կ'անքը . և խորապէս կ'զգամ հանձարին
կախումը բարոյականէն : Եթէ հանձարը թաքուն
կապերու տեսողութիւնն է , և տեսական (théor.)
միացուցչութիւն մը՝ բարոյականը իրական , ներ-
կայ , թանձրացած կապ մ'է անկերքին մէջ , որով-
հետեւ սէր է : Եւ հանձարը բարոյականին մէջ
կ'անհետի : Ոչ մէկ «հանձարեղ» յուսուտութիւն
կրնայ գերակայիլ լատատեսութեան հանձարին ,
որ բարոյականն է : Ամէն «ուխտեալ» յուսուտի
մէջ ասեցողութիւն կայ ամէն բանէ առաջ , զեղ-
ման , ճառագայթման ազքատութիւն , վիրաւոր-
ումած՝ հակառակումած անձնականութեան մ'ասելու-
թիւնն , անկրօն ու վհառ հոգւոյ ասեցողութիւնը .
անձնիշխանութեան՝ այսինքն ճշմարիտ կեանքին
հարկաւ որ գորութեան՝ ստատամանն ու շիջման ստե-

ցողութիւնը կեանքին դէմ, քաղաքակրթութեան դէմ՝ որ հոյակապ յայտակերպումն է կեանքին խանդավառութեան, ապրելու հաւաքական ու անգիտակից խանդավառութեանց գործը: Եւ ձանձրախար որ անհանձար յուստեսութեան մը սամկութիւնն է, քայքայուած իմացականութիւններ, ցրտացած սիրտներ կը ծածկէ, մոլախիհնդին պէս որ այնքան դեզազխտական մուսլութեամբ մը կ'առկախի աւերակներուն վրայ ուր կ'աճի: Մ'հ, այո, տրտմութիւնն երբ բաւական գործօն է՝ ուրիշ բան չէ այլ ատելութիւն, ինչպէս ատելութիւնը մեղամաղձութիւն է միայն երբ անգործ, անչարժ է: Եւ իմաստասիրութիւնները, երբ չեն բխիր հորանչան, անհուն, տիեզերական Եսի մը գաղտնիքէն, — ինչպէս Յիսուսի էութեան խորհուրդէն որով Անեզրութեան մէկ լիակիր ավաղառը կը թուի ան, — իմաստասիրութիւնները, որքան տիեզերքի դրութեան անաչառ, առարկայական ցոլացումն ըլլալ յաւակնին, կամ դրապաշտութեան պէս՝ լոկ զգայարանապէս կենթակայական՝ բայց, բնախօսաբար ու բարոյապէս կենթակայական են միշտ, քանի որ իմաստասէրն անհատ մ'է: Ըսուած է սմանց համար թէ իրենց փիլիսոփայութեան համեմատ կեանք մ'ունեցած են: Ասով շուղուիր շմտածել թէ իրենց կեանքին համեմատ փիլիսոփայութիւն մը հիմնած են անոնք: Արովհետեւ միթէ ստոյիկեաններու կեանքի յղացքը ջնջե՞ց յանկարծ այն տրամագրութիւնները զոր ունեցած ըլլային ընդդէմ այդ յղացքին: Եպիկուրի առաքինի փիլիսոփայութիւնը յանկարծ քաւո՞ւմը դարձաւ ոչ ազնիւ կեանքի մը զոր ապրած ըլլար: Չէ՞ մի որ իր առաքինականութենէն կը բղխին իր վարդապետութիւնն ու անոր գործադրումը:

Ամէն փիլիսոփայութիւն զայն մտածող Եսին տեսակ մը բանաձևումն է, և հաստատութիւնը, ուստի արդարացումը: Վարդապետութիւնը կը վարուի, կը ձեւանայ խորին Եսէն, և որքան ներքին ըլլայ իր աղբիւրը՝ այնքան հաւանական, բնական է որ ընդհանուր ըլլայ և հետևուի, ու փիլիսոփային ուրիշ բան չի մնար ընել բայց եթէ ապրիլ զայն համարձակ: Սակայն Շորէնհաուէր իր գրութիւնը չա՛պրիիր այնքան հաստատութիւն որքան Եպիկուրոս, որքան Չենոն, այլ այնպէս ինչպէս իր ինքնապահուիական փափկօրէն ու բծախնդրօրէն մոլի գունդիկ կենցաղատէր մը: Երբ մարդ գիտակցական գործ մը կը կատարէ, և համողուած է թէ կը գործէ, ի դուր յուստեսօրէն կը տարակուսի: Մնանող, գործող, մտածող, երգող մարդը ի դուր կը կարծէ դեռ յուստես եղած ըլլալ, և ի դուր Լէոբաւտի է: Աշխարհայեցութեան այդ եզանակը մակերևութային ցրտութիւն մ'է որ շատ ներքին կը թուի և որ չի կրնար թափանցել Եսին մինչև անյիշատակ, տիեզերական խորքը որ կը մզէ մարդը մնանելու, գործելու, սիրելու, մտածելու, Շորէնհաուէրի պէս ապրելու, այսինքն կենսական գործերուն ամենապարզ, մեծ ու ճշմարիտ երանութեան: Տխուր փիլիսոփային վարդապետութեան ու կենցաղին միջև տեսնուող տարբերութիւնը յուստեսութեան ու լաւատեսութեան տարբերութիւնն է, այսինքն խորհրդածութեան և գործին, մտածողութեան և բնազդին տարբերութիւնը. վստայի յուստեսութիւնը բնազդական չէ. իսկ երբ ապրելի, գործողութիւն է՝ ա՛յլ անունը պէտք է փոխէ, քանի որ իր իսկութիւնը կը փոխէ, — այսինքն քանի որ գործը կ'ենթադրէ ոչ միայն նպատակի մը, ար-

դիւնքի մը հաճոյքին յոյսը , և յարում կեանքին՝
այլ մանաւանդ շարժում , գործունէութիւն , ոյժ ,
ուրախութիւն : Վասնզի միակ գործը որ վայել
նկատուէր յուեանսին , — անճնապանութիւնը՝ նոյն
խակ շատ բուն լաւատեսութիւն մ'է նկատմամբ
մահուան անդորրին , բայց մանաւանդ նկատմամբ
այդ գործը կատարող կամքին , — հետեւաբար
կեանքին :

Հէք զրկեալներ , յուեանսնէ՛րը : Մի՛ թէ պիտի
կրնային հրաժարիլ կեանքէն , եթէ իրենց միջա-
վայրն ունեցա՛ծ ըլլար յաւէտ անամպ երկինք մը :

Այնպէս չէ՞ , ամպերու խաղաղածուփ սպիտա-
կութիւններէն անդին հեռացած կապոյտ խորու-
թիւններ , զմայլման անդունդներ , անդրագոյն
անջրպեաներու մէջ ծովացած տակաւին , միապա-
ղաղ ու սուրբ՝ ինչպէս անտարասեռ միութիւնը՝
տիեզերքին ցնորական այլազանութեան օրէնքէն
վեր՝ ինչպէս Եղբայրութիւնը ընդդիմակութեանց
անհուն քառականութեան վերեւ լայնալիճ կամա-
րագրուած : Երկնակապոյտ լոյսը որ վերին անջր-
պեաներէն կը հոսի ու կ'ողողէ ու կը նորաստեղծէ
հողիները , բարութիւնը չէ՞ զոր նիւթականացած
հողին հազիւ կրնայ ցոլացնել ինչպէս խաւարին
թանձրանիւթերն որ շեն կրնար շողալ թափան-
ցիկ բիւրեղին , ազամանդին պէս , ու կը ծծեն ,
կ'անյայտացնեն լոյսը որու անոխայլ մէկ յուշքը
միայն կ'արտացոլայ անոնցմէ , և զո՛ր Յիսուսի
աննիւթացած մարմնաւորութիւնը կը ճառագայթէր ,
իրբե թէ վառուած՝ արփիացած ըլլար անիկա :
Էապէս անդրատենչ , աննիւթաբաղձ հողին երկին-

քին ծարաւ է, յանկչելու համար, թրթռալու, ապրելու, իր թեւերը լանալով, զգալով թէ իրական է, նուագին պէս որ առանց օդի կը նուազէր, կը մեռնէր. հոգին, երկնապատում մեղեդի՝ իրականանալու համար երկինքին կապոյտ արիւններուն հայեցողութեանը կարօտ է, և երբ երկինքը չկայ՝ հոգին կը տառապի, կը մթաղնի, կը ճնշուի ծաւալական հոգին: Յուսանա, զրկուած՝ շարիւղայ տեսակէտէն որ աշխարհքի լեզին քաղցրախառնէր՝ կը յուսահատի, աստուածային մերժումով մը լըքուած, — և խորապէս՝ խիղճէն, Աստուծոյ մերժում, — երկնային թելադրութիւններու քաղցրութենէն, երանաւէտութենէն անժառանգուած: Որքան մաքուր, կենսալի պիտի ըլլար սիրտը եթէ իր վերին անսքող ըլլար երկինքին լեզակապոյտ անապակութիւնը, վասն զի երկինքը սրբութեան անհուն աւագանն է ուր հոգին՝ միշտ միանգամայն հեթանոս, մոլորասական, միւսիւման, քրիստոնեայ՝ կը մխրճի, սարսուագին, լուացուելու: Կենցաղի դառնութիւններէն, ատելութիւններէն մաղձոտ, ապականած հոգին անոր տեսիլին մէջ կ'զգայ թէ կը թեթեւայ իր աղտոցութիւններէն, և կը շնչէ, կը ժպտի. երկինքին լոյսին մի՛ ըարութիւնը կը շնչէ, զատուած գոհարի մը պէս, և համակրութեան, գութի, ներման, սքանչալան լազմատպաստիկ երանգներով կը ցոլացնէ զայն: Միթէ երկինքն առաքինութեան անեղձանելի գեղեցկութիւնը չէ՞. կապոյտ երկինք, որ հիւթին աչքերուն անյայտ ծովաշաւիղներ ունիս դէպի Աստուծոյ գաղափարին անվախձան շացումները կորսուած, միթէ ներալքերու մէջ աստղափայլող խիղճը քու խորին ցոլքդ չէ, ներկայ,

լուսաւոր՝ երբ վարի ամպերը չեն սքօղեր սրբութեանդ անսւրժը, խաղաղութեան ուկէաններուդ խաւական անհունութիւնը :

Եւ միջոցին մէջէն, ուր հալած քաղցրութիւններ կ'ընդխառնուին, ուր վճիտ ժպիտներու գորովագին զգացութիւններ կը խաղան, ուր գարնային խակութիւններ կ'այերանան հոգեւին, կը նայի մ'անեղբ երկինքին, ուր կեանքերը կը ձգտին ու կ'եղբակացուին յաւիտեան :

Ով որ երկինքին կը նայի, և անոր նայելով կը մամտայ այն անորոշ բաները որ գուցէ անցեալ, անհունօրէն անցեալ և ապագայ կեանքի մը յաւիտենութեանց կը վերաբերին՝ չի կրնար յուեանս ըլլալ : Հոգւոյն մէջ ուր երկինքը կը ցոլայ՝ երկինքին հայեցողութենէն անպատում, մանիշակային բան մը կը մնայ որուն արտացոլումը խանդաղատանք է : Ապաքինման դողդոջուն կորովը կ'ողեւորէ կեանքս, տենչալի ապաքինմանց երկբայանուշ բարիքը, բարոյացուցչութիւնը : Սիրալիբ բաներու խռովքներ կ'ղգամ. անուշ անձև տենչանքներ, շնորհալի ցայտքեր անսխալութեանց, գրեթէ ներումներու որոնց տեղ զլուանքներ կը գալարէին : Սառած զգացումներ կը լկին, կ'եղկանան, կը շոգին սրտիս մէջ. անձանօթ բարութիւններ կը ժպտին, կուլան հոն, խնտերուն ցողին աննշմարելի արցունքներովը, որոնց միահաղոյն նշոյլին քաղցրութիւնը կը պսպղայ, — և բոլոր ներածուի այս թրթռումներուն մէջէն ինծի այնպէս կը թուի թէ գարունը արտացոլում մը, արտայարում մ'է հոգեկան գարնան մը որ կը ներէ ու կը սիրէ : Բնութիւնը ամենուրեք կը հաս-

տասն թէ նոյն է ասկնուրեք, բայրերու փթթու-
մին, թուիչներու պայքին, ճախրին մէջ, հնչիւն-
ներու, դաշնակութեանց ժայթքերուն մէջ, ինչ-
պէս հոգւոյն սիրական, իսանդադատական յօժա-
րութեանցը մէջ, որք կը գեղուն, ա՛լ անյիշա-
չար՝ ճառուղուն ու կապոյտ օրուն մէջ: Իրօք
ատամ իմ ես. ի՛նչպէս կրցած եմ արհամարհած
ըլլալ կարծել այն հոգիները որք կ'անցնին դը-
ւարթացած յիշողութենէս: Թերեւս հրճուանքը որ
կ'ողողէ զիս՝ յայանատեւութիւնն իսկ է. առաքի-
նութեան մաքրափայլիւն մը: Կը թողն՛ւմ այն դէմ-
քերուն ունենալ, կրել, ապրիլ իրենց ինքնութիւն-
ները, որոնց իւրաքանչիւրին կ'զգայ հիմայ պատ-
շաճիլ ըմբոստ անձնականութիւնս: Երկինքին կա-
պոյտը, ջինջ ու խորին յատակ աշխարհքին, որու
բազմազանութեան միանգամայն կը պատշաճի իբ-
րե հուսկ տիեզերական նպատակ, իբրե հանրէա-
կան սկզբունք, բարութեան անջրպետի մը պէս
կը թափանցէ սիրտը, ուր ապրող ու անցնող աւե-
սիլներուն այլազանութեան կր'ներդաշնակի, անոնց
իւրաքանչիւրին գոյութեան իրաւունքը կը կազմէ:
Ա՛հ, կը յիշեմ ինքզինքս, և կը դադրիմ անպարտ
ուրիշներն ատելէ:

Իսե՛նա . . . : Քաղցր յո շքերն ա՛լ իրենց լքուած
իմաստը կը վերզգենուն, զարմանալի հմայականու-
թեամբ մը, ինչպէս աշնահար ոտները կը վերա-
փրթթին մշտանոյն ծաղիկներով: Ա՛հ, անհիւթ ոս-
տերուն, անծաղիկ ոտերուն տարաբազդութիւնը:

Բազոր այս պայծառութեանց, շքեղ վերժայթ-
քերուն մէջ, այո, զքեզ կը գտնեմ վերասին, ո՛վ
իմ զմայլելի բարիքս: Կեանքին հետ, արիւնին հետ
կը վերադառնան ինձի, ներաշխարհին ծաղիկնե-

բուն համէտ մեղանուշ կակաչումներուն մէջ կ'ըն-
նես քաղցրութեանդ անհուն ներողութեամբը :

Եւ նախկին կորովովը , նախկին առաքինու-
թեամբը կը խայտամ ստուերային ներկայութեանդ
զգայութենէն . քեզմով լեցուած , քու գոյութեամբդ
խնկաւէսուած քաղցրախառնուած ըլլալու հիա-
ցումէս կը ժպտիմ , երազուն :

Ամէն ինչ ըզձանք , ամէն ինչ սլացք է , սառ-
չուն , խոյանշարժ . բոլոր կենդանութեանց երազն
է յաւերժակենսութեան երկինք մը . բոլոր այս այ-
բումներուն հոգատակն է լուսավառ անեղբութիւնը :
Տեւելու , շարունակուելու , անմահութեան տենչ մը
կը ժայթքէ հողէն . և անհուն է երկինքը որ վերը
կը տարածուի , երկրին դառձ այանումին վերևը ,
բոլոր այս հայեցողութիւններէն վեր կամարուած ,
լեցուն ու դողդոջուն անոնց ամենուն հոյնու-
թեամբը որ երկինքին մի , անըմբռնելի երջանկու-
թիւնն է : Ամէն բան ընծայում մը կ'երևայ . հան-
րէական տեսանագրում մը կը նշուէ չորս դին .
ամէն բան սողորուն է երկինքով . ա՛հ , դարունը
յաւերժարազութիւն է , որովհետեւ Սէրն է : Մա-
զիկները , բեղմնաւորութեան հրճուանքներ , ինք-
նահամայիչ ներշնչումներ են , լուս , քաղցր , ու
վայրազ՝ ջերին արգասաւորումն ապահովելու , և
բոլոր այս ծաղկումներն , այս փափուկ շափրակները
կը վերայնեն , կը ձգտեցնեն բոյսերն անվախձան
կենդանութեան , որուն լուսաթեւ անուրջները ,
որուն հաւատքներն են : Թռչունները , թօշ ու վճիտ
հունչերով՝ սօսափիւններուն հառաչները , ծաղիկ-
ներուն ըզձապիչ երազանքը կ'արցունքոտեն , ան-

Չրպեախն խնկարոյր սրբութեան մէջ յաւիտենութեան սքանչացումը կը դողդոջեցնեն, ճառագիտներու պաղպաղուն քայռումներով յաւիտենութեան հեշտութիւնը կը նշուչոտեն, կը միւռոնշխիթեն, նոճիներուն ամբարձական անվախճան անդրհայեցութեանը մէջ : Ծննդագործութենէն առաջ՝ Անհունին արըչիւ պաշտամունքն է, Սէրը : Բոլոր այս երփներանգ, դաշնաւոր, հեիհե հմայակենսութիւնը, ստուերներու մէջ դողդոջ թեաբախումները, թառոյ, թաքչոյ սախներուն յոյզը, լուսաթուիչը զոր միջատները կ'ելեւէջեն, կը թրթռան, ծաղիկներուն փթթումն ու գունագեղութիւնն, ու զաղջ խառվքը որով էութիւնս կը զեզու՝ սէրն են. յաւիտենական պաշտամունք, հանրէական համակրօնութեամբ մը անհուն կրօնապարի տրոփիւն, որուն արձագանգը, խիղճին մէջ, էակին անհունութիւնը կը հծծէ, մահկանացու կեանքերուն յաւերժականութիւնը կը հրաշավիտէ հոն :

Ինչպէս սէրը յաւիտենութեան զգայութիւն մ'է : Կեանքի ուժը որ կ'աճի, կը զեզու էակին մէջ, ու զայն վսեմ, մերթ ահաւոր կ'ընէ՝ ներշնչեալներու բեռնաւորմամբը, լցման մըն անհունութեամբ՝ տեսլային մէկ զգայումն է այն Յաւերժակենսութեան որո մէկ տրոփն է էակը : Բոլոր կենսալի զգայութեանց, բոլոր հանրէութեան հոյզը կը թուի սիրելի կոյսը : Եսը, որուն միակ տարակոյսը, հոյզ, իր պահպանումն է կարճ կենցաղի մը հորիզոնէն սահմանաւորուած, Եսը՝ աղօտակի, կարծես շլանալով կ'զգայ թէ յաւերժութիւն մ'է, երբ իրեն խորապէս, անիմացապէս ներդաշնակ այն հոգւոյն խառնուելով՝ ամբողջ, անհուն Ես մը, անստութիւն մը կ'զգայ ըլլալ, ամբողջութեանց մեծութեամբը,

կատարելութեամբը : Ա՛հ , Հա՛ւքին . . . Սիրային արք-
չաութիւնը , կենդանութեան անցեալի մը , ու կեն-
դանութեան ապագայի մը մէջ անընդմիջաբար ծա-
ւալած ըլլալու աղօստ ու երանաւէտ դէմյանդիմա-
նութիւն մ'է . երկնային խոստում մը , հաստատու-
թիւն մ'է : էակին մշտնջենաւորութեան . ասո՛ր հա-
մար արդեօք , Շէլլի , կ'ըսես թէ բանաստեղծին
անունըը սէրն է ու փառքը . — անմահութեան տե-
սիլնե՛ր , հեռադգայութիւններ որոց երբեք ցան-
կայ անդրատունչ հոգին : Մի թէ փառքին ընծայած
երկարակեցութեան գիտակցութիւնը կրնա՛յ նամանիլ
անհունութեան հաւատքին զոր սիրոյ յափշտակու-
թիւնը կը ներշնչէ : Սէրը մասնաւորութեան մահ
մ'է ասկերացման դիւթութեան մը մէջ . ոգևարի
տազնապ մը՝ ցնորագիւղ կեանքի մը մուտքին վրայ .
մահուան ու կեանքի զգայութեանց՝ յայդի մը , ար-
բեցութեան մը մէջ խոսացումն է , այսինքն յաւի-
տենութեան ընտղագոյումը :

Հա՛ւքին . . . :

Մեզմ , մշտաճայն շշնջիւնին , մեծ կոնարերներու
անբացատրելի շշնջիւնին մէջ զոր անօսը հովը նու-
ճիներէն կը հասկնէ միջոցին մէջ , զոր սրտէս կ'ան-
ցունէ վեհաշուք սրբութեան մ'անցքովը , Իսկնա՛ ,
կղզիին յիշատակը անեղծ , կը յառնէ էութիւնս լի-
ցնելու , ինչպէս արդունքի շիթ մը կ'ելլէ բիբը
կ'ողողէ :

Եւ ի՛նչ տարօրինակ դիւրութեամբ կը յիշեմ
ամէն բան , ամէն բան . . . :

Շոճիներուն անտառը . . . դօս շիւղերով լալրծուն ,
աննշանելի սեպութիւնները , որոցմէ վեր ելանք

ձեռք ձեռքի . մտախոհ . խռով : Հետզհետէ աւելի վեր , շոճիներուն տակէն , ծիրանեմոյզ , պորփիւրային բուներով . մինչև վերի շոճիներուն վայրենի տեղուանքը . — յետոյ մինչև ալ աւելի վերի շոճիները , որոց խիստ կոճկերուն կը կառչէի , անոր օգնելու համար : Մինակ , շշնջող ամայի անտառին մէջ , անկոխ թաւուաներու խօլ յոյսովը վարերէն հեռու , հեռո՛ւ . կորսուելու երկչոտ բաղձանքներով : Յետոյ այն տեղը զոր ընտրեցինք նստելու համար , այնքան ընտրութիւններէ ու լքումներէ վերջը . — երկո՞ւ , երե՞ք շոճիներու ներքև . միշտ շիւղերով լեցուն , միշտ կունտուլիկ ու ժայռաքոստա քարերով խառն . անհաստատ , վտանգաւոր քարեր , որոց կարելի չէր վտահիլ , և որոց ձայնը կարծեա կը լսեմ . կոխուելով , խառնշտկուելով հանած խժլգութիւնն , հակիրճ ու կշռալի . մերթ խուլ կերպով երկարաձգուած , զառիվայրէն վար թաւալմամբ մը , ու մացառի մը ցնցոմով վերջացած : Ինչպէս հետզհետէ կը գեղեցկանար մենութիւնը . ամայի սեռնաբոյր թաւուաքը զոր Յովուն հովը կը սարսուայնէր անհասնում շշնջիւններով , իբրև թէ երկինքին կապոյտին մէջ առազատտաւորուէ՛ր ծփծփուն սաւառնաթև կղզին : Վարերէն հետզհետէ աւելի հեռու , ս՛րչափ աստիճանաբար աւելի սրտաարփող եղեր էր առանձնութիւնը , վամնզի մէկը չկար հոն մենէ զատ երանութեան կղզւոյն անտառին մէջ . անտառին պեգոյն ներրարձունքը . — տարօրինակ բան , ինձմէ ու անկէ զատ ս՛չ մէկը : — Հոն , անուշարոյր հովանիներուն տակը երբ ս՛ր դադրեցայ անոր խօսելէ , անորոչ , անհասկնալի ատեն մը լուս մնացինք իրարու զմայլման մէջ կորսուած , ե՛ս , անոր հայեցողութեանը մէջ կոր-

արնայուցած ամէն աշխարհայնութիւն , անմուռնչ .
մինչդեռ շոճիներու լուսաշող անտառը կը սօսափէր :
Ուրեմն իրօք այն անըջակերպ ժամերը ներելի ,
կարելի եղեր էին ինծի : Ընդերկար սրտատրոփ ու
չուիկ մնացի ապշած , սքանչացած . այնքան զրր-
կանքներ կրեր էի : Ծառերը կը շշնջէին . անհամար
սարսուռներ մեր բոլորափքը կը խլրտէին շոճերէն
ինկած գօս շխւղերուն մէջ , պղտի բոյսերու ցանու-
ցիք կանանչներուն մէջ . ու շոճերուն թուխ ճիւ-
ղերուն մէջէն անտառը կը շշնջէր յամբօրէն , կղզի-
ին զառիվերներուն վրայ առկախ , վերի անհետ
խորութիւններէն մինչև վարը զիզուող թաւուտ-
ները , կը շշնջէր անվերջ , անժամօթ մեղեդիներով :

Ճառագայթ մը , կարծես անաշխարհային , անոր
ճերմակ շղարշը կ'ողողէր ետեւէն , - վերէն , կողմ-
նակի . իր ուսին վրայ կը խաղար , իր կուրծքին
վրայ կը մարմրէր , ու իմ ճակատիս վրայ , արուեա-
նունքիս եզերքը կը նշուէր , տեսողութիւնս լուսա-
զօտելով . անոր կերպարանին թափանցիկ ստուերը
կ'ընդխառնուէր լոյսին հետ որ անոր վերեւէն կ'իջ-
նէր , և կարծես իր այերային , նեմփային ստուգու-
թենէն հոսող կենդանութիւն մը , քաղցրութիւննե-
րու հոյզ մ'էր զօր կը շնչէի , անձայն . իր ծունկե-
րուն առջև կիսով պառկած . իրեն սևեռուն , հիաց-
մամբ , երանութեամբ . անցեալ , ա՛լ անցեալ թըշ-
ուաութեանց ջնջումէն , անիրացումէն շնչասպառ .
ի տես անոր , անտառին ամայութեանը մէջ , զինքը
մտմտալով , զինքը գիանալով անվերջօրէն , չկրնա-
լով ժպտիլ . զգացածիս անհունութենէն անշարժ ,
արցունքով լեցուն : Մինչդեռ իր ժպիտին տիրա-
նուչ փթթումը կ'ընդհնամարէի իր կերպարանին
ստուերային , անհպելի , անչօչափելի հալքին մէջ ,

իր անպատում գոյութիւնը կը խնկանար . այն լոյսն
ըլլալու համար , ճառագայթին բոյրեղէն կերպաւո-
րումը դաւնալու համար : Եւ դեռ կը նայէի անընդ-
հատ անոր . իր անձէն ինծի իջնող սառեւրալի լոյ-
սին երանաւէտութեան մէջ յառած , սուղուած ,
խաղաղութեան անորակելի զգայութենէ մը ար-
տասուագին , յուսահատ : Ո՛րչափ անուշ էր , ո՛ր-
չափ ինքն էր , ի՛նչ անասելի երանութեամբ Իռե-
նան էր անիկա . ա՛հ , ի՛նչպէս կա՛ր անիկա : Աչքե-
րուս մէջ արցունք մը կ'ելլէր , մեղմիւ . երկինքին
ճառագայթը կը դողդոջէր և անշրջագիծ , տեսա-
ցին էութիւն մը կը թուէր իմ թերահաւատ ու տա-
ւապած հողւոյս ծարաւին : Խենդի , հաշշակերի աչ-
ուրներով ու մերթ արցունքոս , ցաւագին երկա-
րաձգուող ժպիտով մը յիմարայած՝ տարօրինապէս
կը նայէի իրեն , իր տեսեանը խորհուրդին . իր առ-
ջեւը դալարուած , պրկուած , , դէմքս իր քնոյցը ,
իր արբեցնող ճշմարտութեանը բարձրացուցած , իր
բոյրին , լոյսին սրտատրոփող գաղջութեանը կա-
րօս , , նշմարելով կեանքիս կախումը , Եսիս վերա-
ստեղծումը , հոն , անոր անձէն , , անոր հեշտութե-
նէն , անոր կեանքին լսին մեղեդիէն էջքն իմ արօ-
փիւններուս՝ անժանօթ նեկաարի մը կաթիլներով , ,
անշարժ առկախուած իր միջնազ աննիւթականու-
թեան ճառագայթման մէջ , անշարժ ու արտասուա-
զին կը նայէի իրեն , կոյսին հայեացքին անպատում
գիշերին . . . :

Ի՛նչպէս եղաւ որ , անդգալարար մօտեցած
անոր , կորսուած շլացուցիչ անուշութեանց հեւքի
մը մէջ որ իրմէն կը բխէր ու կը պարուրէր , կը
ցնորեցնէր զիս , անդամներս խուլ կերպով դողդո-
ջուն , ու կորովի , սուսգերս , շունչս սարսուղին՝

միտղիք ու զառանցող արբշուութեան մը յամբ ու
եղերական խոյաղքին մէջ տարուած՝ ի՞նչպէս եղաւ
որ շրթունքս հպեցի իր շրթունքին, իր բերանին
հեկտարիոնէն իր անուշաբոյր հոգին ծծեցի. ընդ-
հատարար, ծանրախո՛հ, անյաղ. իր անծանօթ
մարմնոյն, այտերուն, պարանոցին ջերմութենէն,
բուրումէն, իր շուրթերուն հաղորդութենէն մո-
լեգնօրէն վերացած, իր իսկութեանը հեշտութեան
մէջ ընկղմած, թեւաւորուած իբրև անդրաշխարհի
վայրկենի մը մէջ. իր կնութեան կուսութիւնէն
դողդղալով, փաւռնի մը պէս վայրագ, իքոնա՛
մը պագնող տղեկի մը, ճղնաւորի մը պէս սուրբ:
Մատներս, մեղմիւ, վախով, իր այտերուն ստուե-
րայնութեանը կը հպէին. կիտարաց շրթունքով կը
շնչէի զինքը. իր անհասնում քաղցրութիւնը կը
հերհառաչէի. ու կը ծծէի, սարսուպին, դանդաչոտ,
անոր անրացատրելի գաղափարը, զինքը, երազային
համբոյրներու մէջ. ու մեր միասարրուող հոգինե-
րուն առաջին սոսկալի ընդխառնմամբը կը դղրդէի.
— Եւ ներսէս ծիծաղներ կը խուժէին, ներքին հեծե-
ծիւններու ծիծաղկումներ, զառանցանքի տխուր,
անամուն հրճիւներ. Ե ջղաձգօրէն այն ծիծաղներս
կը ժպտէի, անոր գոյութեանը, անոր աննիւթա-
կերպ մարմնոյն յուսահատականութեան մէջ մո-
լորած. երանութենէս՝ իբրև բանդագուշանքէ մը
ցնորակոծուած, իբրև առատակեւական կախարդան-
քի մը նենգութենէն յուսահատ երջանկութեամբ
մը տարուած. յանկարծ կորուելու մօտ, կարծես
մեռնելու մօտ. այն ծիծաղներս հեծեծելով մեռ-
նելու, բացց կը ժպտէի, կը շնչէի, հրեշտակի փոխ-
ուող դեւի մը պէս հրճուապին կը ժպտէի դողդո-
ջուն արցունքներուս մէջէն, անվախճան կենդա-





հոսթեան մը խաղաղութեամբը կրազմայլ, իբրև հզօր ու այերային էակ մը. — և վայրկեանը յաւիտենական կը թուէր: Շոճիները կը հեւային. մեծ սօսափիւնը կ'անցնէր. լոյսը կ'իջնէր միշտ, լուեկայն, իր կուրծքին վրայ, իր սրտին վրայ, իմացականութեանս վերև շողալու. անձառ շնորհ ուր իր ստուերը կ'արփանար, ուր առաջին գրկախառնումը կը վերանար. երկնային օրէնքէ մը իջած լուսեղէն յօգումով մը շքեղ անմարդաձայն անտառին ճառագայթը մեզի յաւերժապէս կ'էախառնէր իրարու, ու մեր տարփանքը լոյսով կ'օծէր, իբրև Անեղբութեան ժպտովը, ներկայ, խաժ, շշնջալիւր Անեղբութեան զգայութեամբը: Արդշուտութեամբ կը դիտէի երկնային ճառագայթէն ինծի ընծայուող էակին ըարի՛ կենդանութեանն ուրուանուշային ձեւը, անպատմելի բովանդակը (ens.): Ո՛հ զգայարանքներ այլեւս, ոչ մտածումներ ունէի, այլ զանոնք յօրինող կենսաւէտութիւնը. ճշմարիտ դէմյանդիմանութիւնը որով կը ըմբռնէի, կը ճաշակէի իր բոլոր եթերեղէն իսկութիւնն ուր Անհունը կը հոծուէր. առանց զայն զգայարանացնելու, գիտնալու՝, անապական ստուգութեամբ մը, գերադոյն ճանաչման լուսարբեցութեամբը կը ճանչնայի զինքը: Ճշմարտութեամբ օծում, սրբացում էր ան: Եւ սակայն դեռ աշուրներս կը լեցուէին . . . երանութենէս ահաբեկ ու տառապագին մարդկայնութիւնս խուլ կերպով կուլար: Եւ խնկարոյր անտառը կը մրմնջէր, ծովաձայն անվախճան սօսաւիւնով: Յաւիտենութեան շքեղութիւնը կ'զգայի. վայրենասուրբ Անհունին փառքը: Եւ միշտ լուսէինք. վերջնական երանութեանց լուսթեամբը, մահուան, անդրաշխարհի, Աստուծոյ լուսթեամբ

ուր բոլոր մեղեցիկներն անդրիտէական դաշնակութեան մը մէջ անձանքն են :

Ամէն օրերու պէս անցաւ , թէև ներկայ է յաւերժութեան մէջ , ամէն բանի՛ պէս անցաւ այն օրը . իբրև թէ կարելի կատարելութեանց հոծ հնարաւորութիւնը , երանաւէտ նախագաղափարն եղած չրլլար : Եւ անցաւ այնպէս եղած ըլլալուն համար : Տարիանքին ա՛յն նախամբողջ լիութիւնը խաղաղաւէտ անմարմնացման մը տօնը եղաւ իմ չարչրկուած մարդկային կեանքիս մէջ . ուստի անցաւ այն օրը . այն ճառագայթը վերադարձաւ երկինք :

Ահ , կապոյտներ , երկնային կապոյտներ , մտածումներէս վեր պարզուեցէք ա՛լ աւելի խորունկ . միշտ աւելի բարի որքան աւելի անմատոյց . և տակաւին անցէք հոգիէս , շշնջիւններ , անբաւ սրբութիւններէն իջնող այն ճառագայթը երգելով :





ԼՈՅՍԵՐԸ կը ծփծփան, ալքոլէն բռնկած, ու
խժացող ծխալի վայրին մէջ Խնճէ-Սաղը յափշտա-
կութեամբ կը արտփէ իր դասինն կշռոյթը, բզզուն
ու խորին: Օգիտի դաւաթիս մէջ լոյսի կայծեր կան.
աղամանդի պէս կը վառին. մինչդեռ շէկ ու դաղջ
խտեղորտի մը մէջ կը սուզիմ պղտոր, շլացած յա-
ռուժով: Միաքս կը շնչէ ալքոլին կիզանուտ լու-
սէութիւնը ու ը տառապանքի իսաւարներ կան հրա-
հալած: Լոյսի շիթերը որ կը շողան հոն՝ մտքիս
մէջ կ'իյնան պատկերներու վրայ որ տարաաճօրէն
կը ցաւին. դաղափայրներու որ կը թռնին սյրիչ:
Կիզիչ լոյսը զոր կը կլկեմ, ներսս կը ծաւալի, կ'ե-
զերազայի հեշտութեամբ, ու մտապատկերներ կը
նշուլոտէ ինչպէս ալիք մը որ ծովեզրին կոպիճնե-
րուն ու ջրիմուռներուն վրայ կը սփռուի ու լեզի
շողիւններով կը գունազեղէ զանոնք: Վայրենի
սփռունքի մը պէս խոհուն՝ կը ծծեմ դառն ալիքն
ուր աղօտալոյս կոյտերով մտապատկերները կը
զայրագրգռին, և կը տեանուի թէ ս'ըքան տեն-
չանքներ են անոնք: Չգտումներ, երբ հանդարտ
ու անչուք էին, տենչեր, պէտքեր են երբ կեան-
քով լեցուին, երբ զեզճ'ն աւիւնովը զոր կը խմեմ:
Որքան իրաւունք ունին արամեկու անոնք որ լե-

ցուն են մասապատկերներով որք իրագործուիլ կ'ուզեն . — անոնք որոց ներսը յարատե ստեղծագութիւն մը կը յղանայ, կը լուսակերտէ զանոնք, ժպիտներու պէս որք թախիճներ են ընդհուպ կայծերու պէս որք աճիւններ են իսկոյն : Կեանքը, — տենչացողութիւնը կ'աճի էութեանս մէջ . լուսազօտ, անշրջագիծ, անհասկնալի տենչանք մ'է ամբողջ իմացականութիւնս : Ի՞նչ պիտի ընեմ ես լայոր այս ձգտումները որ կը ծագին, կը յառին, գեղեցիկ ու յուսահատական, տրտում անջրպետի մը մէջ : Կարծես համադրապէս բանի մը կը հաւսամ . ի՞նչ բանի, ո՞վ գիտէ : Միթէ կարելի է գիտնալ ինչ բանի որ կը տենչայ ամբողջ միաքը միանգամայն : Տարտամօրէն ընդնշմարուող, բայց հոգեւին սիրելի, անպատում բան մ'է ան որու կը ձգտիմ : Միթէ Իռե՛նան չէ՛ . որուն գոյութեանը գաղափարը զիս կը խուսիլէ, կ'ամբառնայ իբրև թէ երկնային մահիկը ըլլար ան, իմ մշտածուփ էութեանս կոհակին վերև դաշկաժպիտ ու հզօր : — Միթէ կ'ս իսկ չե՞մ անիկա : Ե՛ս, զոր միայն ըլլալ տենչամ, վասնզի միաքս իր իրագործումն, իր անհնարին իրականացումը կ'ուզէ, — կեանքը, անպայման, անկաշկանդ : — Եւ կամ միթէ Անհունը չէ՛ այն անպատում ու նշուլող համադրոյթը որուն կը տարուիմ էտվին : — Ա՛հ . ասոնք միանգամայն չէ՞ անիկա . եւ միեւնոյն բանը չե՞ն միթէ . միեւնոյն երազը զոր յուզումներն ու աւիւնները ծաւալեն հեռարձակեն տեսողութեանս : Ենչառութեանս մէջ այրող վայրկեանները որ կ'անցնին՝ գիտեն զիս, ու կը խուսափին : Ու լուս մենութիւնս կը կքեմ շողուն գաւաթին վրայ ուր իր շուրթին հրավառ հմայքը կը բաժակէ արևելքի ճերմակ հուրին —

արեւմուտքի խաժ պային քոյրը, — և իր ակնարկին լոյս սլաքը կ'աչէ, իր մուայլ գաղափարը՝ շըլացքով, իր թոյնն՝ իր լոյսին կենսաւէտութեամբ ընծայելով տրտում անդրատեսչութեանս: Ի՞նչ ըսել կ'ուզէ իր էութեան ժահրապոյր հանդարտութիւնը նշուելով աչքերուս: — Ձիս խանդով, կեանքով տոգորելով՝ ո՞չ ապաքէն իմ մահս կ'երազէ անքանի որ համբարուն է, ու Յաւերթութենէն զգայութիւններ կը մանկէ, կը դրստանդէ մաքիս, և քանի որ կը հրաւիրէ զիս էութեանս սահմաններն անցնելու:

Եւ ինձէ՛—Սաղը խռոված կ'երազկոծի, զմայլելի՛ երգ, շողշողուն ու դողդոջ՝ հնչիւններու գոհարներովն արեւելեան հուսազին որ երազներու, հաւաչներու հնութենէ մը կուգայ ոչորուելու հայեցողութեանս մէջ, արարողորուելու ակնդի՛ն հետ որ կոհակ կոհակ երկեմն կ'անցնի սիրաէս:

Վսի՛ ղանի, կիւզեղ սիր կեօզերիւն . . . , պիղլսի կիւզեղ սիր . . . :

Ասանկ կ'ըսէ տարօրինակ, տարօրինակ երգը. անհուն միամտութեամբ մը, սրբութեամբ մը կը հաւաչէ. կ'երգնու. ա՛հ, բացարձակ ճշմարտութիւնը: Եւ սիրտս չեմ գիտեր ի՞նչ կ'ըլլայ անուղորմաբար՝ տողին բանաստեղծութեանը մեծութենէն: Եւ մինչդեռ երաժշտութիւնն, անվերջ, կ'ելեւէջէ, կ'իջոստաստէ, կը ծփայ, արցունքներու բիւրեղ հոյլեր կը հրախաղէ, կը հրահուէ՞, լուսաչիթելով առնաձայն շարգըին մելամաղձութիւնը որ իր հառաչանքին աղուահեղ ժայթքումը կ'ազազակէ՞, ակնդը կուգայ կանցնի կուրծքէս, ու

կրագանքս արտասուագին ժպիտով մը կ'առ-
կախուի սքանչացած . սքանչացմամբ մը որ կը
տառապի՝ կը ցաւի , կը յառիմ թափանցկութեանը
պայծառ կիզիչ հեղուկին զոր նորէն շրթունքիս
կը տանիմ տենդը տակաւին յուզելու . — հաշիշի
արբշուութեան՝ ուղեղէն անցնող առաջին սոսկալի
սարսուռին պէ՛ս սիրտէս անցնող այս խռովքը , որ
հո՛ն կը հոծէ կեանքս , կարծել տալով թէ իմ սիրտս
եւմ միայն . վասնզի այս յոյզը իռենան է : — Ա՛հ ,
սոսկալի՛ քանի որ բացարձակ համոզումը : Արիւնը
որ յանկարծ կը վիժէ սրտիս մէջ՝ էութեանս բոլոր
կեդրոններուն՝ անոր պաշտամունքին մէջ վայրա-
գորէն համախոհ համոզումն է , անեղծանելի : Այս
յոյզն այն աղջկան գոյութիւնն է : Անոր գոյու-
թիւնն ու իմ սէրս կապուած են Յաջորդութեան
Օրէնքով մը , ակնածելի՛ ինչպէս ամէն բնական
օրէնք , որու խորին , բնաստուածային անվրէպու-
թիւնն իր մշտնջենականութիւնը կը պատմէ . և
ապահովութենէն անդրեասական , գերմարդկային այն
անօրինութեան որով անիկա՛ մշտաբաղձուող պէտքն
է իմ կենդանութեանս՝ հիացած կը տխրիմ , հիաց-
ման տխրութեամբը , ինչպէս ամէն կարելի բացար-
ձակութենէ :

Երգը կ'ելեւէջէ , կը թաւալի , կը թաւալի . ու
նորէն նոյն տողն է , նոյն յուսահաս խօսքը որ կը
գալարի մրմնջելով , հեւալով , աղօթելով , — և նոյն
դողը , գաղջ , հոծ , միակ , որ կը խուժէ ներսս , որ
անոր անբացատրելի անձին՝ դէմյանդիմանական
ըմբռնումն է որ սիրտէս կ'անցնի առոյգ , առա-
ջին , , զգայարանքներուն քայքայական (décad.)
խմացականութեան մէջ չզառածած . զգայարանքնե-
րուն ճիշդ միացումն , անոնց տրիտիին հոծումը բա-

բայականին մէջ : Բաժակին նշոյլին մէջէն կը ժրպատիւմ վերթէսին . . . բայց մանաւանդ ա՛յն իրական արար ցեղին՝ որու զաւակները կրնան եղեր մեռնիլ սիրելէ . և որու պատկանող կրօնաւոր մը կ'ըսէ թէ (Սթէնտալ) կը մեռնին անոնք «Որովհետեւ իրենց կիները գեղեցիկ են , և երիտասարդները պարկեշտ» : կը ժպտիւմ , կը հաւատամ անոնց : Սրտագին կը յաւիւմ , երազածուի , արտասու ալից ու ժպտուն՝ այն հրաշալիական անդրատեսչութեան . բաժակիս շողշողուն կայծին մէջէն կը սուղուիւմ ցնորազեղ ոգեպաշտութեան մը մէջ . արարական հրատապ զաշտերու միտքիք բացարձակին մէջ ուր ամէն ինչ Աստուծոյ մէջ կը զգայ ինքզինքը . — և մինչդեռ արեան ալիքը սիրտս կը հասնորէն՝ իր տաք , իժատող ծուփը կը թուի ինձի թէ անապատին մէջ տատուած ախառնուած ա՛յն երեւակայտա ու կամեցող արար ցեղին պարկեշտութիւնն է իմ տժգոյն բարեխառնութեանս մէջ որ սակայն երբեք ճիշդ հորիզոնը չէ : սիրային յաւերժական՝ մահացու պարկեշտութեան . իժի մը պէս թուեաւոր ու անհուն . . . :

Ի դուր , ահաւասիկ , կը գրկեմ Իռենային մտապատկերը , ստուերային ներէական աննիւթականութիւնը կը շնչեմ , կը հաստտեմ ցնորելով , զմայլումներու անդուլ խնկայցմամբ մ'ի դուր կը պարուրեմ անոր եթերէ ներկայութիւնը : — Մածուկ ու տխուր դրականութիւնը որ սրտիս մէջ կը պտըտի՝ կը շօշափէ , կը հաստատէ խռովիչ ստուերին մարմինն , ու բոլոր զգայարանականութիւնը , բոլոր նիւթականութիւնը վերացական սէրերուն՝ որ պիտի քայքային մարմնոյն մէջ : Գաղափարը պիտի յանդի գործին , և ամէն գործ որքան ալ վսեմ ըլլայ՝ ան-

կուճն է գործին գողափարին : — Ի՛նչ տխուր բան ,
գիտնալ թէ մարմին մ'ունի ցնորքդ :

Ինձէ՛—Սաղը թաշկազին կ'երազածիի և քանո-
նին վճիտ կայլակներուն մէջ՝ արտասուալից , ջու-
թակին պզտոր ջգայնութեան մէջ՝ հառաչալիր ,
դատին մութ կշռոյթին մէջ հեծեծելով՝ տառա-
պողներու ցնորքին՝ իրականութեան մէջ խամբումը
կուլայ :

Բայց ... քովս մարդ մը կայ , կուպիտ , վայրագ ,
ծեր , որ կը խօսի հետս , անդադար մշտելով դիս ,
թէ և կը հայիմ իրեն : Իր դղրդալի հագազը վայ-
րենօրէն կը բաղխի երազանքիս , բղխելով իր ալե-
ւոր ու ժեռուտ գլուխէն : Իէմքը մզձառանջի պէս
ապուշ է . հայհոյութեան մը պէս խելացի . և սա-
կայն բարեմտութեամբ կը խօսի մարդը . ահագին ,
խոշոր բարեմտութեամբ մը : Երբեմն չեմ գիտեր
ի՛նչ կը խօսի . գինով՝ գլուխը կը կախուի մերթ
մարած սիկարին ծայրը հայելու , ուր մոլար աչքը
չի կրնար յառիլ : Ու թեւս , ծունկս մշտելով կը
վերակսի խօսիլ , երախին ու ակնարկին խուռչը
մեծարաց , խաւարչուտ :

Ի՛նչպէս համողիչ է այս վայրենին : Արտա-
յայտութեանը բրտութեամբն իր հուժկու բառե-
րուն խմաստին դէմքը կ'առնէ . իր բառն ականջիս
մէջ կը խոնտայ . մատներուն բութ հպու մը ծունկս
կը յաւցնէ . իր ահարկու միմքը հայուածքս կը
կուփէ : Իր խօսքը ստաապելով , մարդը կը բռնա-
բարէ ուշս , և անկեղծօրէն , լիովին համողուած
եմ միշտ իր ըսածին , թէ և յաճախ չեմ գիտեր ,
չեմ լսեր ըսածը : Քիմեատունը աղմկալի է . գինե-

տունը մարդուն կը խառնուի : Կը ջանամ , կը տենա-
չա՛մ սուղիլ դաւաթիւ լոյսին մէջ որ կը քաշէ , կը
ծծէ նայուած քս իր շողիւնին նրբին շառաւիղներովը :

Մարդը հօրս վրայ կը խօսի . . . մեռած հօրս
վրայ :

Եղերական բան մը կը բխի մարդէն : Իր աճաւ-
ւոր ծերութենէն աղէտի պէս բան մը կ'ելլէ :
Չայնը կռանային ոյժ մ'ունի , ամենօրէն մարդկային
արտմութեամբ մը լեցուն , կարծեա պաղատաւովն :
Հայրս մեռաւ , մեռած է , մեռաւ իմ հայրս : Գինու-
վութեամբ կը լսեմ , կ'իւրացնեմ մարդուն մութ
ձայնը որ մեռած հայրս կը պատմէ կոշտ , աստաւ-
պեցնող ճշդութեամբ մը , և ամէն յոյզի հակամէտ
երազանքս կը լեցնէ , արտմաղին , անոր ընդհատ-
ներն ու համառօտութիւնները , որոց խնաման է :
Մարդը կ'ըսէ ինձի թէ . . . — յանկարծ կ'ըսէ .

— Լուսերուն մէջը պառկի :

Երեսը կը նայիմ ապշած . գրեթէ սասկալով :
Ի՞նչ . . . :

Թշուա՛ւ , մահկանայու՛ իր խօսքին ենթադ-
րած երազին մէջ սարսուալի մելամաղձութեամբ մը
կը տոգորուի : Կը հաւտա՛յ կարեղիութեանն այն եւ-
րանութեան դոր կը մաղթէ և բացատրել չկրնաւ
լուն համար թերեւս կը կարծէ թէ տխուր մեղա-
ւոր մ'է ինքը . երկինքին անձանօթ . իր ժեռուա-
ու խաւարին կերպարանէն երազ կը հասի . օրհնու-
թիւն՝ իր հայնոյող դիմաղձութենէն : Իր բոլոր
զօրեղ վայրենութիւնը կը պատկառի , կը խանդա-
ղատի՛ լոյսէն որ գայ մահը եթերացնելու . — Իմ
խնայականութիւնս անարժան է , անձառ բաներու
երազին . — իմ տգէտ , իմ անբարոյական դրապաշ-
տութիւնս : Իսկ անիկա՛ անիկա՛ պատազին համոզ-

մամբ , աղէկաւոր հաւատքով մը կը կրկնէ իր խօսքը .
— Լուսերուն մէջը պառկի :
Թշուանաւիան , հերիք է . լոյսերո՞ւն , լոյսե-
րո՞ւն մէջը . . . : Չե՞ս գիտեր թէ ես . . . ես . . .
Թէ ես կը նախանձիմ : Այս մարդը կրնա՞յ
մտածել թէ ես կը տառապիմ Յաւերթութենէն , թէ
իմ անդրառենչութիւնս կրնայ մոլեգին խռովիլ
մահուան գաղանիքէն դէպի լոյսին խորհուրդը
երազուած աւրնչութեան մ'անձանօթէ՛ն . , թէ ես՝
տենչերու կոյտովն իմ մտքիս՝ չե՛մ հանդուրժեր
կրօնքի քաղալեղութիւնն ո՛ր է է այլարանութեամբը
քողարկուած տենչալի՛ իրականութեան մը յայտ-
նութեան որ իմ նախանձայոյզ զգայնութեանս
թելադրուի այսպէս . , թէ չեմ հանդուրժեր որ ծած-
կայուն (lat.) մէկ երազս ուրիշէ մը անտարբերօրէն ,
անդժօրէն բանաձեւուած վայելուի հաւատքով մը
զոր ես չունիմ զայն բանաձեւելու , արտաքնելու
համար , զայն սեւեռախոհելու համար . , թէ ես կը
տառապիմ իմաստուն կամ ապուշ այն դիւրութե-
նէն որով այս մարդիկը կը հաւատան անշրջագիծ՝
ալօս , անհաստատելի շքեղութիւններու , զոր
չհասկնալու վհատութիւնս անոնց գեղեցկութիւնը
կը տենդատէ՛ . , թէ շրմբունելով , չբացատրելով
մահուան ու լոյսին աւրնչութեան հնդկային վսե-
մութիւնը՝ չեմ կրնար հանդարտօրէն նայիլ անոր
գաղափարին՝ որ իր խոյսը , շլացքը , իր վեր-
ձեմքը կը փախչաի , անմատչելի : Այս մարդը , ա-
ռանց կարենալու երեւակայել իմ երեւոյթիս մէջ
թաքուն գալարուն գրապաշտութիւնն , առանց
կարենալու կասկածիլ երբեք որ ես իրականու-
թիւնը ժխտել ուղող սեռակէտներու տաժա՛նքն
յաճախ կ'զգամ՝ ու գիտեմ , անվախճան արտմու-

թեամբ, ոգեպաշտութեան թշուառութիւնն, այս մարդը գերեզմանին դանդախը կը մոռնայ լուսնդէն ցնորքներու մէջ, ու տատասկներուն ու հողերուն աակը ցուրտ խաւարին մէջ երկնցած հօրս մենաւոր դիակին խեղճութիւնը կը միտէ՝ մաղթուած, երազնւած լոյսի ծովներու մէջ, ուր ցնդին թախծալի իրականութիւններն յամբ անհետացմանը մարդկային խղճի այն բոլոր անաշխարհային խրաւովքներուն որ կը լեցնէին հայրս, և ծանր յայտնութեանն այն ամէն բաներուն որ հօրս մէջ հողինն էին, լուին ու խաւարին նիւթինն էին: Անդրագոյն երանութիւնը կրնայ լոյսը ըլլալ ուրեմն, այսինքն ի՞նչ: Տխմար, նեխման եղերանշոյլ փոսփորը չըլլա՞յ. գերեզմանէն լուսածնած, վաղանցիկ սոսկալի երանութիւնն յաւերժական խաւարներուն: Ո՞չ: Ի՞նչ է այդ մոգական բառը որ կը ցնցէ մէջս երկրայամու սկեպտիկը և անոր կարծր յուսկնութիւնը կրնայ կակղել իբրև դաղջ արցունքի մը մէջ: Հայրս, իմ եսիս անցեալը, իմ կարեւրութիւնս լոյսերո՞ւն մէջ...: Հայրս շմեռա՞ւ ուրեմն, աւա՛նակ:

Եւ խորհրդածութիւնը ախուր, ու հեզնոտ, կ'երթայ ճերմակ մահուան, ու նուագին հեծիւններուն հետ կը խարխափէ լոյսերուն մէջ:

Մոլի ումպով մը կը խմեմ գաւաթիս նշուլու մը որ հոծումն է, կենսալի, ծիծաղկոտ՝ պայծառութիւններով պղտոր խաւովքին տրտմութեան զոր կը հոսէ մտքիս մէջ, — որ պարպուած բիւրեղին մէջ կը մնայ սակայն, իբրև թէ մշտավառ ու անհատնում իսկութիւն մ'ըլլար, անյաղկենալի: Լոյսն է, ալքովին մէջ կիզուած, պաքուած, ինչպէս իմա-

ցականութիւնը՝ յուեանսութեան մէջ . բարոյա-
կանը՝ թշուառութեան մէջ : Խնձ մարդիկ : Ահա-
ւասիկ լուսածուփ , բղղուն գոլորշիին մէջ իրենց
քամակը կը ծռեն շողուն բաժակներու վրայ . անոնց
անողորմ ճուռողիւնին խառնելով իրենց մարդու-
պղտոր ձայնը , անոնց հմայական կայծին իրենց
տառապած աչքը յառելով : Կը ծիծաղին , խոշոր
խարխուռն ծիծաղներով և սակայն միադիքներ են ,
վասնզի կ'արբենան : Ալքոլուտ ծուխերն առկախ՝
ցաւազին կիսադէմքերու վերեւ՝ նոյն մշուշին մէջ
կ'երանառէտեն անոնց և իմ մարդկութիւնս , իրեւ
նոյն մտախաղային լուսապսակին մէջ : Եթէ ես
կ'արբենամ . խորհրդածութիւնը զուարթացնելու ,
առնացնելու համար , շլանալու համար շեշտ լու-
սախորձէ մը որ ներասքող խոռոչներ ցայտեցնէ
Պէնսափ ցոլքերու հեշտալի օտարութեամբն , ու-
ժպիտի , ներման ճշմարտութեամբ մը վերջօրինէ
անոնց իրականութիւնը , ներաշխարհին խորերէն
վիշտերու ու հրճուանքներու իռուագալար աճ-
ման ու ծաղկման մը հմայքը դիտելու համար . ,
նշուլումներու , լուսաւոր կենսառէտ շփոթութիւն-
ներու խաղաանքը ներդգալու , թրթռազին աւիւ-
նով մ'արցունքներու զուարթագին ու թախծալի
շողիւններ կրելու համար . , կը իմենն անոնք ալ՝
նոյն կենսառէտման , ալքոլի վիճակին նոյն դե-
ղականութեանը , սիրայնութեանը համար , ար-
տաշխարհէն պարտասած , սպառած : Եթէ բա-
ժակիս կայծկլաութին թոյնը ծաղկառէտ աւիւն
մ'է իմ երեւակայութեանս մէջ , յաճախ , և կեն-
սառէտութեամբ ազնուացու մ'մը՝ , այս մութ մարդոց
էութեան մէջ նոյն բանն է . պայծառութեան բո-
ցեղէն բարիք մ'անոնց հողուոյն մէջ , խոնջու-

թեամբ վատթար . աւուրգ արեւորագում մը . կարծես ազատ հայեցակէտի մը բերկրանքը՝ կենցաղէն պարտադրուող վրականութեան վերեւ . չարութեամբ ուամկացած իմացականութեան մէկ վաղանցիկ վերացումը՝ ներանհետ քաղցրութիւններու վերածնունդով : Աւքոյին շողիւնը որ հոգւոյն մէջ կը ծաւալի՝ բացակայող ինքնաբեր բարոյականը , — զուարթութիւնը , բնական ու դժուարացած ծանրացած վերացումը կը փոխարինէ կենսաշահութեամբ չարացած , չարչարուած հոգւոյն մէջ : Խըմեցէք , խամեցէք : Ահ , յարատե թշուառութեանց մէջ տխրորէն տատամտոտ տարակոյսով մ'ազօտացած հաւատք մ'է այն : Անոր լոյսէն վառուող ոգեւորութիւնը խմելու եկած խոնջ ու վհատ մարդը միթէ անդխտակցարար չի՞ խորհիր թէ իր բաժակը՝ սղեւորութեան , կեանքի զուարթութեամբը պիտի ներողամիտ ընէ իր խիղճը՝ ամէն մարդու , ամէն յանցաւորի մէջ խորհող ու մոռցուած արդարութիւնն , իրաւունքն արթնցնելով . — բաժակը քաւութիւն չի՞ հոսեր՝ զուարթութեան զօրութիւնը հոսելով : Ըմպելիին այս երկիւղալի թափանցկութեան համայնութիւնը մարդուն հանրէական Եսը չէ՞ . այս նշոյլը տիեզերական , օրինական ինքնութեան մ'ազատութիւնը չէ՞ . այս կա՛յծն՝ աս ողափայլ հոծում մը մոռցուած ուրախութեանց , բնական ու զուտ կեանքի մը հըրճուանքներուն : Թող խմեն : Քաղցրութիւնը որ կը լնու զիրենք՝ անդգալարար աղօթք , անգրատենչութիւն պիտի դառնայ . զուտ կեանքը հիացում է ամբողջ : Աւքոյը շեշտում մ'է մարդուն մէջ . և եթէ կրնայ մարդուն մէջ անասունը քստմնել , կրնայ մանաւանդ կոչել , խնկամբառնալ հոն հրեշ-

տակը : Յուզում մ'է , — տառապանք ու երանու-
թիւն միանգամայն , — և անհունութիւնը , և Աստ-
ուած խորն է ամէն յուզման : Ալքոլն անոր կը
մղէ խեղճ մարդիկը եթէ պիտի տանի զանոնք
հասե մահուան : Կա՞յ զմարդ Աստուծոյ տանող բան
մը որ զայն մահուան ալ չտանի : Վերացումներու
մէջ տեղուտող միանձնէին սպառման չափ ուղչա-
կիզական է անով ինչպէս հաշիշով տոգորուող
մարդուն քայքայումը : Թող հերուին անոնք որ կը
խմեն : Եւ մանաւանդ անոնք որ ստեղծողութեան
զուարթութեանը կարօտ են յաւէտ : Կենցաղէն վեր
սաւառնաթե հոգին չի կրնար տեսնել թէ ալքոլով
վառուած յայտնատեսութիւնը գուցէ էտկառ Բօէի
դանդաչանքին մէջ պիտի մարի վաղը : Պէտք է
որ ստեղծող յուզմամբը խռովի անիկա . իր յղա-
ցումներուն տեսլեանն հայեցողութեամբը խաղաղե-
լու համար : Եւ յոյզին իբր հառաչալիր սիրոփ
մ'արտադրութիւնը մտածումն է , որ երբեք այնքան
կենսալի չէ քան երբոր ծնի յոյզէն . ի՞նչ որ ալ այդ
յոյզն ըլլայ , — իբրև յեղաշրջումներու , տարտամու-
թեանց կորովի արտադրողութենէն , և որ իմացա-
կանութեան մէջ կը ճառագայթէ երբ խռովքին
թրթռագին հերչնչողութիւնը կ'անցնի անկէ , քանի
որ մտածումը Լոյսին յետին քայքայականութիւնն
է , որու վերլուծական , բազմամասնական ծայրայե-
ղութիւնը կը ձգտի վերջին ու ստաջին իտէանիւ-
թական համադրոյթին , Լոյսին , — բաժակիս ան-
յատակ կայծկլատութիւն մէջէն անջրպետներուն ու
ժամանակներուն մէջ ընկրկած . , — Լոյսին , ինչպէս
զգայարանական իմացողութիւնը քայքայականու-
թիւնն է (déc.) դէմյանդիմանութեան . զննողու-
թիւնը՝ տեսանողութեան , ինչպէս զիտութիւնը՝

հաւատքին . ինչպէս ճանաչումը՝ սիրոյ : Վասնզի խնայականութեան կատարելութիւնը՝ խնայականութեան ծագումն ու վախճանը՝ գէմյանդխմանութիւնն է . տեսանողութիւնը , Հաւատք հանճարը , Աէր հանճարն է . և այս բառերը միեւնոյն նիւթին ու միեւնոյն դօրութեան այլազան բմբունումներն են միայն , և ուրիշ բան չեն նշանակեր , բայց միայն Եթերը , բայց մի միայն կոյան առ որ արարչադօրծութիւնը կը ձգտի և սրով կը թրթուայ , կ'ապրի , է յաւիտեան :

Եւ միշտ կը յառիմ , երազակոծ , յուսահատ՝ աւքոյին լուսաշաւիղներուն որ բաժակին բիրտեղին մէջ կ'ընկրկին , կ'ընկրկին :

Եւ այս անվերջ յուսահատութիւնը չէ՞ , մշտահորով ու անյագ տենչի այս յուսահատութիւնը որ պատրով բայց սիրտիչ երանութեամբ մը — և ինչո՞ւ պատրով — կը յառէ տեղականի , զրկեալի , խենդի աչքս ուր որ նշոյլ մը կը փայլի : Թուանցնող կամ կառչող ցոլք մը , անչարժ , հիացական . , — պղինձ անօթի մը շուրթին , մետաղէ բանի մը կորանքին , եզրին , անկիւնին լուսագծութիւնը . , թիակին տակ , հաւատաձքին գէմ , աղբիւրին մէջ բեկբեկող նշուլումը . , անտառին մէջ մզուող շառաւիղը . , կոհակի մը ծոցը դողգոջող փառփիւնը . , եկեղեցւոյն մէջ իջնող ճառագայթը . , կրակին շառաղը . , բիրտեղի մը մէջ ինկած ճաճանչ մը . , աղամանդին պաղպաջը . , այգաթ և կամ իրիկնածուփամպի մ'ոսկեփայլիւնը . , մենարանին պատահանին լուսադօտութիւնը . , ծիածանի երանդի մը շողիւնը պրիամակին մէջ . , կաթիլի մը լուսաշիթը . , հեռաւոր

լապտերի մը փշփշանքը գիշերին մէջ, Ալտեպարանին բողբոջը . . . , Ռիգելին պսպղումը, մե՛ծ Սիւրիուսին փողփողիւնը . . . , Լուսաբերին անշարժ արծաթափայլ ջահումն արշալոյսին . . . , ամէն ինչ որ կը փայլփլի, կը բոցավառի, կը շողաալաքէ, կը կայծկլտայ, կը բռնկի՝ ամէն պայծառութիւն որ չի շլացներ աչքն ու կը թուի զմայլիլ, կը թուի սիրե՛լ՝, կը մագնիսէ, կ'ըմբռնէ, կ'ողողէ զիս . ան, ինչպէ՛ս, կը յառիմ լոյսին : Աչքս կրնայ խողտիլ . բայց լուսէութիւնս, հոգիս՝ արծիւի մը պէս կը նայի դեռ : Իտէնշոյլներ են անոնք, որոց յառելով կը վերլուծեմ անոնց կիտային անջրպետն ուր կը սուզիմ . որոց կայլակին մէջ կ'ընկղմիմ իբրև ներշնչման լճի մը մէջ . իբրև դէմյանդիմանական շաւիղներու մէջ . Եբրայեցի քահանայապետին պէս որ խորանին ստուերին մէջ կը ներշնչուէր նուիրական լանջազարդին տասներկու գոհարներուն փայլատակումէն : Հոգիս կը ծծէ լոյսը . կը կորսուիմ լոյսին մէջ . — ստուերի հեք, ստուերի երազ : Ամէնուն երկնայնութիւնն է ան և ամէն ինչ անոր կը ձգտի . Լոյսին :

Լոյսին, ուր կ'սքողի խորհուրդը, իբր անհուն օրինքսի մը մշտնջենաւոր ժպիտին մէջ . և որ ճառագայթումը, զուարթութիւնը, մատուցումն է երջանիկ խորհուրդին, ու մշտաբաղձուած խաղաղութեան բնական ու իմաստասիրական տեսակէտն, ու տեսի՛լը : Վասնզի մի՞թէ անիմանալի յաւերժանիւթը, որու երկնային ընծայումն է Լոյսը՝ առաջին ու վերջին անծանօթ ձևը չէ՞ բոլոր իրերուն որ միջին ձևեր են միայն . — Արին, ուրկէ քայքայանջատ ու անկատար՝ լողխի փեղերքն, այլ դէպ ուր յափշտակուի անընդհատ, երանաւէտ նպատակ ամէն վիճակներու, որ խաղաղութիւն կ'երա-


զեն միայն, ամէն կնճիռներուն որ պարզութիւնը միայն կը բաղձան, ամէն խորշոմներուն որ ժպիտը միայն ըլլալ կ'ուզեն: Իէմյանդիմանակա՛ն Քէ ճառագայթները իսկութիւնն իսկ են արեւուն, արփային անձն իսկութիւնը որ միակ Տարրն է ու միակ Զօրութիւնը, որ Գոյութիւնը կ'ըլլայ, ու զայն կը թափանցէ անընդհատ. — Զրադաշտի յաւերժասուրբ Լոյսը՝ սր կը լեցնէ Ամբաւութիւնն ու Ամէն ինչ, և ամէն բանի հիւլէկոյտը կ'անջատակցէ, ինչպէս անտարակոյս Տիեզերքի՛ն հիւլէկոյտն ուր հիւլէներն աստղերն են, — ամենակալ հիւլթ՝ ամենակարող սնունդ ամենուն, ամենուն ծագումն ու գոյութիւնն, ու նպատակը, յաւերժափա՛ռ անդրանկարուած՝ կէօթէի ոգևարին մէջ: Անդորրը գերագոյն իմաստութեան ուր տարակոյսը չկայ, և որ վայելքն է ամէն բանի, ու անդորրը գերագոյն համասեռութեան ուր մարմնոյն այլասեռ բազմասնութեան պայքարը չկայ, ուր մարմինները կը միանան զուտ ու իսկական եղբայրութեան մը, հայրութեան մը Եսին մէջ:


Լոյսին. որով աստուածները կերպարանեցան ժամանակներուն մէջ. որու աղօթեցին թերևս «լաւագոյն» (Գօնտօուսէ) դարերն՝ իբր վիճակներու երկնահուսկ կատարելութեան. — քաղղէական գիշերներու պերճ երկնակամարին որ Տիգրիսի խաղացքին մէջ կը հոսի, ու Միջագետքի անհուն անդրհայեցութիւնը կ'ըլլայ. խունկի բլուրներու այրմա՛ն հետ վերթեող անդրհայեցութիւնը. — լիբիական աւազներու Ամմոնին՝ որ Նեղոսի ջուրերուն խաղաղաւէտ բարութեան մէջ կը ցոլայ, ու Հօռոսին՝ որ Բուրգերն յղացող քաղաքակրթութեան մէջ կը ցայտէ. — Զայէնտայի ծփանքներուն մէջ բեկբեկող

ու Տէմալէնաի ճիւղներուն մէջ պաղպաղուն որմգ-
դական լոյս իմացականութեան որ իրանեան ա-
ռաքինութիւններուն մէջ կը վերլուծուի . — Տէվա-
ներուն Ադմային՝ որ Գանգէսի սրբութեան մէջ կը
խորհրդափայլի ու Հիմալայաններուն ճիւղափառ
գերաշխարհը կ'օժէ . — Ապողոնին՝ որ Պինդոսի կա-
տարէն իտէական ուղիսը կը ճաճանչէ Ելլադան ու
աշխարհը լուսաւորելու , թրթռացնելու . — Սինայի
ամպրոպներուն փայլակիին՝ որ կը վերածուի կը
հմայափոխուի Մովսէսի ճակտին միադիք կարկառ-
ներուն զոյգ ճառագայթին . — պայծառութեանը որ
Հերմոնի վեհավայրներուն վրայ , Պաղեստինի խոր-
հրդածուի լճափներուն վրայ կը սաւառնի , Յոր-
դանանի ջուրներուն օծութեան մէջ կ'երազէ , ու կը
դիմակերպի , կը խորհրդանշանուի Աշխարհի Լոյսին
մէջ , որ տեսիլի մը պէս կ'անցնի մարդկութենէն
զոր կը լուսնոտէ , կ'ամբառնայ . — և կը հոծուի ,
կ'էանայ Հոգւոյն մէջ որով կ'արբենան անոնք որոց
անձնութիւնն արժանի է անոր սրբութեան . —
Լոյսին , որ Արևները կը ծնի , — զոր , ա՛լ անմար-
դաճայն ամայութեանց մէջ , քաղաքակրթութիւն-
ներէն հեռու՝ Պաալպէքի , Ուլի , Թերայիտի աւե-
րակներուն մէջ՝ տաճարներու ու գաղափարնե-
րու փլատակներու մէջտեղ դեռ կանգուն մռայլ
սիւներու յայտնատեսական կոթողումները կը սեւե-
ռախոհեն : Եւ զո՞ր ներանձնական Եսս կը տենչայ
էութեանս խորերէն , անդրեսական հանրէութեանս
գարերէն ի վեր : Այն է սնունդը , գոյութիւնը ,
ոյժը : Ահա՛ ինչ որ է բանաստեղծին սնունդը .
այսինքն սնունդը բոլոր կենսաւէտութեանց ու բո-
լոր կենսաբաղձութիւններուն , որոց ամփոփումն է
Բանաստեղծը : Լոյսը շնչել , թափանցուիլ անով .

և զայն ցոլալ, արտաշնչել, ասիկա մեծագոյն իրողութիւնն է. կենդանութիւնը: Չմայլիլն ու արտադրելը հզօրապէս թրթռալ է անով: Բոլոր զօրութիւնները միևնոյն ոյժն են. համատարած, ամենաթափանց Եթերին թրթռումը: Ամէն ինչ կը վերածուի թրթռումին ու շարժման, այսինքն սաքաւին. Չգտում (tend.): Հանճարը, ելեկդրոսանքը, հաւատքը, կամքը, սէրը, ծանրութիւնը (gravita.) բարոյականը, աղօթքը, միևնոյն ձգտումին աւումները, պարագայացումներն են: Երանի անոր որ սատկապէս թրթռազին է, անդուլ թրթռուն է արփով. ահա անիկա է տեսանողը, հանճարը, դիւցազնը, սուրբը, մարտիրոսը: Մարմինները հիւլեկոյտեր են որք ուրիշ բան չեն այլ Եթերի հոծոյթներ, Եթերի եղափոխական, ձևափոխական վիճակներ: Նիւթ ըստածը խտացած, սահմանաւորուած Արփն է. Հողին է. և հողին՝ սահմանազերծ, անպարագիծ Նիւթը. Նիւթին հախնաձևութիւնն ու վերջնաձևութիւնն է: Այս երկու անհուն ձևերն արարածներուն մէջ ժամանակակից են անհունազան չափերով. բոլոր էակներն այս երկու ձևերը միանգամայն կը կրեն: Երանի անոնց որ կարող են զեզման, անեսականութեան, և կրնան թոյլ տալ Արփին՝ յորդակոհակ թափանցելու դիրենք, որոց մէջ հիւլեկոյտերն անօտր են, որոց հիւլեդրութիւնները լայնածիր են և ամբողջին թրթռացումը մեծ է. — վասնզի հիւլէներուն դարձդարձումը՝ թրթռացումն է մարմնոյ մը բովանդակին, ինչպէս լուսաւորներուն թաւաղումը Տիեզերքին ամենի թրթռացումն է: Հողիացո՛ւմ, հողիացո՛ւմ, վերադա՛րձ աւազին և վերջին ձևին: Չոյզ անհուն ձևերուն մէջ տեղ մէկը կայ, անպատում էակ, որ փոխանցումն է

Նիւթէն Հոգւոյն , Նիւթին տրամուծեամբը դեռ լի .
Հոգւոյն երանութեամբն արդէն զեզուն . և յամբօրէն
կը բարձրանայ , դէպի նիւթազերծումը , դէպի աս-
տիճանական , դէպի արդէն իրագործուող հոգիա-
ցումը , դէպի հոգւոյն փառքը . հետզհետէ աւելի
քաղցրութիւն կ'ըլլայ , հետզհետէ աւելի ներում ,
աւելի սէր կ'ըլլայ , կ'աննիւթանայ , կը վերանայ .
Եօշուան է , Եօշուան է , Եօշուան է . . . :





ԱՄԷՆ բան լոյս պատկեր մ'է, և պատկերներու այլազանութենէն, թիւէն, ուստի մասնաւորութենէն կը տառապի հոգին որ բնականօրէն կը ձգտի լուսանիւթ երանական համադրոյթի մը, ուրկէ անոնք կը բղխին կը պիտակաճնին, և որու անխառն միութեան մէջ հոգին զանոնք ձուլել կը տենչայ: Պատկերները, այլազան ու անթիւ՝ ցաւեր են հոգւոյն մէջ որովհետև իրենց մասնաւորութեամբը թերի են, ու կը դիմադրեն հոգիին որ ընդհանուր է իսկապէս, ու իւրացնել, համայնիլ կը տենչայ: Սարէական բաղձանքներ են անոնք, և պուտտայական հրաժարումը բաղձանքներէն՝ խոյս մ'է պատկերներէն՝ — արտաշխարհէն — ու երկրաժեշտ մը՝ մենաւոր հայեցողութեամբ պէպի Նիրվանան, կամ Պո՛տհին — մե՛ծ յղացումն ընդհանուր հոգւոյն, որ պատկերներուն՝ անոնց հրապոյրէն ծածկուող մասնաւորութեանն, անոնց անամբողջ, անզուտ, պզտիկ, մահկանացու իրականութեանը բաղխիլ կ'զգայ երբ անոնց երեւոյթէն կը հրապուրուի, երբ անոնց երեւոյթին լոյս պատկերին կը ձգտի. — արգիլուիլ, սահմանուիլ

կ'զգայ անոնց ծածկած նիւթական կերպաւորութեանէն, — անհուն քայքայականութեան մը յայտակերպում, — և մարդ՝ համադրելու, համադրուելու երազով լեցուն, կը բաղձայ ա՛յն գերընդհանուր ու յաւերժական էութեան որ արտաշխարհի այլակերպութեանց մէջ անփոփոխ՝ անոնց նոյնութիւնն է, օրէնքն է, — և այս բաղձանքն յագեցնել կը ջանայ կամ այս բնազգացումը գիտացնել՝ վերջնապէս ընդհանուր յղացումներումէջ, ինչպէս համատուածութեան, ինչպէս միատուածութեան, — ամէն ատեններու աստուածգիտութեանց մէջ . . . : Աստուածութիւն մը՝ ի՛նչ ալ կոչուի՝ Օսիրիս, Պրահմա, Բահադ, Եհովա, Զեւս, Աստուած՝ ամէն բանի ընդհանրութիւնն է : Այս յղացումները կը նշանակեն ո՛չ միայն նախապատճառներն՝ այլ նաև յաւերժապէս անփոփոխ էութիւնները տիեզերքի երեւոյթներուն . անոնց ներասքող յաւիտենութիւնը . ա՛յն ընդհանրութիւնը որով ամէն բան կը մատուցուի առ հոգին որ իւրացնել միայն կը տենչայ, որովհետև խորապէս ընդհանրական է, նմա՛ն Ամէնուն, — և իմացականօրէն ըմբռնումն առաջին ու վերջին ձեւն է նիւթականօրէն իւրացման : Մարդուն մեծագոյն գիտութիւնը եղբայրութիւնն է . . . : Եւ եթէ Աստուած Բարին է՝ անոր համա՛ր է որ Ամենագիտութիւնն է : Ամբողջ արտաշխարհը ձգտումներու, երազներու քառս մ'է հէք իմացականութեան մէջ որ անկարող է զգայարանապէս անոնց թիւն ու նիւթը իւրացնելու և յուսահատօրէն կը նայի անոնց, քանի որ եթէ ընդհանուր է իբր էութիւն՝ մասնաւոր է սակայն իբր անհատականութիւն, մասնաւորութեան թշուառութեամբը տրտում : Ամէն

բան հեռու է . ամէն բան տխրեցնող . որովհետեւ
ամէն բանի մէջ իմ սահմանս կը տեսնեմ : Ի՞նչ է
անկրօնութեան ընադդապական նշոյլը . ցաւագին ու
կորստական մասնաւորութեանս մէջ , իմ մշտնջե-
նաւոր կուրութեանս՝ որով չպիտի ճանչնամ , չպիտի
ուենեամ արտաշխարհը , քանի որ չպիտի տեսնեմ ար-
տաշխարհի իրերուն յետին ու ճիշդ ընդհանրութիւնը ,
և անոր խաղաղութեան մէջ չպիտի հանգչիմ : —
Ըմբռնումի , իւրացման այս ձգտումին յագո՛ւրդն
է որով միտքը կարենայ երբեք անդորրիլ ամէն
բանի մասնաւորութեան՝ թիւին մէջ որ ա՛լ Ամենայ-
նին ծաւալն եղած ըլլայ միայն , , յագուրդ՝ ուր
տենչերը կը դադրին , քանի որ երեւոյթները կը բա-
ցատրուին ու կը ջնջուին ա՛լ բաղձանքներ ըլլալու
անկարող , և որու համասեռ , միապաղաղ ընդհան-
րութեան երկի՛նքը կրնայ հեշտիւ իւրացուիլ հոգիէն ,
— և որ թերեւս ոգեպաշտներու պատմած մահն է :
Վասնզի եթէ ոչինչ կ'իւրացուի ցորչափ ընդհանուր
գաղափարով մը չի մատուցուիր , ցորչափ տեսակէան
ընդհանուր չէ՞ նոյնպէս ոչինչ տեսական է՞ ցորչափ
ընդհանուր գաղափարի մը մէջ չանհետիր : Ամէն
ինչ իր մասնաւորութեամբը միայն կը մեռնի , և
անմահ ըլլալու համար պէտք է . ընդհանուր ըլլայ :
Ա՛հ , կրօնքներուն նպատակն է , քրիստոնէութեան
նպատակն է ընդհանրացնել զմարդ :

Մասնաւոր , զգայարանական մարդուն յղա-
ցումները՝ սահմանափակ հանրացումներ՝ չեն լսուեր
մարդուն ներքին հանրականութեան զոր քիչ մը
կ'ափովին թերեւս : Աչքը կ'ընդհնջմարէ , կը տեսա-
հարի միայն : Յորչափ զգայարանական է մարդ՝

և իրերուն մասնաւորութեան կարօտ՝ այսինքն ցոր-
չափ Ֆիլիքսական պէտքեր ունի, չի կրնար տիրանալ
դերագոյն ընդհանրացման, զոր զգայարանքները՝
բուն իմացողութենէն այլացած (différencié), ու ան-
կախացած՝ կը մերժեն արդէն: Ո՞ւր է, ո՞րն է հուսկ
ճշմարիտ ընդհանուրը որու պայծառութիւնը չպրդ-
տորի՝ մարմինով մ'արգիլուած մարդուն դրական
տարակոյսէն, որու փառքին դէմ չօձապտուտքի
թշուառութեամբ լիրբ ինչուն իր տեսանողութեան
աղքատութենէն՝ գիտականացած մարդկութեան:
Իրաւո՞ւնք ունին անոնք որ կ'երազեն անդրաշ-
խարհի կեանք մը՝ լի՝ երանութեամբը բացարձակ
վայելքին որ Ամենայնին անպատրուակ տեսողու-
թիւնն է, ճշմարիտ իմացողութիւնը. — իւրացումն
է, համայնացման ենթադրած ու արտադրած ճա-
նաչումը:

Կրօնքը, բանաստեղծութիւնը, գեղարուեստը,
կ'երթան մինչև իրենց հանրացման վերացականու-
թիւնը թանձրացնելու մասնաւոր պատկերներու մէջ,
— եթէ թանձրացած մասնաւորութիւննէ՛ր գիտու-
թիւնը կը հանրացնէ գլխաւորաբար: Հանրացում-
ներուն՝ իրաձև դիմառութիւններով վերստին նո՛ր
թանձրացման մէջ կայ կորնչական, մասնաւոր մար-
դը, որ կ'ուզէ իրակերպել, մարմնաւորել ան-
մարմին վերացականութիւնն ընդհանուր գաղա-
փարներու: Զգայարանքներու մարդը պէտք է
պատկերացնէ՝ զգայարանական ընէ ինչ որ իմա-
նալի է, և անշրջագիծ. զայն մատչելի դարձնէ
իր արտաքնութեան (մարմնաւորութեան) և ինչ-
պէս կրօնքը՝ Գեղարուեստներն ու Բանաստեղ-
ծութիւնն ալ խորհրդանշանական են այսպէս, ա-
մէն ժամանակներու, ամէն դպրոցներու իսկ մէջ,

և իրենց իմաստասիրական արժէքը համեմատութիւնն է որով իրենց ստեղծումներն ըլլան այնքան մասնաւոր իրենց երեւոյթով՝ որքան իրենց իմաստով յարաբերաբար ընդհանուր . զգայարանականութեամբ այնքան մարդկային՝ որքան ոգեկանութեամբ յարաբերաբար տիեզերական, աստուածային:

Հանրացնող մտքին անդրհայեցութիւնն, այսպէս, որ կը թափանցէ արտաշխարհի կերպարաններն ու կ'անըջաստեղծէ զանոնք իրենց ենթակայական իմաստին, ընդհանրութեան մէջ՝ անմատչելի, անխւրանալի իրականութեանց հանդէպ հոգւոյն իւրացնելու խորին իղձն է, որու հզօր յայտակերպութիւնը, որու խանդավառութիւնն է ամէն ժամանակներու գաղափարի թէ կիրքի միադիքականութիւնը: Օ՛հ, ո՛չ, անասնական ջրլալուն համար կարելի չէ ըսել անոր մասին ինչ որ Նիցչէ հանդիպած եմ թէ կ'ըսէ Քրիստոնէութեան նկատմամբ որ այդ միադիքականութեան մէկ բանաձեւումն ու թերեւս կատարելութիւնն է. — «Հիւանդագին» վիճակ մը չէ այն, երբոր ապաքինում մը, առողջացում մ'է Նսէն: Եւ յետոյ ամէն վիճակ կրնայ ընականոն ըլլալ: Զգայարանքներու դրապաշտ գործունէութիւնը չի բաւեր գիտակցութեան. փորձին սահմանափակումը չի գոհացնիր մտքին դէմյանդիմանութիւնը, և մարդ խորհրդածել սովրելէ առաջ կը զգայ:

Եթէ անդրհայեցութիւնն իրականութիւնները կը տեսնէ անիրական, ու խիտտ յաճախ շատ կենթակայապէս ընդհանուր յղացքներու մէջ, խորհրդանշականութիւնը որ անոր գործնականացումն է, կարելի է ըսել ծէսը՝ զանոնք կը մարմնաւորէ մասնաձեւ, իրաձեւ ստեղծումներու մէջ կամ նոյն իսկ

ա՛յն իրերուն՝ որոնց պատրուակին կը կարծէր թափանցած ըլլալ : Եթէ առաջինը երևակայական կամ բնազանցական վերլուծում մ'է իրապատկերին՝ խորհրդանշականութիւնը անոր գաղափարին մէկ համադրութիւնն է՝ պայմանադրական պատկերի մը , կամ նոյն իսկ իրապատկերին մէջ : Բանաստեղծին անդրհայեցութիւնն իրապատկերը վերլուծելով կ'արտադրէ հոյլ մը ենթակայօրէն ընդհանուր մտածումներու , (եթէ ո՛չ տիեզերապէս կամ առարկայապէս ընդհանուր , վասնզի այն ատեն բանաստեղծը կը շփոթուէր տեսանողին հետ , թէպէտ աւելի կամ նուազ՝ բանաստեղծը նախահոմերեան վաղէ մ'է ներքնապէս ,) որոց ձևային ամփոփումն ու մասնաւորումն էր այն իրապատկերը , թէև դրապէս թերևս անոնց առիթն էր միայն , որուն՝ արտաշխարհային վայրկեանն ու մանաւանդ բանաստեղծին հոգեկան րոպէն միջավայր ու պայման եղած ըլլար :

Կրօնքներն ու Քեղարուեստները խորհրդանշականութիւններ են . աւելի կամ նուազ կատարելագործեալ աւելորդապաշտութիւններ : Եգեան Մովսէսն մանիչակագոյն տեսիլներուն մէջ , հնդկական անտառներու , սկանտինաւեան թանձրամայրիներուն մէջ հետակորոյս են աստուածները . և բանաստեղծին տեսողութիւնը՝ փոխանակ անոնց ուժգին ուրուապատկերին (silh.) տիեզերական ձգտումներու թրթիւ մը կը փնտռէ տիեզերքի տեսիլներուն մէջ : Ամեն բան աստուած մ'էր . ամեն բան աստուածային է միշտ : Բանաստեղծութիւնը՝ բնազանցութենէ անխառն իսկ նկատելով՝ միշտ հոգեդաւանութիւն մը , մարդակերպութիւն մ'է , ինչպէս հիներուն մարդակերպութիւնն անոնց մէկ մեծ բանաստեղծութիւնն

էր : Մարդը փոխանցում մ'է ձեռն դէպի իմաստը , տեսիլէն դէպի խորհուրդը , թիւէն դէպի Անհունը , Իրականութենէն դէպի Փաղափարը : Իմաստասէրին բառով՝ ցո՛ւք արտաշխարհին՝ միտքը կը ձգտի անկախամէտ ու հզօր՝ անկէ հմայափոփուելու գաղափարական , իմաստային տիեզերքի մը . ներաշխարհին կատարելութիւնը որ հնար ըլլայ երբևք , և որ սակայն ուրիշ բան չի կրնար ըլլալ վերջապէս՝ քան համայնէն իւրացուելու յուսահատօրէն համեստ , պուտտային իղձ մը , և որ կրնայ վերջ ի վերջոյ ըսել տալ Անհունին առջև կեցող մարդուն . Եթէ դուն չեկար ինծի՝ ե՛ս ահա քեզի կուգամ , — էտնային վիճը նեատուղ փիլիսոփային պէս , — եթէ մ'չ , գուցէ , յիմարութիւնը . . . :

Եւ եթէ խորհրդապատկերները ցաւազին կողանակներ են արտաքին մասնաւորութեանց ետև թաքուն ընդհանրութիւններ իւրացնելու , արտմութեան օղբիւրներ են գգայարանքներուն առջև որ կը մերժեն զանոնք . վերացող հոգւոյն մէջ սքօղուած դրականութեան որ խորհրդապատկերներու յօրինուածին կապերը կը լուծէ , որ իրերը կը տեսնէ ինչպէս են ընդհանրապէս : Մտքին ամէն գործերուն մէջ նիւթական մարդը կայ : Եթէ սողը սաղմնարար թռիչ կը պարունակէ՝ նախկին սողը թռչին մէջ անհետ չէ , և կեանքը դրական է յաւէտ : Այն ատեն . . . այն ատեն պէտք չէ՞ խենդ ըլլալ միայն , խենդութեան տխուր ազատութեան հասած լլլալ , հաւատալու համար ներատեղծուած տեսիլին շրջապատող , ներկայ իրականութեան :

Եւ արդէն , եթէ բանաստեղծին , արուեստագէտին խորհրդապատկերը , կրօնաւորին խորհրդանշանը , ռամկին բժժանքը , ինչպէս նաև գիտու-

նին տխարը , կամ տեսակը , գաղափարներու մտա-
չելի հոծոյթներ են՝ , խենդին մտապատկերը նոյն
բանն է : Վասնզի խորհրդանշականութիւնը որ մրտա-
քին պայմանն է , քանի որ շեզոռ մը անհրաժեշտ է
մտքին՝ , — պայմանն է նաև խենդութեան . . . :

Ամենէն աւելի ազատ ու անճնական խորհրդա-
պաշան է խենդը : Ամենէն աւելի , որովհետև սան-
ձարձակօրէն կ'իւրակերտէ արտաշխարհն ու կ'ընդ-
խառնուի անոր : Իր տեսած կամ մտածած պատկեր-
ներուն մէջ երևակայութիւնն անհուն բաժին մ'ու-
նի . իր տեսածը կ'երևակայ , ան . և իր երևակա-
յածը կը տեսնէ : Եւ գուցէ , եթէ բնօրէն (norm.)
խմացականութեանց մէջ խորհրդանշականութիւնը
մտքին մէկ պէտքն է մանաւանդ՝ խենդին մէջ
խմացականութեան բնութիւնն է այն : Իր քայքա-
յուն ու գերազանցօրէն անկապ , կամ խօլօրէն յօ-
գակազմուած միտքը չի զեկուիր ա՛լ յիշողութենէն
որ խանդարուած է յօդերու քակումով , որովհետև
մանաւանդ ա՛յն ըմբռնողութենէն որ առողջ մրտա-
քին բոլոր տարասեռութիւնները կը կեդրոնաձգէ ,
այն ներքին միութենէն որ ամբողջ բնօրէն խմա-
ցականութիւնը ներդաշնակութիւն մը կ'ընէ , և
որ Գիտակցութիւնն է , իր միտքը հանդիսութեանց ,
նմանութիւններու , յանկարծական պատկերներու
զիպուածայնութեամբը կը վարուի՝ ու ազատ է
այն չափերէն որոյմով մարդ արտաշխարհէն անջատ
կը մնայ , և որոյմով իրականութեան ու տեսիլնե-
րուն համեմատութիւնը գիտէ : Խենդը՝ արտաշ-
խարհն ու իր իսկ մտապատկերները կը տեսնէ սով-
բուած տեսակէաներէ , գուցէ երանաւէտ անկախու-

Թեամբ մը : Ո՞ւր կը վերջանայ արտաշխարհը , և ո՞ւր իր միտքը կ'սկսի . միթէ գիտե՞ս ատիկա . միթէ ատիկա հո՞գն է իրեն : Իր տեսիլներն իրականութիւններ կը թուին . տեսիլներու պէս կ'իւրաստեղծէ իրականութիւնները , որովհետեւ անոնց անձնական ու տարօրէն իմաստներ կ'ընծայէ : Իր ընդհանուր տրամադրութիւնը , իր հիւանդութեան պատճառը , իր վայրկեանները կը վարեն այդ իմաստները , որ կը դայրացնեն զինքը կամ կը ծիծաղեցնեն : Ա՛հ . ի՛նչպէս կը խնդայ և ինչպէս ազատ կ'երևայ : Կարծես ժպտիլը , խնդալը յատուկ ըլլար խենդին : Աստուած , որ արդարութիւնն է , և արդարութիւնը տրամաբանութիւնն է միայն՝ խաղաղութիւնը իմաստունին կուտայ և ժպտը՝ խենդին :

Բայց ես չեմ գիտեր ինչու կը սիրեմ խենդը : Կ'արգահատի՞մ անոր թշուառութեանը — վանդի թշուառութիւն մ'է այնքան ծփանուտ , այնքան բազմակեղրոն , այնքան զուրկ ըլլալն այն հասաւոր և անորակելի առանցքէն որ նեցուկն է բնօրէն մտքին , ու անոր կանոնաւորութեան հանդարտութիւնը , քաղցրութիւնը կ'արտադրէ : Եւ կամ կը հետաքրքրուի՞մ անով իբրև տարօրէն էակով մը որ առանձնաշնորհն ունենայ այլապէս տեսնելու ծանօթ արտաշխարհը . որ տարբեր , անհնարին նշանակութիւններ զգայ անոր երևոյթներուն մէջ , և իր ըմբռնումներուն համաձայն ապրի առանց ամօթի , պարտադրուած կանոններէ , վարմունքներէ զերծ : Իր մտապատկերներուն անկախութիւնն իր կենցաղին ազատութիւնը կ'արտադրէ , թէև ինքը չզգայ ո՛չ անգիտակցութեան երանաւէտութիւնը , ո՛չ ազա-

տութեանս երջանկութիւնը : Իր տեսողութեան տա-
րականոն կերպով , իր մտածումներուն դէմյան-
դիմանական հանգամանքով մերթ ճշմարտութեան
կը հանդիպի որու կը հաւտայ առանց դայն գնա-
հատել կարենալու , — եթէ սո՛ւտը մանաւանդ կը
քնակաւորէ իր իմացականութիւնն ու կը շփոթի
հոն ճշմարտին հետ : Ընտանի աշխարհէն իր զերծ-
ման մէջ՝ ահա ներշնչուած խօսքեր կ'արտասանէ
որ կը խորհրդաւորեն իր արտաուոցութիւնն , ու իր
խենդութիւնն ակնածելի , նուիրական կ'ընեն . որ
զՍ.ստուած կ'զգացունեն իր կերպարանքին մէջ մե-
հենադրոշմուած : Կը թուի ըլլալ այն տեսանողնե-
րէն որք Անեղբութեան հետ ներդաշնակ ըլլալով
անոր մէջ ազատ են . որոց տարամարդկային ըն-
թացքը կը հաւտացուի Անեղբութեան հետ ընտա-
նութեան մը հետեանքն , յայտակերպումը : Անհու-
նին հետ կը թուի հաղորդակցիլ . ուստի նուիրական
է մոգի մը պէս . առանց դադրելու կարեկցելի ըլ-
լալէ , ինչպէս մարտիրոս մը : Ո՛հ . կարծես արեւել-
ցիին յարգանքն ունիմ ես անոր նկատմամբ . . . :

Բանի մը , պարապին կը նայի ու կը մտմտայ
խենդը յաճախ : Ես ալ իրեն կը նայիմ մի և նոյն
կերպով . ա՛հ . թերևս մի և նոյն կերպով : Եթէ իմ
տեսածս խենդ մ'է՛ անոր տեսածն է խենդէ մը
տեսնուած լան մը . խենդի բացատրութիւն մը :
Եթէ իմս իր խորհուրդն է միայն որ զիս կը հմայէ ,
կը յուզէ , կը հիացնէ , անոր տեսածն իր վերլու-
ծումն է : Իր այլատես ուշադրութեան նախանձելի
յառումով ի՞նչ այլանդակ ու թերևս նորօրինապէս
խորին հանգամանք կը յղանայ արտաշխարհին մէջ .
իր մտապատկերներուն խօշանկարմանց միջև ի՞նչ
հանճարեղ աղերսներ կը դիտէ . իր ազատ երևա-

կայութիւնն ինչ հաշշային խառնորդներ կը ցնորակերատէ իր աչքին : Ի զուր կը նայիմ իր նայուածքին . իմ հասարակ աչքերս անոր իրազանցական տեսիլները չեն տեսներ . անոնց անհեթեթ վիպականութիւնն , անոնց ճշմարիտ քայքայականութիւնը չեն կրնար վայելել : Ի զուր կը հարցաքննեմ զինքը . ոչ իսկ կը լսէ զիս . և մերթ , եթէ սկսի իր պատասխանը՝ չի կրնար զայն վերջացնել : Եթէ յանկարծ ուշադրութիւն և յիշողութիւն արուէին իրեն՝ հանձարի կը փոխուէր խենդը : Եւ ես կը յամառիմ , սեւուած իրեն , սպասելու իր մոլար , իր ցնորական իմացականութեան մէջ երբեմն ցայտող նշուլումներուն , պշրանքներուն հմայքին . իր՝ կամեցողութեան , ուշադրութեան , ամփոփման անկարող մտքին մէջ համանութեամբ կամ համասեռութեամբ զիրար ձգող գաղափարներու յանկարծական հանձարեղութեան հրապոյրին . իր խորհրդածութիւններուն ներշնչական վիճակի անգիտակից , անեսական կատարելութեանց , յարատեկեղրոնադրկութեան մը եղկելի շաղփաղփումներուն մէջ ծագած , վաղանցիկ :

Կը թուի ինծի թէ խենդութիւնը , կեանքի տեսակէտէ մը նայելով , — տեսակէտ՝ ուր բոլոր գեղադիտական տեսակէտները կը ձուլուին , կը կորուսին , — կենսական ուժի ապակիզրոնացում մ'է : Յիշողութիւնը , գիտակցութիւնը , կամեցողութիւնը , Եսը , բաներ՝ որ թոյլ ու քայքայուն են խենդին մէջ , պարզապէս յայտակերպումներն են կեղրոնաձիգ զօրութեան մը որ կենսական ուժն է , անշուշտ ուղեղին անորոշ ու խորհրդաւոր ներ-

քին մէջ հոծուած , և որ մայր կեդրոն մ'ու առանցք մ'է գաղափարներու մտաւորապէս մուտրակային դրութեանց թաւալակոծ բովանդակի մը , որ հուշեկան ու մտային տրամադրութեանց պարբերականութիւնը կը ծնի : Հիացմամբ կ'զգամ թէ միգամած մը , տիեզերք մ'է միտքը , ինչպէս Տիեզերքն եթէ թերևս կեդրոն մը չունի՝ ոչ թէ անհուն հանճար մը , այլ գուցէ անհուն խենդութիւն մ'է : Մտքին մէջ երկրորդական դրութիւններու վերակշռութիւն մը , ինչ ինչ մտապատկերներու գերաճմամբ ու կենտաւելամամբ , պիտի տրամադրէր կեդրոնական ուժին նուազումը , քայքայումն ի նպատակ այդ մասնատու կեդրոններուն , որք , ա՛լ տարակշիռ (déséquil.)՝ յարաբերական անկախութեամբ մը պիտի խրափրակին կենտականութիւնը , Եսը , և սեւեռախոտհանքներ , ու անխմաստ որովհետեւ բնօրէն Եսի գաղափարին , ինքնապահութեան գաղափարին հետ անհաշտ գործեր պիտի թելադրէին խենդին , — և որք , արտուղօրէն և տարակշռօրէն բորբոքած այդ մտապատկերները , թէև ատեն մը պիտի շարունակէին նախատուած գորութեամբ մը վառել ու կենդանացնել իրենց սյուրանները՝ բայց պիտի սպառէին սասիճանաբար , քանի որ կեդրոնական կենտական աղբիւրը փճացած պիտի ըլլար . — ինչպէս նաև պիտի ջնջուէին , կամ տկարանային , եթէ Եսը բովանդակին անհամեմատ կերպով գարգանար և ըլլար մեծարազօութեանց Եսը : Կենդր որ այս քայքայանկախ փճակը կը ներկայացնէ ուրիշ բան չէ այլ հանճարին ինկած ձեւը . հանճարին կեղծը : Այս երկու մտային դրութիւններն , ինչպէս բուռած է կարծեմ , մեծապէս նման են իրարու , բոս արտաքին երևոյթին , կեդրոնա-

կան իրողութիւնն ի բաց առնելով : Այն ստույգութիւնը թէ հանճարին և խենդութեան սահմանները շփոթ են , իրողութիւն մ'է մտքի ուրիշ աստիճաններու ալ համար . քանի որ տրամաբանական շէմա մը կարելի է գծել շրջանակով մը որ սկսի օրինակի համար մտային խոնարհացոյն աստիճանէն , ապշութենէն , և դառնայ աւարտի ապշութեան մէջ՝ անցնելով բնօրէն մտքէն , յետոյ հանճարէն , յետոյ խենդութենէն , ներկայացնելով խնայականութեան աստիճաններու այն բնական կարգը՝ ուրկէ կարծեմ թէ կ'անցնին արդէն մարդիկ , մանկութենէն մինչև դառամութիւն՝ այդ հանգրուաններուն մէջ խիստ դանազան չափերով կանգ առնելով : Այսպէս որ իւրաքանչիւր վիճակ իր երկու մտաւորագոյն դրացիներուն միջինն է , անոնց խառնուրդն ըլլալով : Հանճարն , այսպէս , կը խառնուի խենդութեան այնքան որքան բնօրէն մտքին , որ իր կարգին այնքան դրացի է հանճարին սեպհավայրին՝ որքան ապշութեան բաժնին հետ : Այս կերպով հանճարին բաղդատութիւնը նոյնքան կարևոր կամ բնական է հասարակ մտքերու հետ որոնցմէ կը հեռանայ՝ որչափ խենդութեան հետ՝ որուն կը ձգտի : Չեմ գիտեր ինչ որ մարդաբանները կ'ըսեն նկատմամբ հանճարին և խենդութեան մէջ տիրող տարբերութեան , բայց կարծեմ թէ անեղ տարբերութիւն մ'է այն : Վասնզի խենդին կը պակաս կեդրոնաձիգ ու կենդանարար ա՛յն ոյժը որ խնայական տարրերու ահագին այլազանութիւն մը ներդաշնակութիւն կ'ընէ՝ անոր խորին միութիւնն ըլլալով , և որ , կարելի է ըսել թէ Ես կոչուելէ դադրելով կրնայ Անկարգութիւնը կոչուիլ : Եւ սակայն ոչ ոք , կարծեմ , հանճարի աստիճաններու այս գերագոյն

միջնակէտը ներկայացուց քան Անիկա . Ան . . . —
Նորէն . . . :

Բոլոր անոնք՝ որ անցան այդ կէտը դէպի անկում՝ անո՞նք , աւաղ , մասշնի են մարդկութեան . այն բարձրութիւնը պտոյտ կուտայ մարդուն . ստակալի բան . որպէս զի միտք մ'իրբ հանձար տեէ՛ պէտք է որ հասած չըլլայ դեռ հոյապանծ բարձրակէտին , կամ արդէն հակի՛ տխուր զառիվայրին վրայ . վասնզի լէգէոններ , լէգէոններ կարողութիւն չունին երկարօրէն յամելու հոն . և ահա Հուկրետիոսն են , Սուլֆիթը , Բասքալն են , Տը Նէովալը , Մօրասանը , Պօպէւը , Նիցչէն կամ Ռուսօն : Ահ . երկարօրէն կը նայիմ խենդերուն . կը խոնարհիմ այն թիւր , տարականն բանին առջև որ անոնց դիմապծութիւնը կ'որոշէ , որ գուցէ նախապաշարում մ'է , իմ նախանձաւորութեանս մէկ տեսլահար երեակայութիւնը , և որ սակայն իրենց աղէտին սեւադրոշմն է , իրենց ազատութեան նիշը , իրենց անդրաշխարհի ցուքն է , իրենց ընտրեալի սպին , իրենց ներքայքայման արտաքին նուրբ ու ահաւոր ծերայր . իրենց խորհուրդին կնիքը՝ որու առջև կը խոնարհիմ , արաբի՛ ողջոյնով : Մտքիս մէջ խենդի կերպարաններ կան , որ կը նային , կը ժպտին , կը զայրանան , ու կը նային , կը նային : Ընդերկար սուզուած եմ իրենց լռութեանն , իրենց թշուառութեանը հայեցողութեան մէջ . ձգտելով , իրենց աւերին մէջէն՝ այն գէթ խուսափուկ հանձարեղութեան , մեծ վշտի մը ցունցին տակ հաւանաբար ծայրագոյն ու հուսկ կենսաւէտութեամբ մ'արտադրուած , և ընդհուպ դէպի խենդութիւն զառածած ու քայքայած — որքան իրենց խօյ ու միայնակ երեակայութեան տխուր հանձարին — , թերե՛ւս վասնզի կրցած չեն

տանից այն վայրիեանին ահաչնութեան . ինչպէս
այն մեծանուն հոյր յխարայած հանձարներուն ,
որ առիճանական կա՛մ յանկարծական անհաւատա-
րակչութեամբ մը առաւնած խնայականութեան
մը բնութի կրցած շնն տանից , ամոչն ապրաններ , և
անոնց հոյակապ փրատակին տակ անէպցած են —
դիւցազնական հոյիներ , խուլ հսկայամարտի մը
մէջ իրենց առտուածայնութենէն տապալած :

Մին այն հասարակ խենդերէն որ յիշողու-
թեանս մէջ կը նկարտին յաճախ , տարտամօրէն ու
թախծօրէն լուսապսակուած , լուսէր մարդ մ'էր ,
որ վերջապէս կապուեցաւ ինծի , հէք մարդ ,
ատրկային բարեկամութեամբ մը , — նաև այն պան-
դախտ բարեօրտ երիտասարդին որ իր շահած քիչ
մը դրամէն բաժին կը հանէր , տարօրինակ , անհե-
ռատևս փհհանձնա թեամբ , աղքատ խենդր կերակ-
րելու : Ասդին անդին , մենտուոր , այրելով կէսօրուան
արեւէն , խենդր կը դեզերէր ժամերով , աչքը գե-
տնին : Յանկարծ կը ծուէր , և կրր նորէն կանգնէր՝
ձեռքին մէջ բան մը կօր : Աչինչ բան մը , որ փայտն
էր , կամ դաճաղեղ , կամ ձևաւոր , որկարեւոր երե-
ւոյթ մ'ուէր , և պահ մը կը կարծէիր թէ կրնար
բանի մը ծառայել , բայց անողորմի կերպով անօգտ
աչնչութիւն մ'էր . աղտոտ , երբեմն փայտն կոճակ
մը , համբիջի հատ մը , խեցիի մը փշուրր , խիճ մը ,
— որու կը նայէր սակայն խենդր , մտածելով : Յե-
տայ բաճկոնին վերի դրպանին մէջը կը պահէր զայն ,
անանտն իրր , որ բան մ'էր հոն , թախծայի դրպա-
նին մէջ , և կը շարունակէր դեզերիլ , դեպինը նա-
յելով , սուտղին , սուտ քի կոցակրտ գոր կը գտնէր ,

որոց շուրջը կը կենար, աղբիւսի այն խամբած,
չքայցած առարկաներուն որ կը ժողխէին, հոն,
անկիւնները. որ լքուն չողխնտով կը բեկանչուլէին,
կը խեցեփայլէին, կը վառէին, ու կը դիզուէին, ու
կը չորնային արեւին մէջ. — գետինը նկատուած անօ-
գուտ ու պղտիկ բաներու, այն մանր մունր, գօս,
ժանգոտ ոչնչութիւններուն որոցմով խառնուած է
գետնին մակերեսը: Գիտէի իր հնաաւերի անցեալ ճա-
շակը, որուն հիւանդութիւնը, զառածունն էր այժմ
այդ հետաքրքրութիւնը, որքան փշուրներու, բե-
կորներու, քայքայուն բաներու այդ խուզարկու-
թիւնը գործացունն էր իր քայքայուն մտքին, իր
ա՛լ մանրամասնութիւններ, անկախ մասնաւորու-
թիւններ միայն տեսնող անկապ իմացականութեան:
Ի՞նչ խուռչաւոր կարեւորութիւն, ի՞նչ գլխիվայր,
ծուռումուռ նշանակութիւն կը նշմարէր, չիլ դէմ-
յանդ իմանութեամբ մը, իր մասններուն մէջ առ-
կայծող աղբիւսի տխուր առարկային մէջ. ո՛վ գիտէ:
Կը թափառէր, ինչպէս կը նայէր, երբ նստած ըլ-
լար քովս, տեղ մը: Եւ արեւին տակ իր յամբ յա-
ծումը կը տեսնուէր տակաւին: Պարոն Գէորգ էր
անունը. պարս՛ն. նիւթապէս անժառանգներուն
յատկացուած ախտը՛նք, հուսաարապէս մտքի ան-
ժառանգներուն ալ յարմար դատուած, իբրև թէ
այդ բառը ներյատուկ պատշաճութիւն մ'ունենար
թշուառներուն: — Ախպար բառին պար վանկը չէ՛
որ անոր մէջ անդուծ արդահատանք մը կը դնէ
արդեօք: Կը յիշեմ իր հէք յառուններն երբ երա-
զուն կը մնար. իր երկրայաղօս, հանձարեղ, խենդի
ժպիտը, իր անշափելի ճանձրավիշտին մէջ երև-
ցած, որ յանկարծ կը սղտորէր, կը պայթէր արբ-
չիւ ծիծաղներով, սանձարձակ թախծալի քրթիչ-

հերով՝ զոր իսկոյն ամօթահար կը ջանար զսպել , առանց կարենալու խնդալէ դադրիլ , և որոյ խարեւապաշտութիւնը կ'ուզէր ջնջել , խզդել իր տրամութեան մեծ իրականութեանը մէջ , յետոյ իր բացարձակ դատարկապարտութեան դանդաղ քայլը որով կը քալէր կ'երթար աննպատակ , իր անօգտակարութիւնը , որ իր անանկ , անտէրունջ մարդու սպասումներուն մէջ կ'երևար անողոք , Եգիպտոսի արևէն այրած ու ցաւագին կերպարանովն արտայայտուող տառապանքը , երբ իր ընդհատ , հաշտակերի գիտակցութեան աղօտ լոյսին մէջ թանձրօրէն սեանկարուած թշուառութիւնը կ'զգար , յետոյ , իր ահաւոր զայրոյթները , առաւօտէն ի վեր պատրաստուող յանկարծական կասաղութիւնները հրատապ օգերուն . անլուր ու տառապեցնող կասաղութիւններ , զոր մենաւոր տեղեր կ'երթար ունալու , զոր կ'ելլէր կ'երթար պօռալու , փրփրալու , մոլեղնօրէն հաշիւու , ցաւատանջ հայհուջներու հեղեղումներով . կեդրոնացման , — լոյսէն , արևէն գերագրգռուած կենտականութեամբ մը՝ Եսի , գիտակցութեան , արժանապատուութեան կեդրոնացման ծայրայեղութիւններ , փոխարէն ու համեմատական՝ նախօրդ Խաչրման մը , և յառաջիկայ պրկատում մը , ինքնակորուստ մը արամաղբող , մեծարաղձային մոլեղնութիւններ ա՛յնքան յիմարական որքան էին նախօրդ ստրկային համեատութիւնները , լռին , ամօթահար , — կծկման ու ծաւալման կենտական հանդարտ շարժումին հեռաւոր մէկ խօշանկար չափազանցութիւնը , որով իր հոգին անկարող էր միջին ու բնօրէն կենդանութիւն մը արտփելու : Յետոյ , իմ բարեկամութիւնս . որ խորին յարակցութեանց արտաքնումն ու նշանն էր ,

— և հարցումները զոր յաճախ կ'ընէի իրեն, իր քառասին մէկ զգայութիւնը որոշակի ունենալու, իր հողւոյն թափանցել փորձելու համար, ուշադրութիւնս իր ընդհատ պարբերութիւններուն, իր մերթայնքան հիակազմ ֆուազներուն, իր բառին՝ որ կ'զգայի թէ՛ խիտ էր ու խորունկ երբեմն, թէ՛ ահագին բաներ կը ծածկէր ինչպէս գիտունի մը, փիլիսոփայի մը բառը, — տրամաբանական ու գիտակից համադրոյթ գաղափարներու, — և ինչպէս հաշիշով արբշիռ մարդու մը բանն, անլուր հոծութիւնս դէմյանդիմանական գաղափար-տեսիլներու, — և լռասէր խենդը ասոր համար՝ քանի մը բառունէր միայն: Եւ տարտամօրէն կը վերզգամ մեր յարակցութիւններէն արտադրուող այն խռովքները որք կը սրսփային լուռ ուշադրութեանս մէջ որ պիրկ ու թրթռական երեւակայութիւնս մ'էր, մանաւանդ խորհրդամուլ, դիւատուածապաշտ երեւակայութիւնս այն ուշադրութեանս զոր խենդը հարկադրեց ինձի, անտեղեակ իմ սարսուռներէս, փոթորկալի ու գաղջ գիշեր մը...: Հոյր դիւահար արմաւենիներուն մէջ կը սօսափէր, անհատնում. տարօրէն լուսնագիշերին բարձունքէն փեռեկտեալ ամպեր կը սուրային. արմաւենիները կը տատանէին, հերարձակ: Եկեղեցւոյն մեծ, ամայի պարտէզին մէջ կեցած էինք, անս, և ես. ու անհատնում սօսաւիւններուն տակ, խենդը կը խօսէր ինձի, անսովոր կերպով կանդնած, ուղղաբերձ, լուսնին դալուկին մէջ կերպարանքը տարտամօրէն խօլաժպիտ, մութ ու խորին, երեւակայութիւնն անցեալի անկապ յիշատակներու խորը մոլորած, ու բազուկը մերթ հանդարտօրէն կարկառելով մրրկալի գիշերին մէջ:

Ա՛հ, այլևս կը խօսէր հետս, կրցածին չափ եր-

կարօրէն , և եւ հաճոյքը կ'ունենայի տեսնելու իր
ինքներկրայող , հիւանդ արժանապատուութեան ուղ-
ղաքամակ ու հանդարտ վերերևումն , երբ կ'զգար որ
մէկը կը սիրէր , կը յարգէր , չէր քամահրէր զինքր ,
երբօր կ'սկսէր , վազանցիկ հաստաքով մը դեռ ար-
ժանի նկատել ինքզինքը մարդկութեան : Ինչպէս
հաճոյք կ'զգային , երբ նշմարէի յարգանքիս , բարե-
կամութեանս բժշկողութիւնը , որ սակայն կրնար
յարստեւութեամբ աճիլ , նշանակելի դառնալ , — իմ
սիրոյս յարստեւութեանը որով շարունակէի զբղել
անուզվակի իր արժանապատուութիւնը՝ կեդրոնա-
նալ , կեդրոնանալ , գօրանալ , վերստին խրադրա-
ւել իր ցրտած ոյժը , և ձգտիլ հին միութիւնը ,
հին նեցուկը դառնալու իր քայքայուն , թափառա-
կոծ մտքին՝ եթէ զինքն ընդերկար և կանոնա-
ւորապէս սիրելու չափ վեհանձն եղած ըլլայի , եթէ
իմ յարգանքիս կանոնին (régime) ենթարկէի իր
թշուառութիւնը . — թէև արդէն մեկնեցաւ ան
օր մը հոնկէ , ուրիշ քաղաք մը երթալու , ուր
երկար ստեն փափաքեր էր որ զրկուի , չեմ գիտեր
ինչ տեսակ յոյսերով՝ որք այն քաղաքին անունը
կրկնել կուտային իրեն , իր հոն երթալու անկարո-
ղութեան հայրենախոտային տրամութեամբը . — մեկ-
նեցաւ , կարելի եղա՞ւ իրեն մեկնիլ , այն ատուան ,
երբ շտապելով դնաց , թշուառ , զինքը շողենաւ ը
տանողներուն ետեւէն հասնելու , լօղիկին քղանցքը
ծփուն , իր երկար ստեն չգործածած ֆէար , ճարթ-
կուած՝ զլխուն դադաթը , — գրեթէ սարսափահա՞ր ,
անորակիլի ճամբորդը . . . :

Գիշերները երբեմն գացած եմ մեր թաղին մէկ

գուհին ծայրը գանուող անակի մը փակ գուռին
առջև հակելու, մտիկ ընելու համար այն միակ
ճայնը, բրդոտ, անհունչ, ու գահավէժ, որ անոր
եակէն կը լսուի, ուշ ատեն, ամայի գիշերին մէջ :

Արճիթը, առանց ու է պատուհանի, գրեթէ
միշտ գոյ միակ գուռով մը մէջտեղը՝, առաջին ու
վերջին քովրնտի հայուածքով մը հոն հայող ան-
ցորդէն տախտակորմ մը կը կարծուի. թէև թաղե-
ցիները գիտեն թէ ինչ է այն : Յաժ տանիքը, որու
եակէն բարձրացած քանի մը ծառեր կը տեսնուին՝
կը գուշակուի փառժ քիւին կղմնորաչարքէն :
Տնակը եւ կքած է . և այս ընկրկումով, ու լու-
սամուտի չգոյութեամբ ու գոյ գուռով զոր ցո-
րեկին, առկախ կողզէզի (cad.) մը պատկառելի ու
ժաղրական բացարձակութիւնը կը հախրագործէ՝ —
անակը կը խուսափի ուշադրութենէ, փողոցէն,
թաղէն կը խուսափի, վայրենօրէն ծածկամիտ ու
համբ : Իր միակ վաղեմի բնակիչն է խենդ մը :
Նեպուկի, խլուրդի, խոնաւ խաւարին անկիւնի
անանուն ճեւեղիկի մը պէս կը բնակի հոն :

Յարեկը գուրսերն է . — դրանը կողզէզը
կ'ըսէ արդէն թէ տանտէրը հոն չէ, թէև չի կրնար
ըսել թէ ուր է : Ով գիտէ ուր է, խենդը : Երբեմն
կը տեսնուի, ասդին անդին, խանութներու առջև,
ժամուն մօտերը, ժամուն աղբիւրին, թաղին մեծ
ողբիւրին առջև . կամ իր գուհին ծայրն աւելելու
դրաղած, անցորդ ծանօթներու հետ խօսակցելով,
այնպիսի բնականութեամբ, ինքնիշխանութեամբ,
անանկ լեզուանիութեամբ մը, որ հաղիւ փա-
խուկ մը պիտի կրնար կարծուիլ, եթէ ծանօթ չըլ-
լար ամէնուն իր խելացի երևայու, օրինաւոր թա-
ղեցի մը համարուելու հոգը որ զինքը լեզուազար

կ'ընէ : Այ միտք չունենալուն համար եսականութեան տեղ մտախառութիւն ունի : Կը պչրի բոլոր այն յատկութիւններով որոցմէ զուրկ է : Իր գաղիւր կերպարանքով բարեձեւութիւն կը ձեայնէ, ինքզինքին տէր ձեանալու և ըլլալու համար դլուխը շիտակ կը բռնէ, աջ ու ձախ կը հակէ զայն անհուն լրջութիւններով : Ծամրկած կլոր Ֆէտր սև լաթի մը պիրկ պատաստով զսպուած է պզտի ճօճուն ու խռուամալ դանկին վրայ, զայն զսպելու պէս . դէմքը, ճմրթկուած՝ կարծես դիւային ափի մը ճակումով, յեղյեղուկ ու կակուղ միմքով մը ողևւոր է ու յաւազին . ծալուտ, մալուտ — թէև կ'ածիլուի, — աղբապոյն ու անորոշ կերպարանք մ'է այն . խօսակցելու ատենն իր այնչափ հանրածանօթ յիմարութիւնը ծածկելու համար կերպարանքն առդին անդին կ'ուզուէ, և ուշադրութիւն թոյլ չի տար . հպարտութեամբ՝ կ'ամչնայ . և հպարտութեամբ զգալի ջրներ իր ամօթը . կը վախնայ դէմքն ուղղակի երեսիդ դարձնելէ, և այդ դիրքին մէջ բոլորէ մը զայն պահելէ . այդ սուղ միջոցին մէջ իր նողկալի, իր յուսահատեցնող դէմքը սոսկալի թրջուառութեամբ մը կը տանջադժուի դէմդ : Իսկոյն անդին կը դառնայ, առանց խօսելէ զաղբելու : Կը սիրէ խօսիլ, հաւատալով թէ իր լեզուանութիւնը կը հերքէ իր երևոյթին պատմած աւերը : Այ կ'երթայ : Անկախ, կարող, կարևոր կարծուելու համար այնպիսի քալուածք մը կը հարկադրէ ինքզինքին՝ որ տախտը, լայն ու կարճ, ու բզբտուած, տարօրինապէս կը ծփայ, շարունակ, վտիտ սրունքներուն շուրջը որոց կիսամերկութիւնը կը սուզի կը թաղուի անագին քայքայուն կօշիկներու վատարազդութեան մէջ . մինչդեռ պատառատուն, ծու-

աա վրանոցին ծայրերը կը կախուին, կ'երերան :
կ'երթայ, իր թշուառութեանը ճօճուն բանայիրին
մէջ : Յափրացուած զուարճալիքի արհամարհելու-
թեամբը կ'անցնի կ'երթայ փողոցներէն, և կը թուի
իրեն թէ ասիկա ափրացուած պատուաւորութիւն մ'է :
Բայց յաճախ զուարճութիւնն է թաղեցի կնիկնե-
րու որ ծրարներ, իրեր կրել կուտան իրեն. փո-
ղոցի, պարսէղի գործեր կը յանձնեն, անցորդ-
ներու որ յատկապէս կը բարեկեն գինքն, իրմէ
բան մը լսելու համար, և աւելի յաճախ՝ զբօսանքը
դպրոցի սղաքներու որք իրիկուան դէմ աղբիւ-
րէն ջուր կրած աստեղը կը հանդիպին, և չեմ գիտեր
ինչ կ'ընեն իրեն որ կը տեսնուի թէ բարկացեր է
հորէն. ու կը պօռայ, կը խօսի, կը գանգատի,
ճամբան գացած աստեղ կտին գառնալով. թէ պօ-
ռալէն կը տրանջայ իր խոնաւ ձայնով ուր իր փտուն,
բորբոստա բառերը կ'ընդխառնուին, զիրար կը հր-
մշակեն, կը դիզուին, կը յորդեն, անհասկնալի, ,
թէ սաստիկ բարկացեր է, ու վար կը դնէ ջու-
րով լի գոյգ թիթեղ դոյլերն, ու կը կենայ, կը
քֆրէ, կը խօսի, կը պօռայ, կը գանգատի, ու կը
քֆրէ, — կը գառնայ դոյլերը կը վերցնէ, ու կ'եր-
թայ, մուտալով, խօսելով, գանգատելով, թէ հո-
րէն ճախ ուսին վրայէն կտին կը դարձնէ գլուխը,
կը պօռայ, վշտազին կերպով ապշած, ու կը գան-
գատի, կը խօսի անընդհատ, նեխած վիրաւոր
աղաղակով, թէ հորէն գլուխը կ'առնէ կ'երթայ,
տափառը ծփուն, գլուխը տատանելով, թէ միւսոյն
բանը կը խօսի դեռ, կը մուտայ, դարձեալ կտին
կը գառնայ, աջ կողմէն, յետոյ հորէն՝ ճախէն,
կը կենայ, վա՛ր կը դնէ դոյլերէն մէկն ու թեք
երկարած, ափը լայ կը գանգատի, ապշած՝ դպրո-

ցականներուն լրբութենէն, թէ գլխովը յիշոյր
կուլ տալու ձև մը կ'ընէ պարկեշտօրէն, ու դոյր
կը վերցնէ, ու ճամբան ձեռք կ'առնէ կրկին, կը
խօսի, կը խօսի, հեռացած՝ ստամբակներէն սրք
գուցէ մուսցած են գինքը, գուցէ առն հասած
արդէն, թէ սակայն դեռ կը խօսի, կը կշտամբէ,
կարուկ յիշոցով մը կ'աւարտէ գանդաաններուն շարքը
զոր կը վերսկսի, գլուխը կը հակէ աջ ու ձախ,
զարմանալով, հայհոյութիւններ կլկելով, ապշելով
սրիկաններուն ստամբակութեան վրայ, ու կը գան-
գասի, կը մուտայ, կը խօսի, կը խօսի, յանկարծ
դոյլերը վար կը դնէ, ետին կը դառնայ, բազուկը
առած՝ կը պօռայ, ու կը կշտամբէ, կը քֆրէ, կը
կշտամբէ, կը կշտամբէ, կը քֆրէ, կը դառնայ ուժ-
գին կը վերցնէ գոյլերը որ ցնցուելով ջուրի ապ-
տակներ կը փսխեն իր ծունկերուն, ու կը քաշէ
կ'երթայ, թեւերը պիտի, խարխուլելով, տափառ մու-
լեզին, գլուխը ձախ աջ հակելով, ապշելով ստամ-
բակներուն սրիկացութենէն, որ իր երեւակայու-
թիւնը պիտի հայածէ դեռ 'ոչն իսկ երբ համնի իր
տնակն, ու դոյլերը վար դնէ իր կողմիցուած
զբան խաղաղութեանն առջև, մուտալով, խօսելով
միշտ, գանդատելով դեռ, սակաւին ապշած՝ մինչև
որ սկսի լուսլ իր որջին ներսն ու դուրսը, ներսի
խորհրդաւոր, անծանօթ խաւարը լուսլ, ինչպէս
անակին տախտակորմը, դուրս, առնը ամբողջ,
ինչ որ կ'ընէ արդէն յաճախ, մաքրամոլ ու դժուձ
խենդը :

Իսկ գիշերները կուգայ վերջնապէս ներս կը
մանէ, ցած երդիքին տակը, անոր մութ ինքնամ-
փոփմանը մէջ հանգչելու, միակ գահավէժ բարա-
խիւն խրճիթին վաղեմի անշարժութեանը մէջ :

Այն ատեն , երբ ճայները լաւած են դուրսը , խեղճ թաղին ամայի գիշերին մէջ , ու իր տախտակորմին քանի մը նուրբ ծերակրուն մէջ ճրագի մը շէկ ճառագայթն , անորոշ , կը լուսադծուի իր ստուերային ճայնը կ'ելլէ տախտակորմին ետեւէն : Միայնակ կը խօսի հոն , ազատ ու կծկուած ընկրկող խրճիթին մէջ որ աշխարհէն կը մեկուսանայ կարծես՝ աւելի ազէկ պատասպարելու իր ճշմարտապէս անաշխարհային բնակչին ցնորածուփ հոգին :

Անցեալ գիշեր նորէն գացեր էի զինքը մտիկ ընելու :

Չայնը , մգլտա , խզգուկ , կ'ելլէր տախտակորմին ետեւէն . մութ , խուլ ճայն մը որ աւելի կը թաղուէր քան կ'ելլէր , և գուշակել կուտար ցած ու սև սաաստաղը որ , կախուած , դայն կը ծծէր , ու խաւարին անկիւնները որ կ'ուտէին դայն , — կցկաուր ճայն մ'ուր բասի ծայրեր կ'առկախուէին լաւթեան մէջ , յետոյ մերթ տակաւ արագ , միայար , դահավէժ , ուր վանկերը կ'ընդբաղխէին , կը խզուէին , կը ճզմուէին , ողևորուած՝ ընտանի ճեշտով մը որ չես գիտեր որու կ'ուղղուէր և երկբայիկ կուտար խենդին ասանճնութեան վրայ որ ինչպէս միշտ՝ բացարձակ էր սակայն , — մերթ բրդած ու պորուած՝ միամիտ հարցականութեամբ մը որ կարծես պատասխանի մը կ'ապասէր , և նորէն կարծեղ կուտար թէ իրօք մինակ չէր խենդը , թէ խղիկին մէջ , իր քայն , իր երեսը նայող կերպարաններ կային . . . մինչ իրապէս միայնակ էր խենդը , տարարազղ ամայութեան մը մէջ ուր իր երանաւէտ տանակրութիւնը կը վայելէր , կը մե-

հրմբոշխէր, — յանկարծ կասելով, զարմանալի լու-
թեամբ մը, քիչ մը երկիւղալի . . . որ զառան-
ցանքի երանգ մ'էր, խենդութեամբ լեցուն, ամէն
դիւային, ցնորական կարելիութիւններով բեզուն,
որ դոց դրանք յանկարծակի բացուելուն սպասել
կուտար, և իր ուրուային երեւման, ձեռքը փայտ
մը . . . և որու վրդովիչ տարտամութիւնն ինծի
փախուսաի սրտատրոսի քայլ մը փորձել տալէ վերջը
կը ճշդուէր, կ'արդարանար՝ տեղափոխուող իրի
մը խուլ, ապուշ աղմուկով, ու կը մտածէի թէ
խենդը նեղուելու չէր լսիկ անմեղառ ունկնդրի մը
ներկայութենէն, թէ ախորժելու էր նոյն իսկ աւելի
թուով ունկնդիրներու անձայն, գրեթէ երկիւղած
ուշադրութենէն, — ու շարունակուելով միշտ,
յաճախ դադրիլ թուելէ ետքը վերակաած, երկա-
քաձգուած, նոյն շեշտով որ կը բացատրէր, կը
խրատէր, բարեմտօրէն ստորակիտուած հայրակա-
հութեամբ մը, ստէպ ինքզինքն ընդմիջելով թե-
թեւակի յանդիմանական ու պարզամիտ հարցումով
մը. «Հասկցա՞ք . . .» որ անպատճառ ու աւելի որոշ
ծրագրել տուաւ ինծի այն միւս անիրական կեր-
պարանները որ խենդին կը նայէին ճրագին լոյ-
սով, և զոր յիմարին աչքը կը տեսնէր, — մինչ
յանկարծ խե քահքահ մը, թաւալգլոր՝ անփոյթ
փակագիծ մը կը խօլարծակէր ոլորմելի ձայնին
ա՛լ կէտադրազուրկ լրջութեան մէջ, որու անյա-
պաղ վերերեւումէն կը խղղուէր շուտով, ցաւա-
դին կերպով կտրուկ, վաղանցուկ, նորէն ցայտե-
լու համար, յետոյ իսկոյն նորէն, շնչասպառ մե-
նախօսութեանը, քարոզին տենդին մէջ որ գիշերին
մէջ կը թաւալէր խորունկէն, և զոր գռեհին մէջը
մինակ, կը լսէի փակ դուռին հակած, իր արտաք-

նուող տեսիլներուն մէջ ապրող, աղատութեամբ
առանձին խենդին երանութեանը գաղափարին տակ
կարծես կքուն: — Քիչեր էր, և իր տնակին մէջն
էր այն. հանգչելով ապրուստի տաժանքներէ ու
օրունս ստորնացումներէն, իր ճրագին ստուերայի
լոյսը կը լուսաւորէր անոր քայքայուն ու միադիք
Եսը, չափերէ, սահմանումներէ ազատ: Իր սնա-
փառութիւնը՝ ցորեկուն մարդոց «գերազանցու-
թեան» տեսարանէն անկաշկանդ, նաև խղիկին —
որ իրենն էր, ու թաղն ու աշխարհը կը ծածկէր իր-
մէն, — խղիկին սեղմողութենէն, կեդրոնացուցու-
թենէն ամփոփուած, բունի ու երանաւէտ արժանա-
պատուութիւն մը կ'ըլլար, ու կը յագենար մտա-
ցածին ունկնդիրներու հլու-թեան մէջ, յանդիմանե-
լու, խրատելու, բարոյախօսելու, բարեմաղթելու
աւիւնով մ'ուր կը արօփէր իր խորհրդանշականի,
խենդի միադիքականութիւնը, — կրօնական լուսա-
նշոյլ գաղափարներու անդրաշխարհին մէջ իր յա-
փրչտակումն, արտայայտուած՝ եկեղեցական բառե-
րու երջանիկ աղաւաղմամբ որու շեշտը բուն բա-
ռերուն աղօտ ու լուրջ իմաստին ոլորակն ունէր ու
զգայութիւնը կուտար, և կը բաւէր խենդին, ու
իր ունկնդիրներուն, — և գրաբար ձայներու, գրա-
բար վանկերու խունկ փշրանքին մէջ վիժուած,
խեցբեկուած շարունակ: Իր արտայայտութեանը
խորշումները կը սուգէր իր անաշխարհային տեսիլ-
ներուն հաճոյքին մէջ, որոց՝ լուանդորր գիշերը թոյլ
կուտար ծնիլ իր թշուառութենէն, հիւղին մէջ ար-
տանկարուելու ճրագին լոյսով, որոց լուսեղէն
հմայքին մէջ կը նստէր, կը զուարճանար, կ'աղօ-
թէր, այնքան միօրինապէս ու երկարօրէն որքան
խօլական ու քրքջեցնող տեսիլներու փախչկոտ

կամ զեռկայուն երեւումները կը թոյլատրէին :
Մտիկ կ'ընէի անոնց անցքէն ետքը վերապիտե եր-
կարածգուտը իր մեծ բառերը , որոց անհունու-
թիւնը կրնար բոլէ մ'ընող զրկուիլ իր մենաւոր
տեղակամութենէն , իր ջղագար լուսաճիւղ արբ-
շուութեամբ , իրենց անկապ մտապատկերի անյա-
բարեբախանութեան ուժով . և կը նշմարէի իր
ակնայեռ ունկնդիրներուն աչքին կայծն , երբ իր
բառերու ողորմուկ խառնազանձին , աւյուքին մէջ
լուսաւոր խմատաներ կը ցայտէին ու կ'անցնէին :
Իր անյօղ , իր անվերջանալի , անընդհատ վերջա-
բանող , ուրեմնադանող , և անզգայարար ետ դար-
ձող ու վերակաող քարոզը որքան յատակերպու մն
էր իր անկախացմամբ մարդանալուն՝ նոյնքան
պատրուակ մ'էր իր խեղճ զոյսութենէն լուսածնող
ըզձանկարուող տեսիլներու , զոր կը յայտնէր , կը
ներբողէր , զանոնք ըմբռնած ըլլալու զխրութեամբ ,
անոնց երկնայնութեան արժանի կզամ ըլլալու ,
անոնց վերաբերելու անկասկած վստահութեան ըն-
տանութեամբ , նեշտազին ու անյաղ , իր փատած
ու մութ ձայնով , զէմքին խորշումուա զխայնու-
թիւնն ուսերուն մէջ անշուշտ կծկած , արբշիւ .

— Աստուածամար . . . Սուրբ Աստուածածին . . .
կ'ըսէր ազրիւստա ձայնը , տախտակորմին ետեւէն :
Եւ պահ մը լսելէ ետքը , լուսադօտ գաղա-
փարը կարծես լաւ ևս ճաշակելու համար , մեղմա-
ձայն կրկնեց .

— Սուրբ Կոյս . . .

Եւ , այն կարծ , հիացական լուսութեան մէջ որ
առանձնացուց այդ բառը որ լուսած՝ զեռ կը լուսէր ,
չիմարը կը թուէր ըմբռնել Կուստ թիւնը . . . լուսե-
զէն միտ թիւնը , լիտ թիւնը , և իր ձեւեղիկի յա-

ուումով, իր կիսախուփ թարթիչներուն մազմղուքներով, իր խորշումներուն ծծողութեամբը, իր անդրատենչ խոհալքին գաղջ խուռչներով կը թուէր ներհոսել, ներմզել, ըմպել ինչ վճիտ երանութիւն որ կը թրթուար կուսութեան շուշանաստղային գաղափարին մէջ, կոյսին գեղեցիկ սրբութեանը մէջ, կոյսին անձին մէջ, զոր խենդին աչքը տեսաւ թերեւս ալօտ ու լուսաշող փայլակի մը յամբ քըթթումով: Եւ մինչդեռ ես, անոր ցնորածուփ միադիքականութենէն տարուած, անորոշ սարսուռով մը կը նայէի գիշերին բարձունքը, կապոյտ անեղբութեանց մէջ շողացող աստղերուն, զգայարանքներս բաժնած՝ տիեզերքին ու խենդին միջեւ՝, անոր խորհրդանշական անբացատրելի բառը՝ կո՛յս՝ . . . տարտամ յափշտակութեանս վերեւ կը ծրփար, — ինչպէս կը ծփար, կը ծխառկախուէր, նուազուն՝, լռութեան թափանցկութեանը մէջ, տարօրինակ, ու ապշեցնող՝ անհուն անշշունջ գիշերին մէջ միայնակ արձակուելով երդիքին խուլ դառանցանքէն, գիշերին անշշունջ անհունութիւնը լեցնելով իր միակ քաղցրուոր վանկին մէջ հոծուած իմաստին եթերայնութեամբ որով կը ծաւալէր, կը վերանար, գիշերին վեհութիւնն օժելով սրբութեան շունչով մը, հալուէի աներեւոյթ, այերային պարոյր՝ անյայտ ու խօլական բուրվառէ մը հառաչուած, անձայն խաղաղութեանց մեծութեան մէջ ամօթլեած դշխոյութեամբ մը մոլորուն . . . :

Սակայն այս խենդը նաև մեռելի կ'երթայ: Թաղին եկեղեցւոյն ամէն մեռելներուն կ'երթայ, և այդ ամէն «ննջեցեալ»ներուն երկիւղած յուղար-

կաւորն է : Չի ճանչնար զանոնք , յաճախ : Կը բաւէ
գիտնալը թէ երէկ ապրող մարդեր՝ ա՛լ մեռած են
այսօր : Իր մենակեաց քրիստոնէի ու յիմարի անդ-
րատենչ զգայութիւնը կը հետաքրքրուի մահուան
խորհուրդով որ մեռելներուն մշտանոյն դալուկին
մէջ կը լռէ իր անհունութիւնը , և որու հետ ժամու
մարդոց թախծալի , սոսկալի ընտանութիւնն ունի .
և աշխարհէն իսկապէս անջատ խենդը իր անակէն
կ'ելլէ կ'երթայ նայելու աշխարհէն մեկնող մարդը :
Թերեւս ոչ ոք անոնցմէ որ մեռելին պիտի գացած
ըլլան՝ այնքան խորապէս պիտի զգան Մահը որքան
ինքը , որովհետեւ մեռնողն անձանօթ է իրեն .
ընդհանուր մեռել մ'է . մեռելն է : Յուզարկաւոր-
ները կը տխրին . իրենց զգալու եղանակը կը տրա-
մադրուի աշխարհէն որու կապուած են դեռ , և
որու համեմատ կը դատեն անկէ անջատումն ալ :
Միտդիք ու խորհրդանշական խենդը կը յառի մահ-
ուան՝ իբրև նոյնութեան , ամբողջութեան , խաղա-
ղութեան անդրաշխարհի մը , անքայքայելի միու-
թեան մ'ազատութեանը ձգտող սրբացման մը , քա-
ւութեան մը , կարծես կուսացման մը : Աստուծոյ
կատարելութեանը գացող մեռելին չուն պատշա-
ճագոյն անդրուովար մը կ'ըլլայ իր անդրհայեցու-
թեան , և կ'երթայ , անփոփոխ կերպով , ուղեկցե-
լու տմոյն ճամբորդին , երբ իր երդիքին ետևէն
մօտակայ ժամուն մեռելական զանգակն իր առա-
ջին զօղանջը նետէ :

Կը սիրէ թերեւս դիտել զանգակատան բարձր
պատուհանները որոնց մէջէն կապոյտ երկինքը կ'ե-
րեւայ , երկինքի պատառ մը , սղանկարուած անդ-
րաշաւիղ ուր կը ծածանի ու կը թռչի զանգակը .
և թերեւս կը մտածէ թէ որքա՛ն խորին է նոն եր-

կինքը, զանգակատան պատուհաններուն մէջէն, թէ որչա՛փ ան ըլլալու է բուն երկինքը, ուր թեւոյզ զանգակը՝ դէպի հոն, դէպի երկնային անդրաշխարհը մեծ ձգտումի մը խաչակնքող թեւատրոփումը կ'երգէ, — վասնզի ամէն առիթներուն մէջ ուր զանգակը կը հնչէ՝ նոյն ձգտումը կը բարախէ միայն, և տօներուն լուսաշող բերկրանքը, աղօթքներու ամենօրեայ վերառաքումն, աղէտին սոսկումը, մահուան խորհուրդը զոր կը պատմէ զանգակը՝ անդրաշխարհին ձգտելով անոր երանութեանը մէջ կը միանան, ինչպէս կը միանան զանգակին հնչիւնին իսկ մէջ, որ անոնց առերեւոյթ զանազանութիւնը կը ջնջէ իր մարդկայնօրէն օտարական աղաղակին մշտանոյն ղօղանջով, որ աղէտին՝ ինչպէս տօնին երկրաժեշտը պատմելով մա՛հը միայն կ'աղաղակէ իր զարկին մետաղ ու անաւոր լաւատեսութեամբը, մեծ վերադարձին փառքը կը վիպէ իր զարկին թրթռագին ու խորին այնհալմամբ, ու եթերին մէջ արձակուած իր երկնաչու կշռոյթին խելայեղ երանութեամբը վերադարձի գաղափարին յաղթանակը կը ճօճէ, որ երեւութապէս ազդարարութիւն, հրաւէր, հառաչանք՝ յաւէտ կը խուսափի կեանքէն, որ յաւէտ՝ յաւերժական նոյնութիւնը կը փառաբանէ միայն, որու անձնիւր հունչը շքեղ, անսահման թեւաբախում մ'է նոյնութեան մէջ, եկեղեցւոյն անփոփոխ, ու խուսանուագային (fugué) աւա՛չը, խորհրդագէտ, ու գերմարդկային, որ ցաւատանջ հարցումներու կրկնապարօյրներուն՝ իր ձայնին մէջ դալկահար պարզումով ցնորափառ՝, ու ալեոր անմեռ համոզման հզօր սարսուռով դողդոջուն, և անդրատենչութեամբ մոլեգին պղինձ արցո՛ւնք՝

կ'իյնայ , կ'իյնայ մաքիս մէջ , ու խենդի'ն ալ հողւայն :
Երբոր յուզարկաւորներէն մէկն ալ ես եմ ,
եկեղեցին , բազմութեան մէջ կը փնտռեմ խենդին
գլուխը . ինչպէս կ'ապասե'մ Գասեան , Տերին : Եթէ
չերեար՝ ըսել է պիտի գայ գետ կամ ըսել չէ թէ
եկած չէ : Յանկարծ կը տեսնեմ գինքը , մեծ պա-
տուհաններէն մէկուն առջև , պառ ճերմակ լոյսին
մէջ խօլանկարած իր կիսադէմքին մութ դիւայ-
նութիւնը : Ֆէսը հանած է . բայց իր թաւ գլուխը
կը ցցուի՝ Ֆէսին կաղապարումէն ծոծրակին վրայ
սողուն ու գազաթին վրայ խռուադէզ մազերով
որոյ տակ կը կծկուի իր կիսադէմքին տախլ ու կծու-
կնճիւր , գլուխներու բազմութեան մէջէն դէպի
միթին խորանը կամ խնկալի արարողութիւնը սեւեւ-
եալ : Երբեմն ետին կը նայի , գլուխը ծուռ՝ բազ-
մութեան լրջութեանը մէջ երեցնելով արտայայ-
տութեանը քառմնած ցնորքին զաւեշտական ու
ողբադին անակնկալը . ու կը գառնայ նորէն , առջի
դիրքին հայեցողութեանը մէջ սուզուելու , կրցա-
ծին չափ հետեւելու սաղմոսերգութիւններուն ծանր
ոլորակին որ բարվառուած խունկին վերձեմով
ծիտմներուն բաղձիւսեալ՝ կը պատէ , կ'ամպնովա-
նաւորէ ու կը վերացնէ մեռելին խաւարը , միացող
կերտներուն վսեմ այրման տակ պառկած , իր
միթութեան տօնէն , իր ոչնչացումէն արբշիտ :

Մեծ պատուհանին լոյսին մէջ կը տեսնուի
խենդին խաչակնքող բազուկին ելեւէջը , քանի մը
անգամ : Իր հողին կը մոլորի , կը պարէ , գորշ ,
խնկարոյր , սոսկալի , երանաւէտ բաներու մէջ :
Տարտամօրէն կը սոսկայ Աստուծմէ . և կը զստահի ,
կը հաւատայ անոր : Քահանայ մը գիրք մը կը կար-
գայ . կարդացածը վճիռ մը , դատապարտութիւն

մը կը թուի . օրհնութիւն , սրբապարծում , յայտնի
չէ թէ ի՞նչ անողոք ու դորովալի բան է այն : Մե-
ռելին վախճանին մէջէն կատարումը կ'զգայ : Կ'ուզէ
քահանայ ըլլալ . մեռել ըլլալ . առողջ ու անմեղ
ապրիլ : Այնպիսի բաներ կ'երեւակայէ որ յանկարծ
շուրջը , ետին կը հայի . կարծելով թէ տեսան զին-
քը , բրածը : Աղօթքներուն վանկերուն մէջ ձայ-
նական ու տարօրինակ խմաստներ կ'զգայ . վերջա-
ւորութիւնները , շեշտերը , կ'երկննան մաքին մէջ ,
կը լեցնեն զայն . և ամէն ինչ անհետ կ'ըլլայ բըռ-
նաւոր վանկի մը , խաղի մը անորակելի ապշու-
թեան մէջ . կը թուի իրեն թէ անդամ մը պօռաց
այդ վանկը : Յանկարծ կը մարդոտի . կը շտկուի .
Աստուծոյ գոյութիւնը կ'զգայ ամէն բանի մէջ .
կը պատկառի մեռելէն որ անշուշտ գիտէ զԱստ-
ուած , և որ իր փառքը կը վայելէ , գո՛հ է եղա-
նակներէն , աղօթքներէն , սև յորդ թաւիչէն որուն
տակն է . կերօններէն որ բոցելէն աչքերով եկած
կեցած են իր շուրջը , աղջիկներու պէս , հրեշտակ-
ներու պէս , ու ճօճանշոյլ բուրվառէն ամպ ամպ
ժայթքող խունկէն : Եւ երբ ապրող մարդերուն
վերջին աղօթքը ծանր ու գերազոյն աղաղակով
մը կ'անդրանկարէ եթերային , օրհներգէ ճամբան ,
երկարածգուած՝ երջանկութեան անջրպետներուն՝

Ճանապարհի ընդ իեզ կշից . . .


ուր պիտի մխրճի , ուր կ'սկսի մխրճիլ մեռելը ,
խենդին հէք անդրատենչութիւնը կը ձգտի վերա-
ցող մեռելին փառսւոր անդորրութեան , ու խա-
չակնքելով կը թուի թէ կ'ուզէ կառչիլ մեռելին
պատանքին , իբրև անոր ճերմակ թևերուն :

Դուրսը , դանդաղ թափօրին ծայրն է . յամ-
բաքայլ , մարդու պէս կը հետևի մեռելին՝ որու

արհամարհանքը, շքեղ, յաղթական, զուարթ, կր
ծածանի լոյսին մէջ, գլուխներէն ու աշխարհայ-
նութիւններէն վեր, ըմբռնելով, ըմբռնելով զան-
գակին անհուն զօղանջը և արդէն ողողուած՝ պայ-
ծառութեամբը պարզութեան, նոյնութեան գաղա-
փարին, Ամենայնի գաղափարին, որ խրացնելու
անկարող կեանքին տառապանքն է և անդրաշխար-
հին, և մեռելին երանութիւնը: Եւ երբ, յամբօրէն
ելլելով գերեզմաննոցին ճամբէն վեր, որու բար-
ձունքին պարապին վրայ սեւանկարուած կ'ուզու-
րի յուղարկաւորներուն կոյտը, և ուր, երկինքին
մէջ, խաչը կը ցցուի, կը հեռանայ, ու մերթ, ճա-
ռագայթէ մը կը փայլատակէ՝, երբ թափօրը վեր-
ջապէս կը հասնի գերեզմաննոցը և կը խոտորի, կը
քայքայի, կ'երկննայ կողմնակի կածանի մը մէջ
որու ծայրէն թռչող, երկարաձգուող օրօրին ու
յաւերժական անուրջին մէջ մեռելը կը թալանայ,

Իսի՛րձ, անձն իմ, գի՛ Տէր կոչեաց գեղ. . .

— երբ մարդերը, հեռացած դադազին ետևէն
դէպի աներեւոյթ փոսը կը դիմեն, դիակին թաղ-
ուիլը տեսնելու, այն ատեն թերեւս խենդին սրտի
զարկերը քայլափոխներ կը թռին իրեն դէպի յա-
ւիտենութիւն ուր աւելի քան ոչ ոք մօտեցած է
արդէն, իր լուծանջաւ մտքին միակ անհնարին
ձղատումովը դէպի բացարձակ միութիւնը:





ՉԱՆԳԱԿՆ Է . . .

Եւ պղտիկ , մեղմ խանդաղատանքն է նորէն , որ ինծի ունկնդրել կուտայ Շարաթ իրիկուան զանգակին որ ամբողջ շարթուան հետեակութեան մէջ , յանկարծ ահաւասիկ՝ անուշ , խեղճ տիտիանքի մը յոյսը կ'արթնցնէ , կարծես խուլ կերպով սպասուած ու անպորրող նպատակ մը և անոր իրանակացումը միանգամայն բերելով . այնպէս որ վերջապէս կ'ելլեմ Եկեղեցի երթալու , մանուկներուն ու ծերունիներուն պէս :

Կիրակամուտքի զանգակն է , հինաւորաց զանգիւնով : Ի՞նչ նոր ձգտում կրնայ ըլլալ հիմա Եկեղեցի երթալու մտածութեանս մէջ , եթէ ոչ հանդարտող ու հաւանարար տխրող կեանքը վայրկեանս մի քաղցրախառնելու պէտք մը , մանկական օրերու վերյուշքով , թերեւ շատ կանուխ սկսած ծերութիւնը գաղջ ու խուսափուկ մանկականութեամբ մը բարեխառնելու , լուսաւորելու՝ ինչպէս դէպի արեւմուտք գացող ուղևոր մը արեւելքին ճառագայթներովը կը լուսաւորուի ու կը տաքնայ , թիկունքէն , մինչդեռ անտնոյ շացքէն զուրկ , կամ ազատ , ստուերի մէջ է դէմքը : Բայց շարաթ իրիկուան հին թեւաւոր մանկականութիւն-

հերը չպիտի սիրէի վերապրիլ երազել՝ եթէ անտնոց պարին մէջ ընկրկած անդրանկարուած չըլլար Աստուած, — եթէ ժամ երթալու տրամադրութիւնս խորապէս չըլլար Անոր վրայ խորհելու ասեղերական անյն պէտքը, զոր գուցէ — իրան — ժխտած ըլլամ յիմար անսխտութեամբ մը. — անսխտութեամբն առոյգ հողուոյ մը որ իր կենտական ուժէն կը շփահայ ու կ'արհամարհէ զայն, հին, մուցուած — մանաւանդ որովհետեւ չհասկցուած — բաներու վրայ մտախոհելու պէտք մը, մանկութեան ատենի պարզմտօրէն ստացուած հիմնակէտերու վրայ այժմու թախծութեամբ երազելու, զանոնք ճաշակելու պէտք մը՝ այժմու ակամայ ու տրամադին ծաւրողութեամբ, որով ծծուած խմաստներն էութեան խորերը կը հասնին, խորունկ, կարծեա անհնարին թելերէ տարօրէն սարսուռներ հանելու: Եւ ասոր համար կ'ելլեմ եկեղեցի կ'երթամ, մանուկներուն ու ծերունիներուն պէս միանգամայն:

Չանգակին ձայնը շուտով կը դադրի զանգահատան կատարը: Հանդիսաւոր օրերու մեծ զօղանջը չէ այն, հապա միւսը, փոքր, էգ զանգիւնը, կարծեա հրճուալի, աղօտակի մելամաղձիկ, որ յաճախ չի լսուիր, որ իբրև ժամհար կ'իմացուի թաղին մարդոցմէն, և որ իր բարձունքին մէջ մրմնջելով կը լռէ: Ամէն իրիկուան զանգակին մշտանայն ձայնն է, որ սակայն տարտամ ու փափուկ տօնականութեամբ մը կը խորունկնայ, քաղցրութեան թրթիռով մը կ'երկարաձգուի սրտիս մէջ, որովհետեւ կ'ապրեցնէ զիս անորոշապէս այն անցած դացած ատեններն երբոր պզտիկ էինք ու շարաթ իրիկուն-

հերը ժամ կ'երթայինք, դպրոցէն ետքը, վաղորդայնին՝ կիրակիին ստուգութեամբ երջանիկ: Օհ, կիրակին երբեք այնքան աղւոր չէր որչափ շաբաթ իրիկունը. — և, այո, յիշողութեանս մէջ մնացած կիրակամուտքերը կը հասկնամ թէ պայծառ իրիկուններ եղած են, որովհետեւ մտքիս մէջ անոնց միակ ընդհանուր պատկերը, որ իմ Շաբաթ Իրիկունս է՝ և որու անասելի հմայքին շատոնց ի դ՛ուր կը տենչամ, — և յիշելն ուրիշ բան չէ այլ տենչալ տակաւին, և տենչ ըլլալու պայմանով միայն մտապատկեր մը կը տեսէ, կ'ապրի, — լուսաւոր է, իրիկնամուտի արեւին դեղձան լոյսով որ մեծ եկեղեցին կը թափանցէր կ'ողողէր արեւմտեան պատահաններէն, և որուն պայծառութիւնը կիրակիին գեղեցկութեանն առհաւաստեայ մ'էր, խիստ բնական ապացոյց մը զոր չէինք դիտեր բնաւ, զոր սակայն կիրակիին աղւորութեան ըզձայնով սիրտերնիս կ'զգար՝ մետէորարանի տարակոյսներէ զերծ: Այն ատեն չէինք դիտեր իրիկունէն դատել վաղորդայնը. մեր հոգւոյն ամբժութիւնը մեր յոյսերուն աղւորութիւնը կը յղանար. կը հաւտայինք որ իրիկուան յատակութիւնը որու անուշադիր էինք և զոր կը վայելէինք, պիտի տեսէր կիրակիին մէջ զոր ակամայ գեղեցիկ կ'երեւակայէինք, երկնքին անամպութենէն մինչև մեր հաճոյքներն, անպատճառ, ըստ մանկական ա'յն բանաւորութեան՝ թէ գեղեցիկ բաները միայն, հաճոյալիները լսկ իրաւունք ունենալու են գոյութեան, — և ահա կը տեսնեմ որ կիրակիներուն գաղտնիարացումն այ արեւոս է կիրակամուտքերուն ընդհանուր պատկերին պէս՝ թէ երկար ատենէ ի վեր, հսկառակ մանկական միտմիտ սպասմանս որ ամէն շաբաթ իրիկուն երեւան

կ'ելլէ դեռ՝ կիրակին ա'լ հախկիններուն շքեղութիւնը չունենայ. ա'լ ա'յն տօնը չըլլայ կիրակին երբեք. — դարմանալի բան. կը վարանիմ ըսելու թէ ինչ է այժմու կիրակին ... : Վախնալով որ մանկութեանս կիրակին անուշութեանը, սուրբ, խնկաբոյր, ծաղկաւէտ, լուսողող ու սուրբ անուշութեանը հետ չարաչար կը վարուիմ, գրեթէ վախնալով որ «Հա՛յր Աստուծոյ» դէմ, Աստուծոյ դէմ բան մ'ըրած կ'ըլլամ, գրեթէ չեմ համարձակիր խոստովանելու թէ որչա՛փ այժմու կիրակին ձանձրոյթով, զղուանքով լեցուն է. մինչդեռ կիրակամուտքին զանգակը միշտ հնօրեայ վաղորդայնի՛ն երանութիւնը կը պատմէ տակաւին : — Մշտանո՛յն զանգակը, որ Անցեալին մշտակայութեանը կը հատայ, որ իր բարձունքին յտակութենէն կը տեսնէ հոգիներուն խորին հոյնութիւնը, ծանրաբեռնեալ գիտակցութեան յաճախ անզգալի, և մանկութեան կիրակի՛ն կը խոստանայ դեռ, երբ ա'լ այն մանուկը չեմ ես շատունց :

Այն ատեն իսկ սակայն, այո, կիրակին այնքան աղւոր չէր որքան զայն աւետող շաբաթ իրիկունը : Կիրակին շաբաթ իրիկունէն կ'սկսէր, թէ և մի՛ւս օրը պիտի սկսէր, գրեթէ իբրև կիրակի մ'աւելի : Կիրակին կիրակամուտքին մէջն էր, անապառելի՞ քանի որ վաղն էր դեռ բուն կիրակին : Շաբաթ իրիկունն արձակուրդին մէջ էր. դպրոցի վիշտերէ ազատագրուած մեր ա'յն ոգեւորութեան մէջ, որ բոլորովին մենէ բացակա՛յ երբ դպրոցը առաւօտեան եղանակաւոր աղօթքը կ'ըսէինք, միշտ զարթխում դժկամակութեամբ մը թոյլ, դանդաղ, յուսահատական, իրարու ձայնին մէջ ապաստանելով, չերգելու համար, սակայն կը լեցնէր

զմեզ երբ իրիկոս ան աղօթքը կ'երգէինք, և որ շաբաթ իրիկունը կը սաստկանար, անուպատմելի, անագին, իբրև թէ տղաքներուն թիւը մեծցած ըլլար անհամեմատ, վասնզի ամէնքն ալ կ'երգէին: Կիկին, յետոյ, իրիկունն ժամերգութեան մէջն էր, որու կը մասնակցէինք եռանդոտ յօժարութեամբ, որու պատանի էինք, որուն անհրաժեշտ էր մեր տղայութիւնը, մեր ա՛լ պղտորած, անճանաչելի, կորսուած մանկականութիւնը: Լոյս-Չուարթին մէջ, որու մեզմ' մեներգէն ետքը՝ երբ կարգը կուգար մեր խմբերդին՝ մեր ճերմակ շապիկներուն, մեր խաչանիշ ուսնոցներուն կարմիրին մէջ աւելի կամ նուազ իւրաքանչիւրնիս ալ աղնուացած, արժանաւորուած, մեր հրճուալի ու միշտ անյաջող կերպով («միաբերան») սկզբնաւորութեան աղաղակով զոր դպրապետին օրինակն արձակել կուտար մեզի՝ ուրիշ բան չէր որ կ'երգէինք, այլ անորոշապէս ու երկիւղածօրէն՝ զՍատուած, և անդիտակցարար ու խանդավառութեամբ՝ բարի կիրակին: Տօնը կը տօնէինք մանաւանդ, ինչպէս ամէն մարդ: Բուրվաւին բոժժուն ձօճքին մէջ, խունկին մէջ որ անա կը բարձրանա՛ր, կ'անուշահոտէր եկեղեցին, և որու ծփանքներուն մէջ կը միզապատուէինք հեշտանքով, մեր մոմերուն զարդարանքին, արդուզարդին մէջ, ու լոյսերուն, բոցերուն մէջ, արևին ձառագայթներուն մէջ, զրեթէ հորիզոնական, որ խորանին սիւններուն խարխախները կ'ողողէին, խաչկալին առջեւի սիւռոցը, ոսկեճամուկ, ու տեղ տեղ բեմին մարմարները, մաքուր, կարծես վճիտ, անտարակոյս պաղ, մեզի համար անմատոյց, որոց վրայ աղատ էր լուսարարը քալելու, նոյն իսկ ան-

տարրերութեամբ , ու մանաւանդ սղտիկ ծիրանիգօտիներուն մէջ զոր ճառագայթները կը բերելին մայիի մը վրայ , պատի մը վարը ծփացնելու , որք երկնային բաներ կ'երեւային , իրենց կակուղ , քրնքուշ գոյներուն սքանչելիքով , անչա՛փ բարութեամբ լի , և որք անշուշտ առկախ մեծ ջահերուն պրիամակներէն կը շինուէին , ու մերթ կ'երկննային , կը գունատէին , անպիտանները , ծուռ , պիրկ , պատահարար , ով գիտէ ինչու : Եւ դեռ ի՞նչ բանի մէջ չէր կիրակին , 'տէ՛ր Աստուած : Բոլոր այն շաբաթ իրիկուան բաներուն մէջ որ միտքս են . փոխերուն երկարածիգ վերջաւորութեանց մէջ , որ վրայ համող սկզբնաւորութիւններուն մէջ կը կորսուէին . Տեր ողորմեաներուն մէջ , որ ով գիտէ ինչու երբեմն Ենորհեա Տեր կ'ըլլային . , ատրպատախն ըսածներուն մէջ . «ԸզՏէ՛ր Սուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն» և այլն , և մանաւանդ Հայր գրածին մէջ . «Ճանապարհորդաց , նաւորդաց և հոգւոյն հանգուցելոց» . . . , մինչդեռ , երազի խուսափուկ վայրկենի մը մէջ՝ մանուկ երեւակայութիւնս այն աղօթքէն կը տպաւորուէր չէի գիտեր ինչո՛ւ . . . : — Եւ եկեղեցիէն ետքը՝ , երբ միւս առտուան պատարագին համար , ծածուկ , պահարանին մինտէրներուն տակ կը թողէինք մեր շապիկներն երբ մեր հասակին ճշգիւ յարմար ըլլային՝ — բացառիկ բողբոջաւորութեամբ մը ձեռք անցուած՝ ժամերգութեանէն առաջ , այն խուճապին միջոցին որով պահարանին կողմանոցային խոստովանողութիւնը կը վայելէինք , պահարանին լքուն ու մոմահոտ մեկուսութիւնը կ'ողւորէինք շապիկ հագնելու համար , — կիրակին՝ , զուարթ , չարածձի կիրակին՝ մինտէրներուն մզլոտ հոտին իսկ մէջն էր :

Եւ մանաւանդ թէ ամէն քանի մէջ էր կիրա-
կին . որովհետեւ ազատ էինք :

Եկեղեցին լեցուն չէ . կիրակամուտքի եկեղեցին
է : Բարեբաղդաբար լուր օրեր կան . անո՛նց համար՝
որ Աստուծոյ փառքէն աւելի անոր բարութիւնը կը
սիրեն , ու պաշտօններու հարկադրած հեռաւորու-
թենէն աւելի կը սիրեն այն մօտաւորութիւնը զոր
վատահուժիւնը կ'արտադրէ . , անո՛նց համար որ ,
փոքրաթիւ , կրնան զգալ թէ համատրոփ հոգիներով
կը յաւին Աստուծոյ . և թէ եղբայր են անոր գա-
ղափարին , անոր Անեղբութեան մէջ : Հիմա մար-
դիկ կան հոս . բազմութիւն չկայ : Եւ հոս եկած
մարդերը գրեթէ ամէնն ալ կամ թաղին մէջ գործ
մը ունին , ժամուն մօտերը , կամ ա՛լ գործ չունին .
և իրենց աշխարհէ յոգնած ականջը դիւրաւ կը լսէ
եկեղեցւոյն զանգակը . վասնզի գրեթէ ամէնն ալ
• ծերունիներ են :

Միայն , գաւիթին մէջ քանի մը կնիկներ . վտիտ
ներկայութեամբ մ'անորոշ . մէկ քանի աղջիկներ ,
տրտմած . նշմարելի , չքաւոր գոյներով , տաճարին
վանդակապատին ետեւը : Անշուշտ ուրիշ կնիկներ
ալ կան նաև վերնաստունը . վերի լուսաւոր առանձ-
նութեան մէջ այրի պառաւներու սե կծիկներ : Բայց
մանաւանդ տղաքներ կան եկեղեցին , որ կուգան ,
դպրոցէն ազատ եղած . կը հասնին . ինչպէս ուրիշ-
ներ եկած են արդէն , ծերունիներէն առաջ , ու
տակաւին պիտի գան . իրենց սոնաճայնն ու խժը-
դուքը գաւիթին մէջ կը խօսի , կը հնչէ . ներս կու-
գան . այնքան նուազ աղմկալի որքան կարելի է
իրենց անկախութեան . ծերակներուն քովէն , աս-

դիէն անդիէն, կայտառ զսպուած քովն իրենց ամե-
նակարող մկանունքին, կ'անցնին, յաղթական,
դէպի դասը երթալով. հոն ուր իրենց նմանները
շապիկ հագեր են, և Լոյս Չուարթը կ'երգեն. —
մեր Լոյս Չուարթը — կը քալեն, ոմանք կ'շտապեն,
խայտարդէտ, անհոգ, գողտր, վայրենի, երբեմն
յանկարծ նաւաղի խարսխօծիքով ու ձեռքերնէն
կախ լայնչի յարդէով, ուրիշներ, որ դասագիրք
ուենին, տետրակներ, բաներ, և մոռ մատներ, յետոյ
քրտնած, այրած գլուխներ, որ կը խուսափին,
հին հողոտ կօշիկներ որ կ'աճապարեն ու կամաց
չեն կոխեր. և անցնելով մեծ պատուհաններուն
առջեւէն որոց իւրաքանչիւրէն ալ կը լուսաւորուին
արագօրէն, ամենքն ալ կ'երթան դասին բալխա-
տրին ետև անցնելու. դիզուելու, ընդխառնուե-
լու հոն, պահարանը մտնելու, շապիկ փնտռելու,
ձայնաւորներուն նախանձելի երամին խառնուելու
համար. կամ անոնց քովը կենալու. տէրհայրերուն,
բուրվառին, մոմերուն, խորանին մօտ. ժամերգու-
թեան մէջը: Ժամուն դուռն ալ աղմուկ չկայ: Տա-
ճարին մեծ լուսաւոր անջրպետին մէջ դպիր տղաքը
կ'երգեն: Խունկին ծուխերը կը ցայտեն երթեւեկող
սարկաւազին մոմն ի վեր, արեւի ճառագայթներու
մէջ: Եւ ծերերն անշարժ կեցած են. հոս հոն, պա-
տուհաններուն առջև, անկիւնները, ստուերներու
մէջ. դորշ, աղերեկ, ալեւոր գլուխներով, որոց
անյարդար մազերուն մէջ լերկութիւններ կը լու-
սաւորուին. բոլորչի մաշկափայլ գագաթներ, գու-
նաթափ ուսերէ անդին. շեշտ ճաճանչ մը մարդու
մը հնօտները կ'ողողէ. ու մոխրագոյն մազերը կը
բոցոտին, մինչդեռ անիկա կ'ըուն է ու խորանին
կը նայի: Կ'ունկնդրեն, կարծես ալ չեն դիտեր.

հապա կը նային : Յետին տարիքներու պարզութեամբ՝ անխնամ, խեղճուկ, կատարելապէս և աննշմարելի կերպով ամբողջ են իրենց սովորական անսխալութեան յարդարանքին մէջ : Հնաւուրց պապեր են մերթ, և թերեւս դասը գացող կամ հոն երգող տղեկներուն մէջ թու մ'ունին որ զիրենք չտեսաւ : Անխախտ են, կարծես ծնրադրելով ու խաչակնքելով իսկ . խորշումուտ ներանձնութեամբ մը անվնաս, անտեղեակ, տարտամօրէն զարմացական, մոռցած կերպարանքով . անուշադիր իրարու, ծանօթներու պէս, ու շղիտելով տղաքները որք անցան, որոց դիւրաշարժ քայլերն անցան իրենց ցուպին քովէն, և նայելով խորանին, արարողութեան, ուր արեւը կ'իյնայ հեռուէն, լայն պայծառութիւններով ուր նշոյլներ կը հրավառին և ուր, խունկով լրթաաքօղ խորքին մէջ կ'երգեն դպիր տղայք, ու միւս տղաքներն անոնց երգելուն կը նային : Եւ անգամ մ'ալ կը դիտեմ այն աղօտակի մեղամաղձիկ բանը թէ անհրաժեշտ կերպով՝ կիրակամուտքի մոռցուած ժամերգութեան եկողները մանաւանդ տղաքներն ու ծերերն են . և արդէն տղաքները կ'զմայլին ու ծերերը կ'աղօթեն . և տղաքները իրենց ազատութիւնն ու ծերերն իրենց խաղաղութիւնը կիրակիին եկեղեցականութեամբը, երկնայնութեամբը խորհրդանշուած կ'զգան . ինչպէս որ արդէն տղաքներն ազատ վաղուան մը կարօտ են յաւէտ, ու ծերունիները խաղաղ վաղորդայնի մը :

Իսկ ես շատոնց կորսնցուցած իմ ազատութիւնս, նաև հեռու եմ դեռ խաղաղութենէն որ երկու անուններն են միեւնոյն երանութեան : Ստուգու-

Թիւնը թէ արդէն կ'երթամ դէպի ծերութիւն՝ զիս
աւելի կը հեռացնէ մանկութենէն, և ինքզինքս
անոնց, ծերունիներուն մօտ հանգիստ կ'զգամ.
անոնց քով է որ կը յանկչիմ: Ի դուր ա՛յնքան
եղած եմ այն տղան: Միթէ անհետացած այն կեր-
պարա՞նքն է այս դէմքը զոր այս տղաքը չեն ճանչ-
նար, և որուն թախծութեան ետե՛ մա՛յրս միայն
իր սիրոյն մեծութեան մէջ՝ իբրև Անեղբութեան
մէջ մշտակայ այն կորսուած կերպարանքը դեռ կը
նշմարէ: Որքա՞ն սիրելու է եղեր տղաքները, ոչ
միայն վասնզի չկային, այլ մանաւանդ վասնզի
չպիտի ըլլան քիչ ատենէն, բոլոր այս խեղճ տղեկ-
ները: Արբունքին տխուր վերլուծականութեան
մէջ մանկութիւնը կը քայքայի, կը խամրի. ի՛նչպէս
ամբողջ են բողբոջները, մանուկները: Ո՞վ են
այս տղեկները. չեմ ճանչնար բնաւ. այն ատենները
չկային. երբեք չկային անոնք. և չեմ գիտեր ինչ-
պէս եղած են. և ի՛նչպէս ահաւասիկ մեզի պէս
կ'ընեն: Ես ալ, ատեն մը, անոնց պէս, չէի տես-
ներ ծերուկները. այնքա՛ն հեռու եղած ըլլալու էին
անոնց գորշ գլուխները: Մինչդեռ հիմա, շատոնց,
անդգալի կերպով անոնց մէջն եմ ևս ալ, տաճա-
րին ետեւը, — ատեն մը անկէ դո՛ւրս իսկ ըլլալէ
ետքը: Իսար ս'ըքան հեռու է հիմա իմ կեցած տե-
ղէս. իմ զարմացած կանգնումէս որքա՛ն հեռու է
դասին մէջ կեցած ըլլալս՝ բոյորովին անճիգ ու
բնական, երգին ճիշդ բերանս, ձեռքս բռնած վառ
մումը, որու ոսկի լոյսին մէջ ընկերներուս քուն-
քերը կը խարախշուէին, լոյսերը, երազները, իրա-
կանութեան հեշտալի զգայութիւններն աչքերուս
մէջ, կարծեմ ընդերկա՛ր խորանին կամարին մէջ
թափառասոյզ աչքերուս, մինչդեռ անիկա, որու

անմասաչելի բարձրութիւնը հզօր կորութեամբ մը
կը ծոցուէր, կը խորունկնար, կարծես մեծվայե-
լուչ ու բարի հայրութեամբ մեր երգերուն խըն-
կալի ցայտերուն, վերառաքման դէմ, — կամարը՝
տարտամօրէն կը տիրապետէր իմ հոգւոյս որ իբրև
ամէն հոգի՝ տաճարի մը կանգնումին համար կան-
խորոշուած խորհրդածուփ ամայութիւններ ունէր :
Իրական, տարօրինակ կերպով զուրկ եմ այն տա-
րիքէն. այն ծաղկահասակ տղեկին կեցուածքը չէ՛
քամակորիլ սկսած, մի՞թիւն մորմազգիի (sol.) մը պէս
հակիլ սկսած այս հատակը, ոչ ալ այս նայուածքը,
— մենասէր, որ կը յաւի, կը զննէ, կը խփի,
ու կը թուի մեզմեկ, արգիլել ջանալ ու է օտար
թափանցում, վասն զի ա՛լ ներսը անմեղութիւն
չկայ, ու մանաւանդ կարծես մերժե՛լ արտաշխարհի
հողկութեանց տեսարանին աղտտ մուտքը՝ ապա-
քինելու կարօտ հոգւոյն մէջ, որովհետև անոնց-
մով չարատուելու՝ ուրե՛մն անոնց ներելու չափ
վճիտ չէ անիկա՝ — ոչ ալ այս նայուածքը հայ-
եացքն է այն տղեկին : Եւ, զ՛հ, մինչդեռ անոնք,
տղաքները, զուարթ, կայտառ՝ իրենց վաղուան
բերկրութեամբը, խունկին, մտմերուն, կիրակամուտ-
քի լոյսին մէջ կ'երգեն՝ անտարակոյս լաւագոյն է
հոս, առդին, ծերուկներուն մէջ կորսուիլ : Մա-
զերուս մէջ գծուող աննշմարելի ճերմակները կը
բաւեն որ արդէն ինքզինքս ձեզմէ համարիմ,
լռին, անչուք ծերունիներ : Խաովայոյզ պատանու-
թիւնս ստուերարկող ու հեռացնող այս տխրալի
անդորրոյթը (accal.) խառնե՛մ անոնց կեանքը գոր-
չա՛ճածող ալեւոյթին անդորրութեան, կիրքերու
պղտորութենէն յտակացող հոգւոյն հակմ շուշա-
հասպակով անոնց գլուխները շրջապատած, որք

առաջ կը հակին , ա՛լ անկարող ուրիշ զիրք առնելու քան այս կարկառու մը որ կը մտմտայ ու կը խոնարհի :

Բայց հեռուն խունկը կը ժայթքէ , կը բարձրանայ , և դպիրները կ'ըսեն .

Սո՛ւրբ Աստուած , սուրբ՝ եւ հզօր . . .

Հին սիրելի աղօթքը , յօժարակամ երգուած , աղաղակուած , ծխայեղց բուրվառին պարին հեռ . խունկի ամպումներուն եթերային կշռոյթին հեռ , անշարժ ու կարծես անյատակ կամարներո՛ւն արձակուած , աղօթող մարդերուն անմուռնչ ու ներքին , ու մութ ձայնակցութեամբը մեծցած , խորունկցած տակաւին . սրտազին , անապառելի հառաչանքովն իր անհուն ու մի բառերուն , որոց կոյր , միամտօրէն յատակասեռ , կարծես նախաղղացական ըմբռնումը կը խանդավառէր մանկութիւնս , մեծ կամարին աստուածութեանը մէջ երազուն , և որոց անըմբռնելի միութիւնն հիմա կ'ապշեցնէ զիս , որոց երգումն անգթօրէն կը խորունկցնէ իրենց իմաստը , վասնզի երգն ուրիշ նպատակ չունի այլ բառին իմաստը երկարաձգել հոգւոյն մէջ , հոգին ողողել անով , իբրև աւխնով մր . , որոց մեծութիւնն հիմա կ'արդիլէ այն ուրախութիւնը զոր իբրև հրեշտակերպ էակներ , անհուն բաներու կարծես նախապէս ընտանի հոգիներ կը զգայինք զանոնք երգելու ատեն , խունկի ծուխերով թեւաւորուած . , որոց մեծութիւնը սակայն հիմա զիս կը մեկուսացնէ , կը թշուառացնէ աւելի :

Եւ մինչդեռ ահագին եկեղեցւոյն զաղափարը կը խառնայ , կը ձուլուի , կը ներկայանայ յանկարծ՝

անթերի , ամբողջ , տիեզերական ընդհանրութեանը մէջ երգին որ կ'ելլէ կը լեցնէ անջրպետը , ճշմարիտ ու անայլայլելի զմայլմանց տրամութեամբը հոգիները խռովելով , եղկելի աշխարհայնութիւնը սարսելով , դանդաջեցնելով երկրպագութեանց ու խաչակնքումներու յամբ խլրտման մէջ որով ալեւորած մարդերուն հիքութիւնը կը բաղձայ ամբաւութեան ներշնտուկ բարիքին , տխրալի քարշումով մը տարուելով երգին խնկալի ու պայծառ ելեւելքին հետ խառն , աղօթքին խուռն հիանառայ ամբարձման մէջ շփոթուած հեծեծելու , ես՝ կը ջանամ փախչիլ այն յափշտակումէն , արցունքէն որ ներսս կ'ուռի՝ անզուտպ խայտանքովն իր տրամութեանն , ու , պատուհանէն դուրս կը դարձրնեմ աչուրներս , արցունքին խուլ աճումը կասկեցրնելու և անոր հանդուրժելու անկարող՝ պատուհանէն դժուրս ուրիշ բան մտածել փորձելու . ո և է չքոտի , խօլ դատարկութեամբ մը զբաղելու . — ժամուն պարտէզին մէջ , գետինը՝ բոյսերը կը տատանին հովէն . . . — երկար ատեն կայ որ լեցուն է այն մորմոքն ու կ'սպառնայ վիժիլ աչքերէս իբրև անգութ խոստովանութիւն մը . . . — կը տատանին , կը խոնարհին , կը շակուին , կ'իյնան խոտերը . . . մինչդեռ անիկա կ'սպառնայ կարծեա ամենակարող ինծի ծնրադրել տալ , հօրս պէս . . . — անյնդհատ , յիմարաբար կը ծռին , կ'իյնան խոտերը , ծղօաները կը ճօճին , կը ծածանին , լալապին , ու պարող , տանջուող ոչնչութեամբ մը կը շարժակին , պարտէզին սպաւոր վանականութենէն ելլող թախծագին բանէ մ'ահարեկ , վաղամեռիկ , կարծեա մշտնջենապէս վաղամեռիկ , — և տարօրինակ դժբաղդութեամբ մը կը լեցու իմ :

Ինչո՞ւ կը հալածէ զի՞ս : Անորոշ , անասելի զգայութիւններ , յաւիտենական բաներու խույճեազգայութիւններ կ'ելլեն ներսերէս , ճշմարտութեան դէմ մարմնաւորութեամբ թանձրափակուող խղճին ամենէն թշուառ որջերէն հծծուած : Ինչո՞ւ կը հալածէ զիս , ո՞վ Քրիստոս , կատարելութեանդ մղձաւանջը : Միթէ ե՞ս սպաննեցի քեզի :

Աղօտապէս , իբրև պղտորեցնող արցունքի մը մէջէն կ'ընդհնմարեմ , կը գիտնամ ինքզինքս , անմիտ Եսը , մասնաւոր , անհատական՝ հակառակ իր ծագման ընդհանրականութեանը . , Եսը , զոր կակըծաղին կը հաստատեմ , քանի որ չեմ կրնար վաճակ կամ ժխտել , որու յիշատակն , զգացումը չպիտի կրնամ մոռնալ , փոքուն բաներու անհաւատալի յամառութեամբը մշտակայ . , և որ կոպիտ ծաղրի մը պէս կը զեղու , կ'աղբաղիլուի առջեւս : Վասնզի երբ յուզումները կ'ելլեն ներսէն իբրև հեռաւոր ու յաղթական ճշմարտութենէ մը՝ մարմինը կը խայտաւակուի , վասն զի Եսն է առաջին , մշտնջենական մեղքը : Եւ մարմինով մը , ու մասնաւորուած Եսով մ'իր ընդհանրութիւնը կորսնցուցած հոգւոյն անպատում արամութեամբ , իմ գոյութեանս վիշտով՝ կը ջանամ աղամայ նայիլ Անոր որ Ես չունէր , որուն Եսը մարդկութիւնն էր , Ամենն էր : Եւ իր անձնաւորութեանը հեշտալի ու սարսուալի ճշմարտութեանը մէջ անըջակոծ , իբրև աղօթքի մը , ինքնաքաւման մը մէջ , իբրև մահուան արբեցնող երազանքի մը մէջ՝ կը մտածեմ թէ մարդերը տեսան զայն , անվախճան ստուգութիւնը . , թէ ես , թերեւս պիտի մեռնէի եթէ հիմա զայն տեսնէի , ո՞չ տարօրինակ ու վտեմ նազովրեցին , Եօշուան , այլ յաւիտենական Քրիստոսը . ոչ

Վարդապետը , այլ Որդին , վասն զի շատ ասու-
բան կ'ըլլար զայն տեսնելէ ետքը զեռ ինքզինքս
ապրիլ . , զինքը եթէ տեսնէի կանդուն , կատա-
րելութեան , ամենակալութեան քաղցրութիւնը . ,
լուսնեղէն կամեցողութիւն , բազկացած , լծակացած
կամեցողութիւն . , բարոյականի , սիրոյ մարտկո-
ցումը . , շանթակամող , այլ փայլակներո՞ղ սիրտը ,
իր ճշմարտապէս լուսարձակ անձին անխմանալի ու
անյագենալի բարիքը . Անեղբութեան բոլոր ան-
պրզելի կուսութիւնը՝ ներմամբ այրող իր ակնար-
կին մէջ : Եթէ կարենայի ես երջանիկ ըլլալ այն-
քան որքան սուրբ է ինքը , երջանիկ անոնց պէս
որ զինքը տեսան , ու անոր ձայնը լսեցին , անոր
ձայնը որուն քաղցրութեան ուժին ոչ մէկ հոյլ
երկնաշունչ Որդիներու պիտի կրնար համնիլ ,
լեռնադղորդ գոռումներու ոչ մէկ աստանուագա-
յին համորատում , միահաղոցն շշնչող ծովերու ոչ
մէկ վայրենադաշն խմբերգ , — անոր ձայնը , այն-
քան քաղցրօրէն հզօր , որ կը վերկենդանացնէր ,
որ մեռելներուն սառած ականջը կը լսէր զայն , ու
կ'արթննային , կ'ելլէին . , այնքան քաղցր , Աստուած
իմ , այնքան անասելի , անյղանալի կերպով քաղցր
որ Նեխման իրականութիւնը կը ցնդեցնէր ցնորքի
մը պէս . որ Նեխումն յանկարծ Աղօթքի կը վերա-
ծէր , Նեխման գարշելի , անբացատրելի , անդր-
մարդկային թշուառութիւնը Աստուած գիտութեան
երանութեանը կը փոխէր . , եթէ երջանիկ ըլլայի
անոնց պէս որ նայուեցան անոր հայեացքէն , և
զուժի երկնային կոհակի մը մէջ պարուրուիլ ,
հրընկղմիլ ու խաւտնալ զգացին , վասնզի ներման
այնպիսի հեշտութիւն մը կ'երանար հոն որ ամօթա-
պարտ մարդը կրնա՞ր նայիլ անոր . , — երջանիկ ,

անոնց պէս որ զինքը շօշափեցին , վանդի պէտք էր որ , խեղճ մարդիկ , զինքը շօշափէին , ո՛ր և է պատուակով , աներեւակայելի էակին իրականութեանը համոզուելու համար , թէ և խղճին անվրէպ նախադիտութիւնն ըսէ՛ր իրենց թէ Քրիստոսն է ան , հրեշտակադէմ , հրեշտակացած Աստուած , արժային անխմանալի վիճերու միահամուռ կեդրոնացմամբ ցնորակերտուած Գերամարդ , Տիեզերքի մշտնջենաւոր թրթռումը միակ արտիի մը մէջ կրչուութուած , Տիեզերքի Օրէնքը՝ Տիեզերքի Ոգին եղած , եթէ երջանիկ ըլլայի իր կերպարանին թքնող մարդուն պէս , և իր ոտքերն խղճող կրնականը պէս երջանիկ՝ ես , արդեօք , գիտակցութեան , ինքնաճանաչման զարհուրելի ու մահացու աճումով մը , չպիտի ըլլայի մէկը որ մեռնէր իրեն համար , եթէ ոչ մեռնէր իր ներկայութենէն :

Ահա , խոտերը կ'երերան կոր , սարաւալով . խեղճ խոտերը . ի՞նչ անողորմ բան կայ շուրջս . ի՞նչ է այս կաշկանդումս տխուր հողին վրայ . հողին սրտածմլիկ ամայութեանը վրայ : Չէ՞ մի որ հէք եղբայրն եմ՝ այս գողղոջուն ոջնչութիւններուն : Ի՞նչ բան կրնայ մխիթարել ապրելու սուղը , կենցաղի մը պժգալի յամառութեամբը բրտացած մարմնաւորութեան նզովքը : Ո՞վ պիտի լուայ Եսին ամօթը : Պէտք չէ՞ , շատոնց , որ հողին խորին գերեզմանին մէջ կորսուիմ . վհատութեամբ ես դառնամ դէպի հողը :

Իսկ Անոր կերպարանը կը մարի պատուհանին մէջ . կը կորսուի , ներսս կը վերադառնայ : Հո՛ն թող անհետի : Թող սրտին անարտարելի խոր-

հուրդներուն մէջ թաղուի, իբրև գեանադամբանս-
ներու եկեղեցւոյ մը մէջ, կենցաղին հեթանոսու-
թենէն հեռու: Գիտեմ որ, երբ արցունքներուն
խոյնէքը յարուցանէ զայն այնքան յաճախ որ վեր-
ջապէս դիմակայէ զայն ինծի, իմ արարքներու և
իմ միջև զայն ուրուացնէ՝ փայլատակող սկզբունք՝
կեանքս պէտք է յեղաշրջի: Վասնզի իր իրաւունքն
է ասիկա, և ոչ իր ազդեցութիւնը, իր արբեցուց-
չութիւնը, վասնզի եթէ հանճարները կրնան տե-
սակէտներ շինել՝ անիկա խղճմտանքը նորաստեղ-
ծեց, այնքան իշխանութիւն եղաւ իր ազդեցու-
թիւնը, վասնզի գիտեմ որ Տէրն է: Կեանքս, թե-
րեւս կեանքը, անկարող զայն նշանաբան ունենա-
լու, անն հայեացքը, այլ թերևս զայն իբրև գաղտ-
նի, ամօթլեած յղացում մը կրելու անարժանի չէ:
Միթէ դատապարտութիւնը կ'ընդգրկէ՞ ամբողջ
մարդը. մարդ անձանօթ կարելիութիւններ չի՞
կրեր. չէ՞ մի որ արտօսըրը անձանօթ անաշխարհա-
յին զգայութիւններ կը վերբերէ սրտին ներբաւիղ-
ներէն, ու արտաքին մարդուն ամուլ ոչնչութիւնը
կը պատմէ անոր, — և այնքան մոգական, այնքան
աստուածային որքան անոր մարմնաւոր ապագան
խտացնող սերմի շիթը՝ էակին ոգեղէն անցեալին
թրթռապին հոծումը կը բերէ իրեն. — չէ՞ մի որ
արտօսըրը, ո՛վ Աստուած, Անեղբութենէդ լողած
մեղեդի շիթ մ'է որ կը գթա՛յ լացողին: Ինչպէս
Կեանքին յաւերժական գաղափարը Ջուրերուն
տակ՝ հոն, արցունքի ներքին խորքերուն մէջ ան-
յայտ, ծածկայուն թող մնայ անոր տեսիլն իբրև
ներաշխարհային պաղպաջունքի մը մէջ, իրեն ար-
ժանի, և թող ես հժժեմ միայն խորովի թէ ունիմ
եւս զինքը, մարմնաւորութենէս հեռու, հոգւոյն

հախնի , անկորնչելի ճշմարտին առաապելայնու-
թեանը մէջ տնիմ եւս զինքն , իբրև փրկութեան ,
վերակենդանութեան գաղափարն Արցունքներու
խորը :

Ահաւասիկ հիմա Հայր գթածը կ'ըսէ քահանան :
Իմ աղօթքս , իմ , իմ աղօթքս . իրիկուն է , և
քահանան կ'ըսէ .

Հայր գթած , Արարիչ ամենայն սրարածոց ,
ընկաշ գպադասանս ծառայից քոց ի ժամ երեկոյիս .
ողորմեա՛ , Տէ՛ր . ամենայն աշխարհի . հիւանդաց ,
վշտացեղոց , նանապարհորդաց , նաւորդաց , խոստ-
վանողաց , ապաշխարողաց , եւ հոգւոցն հանգու-
ցեղոց :

Ասանկ կ'ըսէ քահանան , վաանդի իրիկունն է :
Այն ատենները զմայլած կը մնայի մանկական
այն զմայլմամբ որ երիտասարդութեան մէջ երա-
զանք , ծերութեան մէջ արամութիւն է . այն խու-
տափուկ վայրկենին մէջ ուր աղօթքին ծանր ու-
աղաչաւոր բառերը կը հատնէին , երևակայութիւնս
հորիզոններու անարտայայտելի ընդարձակութիւն
մը կ'ընդհնմարէր իրիկուններու ամայութեանց մէջ
հեռացած , անսահմանուած : Չէի գիտեր ոչ վիշտը ,
ոչ տարագնացութիւնը , ոչ ծովերուն իրիկուն-
ները , ոչ ապաշխարանքը , ոչ մեռնիլը : Եւ սակայն
մտիկ կ'ընէի քահանային աղօթքին , տարտամօրէն
պատկառոտ , կարծես մեզմ երկիւղով մ'անշարժ ,
իբրև երկրայաղօտ ճակատագրութեանց կարծի-
քով մը . և ցորչափ կը տեւեր աղօթքը , ոչ իսկ
վայրկեան մը՝ կը մնայի անօրոշ , սուղեայ , երազ-
մայլ . անստուգապէս բայց հողեկին ըզձաղով այն

աղու բաներուն որ աղօթքին տեսիլներուն մէջ կը
ծիփային, կը հեռասուզուէին, կենթադրելով, մտա-
ծելով զանոնք, կարծես զանոնք երկար ատեն գիտ-
նալէ ետքը մոռցած, իրենց «թողած» տպաւորու-
թեան մեղանուշութենէն կարծես յիշելով, անծին ու-
շիտ ձանաչողութեամբ մը հեշտասիրելով անոնց
հեռանօսութիւնը, որ վերջին բառերէն ետքը գեռ
կ'երկարաձգուէր, ու կը լուծուէր, կը ցնդէր, տղեկի
ըզձատեսութեամբ մը նախազգայով յաջորդող ժա-
մանակները, բայց որոշապէս զի ս նախապրելով այն
խորին նայութեամբ որով ինչպէս ամենուրեք՝ բան
մը նոր չէ տարիքին մէջ, եթէ ոչ այն ահագին երա-
զողութիւնը, կեանքով բեռնաւոր, ուր նախկին
զմայլու մը՝ կարծես նախկին անդրակենսութեան մը
այերայութեամբը թեթեւ զմայլու մը կը թախծի :
Ի՞նչպէս պիտի ուզէի ծերանալ, Հայր Գրաւծը նաև
այն ատեն լսելու համար, ինչպէս այս ծերունի-
ներն հիմա կը լսեն, տեսնելու համար նախնի տղե-
կին ժպիտն այն արտօսրին մէջ որու թրթուման
մէջէն ծերութեանս հայեցողութիւնը պիտի հեռա-
նար անհուն ծիրանի հորիզոններուն մէջ՝ իրիկուան
աղօթքին իմաստութենէն անդրանկարուած :

Ողորմեա, Տեր, ամենայն աշխարհի . հիշան-
դաց, վշտացեղոց, նաևապարհորդաց, նաւորդաց,
ապաշխարողաց, եւ հոգւոցն հանգուցեղոց :

Ի՞նչ է այս երազուն ատղումն, ուր երևութա-
պէս այլազան վիճակներու գաղափարները կը յա-
ջորդեն իրարու, անզգալի ու թերևս անկանոն
աստիճանմամբ, որ այնքան ճիշդ կը բարձրանայ
ու այնքան կատարելապէս կ'աւարտի, որ գա-
ղափարները կ'անցնին իբրև իրիկուան բալող շի-
կութիւններուն մէջ ծփուն արամալի երանգները

միակ գաղափարի մը , անոնցմէ առաջ , անոնց մէջ ,
ու. անոնցմէ յետոյ մշտակայ , ինչպէս անեզր իրի-
կունն ուր աղօթքը կը գոյանայ , կը խնկանայ , ու
կը սաւառնի : Ի՛նչ մեծ ու քաղցր իմացականու-
թիւն վերջալուսական մտախոհութեանց մէջ կը յիշե-
զանոնք որ կը տխրին , կը սառապին աշխարհայնու-
թեամբ , անկողիններու ցաւին ու թշուառութեան
մէջ , լքման յետին լուսութեանց մէջ , , զանոնք որ
կը մեկնին կը հեռանան , սարադէմ , գէպի լեռնե-
րու վայրենաբոյր մենութիւնները , միջին ձորերու
խորերէն , ուրուային բլուրներու ցախերուն մէջ ,
ուր իրիկունն անհուն հծծիւններով կը սրսփայ , կամ
ծովուն ամայութեանց մէջ , ուր հորիզոնները հուակ
երանգներու տխրադէմ հողիներով կը խորհրդաւո-
րին հեռունները , կամ մերկ՝ վճիտ՝ զարհուրելի պա-
րապտութեամբ մը կը խառապծուին ամոյն երկինքին
վրայ , մինչդեռ պատռուող ջուրերուն մէջ վիհերը
կը միթագնին , և անարկու կոծեր կ'արձակեն գիշե-
րամուտին մէջ գացող նաւորդին , , յետոյ նաև
զանոնք որ պահ մը , ու թերևս խալառ հեռացած
կենցաղէն՝ խցիկի մը ներանձնութեան մէջ ուր լու-
սամուտը կը սառեւրամածի միթագնող ու կորսուող
արտաշխարհին վրայ՝ լուսութեան սրբութեանը մէջ
հծծող ներքին աղու ձայներու կ'ունկնդրեն , սառեւ-
րին մէջ փիթիթող նայուածքին կատարելութեամբն ,
արտաշխարհէն ազատ խղճմտանքի մը տեսանողու-
թեամբը կ'ըմբռնեն իրենց մեղքերուն մորմոքալի
չարքը , և ազնուացումը կը տենչան , , անայլատե-
րելի ազնուացմամբ՝ արտասու ազին , ցօղալից վեր-
կենցաղում մը կ'ըզան , , անեզրութենէն կը խնդրեն
չսորհներուն խաղաղիկ սատղակայլակ էջքը , — և
զանոնք որ վերջին նշոյլներուն հետ մեկնած են

աշխարհէն : Ա՛հ , իրիկուան այս աղօթքը : Ի՛նչ երազուն բարութիւն կրնայ յիշել զանոնք իրիկնածին բարձրաստճանքին մէջ և անոնց համար կ'աղօթէ : Եւ այն պահուն որ արեւը կ'ընկղմի իջնող գիշերամուտին ստուերներուն մէջ , հեռուն , վաղուան տրամածուփ անորոշութեանց մէջ , ի՛նչ բան կարելի է յիշել եթէ ոչ հիւանդները , տառապողները , տարազնացները , խռատովանողները , ապաշխարողները , մեռնողները : Երբ իրիկունը կուգայ , ու հանգիստին գորովագին ժամն է , որչա՛փ ճիշդ է , որչա՛փ արդար՝ երազել , սիրել բոլոր զանոնք որ հիւանդ են , կամ տառապագին , կամ թափառական , զանոնք որ աշխարհէն կը քաշուին կամ կը վերանան , բոլոր զանոնք որ խաղաղութեան կարօտ են : Այս պահուն ի՛նչպէս գործունէութեան , ըղձանքներու , պէտքերու գաղափարները կը մարին հրաժեշտի գաղափարին աղօտ մեծութեան ներքե : Իրիկուան մէջ մի՛թէ կայ հրաժարումէն աւելի խաղաղ և աւելի տխրեցնող բան մը : Ի՛նչ , ո՛վ Աստուած , աւելի կատարեալ բան մը քան երկրաժեշտը , երեկոյին :

Մերերէն մէկը ետեւը կը դառնայ կը նայի . տակալի բան . հայրս է . . . :

Տէ՛ր Աստուած , մեր թաղին սա արբեցող ծերունին չէ՛ այս որ կիրակամուտքի ժամերգութեան եկեր է : Ի՛նչ ահարկու նամուութիւն . շեշտակի ինծի կը նայի : Ա՛հ սակայն . ա՛լ ասիկա անհանդուրժելի է . իր ալքողամոյլի ու ծերի պուստած , սողաչաւոր , ահարեկ յառումով ինծի կը նայի . անդի՛ն կը դառնամ : Գիտեմ , դեռ կը նայի կոր որպէ՛ս թէ հայրս

ըլլար, մեռած հայրս, և իր այնքան ծանօթ նայուածքին ահեղ տառապանքով ինծի նայէր տակաւին: Կարծես թէ չէ մեռեր այն նայուածքը այն սրուած, սլաքօրէն սպառած, ուղեար ու անաշխարհային նայուածքը միթէ կրնա՛ր մեռնիլ:

Միթէ կարելի՞ է որ անխմատ դիպուած մը ըլլայ այս տարօրինակ բանը: Ալքօլը, ծերութիւնը, վիշտը, նախնական հարեւանցի նմանութեան մը օժանդակած, կը բաւե՞ն հօրս կերպարանին աղէտալի վսեմութիւնը կերտելու. այնքան խուսափուած այն կերպարանը դեռապրեցնելու հողակոյտէն դուրս՝ դայն իմ մօտերս ուրուայածելու համար: Չի՞ բաւեր արդէն որ սրախ մէջ քանդակուած ըլլայ այն, իրբե անօր հեղինակը, սիրախ մէջ՝ թախծութեան անկիւնի մը մէջ ընդհնջմարտող ա՛յն ահարկու դէմքը, կքուն, նայող, արձանացած: Ինչո՞ւ համար երեւնալու ու նայելու այս պատի՛ժը:

Նոյն դօղը, նոյն սփռուումն էր որով իր զգայութիւնը կ'ունենայի. և որ, աւաղ, ուրախութիւն մը չէր: Նոյն անկորնչելի զգայութիւնն էր, նոյն յանկարծական դառն անձկութիւնը, զոր զգայի հիմա և որ, երբ կենդանի էր հայրս՝ ա՛լ իր ըրած ապաւորութեանց համադրոյթն էր, իր ենթակայական հշանը: Ի՞նչպէս նոյն է դեռ, նոյն է միշտ այս անձկութիւնս: Ատանկ կը նայէր ինծի, և կը պատժուէի: Թերեւս ոչ իր խրատը, իր յանդիմանութիւնը, իր ծաղրը, իր ապտակը զիս այնքան պատժած են որքան իր կսկծալի ու սոսկալի ակնարկը որմէ խոյս կուտայի, վասնզի այդ նայուածքը պատժել չէր ուզեր զիս:

Այն նայուածքը կը տառապէր ու կը ներէր. — նայուածքին ծերութեան ու ալքոլական արտայայ-

տութիւնը յարասե տանջագծումն էր իր առաքի-
նականութեան : Աւքոյը հօրս բնաւորութեան մէկ
յաճախակի յայտակերպումն էր . օ՛հ , աւքոյը իւ-
րացուած էր հօրս բարոյականէն . իր հոգւոյն գե-
ղեցիութեան հետ ընդխառնուելով , յուզուելով՝
աւքոյին ազեղութիւնը պատկառանք եղեր էր :
Ակնարկին խիստ ազնուականութիւնն ուժգին ցա-
ւազնութեան մը մէջ հստմացեր էր : Այ չէի կրնար
հանդուրժել անոր . կը խուսափէի հանդիպելէ իր
սեւեռարիւր ծիածանին որ աչքին ծերացած ճերմակ-
ներուն անպատմելի դատարկութեանը մէջ կը կե-
նար կը հայէր ինձի . իր անջնջելի , յաւիտենական
հայրութեան ուրուացած , անցեալ իշխանութեամբը :
Եւ կ'ամչնայի , կը սոսկայի , կը հողկայի իր հայրու-
թենէն , որ գուցէ իսանդաղատանք միայն կրնար
սպառնալ ինձի . թերեւս իր տառապանքը միայն :
Որչափ թշուառ էր , որչափ թշուառ , իմ մեծնալուս
չարիքին հանդէպ զոր ըրի իրեն , զոր անկախու-
թեամբս ու անձնականութեամբս , և անշուշտ իմ
պժգալի երիտասարդութեամբս՝ ինչպէս է ամէն
երիտասարդութիւն՝ խատացուցի (raid.) , անպար-
մանելի , յուսահատական ըրի . և սակայն այդ ինք-
նութիւնն ինքը տուած էր ինձի . իր անխորհուրդ
առնականութեամբս բղձակերտեր էր դայն : Եւ ևս
զինքն անձ ատել կը թուէի :

Սակայն չէի տանք , այնպէս չէ՞ . մի՛ թէ կ'ատէի
զինքը : Չեմ գիտեր ինչ կ'զգայի : Չափազանց էր
ինքը . իր վրայ , իր մէջը տաք , խոնաւ , անհասկը-
նայի չափազանցութիւն մը կար , տարօրինապէս
խոսովիչ : Իրմով լեցուն էի , առանց գիտնալու ,
կարծես միեւնոյն ելեկտրականութեամբ լի՝ խու-
սափիլ կ'ուզէի իրմէն : Իրմէն այնքան պատժուած

մանկութեանս մէկ ակամայ, գրեթէ մեքենական հատուցումն էր այս անկախացումը, կամ նախկին կորովալիր հօր ակնածելի ներգործութեան՝ ծերութեամբ, վիշտով, ալքով երկչոտած անինքնավատան համեատութեան տեսարանէն զայրո՞յթ մը. ուտի ճշմարիտ, գիտակից յարգանքի մը անմեղ արամադրութի՞ւնը սրտիս մէջ: Եւ կամ միթէ ճշմարիտ իւրացումը չէ՞ր. աստիճանական գրաւումը նոյն նկարագրով:

Ստոյգ է որ ես իրմով յագեցած (sat.) էի և ինք կը նուազէր: Իր նախկին տիրապետութիւնն ուրիշ բան չէր, այլ բարոյապէս ու զգայարանապէս հետեւում մ'իր արեան որ բաժնուած էր իրմէ զիս յօրինելու: Իր գործովով, իր խրատով, իր պատիւով որ այնքան սաստիկ էին, կը հետեւէր իր բուն էութեան զոր տուեր էր ինձի: Ուրիշներու մէջ յաճախ յետամնաց՝ հօրս մէջ հայրութիւնն իր ծնողութեանը կը հետեւէր. կը տառապէր ինք որ զուգընթաց ըլլար անոր: Անգիտակից ծնողութիւն մը չէր կրնար բաւել իր հղօր ու քրննադատ նայուածքին որով ինքզինքը կը սրբագրէր իմ մէջս: Իր խիստ հայրութիւնը գիտակցութիւնն էր իր առնավայրի ծնողութեանը: Անընդհատ կը ծնէր զիս. և շարունակ սպառեցաւ ոչ միայն իր մարդու տառապանքներէն կամ ալքովէն, այլ նաև իր յարատև ծնողութենէն: Այլ ընելու բան մը չունէր. իր շուայութեամբ ինքզինքը վատնեց իր սերունդին: Երբ իր ներէական վատութումը տեսաւ, վշտագին, անկէ արամադրուող ու անանող ու անոր զուգադիպող իմ աճմանս հանդէպ, կրր ինք մորմոքով զգաց իր օտարանայն իր նախաւոյգ Եսին յիշատակէն որ իմ մէջս կը վերկենցա-

զէր, որ գուցէ, ըստ իրեն, կը նորաստեղծուէր իմ մէջս, ու գուցէ, իր ծերունիի աչքերուն առջև, կ'օտարանար ու կ'այլասերէր, մինչդեռ ինքը, ինչպէս ես, շէր կրնար կասկածիլ իմ մէջս մօտալուտ փոփոխութիւնները, որք շեշտումներ ու աղօտումներ միայն անշուշտ պիտի ըլլային, և որ իր գոյութիւնը պիտի որոշադրէին հոն, և երբոր թախածալից ուրախութեամբ զգաց անօգտակարութիւնը տարեւոր բոյսերուն որք իրենց հուսկ հունտին մէջ կ'ապառին, ու առանց իրենց կան ընդհնմարելու, ճանչնալու անոր մէջ կը ծնգին, կ'ոգևարին, — այն ատեն մեռաւ: Իր որդիէն չպատկասելու համար պէտք էր որ մեռնէր արդէն:

Ինչպէս եղած է ատեն մ'ուր ոչինչ իմ մէջս կ'զգացնէր ինծի այն խռովիչ նմանութիւնը, զոր ժամանակը, կեանքը պիտի երևան հանէին՝ հակառակ այն պատիր երևոյթին որով ինքզինքս տարբեր կը կարծէի անկէ, ե՛ս, անոր որդին, և որ հետզհետէ կը շեշտուէր իբրև զիս հպարտացնող իսկ ստուգութիւն մը, և կը յայտնուէր, թերևս անոր հայրական աչքին կը ցայտէ՛ր այն գիտածև ու յիմար անտարբերութեանցս մէջ որոցմով եկեղեցիէն բացակայ կ'ըլլայի, և հօրս արտասուքին սոսկալի բարոյացուցչութենէն հեռու, և որոցմով անզգած կը մնայի՝ եկեղեցիէն դարձին իմ բացակայութեանս համար ինծի ըրած յանդիմանութեանն ու վշտաբեկ ծաղրին:

Ձի գիտեր հիմա թէ որքան կը նմանիմ իրեն. թէ որքան կ'ուզե՛մ նմանիլ անոր, ե՛ս որ կ'արհամարհեմ ամէն տարրեր նմանութիւնն: Ի՛նչ բաներ

կը շարունակէի սիրել, զոր ինքը կ'արհամարհէր, և զոր ես կ'սկսիմ ատել հիմա: Որչա՛փ բաներ կային զոր կը քամահրէի, և որոցմէ հիմա կ'ակնածիմ, որովհետեւ ինքը կը սիրէր զանոնք: Անշուշտ ժառանգականութիւնը կը գնահատուի երբ տղեկը համնի մինչեւ իր բարձրագոյն աճման, թէև սողմն իր ապագան պարունակէ: Հողւոյն մէջ աստիճանաբար, անզգալի և անդառնալի յամբուլթեամբ մ'երևան կ'ելլեն նոր հանգամանքներ, անոնց դուռնինքնադէտ տիրոջ անժամօթ, և անկէ անյուսալի: Հին ճաշակները, սխալ, թեթեւ, վարկապարտի, տարտամօրէն կ'այլէանան, ծանր և օր մ'ալ անակնկալ եղափոխութեամբ որ անկաձև սուսուութիւն մը կը թուի, բայց որ ժառանգականութիւնն է, անկորնչելի, որովհետեւ բարեշրջական և թերեւս մանաւանդ գիտակցական: Վասնզի գիտակցութեան աճումը չէ՞ որ էութեանս մէջ հորս ծագմամբը կը յայտակերպի, — ինչպէս գիտակցութեան յետին բարեշրջութիւնը կը ձեւաւորուի՝ Աստուծոյ վերապին ու ներշատակ ընդերեւման մէջ: Եւ արդեօք այն անորոշ ժամանակը որ անհասական զարգացման բարձրագոյն աստիճաններն ու գիտակցութեան լիագոյն երևումը կ'որոշէ, այն անորոշ ժամանակը հօր մահը չէ՞ ընդհանրապէս: Պատանութեանս գիտակցութիւնը որ զիս տրիշ կը ներկայացնէր թան հայրս՝ թերեւս գիտողութիւն էր միայն, և անհնօտատես գիտողութիւն մը. զգայարանական ճարտարութիւն մը մանաւանդ. — սեանեչու երկու եղանակներ որ մարդոց լեզուին մէջ կը շփոթուին իրրեւ թէ գիտողութիւնը գիտակցութեան ստորին աստիճանը չըլլար, մանաւանդ նայուածք ըլլալով, մինչդեռ գիտակ-

ցութիւնը տեսողութիւն է մանաւանդ : Այն ատեն իմ և հօրս մէջ տարբերութիւն մը կը դիտէի . հիմա գիտակից իմ նոյնութեանս , որքան զատ անհատներու կարելի է նոյն ըլլալ , կ'ատեն ինչ որ կ'ատէ ինքը . և իր սիրածները սիրելի են ինձի . և ասիկա՞ ոչ թէ որովհետեւ զինքը կը յարգեմ . հապա անոր համար որ ա՛լ ուրիշ կերպ չեմ կրնար ընել . և անաասո՛ր համար կը յարգեմ զինքը , իբր իմ օրէնքս : կը բացատրեմ զինքը . կ'արդարացնեմ զինքը . որովհետեւ ինձմով կը յղանամ , կը գտնեմ զայն : Ատեն մը կը ներէի , կ'աչառէի ինքզինքիս , որովհետեւ զինքը կը դատաւարտէի այն թերութիւններուն համար որք հասարակաց էին իրեն և իր տղուն : Հիմա ցորչափ կը դատաւարտեմ ինքզինքս , նոյնքան կը ներեմ իրեն : Եւ հիմա , երբոր մրմնջեմ ինքնիրենս թէ յոյզերուն համար որ զիս կը խռովեն , կը չարչարեն , ու կ'ազնուացնեն , ես գուցէ անարժան չեմ Անեղբութեան՝ , կ'ըսեմ թէ մանաւանդ ա՛ն արժանի էր անոր . վասնզի իմս չեն այն յոյզերը . իրն են . իմ թրթուականութիւնս իրն է . իմ զմայլումս , իմ վայրենական ու անաշխարհային տրտիւններս իրն են . իր այն արտատուագին յափշտա՛յութիւններն են զորս կ'ատէի , և որոց գաղջ , հրային , մեղեդային , որոց արբեցնող պարոյրին երանութեամբ կը ձգեմ էութիւնս , իբրև տանջանքի մը և սփոխանքի մը . ի՛նքն է . մշտնջենապէս , որ կը սարուայ սրտիս մէջ . թախծութեան անկիւնի մը մէջ կ'ըուն , արձանացած :

Վասնզի սուրկէ է Աստուծոյ գաղափարովը չպաշարուելու , Յիսուսի կերպարանէն չմշտապարտուելու այս անկարողութիւնը . ինչո՞ւ ամէն բան Եկեղեցւոյն մէջ այդ արտմեցնող տեսիլները կը վե-

րակոչէ : — տրտմեցնող, իրապէս, և ըստ Եղիայի՛ն, որ «Առաջին անգամ տրտմած եմ, կ'ըսէ, Եկեղեցւոյն մէջ տեսնելով զԱստուած :» — Ինչո՞ւ անոնցմով լալազին խռովուելու սպառնալիք մ'է ամէն բան : Ինչէ՞ն է որ երգերուն մէջ գալարուող շեշտ մը անգութ ու տարօրինակ համեմատութիւններով կը ծաւալի (défer.) մտքիս մէջ, և ա՛յ ահադին բաներու սառանաթեւ պարզման մէջ կը տարուիմ շիւղի մը պէս, համեմատ քան Իմաստասէրին եղէգը : Ինչէ՞ն է այս սիրայօժար վերլուծողութիւնը որով աղօթքի մը բառն իմաստներու որոշ կամ աղօտ ու տարապայման հոծումներով հաշշայնացած կ'զգամ, կամ այն երկիւղած համադրողութիւնը որով աղօթքը սրտագին վերջանալու կը ձգտիմ, իր նկարագրին մէջ, կամ տեսակէտի մը : Ուրկէ՞ է մտքիս յուզումնալի պատշաճեցումը, տարժւնն հինաւուրց աղօթքներուն, Եկեղեցւոյն մէջ յաւերժացած, տիեզերականութեան անսահութեամբը, անցեալ խնկալի դարերուն հայեցողութեանց որ վերամբարձ կը սառչին, մշտալսնա՞ ինչպէս առկախ կանխեղները, վաղընջուց կրակով : — Չէ՞ մի որ մեռած հայրս իմ մէջս է, հայրս, որ Եկեղեցւոյն մէջ կուլար :

Ահա, երբ ա՛յ դադրած է աշխարհի վրայ ըլլալէ՛, իմ մէջս կը տեւէ դեռ. և արդար էր որ ասանկ ըլլար. եթէ ոչ գոյութեանս արդարացում մը պիտի չունենայի. և ս. գինքը նոյն իսկ չսիրելով. — Ա՛հ. գիտեմ, գիտեմ որ դայն չէի սիրել որչափ հնար էր որդւոյ մը. հէ՛ք ահագին մարդը : Ատուգապէս զի՛նքն եմ հիմա սակայն : — Խեղճ ծերունիներ. եթէ ունիք երբեք սիրելի որդիներ որ չեն սիրել զձեզ, քանի որ չեն հասկնար, և զերծ

կը կարծենս զիրենք ձեր նայուածքէն որ կը թուի
հրամայել այլ իրապէս կ'աղաչէ՞, յիշեցէք որ որ մը,
երբ այս աշխարհէն մեկնած ըլլաք դուք, անոնք
պիտի տեսնեն որ զձեզ միայն կը կրեն, իբրև իրենց
բարոյակամը: Երբոր հայրը կը զառամի աշխարհի
վրայ՝ իր որդւոյն մէջ կը վերածնի. — Հայր, խիղճս
քու գերեզմանէդ բղխեցաւ, ինչպէս հողակոյտիդ
վրայ ծաղկած տառանկը:

. . . Ժամերգութիւնը լսելը է. ամէն բան աւար-
տեցաւ: Կարելի չէ՞ մեծ պատուհանէն դուրս՝ պար-
տէզին խոտերուն սարսուալը դիտել դեռ: Մարդիկը,
ծերունիները կամաց կամաց դուրս կ'ելլեն. յամ-
բաքայլ կը հեռանան: Տղաքը գացեր են. կ'երթան.
գաւթիմն, պարտէզին մէջ անոնց անհասկնալի
խօսքերուն զուարթութիւնը կը լսուի: Վաղը Կի-
րակի է: Ես ալ դուրս կ'ելլեմ, տատամստ: Ողորմե-
տա, Տէր, ամենայն աշխարհի, հիշանդաց, վըշ-
տացեղոց, ճանապարհորդաց, նաւորդաց, խոստովա-
նողաց, եւ հոգւոցն հանգուցեղոց... եւ հոգւոցն...:
Ելլենք դուրս, երթանք: Պարտէզին խոտերը հոս
պիտի մնան, գիշերը, ամբողջ գիշերը սարսուալով:
Եւ իմ գերեզմանիս խոտերը չեն. ինչո՞ւ ես չունիմ
դեռ գերեզման մը որու վրայ խոտերը սարսուան,
իրիկունը, մինչև լոյս, արշապոյտին, միշտ: Մեր
պէտք է երթալ: Ծերունիները կը քաղեն, ալ բնե-
լիք բան մը չունին: Կիները, պառասները կը կե-
հան, խմբակներ կ'ըլլան. յետոյ կը բամբուտին,
կ'երթան: Կիրակամութի եկեղեցիէն ելլելու այն
մեզմ' վայրկեանն է որ թշուառները, մեռելները
կը յիշուին, իբրև գերազանց իրականութիւններ:

հաւ Աստուած . , — ուր ասոնց ամէնուն յիշատակը միակ անորոշ ու խորին անձկութեան մը մէջ կը ձուլուի : Կ'անցնիմ կ'երթամ . բոլոր այս զայտոյներուն պէս ես սլ եկեղեցին էի : Ալքոլամով ծերուկին կը հանդիպիմ , որ կը քալէ , դողդոջուն , հակած , կարծես կուղ , ոտքին ծայրերուն վրայ տատանուլով . շինամանիք հօրս , բայց կը վախնամ դեռ որ կ'ելլէ ինծի կը հայի , երկարօրէն : Կը հեռանամ կ'երթամ շտապով : Խղճիս մէջ տրամութիւններ կան : Ի՛նչպէս թախծալի է աշխարհքը : Գրեթէ ամբողջ կեանքս իր գլխաւոր երեւոյթներուն մէջ կը յիշեմ : Փողոցին , տուներուն , մարդերուն երթեկէին կը հայիմ . ընելիք բաներուս վրայ զը խորհիմ . Իսկ հասն կը մտածեմ... : Բայց խուճկով լեցուն եմ , մահուան գաղտնիարով մը լեցուն եմ : Մահուան անագին տրամութիւնը կ'զգամ , որ մահուան կարօտի մը կը համանի : Տարտամօրէն կը մտածեմ թէ գերազանց բան մ'է այն . միակ յոյսը , կատարումը : Կը վախնամ որ փողոցին անդիլի ծայրէն աշխարհի բիրտ սովորութիւնը երեան կ'ելլէ , երազի պէս ընելու , ատցելապանելու . դեղեցիկ ու խորին , վամուկի թերեւ ճշմարիտ բաները . աղօթքը , եկեղեցին . որոյ աղօտ ու խնկային զգայութեամբը լեցուն է փողոցը : Կարծես պիտի ուզէի որ ճամբան չաւարտէր : Անսովոր անարտաճահում մը կ'զգամ . դժկամակեցով ու կատարելապէս կ'ընեմ ինչ որ այնքան վարժուած եմ ընելու . այսինքն փողոցէն կ'անցնիմ : Կարծես թէ ամէն բան պէտք է վերսկսիլ : Անկորնչելի , վայրի , ու ցաւազին անտարբերութիւն մ'ունիմ շատ մը բաներու համար , բացարձակապէս անօգուտ : Ա՛ն , գերծնւմ , գերծնւմ , անհուն աւանդատեան մը մէջ . լեռը :

Յետոյ կը խնդամ, ու կը պաւիմ վրաս : Բայց ներսս դու կը տենչացուի անորոշ ու մեծ բան մը, յախտենապէս տենչալի : Սենեակիս մէջն եմ. ամենորեայ դաւնութեան մը մէջ : Ակամայ ու հողեին կը տեսնեմ ծաղկամանիս բանդը (jusqu'ame) . . . կը դիտեմ զայն, սրտագին, զմայլած անոր տմոյն, անորակելի տեսքին. աճիւճով ու արցունքով շինուած բան մ'է, վհկային բոյսը : Եթէ կարելի ըլլա՛ր . . . : Ամէն բան կը համառօտուի, կը նուազի՝ ընդհնամարտող այն ահագին բանին առջև որ ներումով, քաւութեամբ, սրբութեա՛մբ կարծես լեցուն անդրազոյն վիճակ մ'է, աղօտ, խորունկ, զարհուրելի՛, զմայլելի կերպով իրական. բայց կարծես թէ ընտանի վիճակ մ'է այն. երկար ատեն զգացուած, մտախոհուած վիճակ մը զոր անյուսութիւնը կը ծնի, և որու անպատում անդորրին կարծես պայմանն է անյուսութիւնը, հին աշխարհաստեցութիւնը որ հանձարեղ վայրկենի մ'անհունութեան պէս երևան կ'ելլէ էութիւնը սողորելու : Կարծես թէ, թունաւոր ծաղիկ, իմ մէջս կ'աճիս . . . : Յիմարարար կ'երազեմ ամէն աշխարհայնութիւն մեռցնել մէջս. մինակ ըլլալ. համապոյական ամայութեան մը մէջ, անասնիկներու, խոտերու հետ որ կը սարուին. սօսափիւններու, սրափումներու հետ. պարեխներու ալեշտունջ մենութեանց հետ. Աւետարանի մ'էջերուն յամբ շրջիւնին հետ : Եւ ծառայէի, կ'ըսեմ, անցորդներու, որք մտնային զիս :

Եւ բարձրաձայն կը խնդամ վրաս յանկարծ, նողկալի ծիծաղով որ կարծես թէ աշխարհի մէկ զգայուումն է. և կատաղօրէն կ'արհամարհեմ ինքզինքս. իմ ապիկար ես : Ա՛հ, այնքա՛ն հէք, այնքա՛ն թերի, այնչափ վնասակար կ'զգամ ինքզինքս

որ կ'ուզեմ վերստին, ու կատարելապէս հաստատ
գրապաշտութեան: Հորս հոգւոյն բնար շատ ծանր
է իմ գիտակցութեանս . . . :

Վայրկեանները, տրամադին, երազածուփ կը
սահին. դուրսը երկինքը վճիտ է. թռչնիկները նո-
ճիներուն մէջ կը ճուռուղեն. ի՛նչ հանդարտ ըլլալու
են հիմա մենարանները, գերեզմանները: Ի՛նչպէս
գեղեցիկ է երկիրը: Երանի անտնց որ անոր ծոցը
դարձած են. ու տիեզերքին մէջ կորսուած մենա-
րան մը կամ շիրիմ մ'ունին:

Հիմա, վերջալոյսն է: Նոճիները կը լուսաւոր-
ուին, մեղմօրօր ու հսկայ. վիրար միժագնած՝ իրենց
մեծ ստուերներուն դեռ թափանցիկ սքօղմամբ,
ուր անտնց կանաչութիւնը կը մամռտափ, հոժ ու
խափ գանգրումներով, մերթ շիկախայտուած՝ փա-
խասեայ հուրքերով որ բայուածքներէ կը ներ-
սահին, ստորին ճիւղերու պղնձաթոյր վանդակում-
ներէ, վերի ճիւղ սատախուրձերու ոսկեթել ցանցե-
րէն մաղուած. մինչդեռ նոճիները քրքմայեղց կո-
ղերով վերջալոյսին մէջ կը բարձրանան իրրե թա-
ւածալ շքհանդերձներու մէջ նափորտուած, հորի-
զոնին ծաւի եթերին մէջ ոսկեհուռ ծայրեր օրրե-
լով, կանգնած, կանգնած, հառաչալիր՝ դէպի եր-
կինքն ուր ամպիկներու հրեղէն ծխիւններ կը սու-
ղառկախին, յափշտակուած՝ իրիկունին աւիւնէն որ
շշուկներու, գոլորշիներու մէջ կը բռնկի, կը շա-
ռագունի հեազհետէ: Աւիւնը բարձունքներուն,
հորիզոններուն, նոճիներուն, բոլոր անդրհայե-
ցութեանց՝ մօտալուս գիշերուան համար որու
լուրթ անդորրութիւնը կը բարձրանայ արեւելքէն,

ստուեր արչալո՛յս յաւխտենական խաղաղութեանց տեսիլին որ լռութեան մէջ պիտի պարզուի յամբօրէն, և որու հայեցողութեան կը վերադառնան հոգիները ծիրանի երանութեամբ: Գիշերուան շշնջալիբ նախատօնն է, Գիշերամո՛ւտքը՝ նոճեաց վանանառին մէջ:


Սակայն շառ հրայրքները տակաւ կը մթագնին, կը բալին. մամուերանց ստուերը նոճեաց բարձրաբերձ վիհերուն մէջ կը խաւարի. շշնջիւնները, անօսը, յետին ճլուրլիւններով կայլակուած, կը հեւան, կը սահին վերջալոյսին հանդարտութեան մէջէն որ իրերը կը թափանցէ, որ նոճիներուն վեհաշուք հեշտութենէն կը ծծուի: Վերը, հեռուն, անոնց ծփացող կատարներուն վրայ վերջին բոսորները հիմա պիտի նուաղին: Հեռալուր խժղութեան անորոշ աւազներ կ'ելլեն ու կը մարին, կը հատնին իրիկուններու խոնջութեանը մէջ: Շշուկները հեռացած են, լռութեան անզգալի սքողումներու մէջ սուզուած: Անպատում խոնարհման մը կարծես անվախճան հծծիւնը կը սաւառնի: Մթնցան նոճիները, անհուն սօսափող ստուերի մը միութեան մէջ նոյնացան. և իրենց ծանրաշարժ ժանեցայտքը հիրային պարապին մէջ կը սեանկարուի, միահամուռ, երկնաբերձ, իբրև ցնորական Եկեացի մը համար:

Ո՛ր նոճիներ, յամբարար, ու մեղմիւ, թող գրաւուիմ ձեր մթին մեծութեամբը. ձեր աղօթքին մթին յաւերժութեամբը թող յափշտակուիմ, ժամերով, վասնզի երկար ատենէ ի վեր ա՛լ չեմ կրնար աղօթել: Կանգնեցէք, կանգնեցէք, արչալոյսին անապակութեան, կապոյտ սուրնջեան մէջ, վեր-

Չալոյսին հուրքերուն, գիշերին անագնութեան մէջ
բարձրացէք, ձեր երկնաձիգ ամբարձման զօրու-
թեամբը (puiss.) որ ձեզի կ'ամփոփէ դէպի զենիթը,
որ ձեզի կը ներանձնէ մուայլ լուսաւորեալներու
խստամբեր հայեցողութեամբ, և որ ձեր անվախ-
ձան աղօթողութիւնն է, ո՛ր նոճիներ, լաժուարիթ
վերջալոյսին մէջ բարձրացած, իբրև թէ խաւարէ
բոցեր ըլլայիք, անվերջ ելքի մը մէջ խոյանշարժ
յափշտակուած, դատապարտուած նիւթերուն մահ-
կանայութեան ձգտումով դէպի լուսաննիւթ Յա-
ւերժութիւնը, որմէ ամէն բան անջատուեցաւ,
իջաւ յամբօրէն, դիրտերու սուղմամբը, թանձրա-
ցած բաներու տրտմութեամբը. և ո՛ր պաղած եր-
կիրներուն մէջ իբրև խիղճեր, իբրև կրօնքներ կը
կայծի, անջնջելի՝ էակներուն անդրազգայնելու
համար միակ երկնային ընաշխարհի մը հեռափառ
ոլորտներն, ու պատմելու, արտասուագին թշուա-
ռին՝ ա՛յն վերիւրացումը, որով նիւթին տարածու-
թիւնները պիտի վերադարձնէ, ցյազ՝ իր լուսեղի-
նութեան., որով թերևս Աստուած իր անդրաշխար-
հին աղամանդէ մուտքը պիտի բանայ նորաստեղ-
ծելի հոգիներուն՝ բարութեամբ, աղօթքով, ինք-
նաքաւումով մինչև հո՛ն բարձրացած: Դուք, որ
նիւթին, խաւարին վերիտէանալու բաղձախտա-
ւոր ձգտումը կ'անձնաւորէք, սովրեցուցէք, դաշ-
նաշշունջ, ձեր գոթապլայ երկրաժեշտը անոր որ
անբացատրելի անձկութեամբ կը նայի ձեզի. շշըն-
ջեցէք, յաւերժօրէն, բնէական միջինդարը միանձ-
նային, մեռելական այն արհամարհանքին՝ զոր աշ-
խարհին համար ունի ձեր ինքնամփոփ ու կուսա-
կան անջատումը երկրէն: Սովրեցուցէք ինձի, ան-
հուն խոհանքովը ձեր մեղեդիին՝ հայեցողական

հեշտանքներու կատարելութեան հաւատքովը լուսաւորուիլ, ու մտնալ ինչ որ կը խթանէ, կը պահպանէ, բարէ, կը մշտնջենաւորէ իմ մարմնաւորութիւնս՝ անդադար պատժապարտ, ինչ որ իմ տխուր յիմարութեանս առջև ամէն նիւթականութեանց արգահատելի վաղանցութիւնը կը սքօղէ : Եւ պատմեցէք բոլոր նիւթականութեանց վախճանաւորութեան օրէնքը, — պատիժ ու շնորհ : Տիեզերական քունին աստղանշոյլ անդորրութեանը ժամուն՝, երբ անձանօթ ազդումներն, այերաթե, կուգան նիրհող իմացականութիւնները թափանցելու, ու զանոնք Անեղբութեան հետ հաղորդակցելու, պատմեցէք հուսկ ճշմարիտ Հանգիստին աստղալի խաղաղութիւնը . դուք որ մեռած ու վերածնած էակներ կը թուիք, — այնքան՝ յաւիտենութենէն հեռու՝ անոր սուգովը դեռ համակուած՝ անոր վայելքին երանութեան մէջ արդէն սուզուած էք միանգամայն . այնքան՝ ձեր սօսափիւնին մէջ թախիծ ու հեշտութիւն կայ . այնքան՝ հեծիւն ու փառաբանութիւն . այնքան, ո՞ր նոճիներ, ձեր շշնջիւնին մէջ իմաստութիւն կը լսուի : Ձեր ներկրօնային, ձեր աստուածաշունչ բարբառը մեծվայելուչ մեղմութեամբ թող բղխի մշտապէս ձեր խորին ներբարձունքէն, իրբև անդրաշխարհի հեռուններէ . ու Գիշերին բարութեան մէջ թող Մահուան արդարութիւնը շշնջէ :





ՄԹՆՇԱՂԸ, լքումը կը լեցնեն խուցը. անու-
րոշ, տարակուստա, ա՛յնքան որքան ինքներկա-
յող՝ կը թողում ինքզինքս արամագին սառեցին
ներշնչումներուն : Գրասեղանին վրայ, պատուհանին
տարտամ լոյսին մէջ կը ցցուի Բանգը : Ա՛հ. եթէ
իմ վախճանս ըլլար, իմ ձեռքովս բերուած դիմացս
դրուած, ինչպէս իմ պատիժս, ու երանութիւնս :
Եւ ցորչափ իրիկունը կը տարածամի, կը սուզի,
յամբօրէն՝ երեակայութիւնս կը պաշարուի ահա որ
ծաղիկէն որ անկիւնին մէջ կ'սպասէ. և անաշխար-
հային մենութեանս մէջ հետզհետէ իր ճշմարիտ
համեմատութիւնները կ'առնէ :

Կայնած է թիւրեղին մէջ. տերեւներուն կիսա-
թափանց, ծխային զօրշութիւնները տարածած .
դեղնօրակ ու հակած ծաղիկներուն խուռչը մութ :
Հանդարտ, գիտակից հեշտութեամբ մ'իր զօրու-
թիւնը կ'երազեմ, իր զօրութեանը մէջ կը մխրճիմ .
— զառանցանքի, թմրութեան, մահուան ծաղիկին :

Ի՛նչպէս զայն սեռնեղ, զայն ունենալ երազեր
էի և ի՛նչպէս փնտուեցի զինքը : Որքա՛ն դեզերե-
ցայ ամայի տեղուանքը, ճամբաներու թաւուտ եզ-

րերուն վրայ, անուանեալքերու երկայնքը մօրայած,
ցամքած առուններու վերև փոշոտ ու խառնիխուռն
շարքով դիզուած բոյսերու մէջերը, աւերակներու
տխրալի մուսցումին ու ազատութեան մէջ, լըք-
ուած, կիսափուլ պատերու տակն, ու մերթ ետին,
անծանօթ ու անկոխ՝ եր'յար ատենէ ի վեր, ուր
քուրջեր, աղբեր կը փատին, ու փուշերը, եղիճ-
ները, կռուինչները կը ծաղկին ու կը տիրապետեն,
խրամներու մէջ ուր բոյսերը կը հոծուին այլասեռ
ու շաղապատուած, անդսելի խոխոջներով ու սրս-
փումներով լեցուն, մութ, կասկածելի, երանաւէտ
խուռչներու, խոխոմներու վրայ, դալար խառ-
նազանճներով վանդակուած, ամենուրեք ուր կը
ապասէի հանդիպիլ անոր, ուր գռեհիկ տուն-
կերէն տարբեր, անսովոր բոյսեր կ'ենթադրէի թէ
կ'աճին, երեւակայելով զինքը համաձայն իր սե-
ռին պայմաններուն, և ըստ պատկերներու որոց
յիշատակը, որոցմէ մէկուն մանաւանդ յիշատակը՝
պատանութեանս, մխուած էր մտքիս մէջ և կար-
ծես հոն արմատացեր, հոն աճեր, մշտնջենաւոր-
ուեր էր, — տարե՞ր բոյսին պատկերը, — մենա-
վայրի երազ՝ զաղփաղփուն ու անցաւոր երազնե-
րու ետև յամառօրէն ուրուացած, չեմ գիտեր ին-
չո՞ւ, իբրև ամէն գետիններէ աւելի նպատաւոր
հողի մը վրայ, ներյատուկ ու մշտակայ տրամու-
թիւններէ ստուերարկուած, հիւանդագին տար-
փումներով աղբուած, — և ի՛նչպէս պիտի ճանչնայի
հիմա անոր իրականութիւնը, որու տեսքը ճշգիւ-
պիտի պատշաճէր, նոյնանար մտապատկերիս հետ,
իբրև թէ տեսած, շօշափած ըլլայի զինքը, մինչ-
դեռ ի զուր կը կքէի, ուշադրութիւնս խաւարին
թաւառներու մէջ խորասոյզ, այլևս ամենուրեք

ուր չէր կրնար բուսած ըլլալ անիկա, բայց ուր
խուզարկու մենամուտութեամբ կը կենայի, կը յամէի,
հեղուած՝ փշուտ ու ճախնային սորեհու մէջ պիծակ-
ներուն, շերտիագիներուն ազատութեամբ իջնե-
լու անկարողութենէս, թէև դիտապէս վստահ չըլ-
լայի հոն գտնելու զայն, խոնաւատէր, կուսավայրի
թփհոծոյթներու մէջերն ուր մորենիներուն փշա-
լից աղեղումները, հշգարիներէն ու կաղնիներէն
աւկախուող պարիլլեակներու խօշ ցանցերը կ'ար-
գիլէին թափանցել, և ուր, անտարբեր հերակ-
լէոնները՝ լայնատարած, ու թօշ աւելուկները,
հմուլները, սև-մեղրածուծները կը բարկացնէին
զիս, որովհետև ստուերին մէջ ընդհնամարտող այն
տերեւներն աղօտապէս կը համանցնէի սոսկալի մոր-
մազգիին տերեւներուն և յուսախաբ կ'ըլլայի, թէև
դեռ անգամ մ'ալ կը հայէի անոնց երանաւէտ ու
խռովիչ բնակետղերուն, հեռանալէ առաջ: Մ'ըր-
էր արդեօք:

Բայց իրիկուն մը, երբոր գիւղին մէջերը կը
պատէի կոր Իռենային հետ, ուշ ատեն, բերուե-
ցայ, կարծես սովորութեամբ, դառնալու հայելու
հիւզակի մը կտեւի դին, ուրիշ անցեր էինք:
Միշտ միեւնոյն անպիտան աբարբիտնները, միեւ-
նոյն հասարակ շամղիտակները: Յանկարծ Բա՛նգը
տեսայ: Ինչո՞ւ անանկ գունատեցայ, Աստուած
իմ: Ինքն էր, այո, անպատճառ, աներկբայելի
կերպով, կարծես դէմյանդիմանօրէն. բացարձա-
կապէս ինքը միայն. հիւղին ցիխածեփ պատին
տակը կանգուն, մեծ, թեւատարած, գորշ:

Ներէ որ, Իռենա, իսկոյն թեւդ ձգելով անոր
մօտեցայ. դիտեմ, խեղդ, կոշտ բան մը թուեցաւ
քեզի այդ արարքը. և թէ կանխաւ գիտնայիր, տե-

սած ըլլայիր իմ որոնումներս, պիտի չտխրէիր հիացման, հիաստուկման աղաղակէս, զքեզ ձգելէս՝ անոր նայելու, մերձենալու համար: Հեռուէն, իրիկուան ստուերին մէջէն կարկառուն ուշադրութիւնս անոր՝ եթէ ո՛չ փարումի մը, բայց հզօր ու տրտում բոյսին առջև խոնարհման մը կը նմանէր, գիտեմ: Ինձի տուած երանութիւնդ, Իսենա, ներէ որ մուցայ սարսուղի Բանգին դէմ. քեզմէ կրած տառապանքներս՝ անոր վհուկի, ճինի հմայքին հանդէպ: Իր կակուղ ու քստմնած տերեւներէն իրբև բռնաւոր հրապոյրէ մը ըմբռնուած՝ քու սև մարմնոյդ հօտը մուցայ բոլորովին իր նողկաբոյր արտաշնչութեանը մէջ, ուր ռուսգերս հակեցի կարօտալի գարշանքով: Օ՛հ, չկարծե՛ս որ անոր մօտենալու շարժումս ուրացում մ'էր քու տիրապետութեանդ, քա՛ղցր Իսենա, որ բան մը չըսիր: Ո՞վ գիտէ թէ նոյն աւիւնը որ զիս մոլի կ'ընէ քեզի՝ սիրահար չընէր նաև Բանգին. ինչէ՞ն գիտես, Իսենա, դուն որ թունաւոր ծաղիկը գտնելու ուրախութեանս չմանաակցելու, դայն արհամարհել թուելու չափ տխուր մնացիր, թէ քեզի սիրելու պատշաճ ստեղծուած հոգին անհրաժեշտ կերպով չպիտի խռովէր նաև անկէ, ու փոխադարձաբար, թէ ան որ խորհուրդներէն, անդրագոյնէն, վերջնական բաներու անհուն հմայքէն կը յափշտակուի անընդհատ՝ չպիտի պաշարուէր նաև քեզմով, մեթին կոչս: Գիտե՛ս թէ ան որ կ'երազէ վայելքը տառապանքով, խորհուրդով, սոսկումով ու զոհմամբ ընդխառնուած, հոծուած՝ պիտի սիրէր կինը մթաթեամբ լեցուն և ինտութիւնը՝ խորին, ու պակասցիչ, զքեզ, Իսենա, վամնդի ստուերով լի ես, և այս ծաղիկը՝ վամնդի զեղունն է թոյնով:

Մի՛թէ նկարագրը ինքն իր մէջ ներդաշնակ չէ, մի՛թէ արարքներուն այլազանութիւնն անոնց ազբիւրին միութեան մէջ չա՞նհետիր: Մի՛թէ բոլոր յօժարութիւնները չն՞ն վերածուիր միակ անորակելի հակումի մը և բոլոր սիրուած թէ ատուած իրերն՝ իրականութեան միակ անճշդելի սեռի մը որո՞ վերլուծումն ըլլան անոնք, թէև հակասակ թուին իրարու, թէև քու արտաշնչութիւնդ, քու արբեցնող հոյզդ, արփային ու անուառում, որ քենէ կը բլխի՞ գորովագին անուցանէ զիս, և Բանդին զինովցնող հիւթը զիս թու՞նաւորէ, թէև յաւերժակենսութեան՝ դադափարը ներշնչէ ինձի քու քաղցրութիւնդ, և դառն ծաղիկն ինձի մտածել տայ գերեզմանին, — թէև դուն, Իսենա, կարենաս զեզուլ զիս կեանքով, և Բանգր կարենայ զիս սպաննել:

Ով որ, — անկարելի անխոհեմ մը, յիմարական, զիւցազնակոյր համատուածեան մը, տունկին կանաչ ու մուգտ հիւթը կամ մանաւանդ զայն սոգորող կալեկերպը խմէ՝ կը շարչարուի, կը զառանցէ, կ'ապուշնայ և կը մեռնի: Այս ժանեւոր, քստմնած ձուէն կիզումներ, բորբոքումներ կը ծնին ընդերները տանջելու, ուղեղին մէջ անուրջներ կը գոյանան այս հոտէն. այս ընդհանուր ազօտութենէն կ'ելլէ վախճանը:

Յամբօրէն, անդառնալի բաներու յամբութեամբը՝ կծու, դառն գոչացութիւնը կը մարսուի, դատապարտութեանց, անդիմադրելի թափանցմամբը, մղձաւանջի աղէտի մը, կախարդատութեան վճիռի անուատում վերջնականութեամբն ամբողջէութիւնը կ'ընդգրկէ կը մամլէ: Տունկին ժանեւ-

գծուող անորոշութեան մէջ զսպուած թոյնն ա՛լ
զերծ , ազատ , ահագին՝ գոյութեան բերկրանքին
մէջ անասնկալ մահկանացութեան մը շլմորումը կը
տանի : Մարմնոյն կեանքի , բնական օրէնքի մաթե-
մաթիկ երանութիւնը կը ցնորի , կը հեծէ . զօրու-
թիւնը որ իմացականութեան մէջ կամք ու մարմ-
նոյն մէջ համերաշխութիւն էր՝ կը քայքայի , կը
ցնդի , չկայ . և գործարաններուն ընկերհաշտական
փոխակախումը կը վերնայ . պաշտօնները կը կրու-
ուանջատին , կ'ըստբաղդին , աննպատակ ու անի-
մասա . ելեւէջներուն , զարկերուն կշռոյթը կը ցնո-
րի , կը խուճապէ . լորձնաթաղանթները ցաւերով կը
կակծան . որովայնը կ'ոստնու , կը նողկայ . ու իր
ործումները կը կլլէ վերաստին . որկորէն վեր կծու ,
գարշահամ ծարաւ մը կ'ելլէ . օձախի պապակ մը որ
ըմբանին կը կառչի . մարդը լեզի կ'զգայուէ . աղ-
բային , շաղղային համեր կը ծամէ . մարդն իր մօ-
տալուստ նեխման համը կը կարծէ առնել : Արիւնը
հերգանկը կը մզուի . կը շեղջուի ու կը պտուտքի
հոն . գլուխը երկիւղալի ծանրութեամբ մը կը կախ-
ուի , կ'ընկրկի , շառագոյն . կարծես հողային սառու-
ղութիւններով համակուած . ու մարդը կատաղի ապ-
շութեամբ մը մտիկ կ'ընէ թոյնը որ արեւնախառնու-
թեան լոտորին մէջ մածնումին խաւարը կը շշնջէ
հիարչաւ . յետին ցամքումին , ցնդ ումին նանրու թիւնը
կը սուլէ : Էութեան ներսերէն վախճանին տաղնա-
պը կը զօղանջի : Մարմնոյն ինքնամփոփումը կ'ու-
ժասպառի . նստային , փամփոշտային կծկամկանները
կը թողուն որ մարմինը յետին ցրուումին նախըն-
թաց թուլացմամբ մը վիժի . ու միեւնոյն կծկա-
տումը կը փեռելէ բիրը որ սրտաշխարհին վրայ կը
լացուի , տարօրէն յասուումով կը նայի , կը նայ-

ուի անջրպետին . կարծես թէ ուղիք ամէն ինչ տես-
նել , Պատէւի Ոգևարին ոչինչը տեսնելէ առաջ . ,
լայնօրէն , անհունօրէն տեսնել , յաւիտենապէս մա-
րելէ առաջ . , իրերէն անդին , առաջին ու վերջին
յատակատեսութեամբ մը՝ անշարժ , անայլայլ իրա-
կանութիւնը ճանչնալ . կարծես յուսահատ հեշտու-
թեամբ մը թոյլ տար Ամէնուն՝ ջնջուող Եսին սահ-
մաններէն ներս հրոսելու , վաղանցուկ անմիտ անձ-
նականութիւնն իր թիւին ու տարածութեան ան-
հունին մէջ խորնկլուզելու , իրրե թէ Կէօթէի Ձրկ-
նորսին պէս իր ճանաչման մէջ մեռնէր : Բայց այս
բրայքը (mydr.) ուրիշ բան չէ այլ խառնատեսու-
թիւնը , բլշակնումը միայն ուր արտաշխարհը կը
կը խառնադանձի , կը փախչաի . , ուր տիկերքը ,
ցնորական , կը խուսափի ոգևարին առջեւէն , հեշ-
տալի խօշութիւններու պարանոցքով մը կը խաբէա-
նայ , և մարդը կը ցանկայ , հիացական , անոնց
կարծես անլախճան երանութեանը տարուիլ , անոնց
գիրկը վայրագ ու ողբալին առնականութիւն մը
զեզուլ . վամեզի մարմնոյն դեռ տեսելու , ափսոս ,
հինօրեայ տրտիւնը դեռ բարախելու տենչը կը
զայրագրգռի՝ անատարկայ , յիմար տրտի մը մէջ .
տեսակապահութեան խանդ՝ որ մարդու մը հնար
ու ներկի՛ ըլլայ երբեք . , իրրե թէ արատղօրէն
ու յանկարծօրէն մեռնող մարդուն մէջ յաւերժու-
բազմութիւնը յուսահատարար խանդավառէր , և
էակն ուղէր հեղուլ լիովին ինչ զօրութիւն որ դեռ
կրնար ջնջուող Եսը վերկենդանայնել՝ յաւերժու-
ցնել նոր հողի մը մէջ . , շիջումէն առաջ իր Եսին
զողզոջուն հարր ս և է , արդանոյի մը ածանցել ,
աւանդել տենչար . , կարծես համնող , համնող անէ-
ութիւնը սիրոյ պայմանն ըլլար . , ոչինչ արդար ըլ-

լար մահուան մէջ ընկղուղումէն առաջ քան յաւեր-
ժակենասութեան անուրջի մը մէջ վերջին արբշու-
թիւն մը . կարծես ոգեւար մարդն իր խեղճ ան-
մահութիւնն ուզէր փրկել : Բայց ինքնակորոյս մար-
դուն ոչ մէկ կին կը մերձենայ . ոչ մէկ հոլանի
էակ կ'իջնէ հուրիներու . օգածեմ հոյլէն , ահարկու
ոգեւարին ծոցը : Եւ մարդն իր օրհասականի տար-
փանքը կը խուկայ պարապին մէջ , խարուած , շլմո-
րած՝ վայրագ կենսայորդութենէն ուր ներգանկին
ջղակոյտին մէջ ոլորապտոյտ ու հեշտագին բաւղա-
ցող թոյնը մտածութիւնները , տենչերը կը շաղա-
պատէ , կը թրմէ . , և որ հուսկ գերագոյն ինքնա-
վայելքի մը անյաւութիւնն է , բիւրապատիկ ար-
տացման մ'ահագին հարկը . , արտառոց ու եր-
ջանիկ իմացականութիւն որ ցնորքներու մէջ կը
կոծի , պատկերներու դիպածին վերձուլմանց , ան-
ձեւ , յիմար զանգումներու , բաղադրութիւննե-
րու մէջ կը խայտայ . , որ ա՛լ չի խորհիր , քանի որ ա՛լ
չի կամիր , այլ ինքնօրէն , կոտորակուած կամեցողու-
թիւններով կ'երեւակայի , իբրև թէ քայքայման
այս աւիւնը հանդերձեալ նորաստեղծման մը մէջ
կերպաւորելի ու խաղաղելի ամբոխում մ'ըլլար ,
ներանձնային թաարին մէջ հուսկ մնջկատակ՝ ցնո-
րակոծ վերջնութեամբ . , շիջման նախընթաց լիալիր
բորբոքման մը . , շլացուցիչ քայքայում մը՝ խաւարին
տարրալուծումէն առաջ . , հողմավար ածիւնացումէն
առաջ՝ սարդանաբաղեան բնչակոյտի մը քառար . ,
Պղատոնի կոչունքը՝ հրաժարումէն , նուիրումէն
սուաջ . , ճշմարտութեան արհաւրակի ժամանումէն
առաջ ցնորքներու մէջ մոլում մը . , Արքիաթի խրախ-
ճան մը՝ կործանումէն սուաջ . , վայտակոյտին յան-
գող սապա մը . , երազներու բոյլ մը՝ դիւժանեցու-

երամին նախընթաց, շնչասպառ, յետին, մարդկա-
յին անդրատենչութիւն մը՝ հողացումէն առաջ, մտքին պատկումն անթառամներով, ուղեղին որդ-
նոտելէն առաջ, յուշերու, զգացումներու, ըզձանք-
ներու, գաղափարներու մակարեան պարը դէպի
փոսը, ծաղկայեղց բիւրդապալատ մը նախ քան փշա-
մած հողակոյսը, արիաթե ամենուրեքութիւն մը՝
չգոյութենէն, կորուստէն առաջ, իբրև թէ մարդը,
չառադէմ, ահաւոր՝ ուզէր, յետին զառխվայրին
վրայ, յղանալ անհնարին անդրաշխարհ մը, աշխար-
հին՝ որու զգայութիւնները կը դեղեւին կը փախ-
չաին, շաղղացող գլուխէն կը հեռանան անդարձ՝
և անեսութեան ոչինչին միջև առկախ տարաշխարհ
մը, իւզոբիա մը, փախուստի քաղաք մը, խելա-
յեղ, ուր դատապարտուած օրհասականը խոյանար
ազատելով մահկանացութենէն, կամ մանաւանդ
իբրև թէ մօտալուտ, քատային, անդիտակցելի,
բայարձակ ազատութեամբ մը գոյութենէն ու
սահմանէն ազատելու սիզմնաւորութիւն մ'ըլլար
այս սանձարձակումը, ոչնչացման վայելքին առա-
ջին ոստոստուն յիմարական խայտանքը, — մինչ-
դեռ անխլիրտ անդամները ցրտացած են արդէն
անէութենէն, ու հոնդիւնները կը մարմրին դա-
տարկէն, և մարդը, զանգուածային անձնատու-
թեամբ մը կը թողու թմբիրէն տարուիլ, անմուռնչ
ու անդիմադրելի օրրէջքով, դէպի թանձրացող
ստուերին անմարդաձայն լռութիւնները, նայուածքը
պաշտող, երկիւղած, վախճանին հրաշալիքէն հիա-
նուաղ, և կը նիրհէ, կը նիրհէ, կը քնանայ, անշը-
շուկ, կիսախուփ աչքը պաղած, մռայլ, շրթունքը
մոռ... — մեռած. գերազոյն յաջողութեան անյն
վերջին կերպարանքով, կատարման անյն դիւցազնա-

կան երևույթով որ յատուկ է ամէն մեռելի, և զոր սակայն Պուշիւ աւելցուցած ըլլալու չէ այն դրական նշաններուն որք մարդու մը մեռած ըլլալը ցոյց կուտան, իբրև անոնց սարսուալի թուումին պակում մը :

Ահաւասիկ գրասեղանիս վրայ է . կ'իշխէ անոր . իբրև մտախոհութեանցս, իղձերուս վրայ հոլաթե . կարծես անթաւամ : Ծաղիկներուն բալ գոգէն նուրբ, ծիրանի գիծեր կ'ելլեն ու թերթերուն ախտային սով գունութեանը մէջ կ'երակուին կը հասնին : Տերևները, լայն, փեռատ, ու լուսաղօտ, կքուն ցօղունին շուրջը կը ցայտեն : Մազոտ, կակուղ, բոլոր մորմազգիներուն տրտմային հակումովն անշարժ և ծաղկամանին մէջ, աղօտակի կանանչ, կարծես աներևոյթ, միակերպ գորշութեամբ մը համակուած ուր ծաղիկներուն ու տերեւներուն գոյները կը հալին, կ'երանգանան, և արտաշնչելով նոյն ժահոտութիւնն իր տերեւներէն ու ծաղիկներուն սև նեկտարիոնէն որ դալկատիպ թերթերուն խորը կը կորսուի : Իր դալարութենէն ու փթթումէն նոյն նեխումը կ'ելլէ : Ծաղիկներուն հոտը աղէտալի ու հիանալի կերպով մօտակայ տեղէ մը կուգայ : Իր նուաղ կանաչութիւնը ժանգառի, բորբոսի, ճախնային դալկութիւն մ'է ուր բոյսը կ'ըսքօղի, իր գոյնն ու շունչը կիսաաքօղ ու հեռագդային յայտնութիւնն են միակ ու սաստիկ էութեան մը, զգայարանական անջատութիւն մ'ունին որ նայողին մէջ կ'անհետի և մահացու ծաղիկին համութիւնը կ'ըլլայ : Իր ուժին ահագնութիւնը երևոյթի տարտամութեան մը մէջ կը քօղարկուի

ու կը տիեզերանայ . իր ազեղութեան ամոյն ներդաշնակութեանը , համասեռութեանը մէջ իրը հրապոյրի մը մէջ կը պատրուակուի իր մոլեգին կենսականութիւնը , և բոյսն այնքան ահարկու է որքան ներդաշնակ , այնքան հզօր որքան մի : Անողորքէն , երկիւղալի կերպով և սքանչելապէս ամբողջ է : Իր աղուամազին կակղութեան մէջ գիշատչային սայրաւորութիւն մը կ'ապասէ . իր նիւթին ու ժգին ու հոծ սառագութիւնն իր մեղկ երանգին մէջ կ'երազանայ , կազային , կարծես ցնդօրէն հեշտալի անօսրութեամբ մը արհաւրալի կ'ըլլայ : Բոյսը , տարտամ , կարծես կ'երկրայանայ , իսկ իր նկարագիրը կը ժայթքէ : Լիովին , և միայն՝ իր անըմբռնելի (insais.) ու սարսուզգալի գաղափարն է : Գորշութիւնն ուր իր կանաչութիւնը կը լանանայ , յետին մոխիրին համայնութիւնն է : Մաղիկները դիակի , գանկի գոյն ունին , և անոնց նեխարոյր ծակը մեռելի բաց մնացած ու մոռ բերնի մը գոյնովը կը փոսուի , կ'անյատակուի : Կարծես ամբողջովին ողողուն ու կաշուն է այն գորշասպիտակ փոշիով որ մեռելին թարթիչներուն ու ռունգերուն եզրը կը գոյանայ , և բոյսը , տարօրինակ բան , հուսկ հիպոկրատեան կերպարանին բոլոր երանգներն ունի : Սառեւրալի թափանցիկութեամբ մը՝ գորշ թեւաւոր , երեսութային , օտարական անշարժութեամբ մը պաղած՝ անհաւատալի ու անանուն բանի մը պէս կը թուի խուսափիլ : Իր յուսադօս , թեւատարած անշարժութեան մէջէն , լուութեան , կորուստի , ամայութեան մղձկեցնող անեղրութիւն մը կը տեսնանայ : Աննշմարելի է և անդիմադրելի : Մեծ կենսատեալներու մեյամազձութեան հզօր , արբեցնող պերճափօսութեամբը կը գերի , և կ'ար-

համարձե՛ , կը հմայէ , կ'ընծայուի , և վայրագօրէն
առանձինն է : Օաղիկներուն խոտոշը , անձայն , գի-
շերային ու լիաշուրթ խոստումով մը՝ ժահյեղց ու
մռայլ բողի մը պէս զարհուրելի հեշտութեան մը
վրայ կը խօսի : Անգղի պէս սաւառնաթեւ է , բոր-
եանի հակումով կարկառուն : Չես գիտեր ո՛րքէ
եղած է : Սոսկալի կերպով եկած է ան : Լուին ,
անշուք յամբութեամբ մը հիւղակի մը ետեւի պա-
տին մուսայման մէջ կատարելապէս յապահովի
գոյացած , հիակերտուած՝ հիմա այս անակնկալ ու
ցնորական ներկայութիւնն ունի , վախճանին պէս :
Դաւի պէս ներկայ է : Երկբայաղօս , հեռային բայց
անխուսափելի բաներու մօտաւորութեամբը , ճակա-
տագրութեանց վաղընջուց այժմէութեամբը ներկայ :
Մթին ու կենդանի հունաէ մը ծլած , բարձրացած՝ ,
իրբև ոչնչութեան գաղափարէ մը , ոչնչութեան՝
աննշմարելի , և համադրահոծութեամբ , ճշգրութեամբ ,
հարկաւորութեամբ յամառ գաղափարէ մը բղխած՝
եղրակացուած , կապակից , անյեղլի շքամուտութիւն
մ' է : Տաւապագին ու սաստիկ գիտակցութիւններէ
յղացուած անագին ու անընդունելի , անհանդուր-
ժելի համոզում մը , խտացում մը , համասեռուած
կարծեխառնուրդ (syncret.) մը , ու բանաձեւում մ' է
բոլոր խղղող յուսահատութիւններուն , բոլոր շնչաս-
պառող անդրատենչութեանց , վայրի ծաղիկի մը
մէջ : Օրէնքի մը անդղրդելի հանդարտութիւնը՝
անուրջի մը մէջ խառված , Եւկլիդէսի ճշմարտու-
թիւն մը՝ Բօէի , Հօֆմանի բանդադուշանքի մը մէջ :
Մահուան անխուովութեամբ անդգալացած ու մահ-
կանացութեան յոյզով մը տանջագծուող իրակա-
նութիւն մը , ամէն բանի մահկանացութենէն , ա-
մէն բանի գոյերանութեան պատրանքէն ծնած տես-

լահարութիւն (hall.) մ'է: Համագոյութեան իւրադարձուցիչ Օրէնքին կամեցողութեան մէկ վայրկեանն է՝ մահկանացութեան վիշտին մէջէն պղտորած, երեւութացած: Շորէնհատուէրի վարդապետութիւնն եւրէն հոգւոյն մէջ մզուող գինովցնող ու արիւնարբու դալուկ մը: Մահուան դորչ անձանօթն է, թոյնով լի ծաղիկի մը մէջ արուեստադրուած, խորհրդանկարուած, մեռելութեան մէջ ըզձատեալուած: Վախճանին անդրդուելի հարկաւորութիւնը՝ խոյացական ուտարտամ կերպառութեամբ մը սահմանաւորուած, և կարօտ, և բաղձախտ կողած. արբչիւ մենամոլութեամբ մը մեռելասիրութիւն կողած: «Անդղի Երգ» մը (Եղիա) անկռինչ տեսլանկարուած, Կիկերոնի ագուաւինն կռիչը՝ մեռելաբոյր լուծիւն կողած: Մշշամարմին անողորմ ծխիւն մը, ահուելի ծածկաղօթք մը: Նեխումը՝ յաղթանշանուած (en trophée): Դեին, կղեռնին ձիթենին:

Ձինքը բերած եմ սենեակս իրմով պճնելու: Ոչ մէկ հիրիկ, ոչ մէկ վարդ, ոչ մէկ մակնոյխա պիտի կարենար զարդարել սենեակս առանց անոր մշտնջենաւոր դրախտադրկութիւնը հեզնելու. առանց խաբերայ ժպիտ մ'ըլլալու. անոր ստուերին մէջ զոր Ամբաութենէն վշտագին էութիւնս կ'արտադրէ, և զոր նոճիներն իրենց մեծ շուքովը կը պահպանեն, մի՞թէն Վեստեաններ, Սենեակին միտախքականութեան մէջ հրէշադժուած, տեսլահարութեամբ ցնորուած խաչի մը պէս կը կենայ. անձանօթ, դրական, անգիտակցելի խռտալի մը պէս կ'անդրանկարուի խուցին արտում խռտաղաչաութեանը մէջ: Եւ ինքը միայն, թուհաւոր վայրի ծաղիկը կը վայլէր որ ցցուէր,

ուրուանար հոն , զխմացս , եթէ ո՛չ Սոկրատի մուշ-
խինդը , եթէ ո՛չ մեզա՛յ , եթէ ո՛չ Փշապասակին
Zizyphus spina Christi , իբրև մարդկային թէ մար-
դազանցող անուրջներու պատկման մը , իբրև ամէն
մարմնաւոր անդրաստեճի բնական , ճակատադրա-
կան հատուցման մը տեսիլը :

Վասնզի իր ներկայութիւնը պտոյտ կուտայ
ոգիւպաշտութեան , իբրև թէ վի՛ն մը ըլլար : Իր
բոյրին նողկութիւնն անդրաշխարհը կը ողտորէ ,
կ'երկրայայնէ : Բանգը դիտողը կը խորհի , սարսը-
ռալով , թէ մահը աղօթրան չունի :

Ինչպէ՛ս կ'ուզէի հաւատալ քեզի , Բանգ , որ-
պէսզի ա՛լ բան մը փոյթ չընէի , ո՛չ իմ անբարո-
յութիւնս , ոչ ուրիշներուն , որպէսզի եպիկուր-
եանի մը դաւանանքն ազատօրէն նախամեծարէի
Եպիկուրի հոգւոյն , որպէսզի Լօթիի՝ հաւատքէ դա-
տարկ իմացականութեան թափառասէր , ամենաբաղձ
զղայամուտութեամբ , — ըստ իրեն , կամ Լըմէթուի ,
— քմհաճոյքներու , կիրքերու անփոյթ , պայրընեան
անյագութիւն մ'ապրիլ կարենայի , որպէսզի ամէն
բան վայելելու արհամարհանքն ունենայի ամէն բանի
համար , կամ որպէսզի կարենայի մեռնիլ , անհա-
ւատ սնճնասպանին խորին , անբացատրելի հեշտու-
թեամբը , ամէն վայելքի մէջ անդրանկարուած ,
խտէալուած , խանդաղատանքով քիչ մ'եւս յամեց-
ուած : Կ'ուզէի լիովին համոզուիլ թէ մահը կեան-
քին վախճանն է , թէ այս մարմինն է կենդանու-
թեան ու զիտակցութեան միակ պայմանը , այս
տխեղձ մարմինը՝ որու այնքան քիչ համեմատա-
կան կը թուի հոգին , և որմէ զերծանելու յաւեր-

ժախան քաղձախտի մը միայն կը վերածուին քոյր տենչանքները : Ի՞նչպէս կ'ուզէի միանգամընդմիջաբմբռնել անարշալոյս մահը , աննպատակ , նաև կեանքը՝ հանձարով իսկ լեցուն՝ և դեռ աննպատակ : Վասնզի երբ անմահութիւնը երազ մ'է՝ կեանքը տեսլահարութիւն է միայն : Ա՛հ , անմահութեան երազին մէջ դէժ իմացական բան մը կայ , մինչդեռ խտէալէ , անդրատենչութենէ , Աստուծմէ թափուր կեանքի պէտքին մէջ՝ լոկ սկզբնական անանութիւն մը , կոյր , բիրտ , երանաւէտ : Հաւատացեալ մարդկութիւնը եղբայրութիւն է գոնէ տեսապէս . մինչդեռ Աստուծմէ զուրկ ընկերութիւնը անհանդուրժելի իրերանմանութիւն մը . և թերևս ա՛լ աւելի անհանդուրժելի իրերօտարութիւն մը : Այն ատեն հարկ չկայ այսքան ըղձալու , տառապելու , այսքան զրկուելու : Այն ատեն , ո՛ր դրապաշտութիւն , ո՞չ ապաքէն յիմարական լաւատեսութիւն մը կ'ըլլայ քուկդ՝ բմբռնած ապագայիդ , անմահութեանդ մասին՝ սերունդներուն յիշողութեանը մէջ կայացած , երկարաձգուած , իբրև ծիծաղելի , ողորմելի յաւիտենութեան մը մէջ ուր մարդկութեան օգտակար իմացականութիւններն յարակային և որու սակայն հաւասարապէս կրնան արժանանալ չարերը՝ բարիներուն չափ անկորնչելի՝ անգամ մը որ անագին ըլլան : Ո՞չ ապաքէն այն ատեն բարոյականն ա՛լ մարդկային յղացում մը կը մնայ , աւելի քան երբեք ցնորական , և Սրէնքը՝ տարակուսական , արհամարհելի ուժ մը , քանի որ Յաւերժութենէն դուրս լացած բարոյականի մը չի յենուր այլ ևս , կամ անոր յայտակերպումը չըլլար : Ի՞նչ միսիթարութիւն , ի՞նչ նպատակ կրնան արդեօք ունենալ այն ատեն գիտնալը , սիրելը , ապրիլը , մարդուն մէջ՝ որ անդի-

մադրելի կերպով կը գիտակցի իր զրկանքներուն , մեծ մարդկային զրկանքներուն աստիճանին : Ով որ կը խորհի պէտք է մեռնի՞ ուրեմն . որովհետեւ այն ատեն մտածումն ու կենցաղը չե՞ն հակասեր իրարու . կենցաղը՝ մարմնապէս կաշկանդուած , մտածումն՝ իր բնութեամբ սլացական , և ո՛չ մէկ երեւակայելի թեւատմամբ սկիզբներուն ու վախճաններուն սաւառնելէ հրաժարող , և սակայն այլեւս ճարտարագործութեան մէջ սահմանափակուած , առանց լիաճանաչման , լիավայելքին յոյսին՝ կեանքի սահմաններէն դուրս : Երբ մտածման էութեանն համեմատ կեանք մը չկայ բնաւ , կա՛մ պէտք է անասնոանայ կամ մեռնիլ : Եթէ վայելքի , փառքի , գոյութեան երկրային պէտքերը զառածումներ կամ խարխափումներ չե՞ն գերաշխարհայնութեան , երանութեան , յաւերժակենսութեան բարձրագոյն վիճակներու՝ չեմ կրնար երեւակայել թէ ճարտարագործական ի՛նչ առաւելութիւն կրնայ հրապուրել զմարդ ապրելու երկրագունդին վրայ , ուր ա՛լ երկրաբանական դարերուն կը վայլէ վերադառնալ և անմարդահետ թանձրամայրիներուն կենդանականութիւնը յարուցանել : Կ՛ուզէի հասկնալ թէ կարելի է տիեզերքն ընդհնջմարելէ ետքը զայն չընդգրկել անհուն , անթառամ տեսողութեամբ մը . , աստղայի գիշերը տեսնելէ ետքը չամբառնալ , վարսամաթե՛ւ չխոյանալ անջրպետներուն մէջ . , թե երբ պաղատագին տարածելէ ետքը՝ չսաւառնիլ երբեք . , աննիւթականութեան սրբութիւնը յղանալէ , հեռազգալէ ետքը նեխելով կորսուիլ . , բոլոր գեղեցկութեանց , բոլոր մեծութիւններուն մէջէն , սիրելի էակին մէջէն , ընդհանուր գաղափարներու ահագնութեան մէջէն Անհունութիւնը , ճշմարտու-

Թիւնը միայն սիրելէ ետքը , սուտի պէս անէանալ . ,
տառապանքներու և հեշտութեանց մէջէն՝ , լեռնե-
րու վրայէն , գիշերին մէջ , համաստեղութիւննե-
րուն ու ալիքներուն մէջ՝ սրտագին , սարսուղին
զՍտտուած կանչելէ ետքը անդամ մը չընդհնմարել
զայն , գո՛նէ խոժուաղէմ , գո՛նէ մերժող . , կ'ուզէի
գիտնալ թէ այս թշուառութիւնը կարելի է , թէ
ուրեմն այս թշուառութիւնը կայ միայն . , այն ատե՛ն ,
ահաւասիկ , պէտք էր ճաշակել զքեզ , մահուան
գեղեցիկ ծաղիկ , և հրաժեշտ տալ կեանքին .

Էհ , մընաք քարո՛ւյ , Աստուծ եւ արեւ . . .

Եթէ Գեղեցկութիւնը բանաստեղծին մէջ ըն-
ծայումն է , նախագգացումն է Ճշմարտութեան , և
եթէ նոյն իսկ չէ՝ ես , գուցէ հէք անասուն՝ իմ
անուգած առարկայականութեանս անբարոյութե-
նէն նախամեծար կը համարեմ հօրս արցունքը եկե-
ղեցւոյն մէջ , թէեւ երեւակայե՛մ իսկ թէ վերջին
օրուան մէջ Անեղբութենէն արքայասանելի «Երթա՛յք
յինէն» աղաղակին մէկ շեշտն ես դուն , Բա՛նդ ,
մեռելութենէն , նիւթականութենէն արձագանգ-
ուած , հրաւիրացած :

Սակայն մօրս ծանր ոտնաձայնը կը լսեմ որ
սանդուխէն կ'ելլէ . . . յամբօրէն կը մօտենայ . մայրս
սենեակիս դուռը կը հրէ . . . խունկին հոտն է , կի-
րամուտքի խունկին , Մահուան հոտը : Նորէն հա՛յրս :
Եւ ծուխը կը թափանցէ սենեակիս միժնշաղը , յոր-
դանդայտ , անուշաբոյր , հե ի հե կը ծաւալի հոն ,
մինչդեռ մայրս , արոյր կրակկայը ձեռքը , կը հե-
ռանայ , անձայն , վերի յարկը ելլելու , ծանրաքայլ ,
իր ծերութեան քայլին խոհուն և հիմա երկիւղած

կշռոյթովը , խոունկը տունին մէջ տանելու տակաւին :
Եւ մութ սենեակս , ու մութ տունն՝ անուշ , մե-
ռելական , անաշխարհային երազանքով մը կը լեց-
ուի , խոունկին անհուն զմայլմամբը կ'արբենայ լուիկ
խաւարին տունը : Ահ , իմ քաղցր մայրս , հաւատա-
րիմ այն ակնածանքին զոր իր Այրին համար ունե-
ցեր էր այնքան համեստութեամբ , այնքան բնա-
կանօրէն , անոր պատկառելի առնագեղութիւնը
ճաշակելէ ետքը հիմա անոր մահը , քաւումը , եթե-
րացումը կ'երազէ , ու կ'զգայ , իր այրիութենէն
վշտագին ալեւորութեան մէջ , Մեռելին պատան-
քին սպիտակութիւնը , լուսաչու ննջեցելոյն հե-
ռաւոր նշուլումը շնորհի մը պէս , աստուածգիտու-
թեան մը պէս ընդունած իր ճակտին շուրջը , ան-
բծութեանը մէջ իր հոգւոյն որ մահուան սրբութիւնը
կ'ըմբռնէ , մեծ ննջեցեալին գաղափարին մէջ ինքն
սլ անաշխարհայնացած , իբրև օժմամբ մը , լուի-
եայն և էովին ու անդիտակցարար քահանայա-
ցած , վասնդի երկար ասե՛նէ ի վեր սրբացած սէրը
վաղընջուց սիրելւոյն մահէն ետքը պաշտամունք է
միայն , Աստուծոյ խորհուրդին խառնուելու գացած
մեռելին ետեւէն երազուն , — աղօթք , խոունկ ,
հաղորդութիւն : Եւ ծուխին քաղցրութիւնը , խոուն-
կին երկրաժեշտի անպատում երանութիւնը կը զե-
ղու տունին , սենեակին խաւարին մէջ . և Բանգը
կ'աղօտի , կը մշշասքօղի , մռայլ ծաղիկը , կարծես
խուսափած , հալածական : Խոունկին բարութիւնը կը
թափանցէ հոգին : Ննջեցեալն է , հայրս , մահուան
խորհուրդին մէջ իտէացած , մօրս հոգւոյն մէջէն
զգացուած , որ իր նախնի տունէն , իր ընտանիքին
հէք երդիքէն կուզայ կ'անցնի՝ մահուամբ երկնա-
խառնուած հայրութեան թերափի թեւաւորմամբ իր

ընտանիքին վերեւ որու այս աշխարհի կեանքին տրամութիւնն ինքը միայն կրնայ ըմբռնել, ա՛լ զերծ անկէ, և որու խաւարէն, այլասերականութենէն՝ հեռագգացուող քաղցր ճշմարտութեան մը, անտրակելի ու անհաւատալի հեշտութիւններու ստուգութեան յոյսը կ'անցունէ: Հօրս ուժգին լեզուն, մահուամբ մեղմացած ու նուիրագործուած, նոր, լուռ, գերագոյն շեշտովը խուսկին նուազուն ամբարձման, վերին ու յաւիտենական բաներու վրայ կը խօսի, վեհարբշիւ հանդարտութեամբ մը սաւառնելով, կարծես անջրպետին մէջ անդրմեռելական գաղափարին, իր տունին միջնադը, իր տղուն թախծութիւնն իր մեռած հօր սրբութեամբը միգամածելով, և մահուան անընդխառնելի, անպղծելի զերծութիւնը խորհրդածիւնով անմահ անդրհայեցութեան տեսաշաւիղին մէջ, երկնապատում, հայրենախառային ա՛յս տեսլահարութեամբ, որ անդրաշխարհի երանազեղ ստուգութեան երազուն զարթումը կ'ըլլայ երկրայատանջ բանականութեան մէջ: Ա՛հ, մա՛յրիկ, գիտե՞ս ինչ կը բերես ինձի: Կը շնչեմ, տրտմագին կը ծծեմ խուսկը, քառումով վերացման գաղափա՛րը զոր մայրս խընկամանին մէջ կ'այրէ՛, իբրև իր սրտին մէջ, անձնազոհ հոգիներու երկնայնութեան մէջ անմեռ երազանքը զոր կը բերէ ծաւալելու խաւարամած խուցին մէջ, ուր սեւ մեղաւորը կայ ... իր տղան, իր հրեշտակի էութեանն ու խնկացած ննջեցեալին՝ խուսկին աղան, նողկալի տարակոյսներուն մէջ մարդատեսաց ու անզօր, իր հողւոյն թշուառութեանը մէջէն մօրը երկնային հողւոյն ըղձալով, — մինչդեռ խուսկը, իր երկնամոյն շաւղին վրայ կ'անուարի, կը հեռանայ, մահուան աղատութեամբը կ'երթայ

յամբօրէն , քան զցր կասկած անորակելի անդրագոյն
բաներու , որ կը լքէ զիս տակայն վերստին տարա-
կոյսներու յամառ , անխարատելի տարտամութեան ,
մեղքերու և տրտմութիւններու ազան մթնշաղ , —
այնքան , ախոսս , կարճատե ու ցնորական է կեն-
ցադին մէջ երկրաժեշտին , աննիւթացման երազը ,
զոր ցնդող խունին իր ետեւէն շղարշուած դեռ
վայրկեան մը կը ծփացնէ :

Հօրս պատկերին շրջանակին անցուած՝ ուր յա-
ռած եմ տակաւին՝ Ֆեփրէնին պատկերն անորոշա-
պէս կը շեշտուի : Եւ նորէն , թունաւոր ժխտում-
ներէ ճանճրացած , ճանճրացած նաև , աւաղ , քաղցր
ու չհամոզող յոյսերէ , նորէն կը տարուի երեւակա-
յութիւնս , անոնց , Բուրգերո՛ւն յիշատակին . կար-
ծեա անոր համար որ անոնց մեծ ու դարաւոր աստ-
ուած պաշտութենէն ժխտամէտ միաքը սպասած է
և դեռ անորոշապէս կը յուսայ թելադրուիլ , զըր-
կուածներու ծարաւի ու վհատ հայտուածքով , — և
վանդի բանաստեղծն անկարող է բոլորովին ժխտու-
լու : Բանդ , քու նոյն իսկ սքանչելապէս ողջ դրա-
պաշտութիւնդ չի բաւեր բանաստեղծին . և կը նա-
յիմ Բուրգերուն յիշատակին , անոնց նոյն իսկ մե-
ռած ու ժեռօրէն անշունչ ողկապաշտութեանը :

Անցեալի իրերէն տրամադրուած խեղճիմայ մը
արդէն ինձի մտածել կուտայ միշտ անոնց ցորչափ
կ'երեւակայեմ հօրս մահը , որուն ներկայ չէի . , անոր ,
երբեմնի ահագին մարդուն վտիտ , եղկելի ոգեւարը
զոր չտեսայ երբեք վանդի Եգիպտոս էի : Կարելի
ըլլա՞ր ինձի , կ'ըսեմ , Եգիպտոս ըլլալ նորէն , ու կի-

զէի աւազներուն մէջ մինակ, թէև առիկա աւելի անհնար է իրապէս ինծի պէս աղքատին՝ քան իմացականութեան ընդխառնուած և ալ անոր հետ տարրուած դրականութեան մը բարձունի, այերացումը՝ վերջնական ու անապական ոգեպաշտութեան մը մէջ որ չի կրնար բղխիլ ինձմէ, հոն, Բուրգերուն տակ, ուր երթալու համար մեկնեցայ իրիկունն իսկ այն տարօրինակ օրուան ուր հօրս մեռած ըլլալն իմացայ, պահուելիս՝ իր վերջին վայրկեաններէն հեռու, իր ալ յաւիտենապէս անկարելի ոգեւարին սոսկումէն ու հիացումէն զուրկ, և անժառանգուած՝ իր պաղ ու մեռնող և ալ օրհնելու միայն կարող ձեռքին յետին դողդոջման տակ իմ գլուխս, իմ երիտասարդութիւնս հակելու ալ իսպառ անստահալի յուզումէն, որ թերեւս իր օրհասական հօր հոգիէն զիս թափանցող վճռական հերդործութեամբ մը, խառնաչփոթ, խառնածին, բանաստեղծի կարծեխառնական իմ էութեանս ալ անյեղլի խաղաղուն ու միութիւնն արտադրէր :

Այն տրամութեան մէջ, — խորին, մեծ, առաջին անգամ ըլլալով ա՛յնքան ահագնօրէն իրական, գրեթէ նիւթային, թանձր, ու խղղող, որու զօրութեան յուշքը զիս կ'ապշեցնէ, կը հիացնէ, իբրև թէ Աստուծոյ մէկ զարհուրելի կամքն ըլլար ան իմ հիքութեանս վրայ լեռնացած, այն տրամութեանս մէջ ըզձագին որոշեցի այլևս երթալ Բուրգերուն, հի՛ն, հի՛ն երազ, որ աւելի քան երբեք պէտք մը կ'ըլլար յանկարծ, ալ տաղնապիչ՝ իր անաչխարհայնութեան բոլոր կորովին բարդուող այս մահուան դառնութեամբ, և որ այլևս, տարտամօրէն ու միաբար զգացած ըլլալու եմ թէ Աստուծմէ և հանդերձեալ յաւերժակենսութենէ մը

զրկուած՝ ու հօրս մահուան ճշմարտութեան տակ
ճնշուած սրտիս մէկ պէտքն էր յաւիտենութիւնը
երազգայն՝ Բուրգերուն դարերէն, փոխան —
տխտ՝, փոխարինում, — փոխան այն յետմա-
հու. յայտանդիման լիատեսչեան որու կարելիու-
թեան սարսուռն ի դուր մերթ կը սահի կ'անցնի
ինձմէ, և անոր թերեւս այնքան հիմնապէս անար-
ժան ըլլալս կ'երկրայայցնէ. . . — Ժխտման վախկո՛տ
վայրկեաններ — , և կարենալն՝ հանդուրժել մելա-
մաղձութեանս , հօրս մահուան չափազանց տառա-
պեցնող ահագնութենէն խուսափելն՝ Բուրգերուն
ամբարձական ու անհուն մեծութեան հայեցողու-
թեանը մէջ , մեծուքեան երսնաւեհ գգայուքիւնը
պահելով անոր յարաբերական արժէքը միայն փո-
խելու , որովհետեւ զիս սգազգածող լուրին մեծու-
թիւնն ինքնին զմայլելի էր ու ինքնին խաղաղե-
ցնող , ինչպէս ամէն անոմանրամասն ու համասեռ
մեծութիւն :

Բայց ինչպէ՛ս հօրս մահուան վշտագնութիւնը
կը դոյզնանար անոնց առջև , անոնց ընկլուզիչ մե-
ծութեան մէջ ուր իմ բոլոր Եսովս կ'անհետէի :
Անոնց ներքե՛ւն էի ուրեմն , հոն , Եգիպտոսի անց-
եալին մէջ , հայելով , խելակորոյս՝ անոնց ահա ներ-
կա՛յ իրականութեան , աւելի քան երբեք ըմբռ-
նուելէ զերժ , երեակայութենէն հեռու , կարծես
գերամարդկային , ու անեղ : Ի՞նչպէ՛ս կասկածած չէի
բնաւ թէ որքան թերեւս կամք , անձնիշխանու-
թիւն հարկաւոր էր կարենալու համար անցնիլ
անոնց առջևէն , ու անոնց ամբաւ դերեզմանակա-
նութեան հայիլ կարենալու համար՝ առանց վախ-

Նալու կամ տեսլահարելու . , կարենալու համար
անոնց ներկայութեանն ազատ ըլլալ՝ դիւրին յանկ-
մամբ մը պատշաճելով անոնց անօրինակ տեսիլին .
թէ որքան կորով՝ անոնց ահագնութիւնն ըմբռնել
կարենալու համար : Կարելի՞ էր կասկածիլ նախապէս
թէ զանոնք ըմբռնելն արիութեան գործ մ'եղած
ըլլար . ի՞նչպէս բնական թուած ըլլալու էր ինծի
ընդգրկել զանոնք , հանճարեղ տեսողութեան մը
մէջ , որու հնարաւորութեան կարծես գրաւական
կ'ըլլար զանոնք տեսնելու այն վաղընջական՝ կար-
ծես անծին աւիւնը , չեմ գիտեր ի՞նչպէս , ե՞րբ
մտքիս մէջ գոյացած , որ վերջապէս զիս անոնց
ոտքը մղեր էր : Ահաւասիկ կը տեսնէի , կը գիտնայի
կոր անոնց մեծութիւնն , այլ մանաւանդ իմ հիքու-
թիւնս . իմ բոլոր մեծամեծ վիշտերուս եղկելի ոչն-
չացումը : Դիմացս , վերես կանգնած էին , անհա-
ւատալի . և Բուրգերն էին :

Տաժանագին ելլելէ վերջ աւազուտ դահա-
ւանդէն վեր , ուր քայլն , անհատտատ , կը մխրճէր ,
և քայլափոխը , դժուարին , կը ծանրանար . , տաք
չողչողուն աւազին մէջ որ խժալով կը փոսուէր
ոտքերուս տակ , ու շարժելու ազատութիւնս կը
զսպէր , իբրև թէ ամէն ինչ հոն գործակցէր մարդը
կաշկանդելու , որովհետև անհնար էր հոն յամր
չքալել : Սե՛ծ բաներու տեսարանին մէջ . , կարծես
նա՛և պայծառ միջոցին անորակելի թանձրութեանը
մէջ , դարերէ ի վեր բարդուած ու հոծուած նուխ-
րականութեան այն հեղձուցիչ անջրպետին . , —
ելլելէ ետք աւազուտ դահաւանդէն վեր՝ , ահա
միւսնայն ատեն կը տեսնէի կոր դիմացս՝ յառնելն

Սփինքսին . իմ մտքիս տարիներուն մէջ կարծես
անսկիզբօրէն ու առասպելօրէն անըջացած Սփինք-
սին . եղջերուաքան զը Շաթլէի աղբիւրին չորս կճեայ
լուստիայլ սփինքներուն ա՛յնչափ հայա՛ծ աղքա-
տութեանս , անտուալ ու սղաւոր աղքատութեանս
բոյոր թշուառութեամբ սիրուած , աղերազ-
ուան՝ իբրև աղատարար կերպարան մը՝ հեռունե-
րու խտէական մէկ բնագաւառէս զիս իւրակոչող ,
հոս , սա ազներուն մէջէն , դիմացս , լուսեղէն արև-
մուտքին մէջ ամպացող ստուերի մը պէս թերա-
նկարուած , երեսը արևելքին , ապարօշին կոտրած
կարճատուած վիժակներուն աջուձախ կարկանդե-
րուն միջև այանող և ուրուացող դէմքը շքեղ խըն-
կազոյն միջոցին մէջ , ճակատին խորտակուած ուրէ-
ուան ու իր ունջատ , խոշտանգուած կերպարանին
աւերը խաղաղ շրթունքով մը կապալծող (acco-
lant) ժպտին դարաւորութեամբ անեղբութեան
մէջ երազուն , անոր գերաշխարհային ճանաչմամբ
հիանչարժ . Ոգին՝ որ ամէն եզիպատականութենէ
աւելի՝ երևակայութեանս իբրև Եզիպատան իսկ
ներկայացեր էր . ինչպէս հիմա տաղներուն ու
բուրդերուն մէջ մինակ , բանդագուշական Եզիպ-
տայի՝ կ'զգայի թէ անհեա , ընդաւազեալ Եզիպ-
տոսին Հանձարն էր , խորհրդաւոր , որ զինքը ծնող
Քաղաքակրթութեան անհուն աւերակէն վեր , հե-
ռուն , իրերէն ու իրողութիւններէն անդին կը յա-
ռէր իր ամենագէտ ամենակալութեան գերազոյն
ժպտովը :

Ետևէն , արևմուտքին ակնախափոյ արծաթա-
փայլութեան մէջ որ կը շլացնէր զիս և ստուերալի
Սփինքսը կ'անշրջազծէր՝ հեռուն՝ Քերրէնի եռան-
կիւնը կ'ուրտանար . և սողին , հիւսիսին մէջ կ'ըն-

կրկէր ամբառ Քէոպսը , Քեփրէնի հօրը բուրգը , աւալի տարտամօրէն շողուն ու մուգտ դեղնութեամբ մը , կարծես հին սակիի շիկութեամբ մը պայծառ , իր անխաղարիսպին հզօր ելեւելքով կապոյտ անջրպետին մէջ մխուած , իր քարհատորներուն հուժկու համակարգմամբն ու հեռազանգումով՝ միահամուռ յետսամբարձման մը մէջ , իր կարկառներուն ու խուռոչներուն բոլոր անձայնութեանց միակ զարհուրելի լռութեամբ երկինքն ի վեր հոյացած , յափշտակուած՝ Քէոպսը , ցնորական , միջոցին մէջ նուազելով կարծես անեղբութեան մէջ հեռանկարուած , աւազներուն մէջ խլրտող իմ վարի հէք յուսահատութենէս անեղօրէն վեր , անդին . . :

Այսպէս , Եգիպտոսն էր , շէկ , լուսողող , ահագին , շուրջս , վերեւ : Ամայութենէն դեփիւռ մը կ'անցնէր , յաւերժհարսնային կարեկցութեամբ մը քաղցր : Անապատին մէջ Անցեալին լռութիւնը կ'իշխէր : Եւ Բուրգերը կորած Եօթնաքաղքին մէջէն կը կանգնէին դարերէ ի վեր , ու սպասելով դարերուն : Տելդայէն Թերայիդ ծաւալած աւերներն ուր Եգիպտոսի քաղաքները կործաներ , աւազախառնուեր էին՝ զանոնք չէին կրցեր սասանել : Ադոնայիի վայրենաշունչ կամքը «ի Մակդովղայ մինչև ցՍուհէն» ու Լիբիական ամայութիւններէն մինչև կարմիր Ծով արշաւեր էր հազիւ անոնց հպելով : Եւ Եգեկիէլ գուցէ իր տեսիլներուն մէջ կ'ընդհնմարէր «հպարտ» Եգիպտոսը խորտակող յուզումներուն մէջէն , հեռուն , ապագային մէջ Բուրգերուն անխրվիրտ ամբարտակուիլը , քաղաքներէն գերիվեր , զաղփաղփուն փառքերու ճակատագրին անմատոյց :

Քաղաքակրթութեանց ամէն ժամանակներու ձեռակերաններուն բոլոր չափերէն, տեսակէտերէն դուրս՝ մենաւոր ու կատարեալ՝ կը լեռնանային բոլոր մեծագործութիւններէն վեր: Ուրիշ բան մը չկար հոն, բայց միայն իրենց անագորոյն մեծութիւնը: Անագաան ուր առանձին էին՝ բոլոր մարդկային յղացումներուն լռին տեղատուութեամբ մը սրբունի էր անոնց առջեւէն:

Վասնզի կարելի չէր երեւակայել թէ ինչ էին անոնք, — քանի որ տեսողութիւնը կարօտ է երեւակայութեան, — և հասկնալ անոնց ահագնութիւնն՝ անոնց չափին ռամիկ ծանօթութիւնն ունեւալով իսկ: Անոնց բոլոր չափերը, որոշ, սահմանաւոր՝ ներդաշնակուած էին ցնորակերտելու այն անսահման բաները որ Բուրգերն էին: Ո՛հ, թիւերուն ըրածն ուրիշ բան չէ այլ բաղդատելի ընել զանոնք, անոնց անօրինակ գեղեցկութիւնն, անոնց գերազանց Արուեստը: Անոնց համադրոյթը անհեթեթ կերպով աւելի էր անոնց ծաւալէն. միթէ չափելը դատե՞լ է. մի՞թէ կշռելն ընդգրկե՞լ է. գիտունին կարկինը չէ որ հարկ էր հոն. հապա տալասի մը գրկաչափը: Անոնց համադրոյթն աւելի քան երկրաչափական էր. այսինքն եգիպտական, այսինքն եգիպտօրէն ասիւզերական:

Եւ աշխարհի բոլոր ճարտարապետութեանց շարքերն իսկապէս քայքայական եղափոխութիւններ կը թուէին, այլատարրութեանց միացման յաճախ անմիտ բռնագործութիւնը, բիւրագանութեանց դժուարին ու անմատչելի ներդաշնակութեան ուրուագծումներն, անաւարտելի: Չեւրու բոլոր այն բարդութեանց մէջ աւերակին քայքայումը, փլուզումը կ'զգացուէր, քերեւս որովհետեւ կիրփերու յոյզը: Ծո-

խաթիւնը կործանման ժպիտն է : արուեստի քայքայ-
յալանութեան խարխախումը դէպի ամբողջութիւնը,
մինչդեռ, անբաժանելի, անայլայլելի՝ անյեզլի՝ Բուր-
գերը զանգուածներ էին, իրենց ձեին ներշատուկ
անքակտելութեամբ : Միութեան վճիռ, հզօր սրբու-
թեամբը, տարօրինակ բան, կը ներկայէին Միու-
թեան արդարութիւնը : Ներդաշնակութեանց մէջ
տիտուած, բազմարտայայտուած ու թաքուն Միու-
թիւնն իսկ՝ բիւրեղօրէն զատուցուած, ու կրկնա-
բերձ : Իրենց ճարտարապետութեան ստեղծագոր-
ծական, ազատ տարրը, — անոնց արուեստը՝ իրենց
անաչառօրէն չափական տարազայմանութիւնն էր :
Կը տեսնուէր թէ ոչ մէկ ազգ կրկրաչափութիւնն
ըմբռներ էր այնպէս ինչպէս Եգիպտոս իւրացուցեր
էր զայն : Ինչպէս զայն մինչև աստուածդիտութիւն
բարձրացուցեր էր Եգիպտոս : Յղացեր էր, եթէ չէր
ստեղծեր զայն : Չեի և իմաստի ահեղ, անկարելի
ձուլմամբ մը, որ Բուրգերուն չափազիտական պատ-
կերը կը վերարկեցնէր կը յատկացնէր անոնց իմաս-
տասիրութեան, իբրև թէ անոնց իմա՛ստը իւրա-
կերտած ըլլար զայն՝, Բուրգերն անփոփոխելի կա-
տարելութիւնն էին : Վարը, իրենց ուրբին տակ
կրողուն մտածումը թէ, յա իտե՛նական էին անոնք՝
կուգար ոչ միայն անոնց անչարժ գարերէն, այլ
նաև անոնց անըմբռնելի լրտ մէն, որ աշխարհի չորս
կողմերէն ելլելով գենիթին մէջ կ'աւարտէր :

Անաստատին մէջ ոչ ոք կար . Հարստութիւննե-
րուն ու Քրմապետութեանց ու թօթի պատկրա-
կոյաներուն մեծապանծ գօրութիւնը հետախաղաղ
աներևոյթ եղեր էր : Վիթխարի ամայութեան մէջ
մինակ՝ Սիինքսը կար . սպառած թաթկերը սախ ծի-
աչքայտականութեամբ մը դու գտուած՝ իրանին վա-

զընջուց հանգիստը անապատին մէջ խորածգած՝
անխմանալի, յայտնային (apocal.) մեհակեաց՝ հոն
կը բնակէր. և իր Քաղաքն էր այն :

Վասնզի ո՞չ ապաքէն Սփինքսը Ողին իսկ
էր Եգիպտոսի որ Նեղոսի ափանց վերև թեւածող
եգիպտահաւէն մինչև քրմային աննիւթական Օսի-
րիսին սաւառնումն Սմէնէն գերիվեր՝ կ'ըմբռնէր
տիւղերքն իր ամբոխին և քահանայապետութեան
միահաղոցն իմացականութեամբ, — ահագին բա-
բախուն իմացք որ սողուն ու թռչտուն համաստ-
ուածութեան մը մինչև միաստուածութիւն ամբար-
ձումն, արփացումը կը բովանդակէր, Եգիպտո-
սին՝ ուր տգիտութիւնն աստուածգիտութենէն ու-
նէր իր թանձր ու սահմանափակ բաժինը, և տիրա-
պետող Միտքն՝ իր վերացեալ ոլորտը, ուր արժա-
հաւորութիւնը՝ չափը կ'ըլլար հոգիներուն՝ Խոր-
հուրդին մէջ ելքին, ուր ընկերութիւնն արդար,
բնակիւն դասակարգութիւն մ'էր որ Բնութենէն
մինչև Աստուած կը ձգուէր, ուր քրմապետու-
թիւնը գիտէր համարդկային խուժանին գա-
ղտփարական անջրպետներու չպատշաճող թանձ-
րութիւնն, ու ընկերութիւնը բարեշրջութենէն կը
յղանար, ընկերութիւնը կը կազմակերպէր ո՞չ թէ
անհատաւոր՝ այլ ինքնաբերօրէն, ու բնօրինապէս
աստիճանուած, այլ դէպի Աստուած բարեշրջուած,
և հաւասարութիւնը կ'ընդունէր աստիճաններուն
վրայ միայն, գիտէր թէ էակը նիւթն էր որ
իմացականութեան կը յանգէր, թէ Մարդը՝ բնու-
թիւնն էր յանգած ինքնազգացման (cénesth.) ու
գիտակցութեան, և կը հարկադրէր ընկերութիւն

մը որ նման ըլլար Մարդուն, որ մարդկութիւնն ըլլար, ճշմարիտ սարուկէն մինչև ճշմարիտ Քահանայն, մկանային զօրութենէն մինչև բարոյականը, նիւթէն մինչև արփը: Ո՛չ ապաքէն Եգիպտոսն այս շքեղ ու ճշմարիտ անասնամարդն էր, կատարեալ ու գերագո՛յն քան ամէն մարդապատկեր, մինչև դշխոյափառ իմացականութի՛ւնը վերացած անասնականութիւն, բնութիւնը՝ բարոյակալուած, բարոյապատկուած: — Կրօնապետական Եգիպտոսին տիեզերակա՛ն Ոգին չէ՞ր անիկա, որ միայնակ, կը թուէր աշխարհը գիտակացնել (init.) տակաւին:

Վասնդի ի՛նչ խորհրդանշան ալ փնտուեն հոն մարդիկ, անոր ամենի, ծնրադրելի աւերին մէջ՝, անիկա ինծի պիտի երեւայ ջնջուած ուրէնսով Եգիպտոսը որ պանծալի Բնամարդը կ'ամփոփէ (rés.), — Կեանք և Երկրաժեշտ, Գործունէութիւն և Հայեցողութիւն, Առիւծ ու Կոյս . . .:

Իր շուրջն, անապասին ծփանուտ ու լուսադօտ տարածութեան վրայ, կարծես արփային միջոցի մը մէջ կը բարձրանար բրդեղէն հայեցողական Քաղաքը: Բուրդերն էին: Հոն էին. Աստուած իմ:

Ահաւասիկ . . .: Զարհուրելի յամբոթեամբ շեղջակուտուած՝ կարծես անհուն մտախոհութեամբ մը բարձրացած լեռներ՝ Բուրդերը լեռներուն խօլականութեան պարփակումը, զսպումը կը թուէին ճշդութեան վեհութեանը մէջ, վայրի լեռներուն իմացականացումը, կրօնացումը՝ ձեւերուն ամէնէն նուիրապետականին բայց արդարագոյնին մէջ: Իմաստութեանց, կրօնքներու հողամած անհետացումէն

կամ կորստականութենէն անդրուվեր՝ բոլոր հաւատքներն ու բոլոր ժխտումները կը թուէին հոծել անապական բնակրօնքի մը մէջ, որ ոչինչ կը խընդրէր Ամբաւութենէն այլ ամէն ինչ կը վերընծայէր անոր, այլ ամէնօրէն կը վերընծայուէր անոր: Իրենց քառասային ժեռակոյտերը կը վերանային ու բացարձակին սահմաններուն ժամանելով կը խաղաղէին: Քաղաքակրթական ու երկրային ժամանակներուն ընկլուզումն էին յաւիտենութեան մէջ, երկրի շորս կողմերուն միաբանութեամբը դէպ ի երկնամոյն վախճան մը՝ կեանքերու վերափոխումը դէպ ի զենիթը, դէպ ի զօրութեանց անյայտ վառարանը, գոյութիւնները՝ միահաղոյն՝ իրենց նպատակին մէջ, աշխարհի քառաբերձ ինքընծայումն առ Համայնը: Փարաւոններու գերեզմաններ՝ թէ խորհրդագիտական ներանձնարաններ՝ — այսինքն կատաղի աշխարհայնութեանց փոքրկացումը, լռին անձնատուութեամբ անէացումն Արարչութեան առջև՝ թէ մշտայոյզ զգայարանականութեան խիստ ու հզօր նուազմամբ մինչև նպաստակուած աննիւթացման կուսութեանը բարձրացում մը, — յուրաններն ուրեմն կորուստին թէ Փրկութեան՝ ամբաւ Քաւութիւն մը կը թուէին անոնք: Կոթողումը, մեծացումն էին մարմնաւորութենէ ազատագրութեան, զերծում՝ ու սրբացում՝ Օրէնքին մէջ, ձեւերուն խուսափանքովը դէպ ի ոչինչ, Եսերու, այսինքն մահկանացու սահմաններու կորուստով՝ բազմաւորութեան միաւորմամբ՝ Անեզրութեան մէջ դէպ ի կէտի մը հիւլէութիւնը, կիտային մշտանոյն սկզբունքը: Մոլորական Երկրագունտին ուղղութիւնը, յանկումն իր ծիրէն դուրս, կիկոպեան երկնհայեցութեամբ մը դէպ ի Յաւիտեանը: Գիտակցականացումը, աղօթա-

կերպութիւնն էին այն անհուն զէրօին զոր երկրագունար միջոցին մէջ կը գծէ : Ո՛ր Ազոնայի, Եգիպտոսի «հպարտութենէն» ոչինչ կար հոն, այլ անբահոյակապ համեստութիւն մը : Աշխարհի հսկայական ու յաւերժական ոչնչութեան Գիտակցութիւնն էին անոնք, Յաւիտեանին հայեցողութեան համար յաւիտենապէս հոն կեցած, առասպելացած :

Եւ, անշուշտ, Սփինքսը կանգներ էր զանոնք :

Հիմա մտքիս մէջն են, հնէութեանս աղօտութեանց մէջ, հեռուն, հորիզոնի մը երազածուփ զիծէն վեր, երկնախառն հեռանուշութեանց մէջ կեցած, վարդազոյն մշուշէ բիւրեղներու պէս, անջատ և զուտ, ու շքեղ, — ինչպէս թանձր ու կենդանի Արեւելքին հեռուներէն կ'երեւան անոնք, Տելդային դեզին տափաստաններէն հեռու, Նեղոսի լուսաւոր ափունքներէն անդին, արմաւենիներու կանաչ փետրափունջերէն, գետանաւերու շեղ թեւերէն անդին, կեանքէն ու չարժումէն մեկուսացած, ոսկի հնութեան մէջ զոր վաղնջական Ռան կը լուսերփնէ, կ'իւրախառնէ, — մտքիս մէջ, մեղմանչոյլ տրամութեանց աւիւնի մը մէջ բարձրացած, թափանցիկ, կարծես անիրականալի՛, այնքան երազային, ինչպէս որ կ'երեւան անոնք երբ մարդ՝ տրուիուն բոպէի մը պէս անցած անոնց անշարժ ժամանակէն՝ անոնցմէ կը հեռանայ, անդարձ, իր երբեք անոնց ներքեւ եղած չըլլալու զգացումով, հոն, հեռացայտ ու պատիր, այերեւութային դիւթաքաղքին մէջ երբեք ըլլալ չկարենալու տրրամութեամբ, որով կը նայի դեռ անոնց անարատ, երանաւէտ իտեականութեան, ու զանոնք կ'ընդ-

նշմարէ տակաւին, իրերուն մէջէն, յետոյ սիրելի պանձ մըն ալ, տակաւին անոգամ մը ևս մինչև որ ա՛լ կորսուած անհետացած ըլլան յաջորդող զգայութիւններուն, վաղանցուկ բաներու յամառութեամբը խուժող իրերուն ետև, — ինչպէս ներաշխարհին անգթօրէն ու յիմարարար յարածուի տեսիլներուն ետին :





ՍԱԿԱՅՆ Եգիպտոսն էր հոն , գետաբերաններն ի վար յաւերժական Նեղոսին , որ Ափրիկէի կենսաւէտութեամբ բեռնաւոր՝ կուգայ զայն հեղուլ իր անյազ աւազափունքներուն , — Բուրգերուն հեռաւոր անէապաշտութենէն կենսաւէտօրէն , երկրօրէն անտեղեակ՝ կենսահայեցական Արեւելք մը : Տաք , հովանեղուրկ երկրի բոլոր պայծառութիւնն էր , բոլոր եղկ ու մոյզ ուժը լուսեղէն երկինքին մէջ աճող կեանքին , որու մուսցիչ , կապդուրիչ երփներանգութենէն կը շնչէի , կը վերստանայի ինչ բերկրալի տարրեր որ գորշ քաղաքներուն սոսկումը խլեր էր ինձմէ . , որու լոյսին պայծառութենէն ու ստուերներուն մանիշակ հեշտութենէն եկեր էի խնդրել զմայլած ապաքինում մը թշուառութենէն , պարուրուելով արեւելքի տեսիլներուն յատուկ այն անճիգ յորդութեամբ զոր տեսնելու վայելքը , զոր դիտելու կեանքն այնպէս տենչացեր էի ինչպէս գոյութեան իւրայատուկ ու կորսուած ձև մը . , իբրև թէ՛ ինչպէս արեւելքի գաղափարին հետ վաղեմի ներդաշնակութիւնս կը թուի դեռ զիս համոզել՝ իբրև թէ երբեմն , անյիշատակ անցեալներու մէջ ես Արեւելքը բնակած ըլլայի , կապոյտ ու պայծառ Արեւելքը . , վասնզի որքա՛ն ալ ծննդավայրս

Ստամպոլն էր միայն՝ նոճիներու և մինարէններու վսեմ Քաղաքը չէր կրնար ընծայել ջերմ ու շողշողուն զգայութիւնն հարաւոտ Արեւելքին՝ ոչ ի սկ հեռուն իր շրջագիծերն ամպաւէտող գմբեթներուն ամբարձմամբ, իր արուարձանները խորհրդագագածող նոճեաց լաժուարդ խաւարով, և մանաւանդ անոնց խոկուն մեծութեան համար: Քանզի հիւսիսի երանդ մը Ստամպոլին արեւելականութիւնը կը մշշասքօղէ, կը պղտորէ, թէ և դայն անորակելի կերպով կ'առանձնացնէ աշխարհի մէջ, — և Հարաւր պայմանն է Արեւելքին: Հո՛ն սակայն՝ երկինքը վճիտ էր, և երկնականարին շքեղութենէն կեանքի հեշտութիւն մը կը հոսէր. հեշտութիւնը երկրային դուռ ու հարազատ, ինքնին երջանիկ՝ և մտատանջող աշխարհին անսխալ կեանքի մը որ այն լոյսին մէջ կը յղացուէր ու կ'իրագործուէր, իբրև հանգիստ մը միայն, մտածութեամբ, դմայլմամբ, վայելքով լեցուն, այնպէ՛ս՝ ինչպէս լուսնկայ գիշերին մէջ, ծովուն վրայ, առաջին անգամ՝ դեռ անտեսանելի այն ցամաքէն դէպի նաւը թռչող, տաք երկրի, արար քաղաքներու ա՛յն եղկ շունչը՝ տարաշխարհային Արեւելքէն եկող անծանօթ ու հողեւին ճանչցուող, կարծես վերատացուող հեշտանքովը լեցուն, կապոյտ, քնային, անրջային բաներով պսպղուն ու սարսուազին ա՛յն առաջին սիւզը կը պատմէր, կը հեւա՛ր, վերջապէս ցանկալի եղերքներուն մօտենալով խուոված ու գոհ, գոհ սրտին:

Չէ՞ մի որ եթէ տարաշխարհը կուսավայրի նորութեանց երազ մը, բիւրազգայութեան կիրք մը, զգայամոլութիւն մ'է, ընտանի իրերու հին տժգու-

հաւթեան , հին ու տաղակալի հետեւակութեան միջեւ ճանճրացող և իրապէս ունացող հողիներու մէջ , Արեւելքը շրջագծում մը , ճշդում մ'ի , երազային տարաշխարհին , անկաշկանդ աճման մը , լայնազատ կենսականութեան մը ձեռուերանդներով , զոր զգայութեանց ծարաւի հողիներն իբրև յորդ ու վերկենցադեցնող անունդ մը կը յղանան , զոր երեւութապէս գեղազիտարար՝ բայց իրօք մարմնապէս կ'ըզձան անոնք որոց և արտաշխարհին միջև շուայլ փոխանակութիւն մը կը տիրէ , որոց միակ պէտքն են սաստիկ կրաւորականութենէ մը յետոյ համազօր արտադրողութիւն մը , բուն իւրացումներէ ետքը կորովի իւրաստեղծումները , այսինքն կենսալի յարանորոգ գոյութիւն մը , կեանքը՝ հաշիւներէ ու չափերէ անկաշկանդ : Պայծառ երկինքներու շնորհած հեշտակեցութիւնը չէ՞ որ կը նշանակէ Արեւելք մոզաբաւը , անոնց համար որ արեւմուտքի երկշտաու կատաղի կեանքը կը քամահրեն , արեւմուտքի մեծ ու դաւն քաղաքներու կեանքէն տառապած են իբրև անհասկնալի պղտորումէ մը , սահմանաւորումէ մը , կեանքը բռնապրօսող ու անխմաստող ճիգերու հարկէն ճանճրացած են ու հիւանդ , և որք՝ իրենց մէջ՝ ապրելու հին քաղցր աւիւնին , ապրելու իրապէս սարաշխարհիկ աւիւնին վերափթիթումը կ'զգան Արեւելքի լուսեղէն կլիմային մէջ , Արեւելքի տեսիլներուն յատուկ այն յորդութենէն թեղադրուած՝ որ բնութենէն , բուսականութենէն մինչև արուեստներն ու տարազներն ու բարքերը՝ ասոնց երանաւէտ նկարագիրն ու շնորհն է , անոնց գոյութեան ձեւն իսկ է՝ քանի որ արդիւնքը , յայտակերպումն է ջերմութեան ու լոյսին յորդութեան , — ընդհանուր գաղափարի՛ն որու վերընծայութիւն արեւ-

ւելեան տարաշխարհին բոլոր տարրերն՝ ինչպէս նաև արևելասիրութեան գեղադիտութիւնն, Արևելքի տարերկրապաշտութիւնը (exotisme) կեանքի թէ արուեստի մէջ, վասնզի բոլոր այդ հակումը կեանքին մշանջենապէս արևապաշտ իրաւունքն է միայն:

Այսպէս հոն, ամէն ինչ որ կը վերաբերէր երկրին՝ ուղղապէս ու լիովին հոգիին կ'երթար. և այսպէս խորին էր հաճոյքը որ կը թրթռացնէր, կ'ապրեցնէր գիտ երբոր խառնածին ոստանին մէջ կը տեսնէի Արևելքը, — լուսապայծառ. Մովսէս առջև կորացող հեռանուազող Քաղնիքը, քանի մը սրաբաձև, ծիթրաւարա (term. en bulbe) մինարէներով գեղարդուած, որ իրիկունները, վերջալոյսին սակեղեղին յասակութեան վրայ կը պատահէր իր տանիքներուն զանգուածին հարթ բեկուզիծ շքանկարը, ծովը միթագնելով, և առաւօտեան ծովուն թափանցիկութեան մէջ կը ցոլածփէր իր արևակէզ քարակոյտին ծիրաներփնումն արևածագէն, , գաղջ ու լուսանշոյլ աւազափունքն, ուր խառ ծփանքները կուգային փռուելու, և զոր, առ աղափանց աղաատութեան մէջ պղնձադէմ աղաքներու վազվառուքը կը կոխկռտէր, կամ վարչամակաւոր աղջիկներու բողիկ ու հեշտին երթեւելն ու խաղէրն՝ արևին մէջ պղտիկ խմբակով կոկոզիկ բրած, կամ մեծ ընկողմանած նաւակի մը շուքին տակ լեցուած թուխ ու լուսածիծաղ աղջիկներուն, , հեռաւոր փողոցներու տաք կեանքը, շողջողուն ցերեկին մէջ, , ամբոխին աղմըկովի, խաչաարդէս յարածփումը, քրանշուլող անցուդարձը կպրային, սակեմոյզ (mord.) կերպարան-

ներու . , պարեգօաներու , ամբաններու լուսածուփ
յեղյեղումը . , սե , յորդառատ վերարկումքներու
մեծվայելչութիւնն . , ամբողջ մտիր ևզերաքի տա-
րազներու բոլոր վեհագիծ փառփումները , ճերմակ
հագած Ֆէլլահներու բոպիկ դուարթագին խառ-
նազանձովը շաղապատուած . , սեւապարփակ կինե-
րու թանձրոյքը , հոս հոն , ցուցաւաջքներու դէմ
յամող , շուկաներու կամարացուրտ ստուերին գաղ-
տանշոյլ բնչաւէտութեանց մէջ սուղուող , յուլա-
ցող . , շուկաբերաններէն դուրս՝ շլացուցիչ ուղ-
փին մէջ յանկարծ ևրանաւէտ լուսաւորումը խայ-
տակեղրոն փաթթոյններու , ուսերու , որոյ վրայէն
կամարին ստուերը կը սահէր կ'իջնար . , ծաղարան-
ներու ոսկեղօծ լորձուէքը , վաճառքներու , արե-
ւելեան իրերու գեղեցիկ երփնախառնուրդը , տա-
րաշխարհի միրգերու , երեկորնական պտուղներու
կոյտերը՝ ծածքերուն շուքէն դուրս յորդած , հրա-
վառ . , այնուհետեւ մութ , մաղձային արաբերէ-
նին հեշտալուր աղաղակն անընդհատ , կորովի շուր-
թերէ , հագագներէ առողանուած , թաւալուած ,
իր ճեւային խրչատուկ մտածողութիւնը բարաւոր-
ներու մարմարներուն վրայ դրոշմած , կրպակներու
ներսը՝ շրջանակներու մէջ իր անհուն խոյանքնե-
րով հառաչայիր վերտառուած . , յետոյ , յանկարծ՝
լուրթ , անվրդով հանգիստը կողմնակի գուն-
ներու , լուռ տուներու ներքե կամարուած կարճ
լուսայանգ անցքերու հովանին , փակ միականի
փեղկերու , խաւարին դուռներու խաղաղութիւնն ,
ուր շաքարեղէգներու ոսկի՝ ծիրանի ցօղուններով
բեռնաւոր կնոջ մ'արար վանկը կը հնչէր , մենա-
ւոր . , և նորէն , միշտ՝ փոշոտ , լուսողող գե-
ռումը պողոտաներուն վրայ , և անոնցմէ վեր , եր-

բեմն , ստուերալի փողոցի մը ծայրին դէմ՝ բազմանկիւն , դրուագեղ մինարէի մը մուրաձև աշտանակուամը կապոյտին մէջ . , ու սարօրինակ , սարօրինակ դէպքը՝ յանկարծ շնչուող , հոտոտուող այն խնկարուրման , — արաբիական բալսամենւոյ մը խէժին այրման յուզիչ հոտը որ ժխորին մէջ կը ծաւալէր կը բարձրանար , չեմ գիտեր ինչու , — փողոցը խնկելու համար , ու յանկարծ փողոցին վաճառանոցի , շահաստանի գործունէութեան մէջ յարուցանելով մոռցուած անորակելի հեշտանքներու մորմոքում մը , սրտատրոփող , ճմլող զգայութի՛ւնն անըջային ներքերու մէջ հայերգաձայն թալացմանց Արեւելքին . , Քաղաքին տարաշխարհայնութիւնը չքնաղ յատկութեամբ մը դրախտաւէտելով . , ա՛հ , բարի գո՛րծը հէք արտք խնկածուին , որ ծխանոցին մութ գոգ սկաւառակը ձեռքէն շրջթառկախ՝ այնքան հեռացած կ'ըլլար միշտ ամբոխին մէջ , այնքա՛ն չկար՝ որ ի գուր կ'ուզէի գտնել զինքը , իր երկնային խեղճութեան երախտագէտըլլալու . , — յետոյ , խայտաճամուկ ու ոգելոր կեդրոններէն դուրս , փողոցներէն , թաղերէն դուրս , հեռուն , արեւոտ աւազուտ պարապութիւնները . , տապագին ճամբաներու վրայ հոպալիներու յուզի ու լերկ թաթուլներուն դիզանքն արտերու առջև , ուր Ֆէլլահին կքուն երկրախառն կեանքը կ'այրէր արեւին մէջ . , հեշտին պատիթթումը , գորչ , արծաթահնչոյլ արմաւիներուն որ կը ցայտէին կը շատրուահային երկինքին մէջ , գողջ տամալիներու քովն ի վեր . , պանանիներուն լայնշխտերև սաւառնումը լուսաւոր բեհեղային թեւերով , որոց դրախտային կանաչութիւնն արմաւիներու բուններուն մոխրագոյն լրթաղօտութեան մէջ կը ժայթքէր . , թա-

Լահոժ առպենիներն ա. կակիտները , եղկաթոյր մաշիները՝ գետափին վրայ բարձրացած . , և ա՛հ , հոն , պարտէզներուն մէջ միժին սաղարթներէ վար ծունրաւիս կանթեղուճներն եղիպատական սաղուբուներուն , ալբատրէ Datura fastuosa ներուն ծաղանջոյլ , լայնալէժ շափրակները , որոյ անձառ շունչը կը հոսէր , կը ծորէր իրենց սատափէ խուռչներէն , հեշտազեղ հեւրնծայումը մուկզին թոյնին զոր հրաշագեղ մորմազգին կը պահէ , անծանօթ եղեմէ մը հեղուող քաղցրութիւն զոր կը ծծէր հողին , տարօրէն սատաղելային այն ծաղկանց շրթունքին անձնատուր , այն տեղերուն մեծ անոյ սրբութեան մէջ , որ կը թուէր շքեղ պայմանն ըլլալ սաղուբաներուն նուիրական ու անապորոյն բոյրին . , — վճիտ ու խոր անդորրութեան մէջ որ կարծես գոլորշացումը , ծաւալումն էր խաղաղիկ գետակին՝ միժին պարտէզներու առաջքէն , որակներու առջեւէն , ծառուտ ափհուղիներու , բերձերու (berge) հին պատերուն սակէն մեզմ ոյորներով երկարաձողում գետակին . , մեծ մուկթղիներու հովանիով սողորուն , անծուփ , անչչուկ . , հեռաւոր մօրութիւն՝ Նեղոսի մեծ լուսթեամբը լի , աներեւոյթ աւազաղաշաներուն պակուցմամբը , անապատի մէջ մենաւոր ջուրի սրբութեամբը խորին . , փոփոխակի երկնաւէտ՝ ու խածաստուեր , լոյստուերտա , սքողուարձակ պատշափ մը յամբ երփհայեղմամբ հեռատուղում . , հոս հոն , ջրամոլիկ շամբերու վարատար , սակոհուրը հոյլերով բնակում , որոյ մօտիկ երբեմն կը տեւտու էր յածիլը , կենալը եղիպատայի ծերուկի մը կուրին . . , և որք բերձերուն զած , խառատ սրմերուն երկայնքը կը հոծուէին դէպի հեռաւոր հովանիները , արմաւենիներով զարդմանակում քառակուսի տուներու , թաւուտ ու

ցանցատ. հիւղերու խորանկար մը, իրերով ու կա-
նաչութիւններով շփոթ ու քաղցր հեռուները գե-
տին. — ջաղխար, մեղմ, նորէն, լուսթեան մէջ,
վարմին ընկէցքին՝ կուրէն դուրս, ճրճուող զար-
հուրող ջուրին բոլորչի նշուլումներուն մէջ սուղած
վաղնջական վարմին, որու ծայրէն բռնած՝ անխը-
ռով ծերուկը ջուրին կը հայէր. — հեղիկ վա՛յրը,
բարերաստիկ լքման մը մէջ ընկզմած, կեանքի
հետեւան ու դմայլած գոհունակութեամբ մը եղիօ-
րէն ու կատարելապէս կենսալի., ուր իրողութիւն-
ները՝ խաղաղ, հինօրեայ՝ աղմուկ չունէին, այլ
անողգալի, տահուն, յամբ եղում մը., ուր կեանքն՝
ապրող ու շարժուն հայեցողութիւն մ'էր, ա՛յնքան
տիեզերական՝ որ անշուկ, ու երանաւէտ., և, ահա
ծեր ամորդին (passeur) թանձր մակոյկը, որ կը մօ-
տենար վերատին, մարդեր, կիներ բերելով դիմացի
եզրէն, դաշտի ֆէլլահներ, ով դիտէ ի՛նչպէս,
ո՛ւրիկ ժողովուած կանխաւ հոն, դիմացի եզրին վրայ,
ա՛յնքան բուլիկ և հողագոյն էին անոնք, և այն-
քան ցանցաւ, հիմա անօտը խմբակով կանգնած՝
մեծղի տախանաւուն վրայ որ յուլօրէն կը սահէր,
հաւափարին փայտէ ձողին յաջորդական միւրճում-
ներովը գետին սիկին մէջ, միակերպ, յաւիտենա-
պէս նայնաչափ յամբոթեամբ որ անայլակարօտ
վայելք մ'էր ժամանակին, գոյութեան, առ Աստ-
ուած մտածման մը ծանրութեամբը, խաղաղու-
թեամբը հանդատաւէտ, — և կը համներ, կը հպէր
եզերքին, ու մարդիկն ու կիները կ'իջնէին մակոյ-
կէն, ցրուելու, իրենց անաղմուկ բոկութեամբ այն
տեղուանքը անհետանալու., մինչ տախանաւուն
թափառ լանջը կրկին լեցուած կ'ըլլար տամուկ
հպեաղին վրայ սպասած նմանօրինակ մարդերով,

և անդգալարար իր սահքը վերսկսած, արեւակէզ ծերունւոյն կակուղ, անշտապ ձողարկներովը մըղուած ծանր երթն իր ձիւթուած յղփոյքին, իր ուղեւորներուն գեղջուկ հնաափ գոյներով, անոնց արեւոտ խաղաղաւէտ նպատակով բեռնաւոր, արեւգակին տակ, ջուրին բիլ պապղումին վրայ, դէպի անձայն ստուերը դիմացի որակին, պահէ մը դարձեալ սեանուելու համար՝ նորէն ասդին ուղղուած, կարծես նոյն անցորդներով, թերեւ այս անգամ գորշ իշուկով մ'ալ, իր նաւամուտքին խտտորնակութեան մէջ բեւեռուած սարուող, և այսպէս միշտ, անընդհատ, անայլայլ նոյնութեամբն իր երթերուն կամ դարձերուն ծանրադանդաղ վայրկեանին, մինչև իրիկուն, մինչև իրիկո՞ւնը որ հեռասոյզ գետակին խորքերուն մէջ կը վառէր, մինչդեռ զով հուրեր ծառերու խուրձերն, արմատիները, հեռուի ճերմակ արեգնակները կը բորբէին, ու ջուրին միապաղաղ սփեւներէն ոակի շունչ մը կ'անցնէր, մինչդեռ հունին հեռուներէն շեղարերձ առագաստի մը թեր կ'երեւար, բոցավառ հորիզոնին իրերուն աղու խառնադանձին վրայ ցայտած, ու վերջալոյսէն թափանչոյլ, որ անդգալապէս կուգար դիմացի ափունքն ի վեր, դէպ ի ուր նաւառաջքէն ձգուող լուսաւոր պարաններ ստուերոտ որակին վրայ երեւան կը հանէին քուրջոտ կքուն խառնուրդը լարորդներուն որոց թուխ սրունքները կշռակի կուգային, քաշելով մթին նաւը հանդարտ ջուրին վրայ ուր կը ցոլանար, իրիկունին խաժ ու մեղոյշ թափանցկութեան մէջ սահուն, անձուփ հիացական թռչանին սեւեռամարը վճիտ օդին մէջ, իր սաւառնաթէ ցամբութեամբ, թեւաւոր անձայնութեամբ մը մտախոհ, ուրուարերձ, կարծես երեկոյեան ու անուպատական հայեցողու-

թեամբ մը լեցուն , ու խաղաղասան , անցնելով ,
գետ անցնելով անվերջօրէն , կարծես անշարժ , ու
սուղուելով շողուն հեշտուր կորանքներուն մէջ
ստուերամած գետակին , լռիկ լրթափանցիկ վայ-
րերուն մէջ երանութեամբ հեռանալով . , կարծես
մուէղզինի մը վերջալուսափառ աղօթքն ըլլար
մի՛նչաղ լուսաշաւիղի մը մէջ ի լիւղ . , — անուր-
ջի անձն ժամը , միւսլիման սրբութեամբ կարծես
օծուն , դրախտայնութենէ նուազուն այն ժամն ,
ուր Ֆէլլան աղջիկներ սափորներով գետեզերքը
կուգային ջուր սունելու . , ան , թուխ , իրիկ-
նաթե ներանայները . , կուգային անոնք , գետեզ-
րին վրայ կ'երևային , գագաթնուն վրայ թակոյկ-
ներ , մոյգ , մութ վարչամակներով իրենց գլու-
խէն թիկունքն ի վար ծածանող , մինչև գուճերն
(jarr.) ու սրունքները իջած ծիուն ծայրերով , լայն
սփիւռով մը վայրարձակ , իրենց աղուոր հասակն
սքողելով խաւարին շնորհի մը վէժքով որ կը թո-
ղուր ցայտել իրենց դէմքին՝ սիկէ , ակնամմէ (pro-
pol.) դէմքերնուն մեղրանուշութեան , ու անոնց
բոլոր ծիտա առաջքին՝ կակուղ պարեգօտին մէջ ,
բալ , ծիրանի , կապոյտ ու միշտ մղտագոյն պարե-
գօտին՝ կուրծքերնուն կուռ ու ժուայթուն դոն-
դողէն սարսառ , առոյգ ազգրերնուն քայլէն դող-
դոջուն ու հեքոտ ծալքերով , զոր թուխ ու թոյլ
ձեռքով մը ցայլքերնուն վրայ կը ժողվէին կողմ-
նակի , մինչգետ քղանցքները կը ծփծփային անոնց
փոշոտ ու տարտամ բակութիւնը փայփայելով , և
անուրներու անձն արծաթ շողիւնը՝ կոյսերուն պը-
ճեզները բոլորած՝ զմայլած ու լքուն ոլորքով
անոնց ուլնին վրայ կ'իյնար , ու փոշիին մէջ շոյտ ու
անձայն քայլասփոխնին կը նշուլտակր . , իբրև թէ ար-

ծախտախաչ ապարանջանն անոնց ոտքին շուրջ յիշացած մէկ օղակումն ըլլար ջուրին ուր անոնց սրբունքներն այնքան իջեր ու յամեր էին, գէպի ուր ահա կ'երթային նորէն, առանց հապճեպի, բայց թեթեւաթուիչ, ու ճառողելով, թառչային ու խորունկ վաւիւններով (roucouil.)՝ սրտի մը առջև, կամ բերձի մը քանի մը նեղ աստիճաններէն վար՝ ջուրին վճիտ առաջանին եզրը իջնելու, մզկիթի աղանիներու գորշ հոյլի մը պէս որ գաւթիին սրբութիւնը թրթռաւորին հրճութիւն մը կ'ողողէ, թառելու գետակին առջև, ջուրին մէջ, հիմա հանդրիճուած, վարչամակին վտառասներու՞ն մէջ պարտուած, տարփալի ծաղքերու մէջ ասածուելով, ու թակոցկները մի առ մի կը մխրձէին հոտանքին մէջ, ու ճղուփներով, հեշտալի խոխոջներով խառված ջուրն անոնց սղորկ բաժրերը կը պազնէր, լուսանչոյլ համրոյրներ կ'օղակէր, կը մեհեւանդէր անոնց, վանակնէ գողցոջուն լուսապակներով կը շրջապատէր զանոնք, անոնց պատկերը կ'ողջապարէր արբշխ վայրենութիւններով, կարծեա ջուրին հոգին զանոնք իւրախատնեղ երազէր, մութ աղջիկները, անոնց ստուերի ամբծութենէն անց սրբութեան պապղտ մներ, պայծառ խառարներ յորինելու գէր, զազփազփա մներ, փուղձ հեւքեր, հոտահոտութիւններ՝ անոնց ծփալի շնորհէն, անոնց հեշտալի աղջիկնութենէն իր բերի գները (bér.), զմրութիւնները շինել, իր թախանցկութիւնն անոնց կուտութեամբ խորհրդաղգածել տենչար, — մինչգեւա անոնք հ'առհեռ, կը կանդնէին, թակոցկները լեցուցած, ու կ'ելլէին գետեզրը, աստիճաններուն վրայ, թայ ու փայլուն սրունքներով զոր անուրը կը մահեկէր, — կարծեա ջուրին տարփանքը՝ լոյս, համ-

բոյրով մը փարած ու սառչած՝ կոյսերուն սաքին ,
— և բերձին վրայ կ'ելլէին դեռ յուլօրէն կախու-
լով զեզուն , շողուն թակոցկը զուգապիրկ բա-
զուկներով , ոմանք սափորը գլուխնուն վրայ կրու-
լով արդէն , ուղղաբերձ , պղինձ արձանոյշներու
պէս , ու հինաուուրց , յաւերժական դասականու-
թեամբ իրենց հաժշտային քաղցրութեան սեմա-
կան , աստուածաշնչական սիլուէզին՝ գետեղերքին
խրիկունին մէջ , և ահա , մեղմաքայլ , հետզհետէ
ձամբայ կ'ելլէին , գետակէն հեռանալով փոշոտ
ճանապարհին վրայ , ջուրը հեռուօր տնակնին տա-
հեղու , Քաղաքը . . , և շուտով անոնց հեռացող
ստուերներուն անտոնաձայն հոյլը կը սրբուէր , կ'ան-
հետանար՝ թողլով մենասէր , և անդրհայեաց խա-
ղաղութեան՝ թախծագին ամայայած գետեղերքն
ստուերարկել , յամբօրէն . . . :

Իսկ Քաղաքին մէջ լոյսերը կը վառուէին : Ա-
համայ աղատ գիշերին մէջ հերքին փողոցներուն
շուայտ խժխտութիւնը կ'արժարժէր . Քաղաքին սիրտը
արբեցուցիչ հաճոյքներուն մէջ կը խաղար , կը պա-
րէր իր գիշերային սպասութիւնը : Կիսնակն՝ լու-
սավառութեանց ու հուսագներու մէջ զողողոջուն՝
իր մշտնջենաւոր հարսնիքը կը տօնէր : Սակայն ,
լուսաւոր դուռներու մէջ երգող ու ծափող պրճ-
հալից կնիկներու սե ու գարշնչտալի ծոցը չէր եր-
բեք որ կը խռովէր զիս , ոչ ալ գահվէներու հուս-
գածութեանց մէջ պարերգուհիներու լուսհանդերձ
ու փաղփուն պորտխաղը . , ոչ արաք երաժշտութեան
ցաւագին հուսաղումները , հատկեալ հեծեծմուն-
քով . , սիրերգու սաղերուն արտասուած պիտ ցնձկո-

ծուճներն որք մերթ երեւան կ'ելլէին , կը ցայտէին ,
խորունկէն , կինանային աղմկալի բաւիլին մէջ յա-
ծողին ականջին՝ լուսազարդ գունհերուն անճուռի
ժխորը քաղցրախառնելով լեզորակ աւաչներով . —
հապա մանաւանդ այն հազուագիւտ ապակեղոււք ,
գոյնզգոյն ապակիներով վաս , զոր բանալ համար-
ձակողը կը հանդիպէր երկրորդ դրան մը , վանդա-
կերպ յօշատուած , կարծես բանուած , ու երփնե-
րանդ ապակիներով խայտարղէտ՝ մինչդեռ անառ-
վոր ու ծանր հոտ մը կ'ելլէր , տարտամօրէն նող-
կային՝ ծխամած ու լուսածուփներքի մը խորհուր-
դէն : — Հաշիշն էր : Ի՛նչ փոյթ թէ գուռներուն
այդ զարդարանքն ու պճինքը միամիտ մեծարանք
մ'էին առ անբաղդատելի նիւթը , միամիտ , տղա-
յական , բաղդատմամբ երկրպագելի Հնդկանեփին
հոյզին անճանօթ մեծութեան : Ի՛նչ փոյթ . եթէ
այն դուռը գոթական եկեղեցւոյ մը դրան , արևել-
եան աղօթատեղւոյ մը մուտքին հոյութիւնը չունէր ,
և անտարբերին համար հեշտալի , վտանգաւոր , ու
տարօրինակ գահվէի մը զուարճալի դուռն էր
միայն՝ ներսը ծաւալած ծուխին դիտակներուն (ad.)
համար նշանակութիւն չունէր այդ աղքատու-
թիւնը . միթէ աղօթատեղւոյն բարաւորն էական
արժէք մ'ունի հաւատացեալին համար : Հաշիշի
որճարանին դուռը կրնար շատ աւելի անշուք ըլ-
լալ , ինչպէս Սէղամ մը : Կը բաւէր որ հոն աշ-
խարհը կը դադրէր , աշխարհի բոլոր խեղճութիւն-
ները , տառապողութեան բոլոր յիմարութիւնը հոն
կը դադրէին . բոլոր սահմանները կ'ոչնչանային հոն .
աշխարհի բոլոր նիւթը հոն կը սահմանադժուէր ,
հրաշալի գոյացութեան առջև որ ներսը կը ծխար :
Կը բաւէր որ զուարճալի , հապիտ դռնակը մարմ-

նօրէն. կաշկանդուած ու տխրալի կեանքէն՝ լուսաւոր, համաստղալի աննիւթականութեան մը ներաշխարհային տիեզերքին վրայ կը բացուէր, թէև դահվէն ուր այդ դուռնէն կը մտնէիր՝ ոչինչ պարունակէր նորանշան, կախարդական, հիաստակալի ոչինչ՝ և ընդհակառակն ըլլար ամենէն համեստ, խեղճուկ սրճարաններէն մին որ կարելի ըլլար երբեք, առանց յաճախորդին պարզ հանգիստ մ'ընծայելու իսկ յաւակնութեան: Չեղունէն առկախ լամբարի մը լոյսով, որ միակ տեսանելի պերճութիւնն էր հողյատակ սրճարանին, և որ արդէն ցերեկը մարած պիտի ըլլար, շուրջանակի բազրոններու վրայ քանի մը արարներ կը տեսնէիր, լայնազգեստ, իրենց սովորական տարազով որ հանգիստ ու վայելք կը ծփայ, — արարներ, նստած, պատին կրթնած, խաղաղաւէտ դիրքերով, և Ֆէլլահ մը, դահվէին ծառան: Ծուխ մը, թեթև, կը լեցնէր անջրպետը. ու մարդերուն լքանդորր անշարժութիւնը մշշօրէն կը լուսաբօղէր: Խռովիչ ու խորհրդասուր ոչինչ կար, բայց եթէ հաշիշին զգըլխիչ հասար:

Այն ատեն կը տեսնէիր որ Ֆէլլահը, կապոյտ պարեգօտով, բոպիկ, ու ժպտուն, հնդկընկոյզէ զաւեշտային նարկիլէ մը կը պտայնէր, անոր երկայն ուղիղ փողը կարկատելու նատողներուն, որոց իւրաքանչիւրը, կարգաւ, կը քաշէր դիւթական ծուխը, կիսանուսով աչքով, ու քանի մը հեղ. լիտթօք. հեշտագին. և վերատին կը սուղուէր իր անսրտչապէս հիացիկ անդորրին մէջ, ըստ երևոյթին մեղմ մրափի մը, թմբիրի մը, բնասիտնային հեշտազգայութեան մը մէջ, բայց իրօք անպատում անդրհայեցութեան մը արթնութեան, անօրինակ

զգայութեանց յորձանքներ տարելու համար, մինչեւ որ վհուկ Ֆելլաճը, պզտիկ գահվէին բաղրոններու շրջանն աւարտելէ, ու քանի մը վայրկենի տպաստմէ ետքը նորոգելով նարկիլէին կրակն ու հաշիւի կատրը որ կը մխար հոն՝ վերակտէր իր շրջանն, իր տարօրէն, գերմարդկային գործը, ներաշխարհային հիերեոյթներ ներկայացնողի, ներաստեղծ անլուր համաստեփներու ցուցիչի պաշտօնը, թէև ինքը, ժպտուն, անտեղեակ ըլլար անոնցմէ, — և նարկիլէին խողովակը երկարէր երազողներուն, որպէսզի իւրաքանչիւրը հաշիւի ծուխի նոր շունչով մը, ներշնչման նոր լուսազգածմամբ մը դեռ վառ պահէր երփներփն հեի՛ն հուրն իր արբշուութեան, արծարծէր գորովագին, խանդագին զայրագրգռէր զայն, մտապատկերներու բիւրացան, տիեզերային ասազացնցողումներ, տեսիլներու երփնահրաշ ծագումներ զգար՝ լուսավառուած ու պտուտքող երկնաթաւալող ներաշխարհին արփին մէջ, ու հոգւոյն երանազեղումը դեռ ևս երկարաձգէր, հոգւոյն ներքնակի՛ց երանականութեան անագին գիտակցութիւնը վայելէր տակաւին: — Եւ սակայն, թերևս, նո՛յն իսկ հաշարբուներուն ոչ մին գիտէր թէ հաշիւը հեշտակցնորքներ ծնող գոյացութիւն մ'ըլլալէ դեռ անհամեմատ աւելի խորին բան մ'է, զոր Մարդը՝ զոր ոսկեհանք, զոր գոհարաքարեր փնտուող, զոր երկայնակեցութեան օչարակներ փնտուող Մարդը Բնութեան մէջ գտած ըլլայ երբեք, թերևս ոչ մին անոնցմէ ինձի՛ պէս գիտէր թէ ինչ է անիկա . . . :

Ափսո՛ս. մարդ երկար ատեն չի կրնար սիրել զայն, թէև անոր արբեցութեան մէջ նոյն

խոյ տխտէ՛ անկէ, չուծանայ ., խոտառովանի՛ թէ
Անհունին ճշմարիտ ու անձառ զգայութիւննե-
րով զոր կուտայ մարդուն՝ ալքիմիագէտին ցնու-
րական ելիքսիրէն վեր է անոր իրականութիւնը :
Ցորչափ երկրային պայմաններու սարուկ է մարդ-
յաւէտ՝ հաշիշն անհունօրէն անպատշաճ է ողորմելի
կեանքին : Եւ յետոյ դուցէ պատկերներու ներքին
իրականութիւնը՝ որքա՛ն ալ արտաքին իրականու-
թեանց սաստկութեան հասնի, չի բաւեր մարդուն
որ իր մերժէ զգայութիւններու ամէն եղանակ որ
իր աշխարհային զգայութեանց կերպերէն դուրս է :
Ապա թէ ոչ՝ ով որ գիտէ թէ ինչ է հաշիշը, գիտէ
թէ ի՛նչ յայանութիւն է անիկա և կ'ուզէ անձնա-
տուր ըլլալ անոր այնպէս ինչպէս արժանի է իբր
գերազանց գոյացութիւն՝, պէտք է անոր էութեան,
և զայն հեշտասիրելու անզգայարանական պայմա-
նին զոհէ ամէն աշխարհային իրեր և աշխարհին
դեռ կապուի այնքան միայն որքան պէտք է կա-
րենալու համար երթալ հաշիշ գտնել այն խորին, այն
գիւցազնային արարներուն պէս, որոց հանդիպած
եմ, մի՛հնչաղին, քաղքին խորերը կորսուած և ըստ
երեւոյթին շաքարածախի, մանրավաճառի, փերե-
զակի այն խանութներուն մէկուն մէջ ուր հմայական
խիտը կը ծախեն ., և որոց ամայն ու խոնջ կերպա-
րանին միողիք հալքը կը հեռազգայնէր գերմարդ-
կային ողորտներն ուր պիտի երթային ընկուղուիլ :
Անոր հպատակելու համար պէտք է մոռնալ ամէն
բան . ինչպէս ճշմարտապէս հետեւելու համար Պուտ-
տային, ինչպէս ստուգիւ Յիսուսին հետեւելու հա-
մար պէտք է ամէն ինչ թողուլ : Անո՛ր համար որ
աշխարհը լքելու չափ անմիտ, կամ իմաստուն չէ՝
աւա՛ղ, հաճո՛յք մ'է, հանդիստ շո՛ւնչ մ'առնել

է հաշիշէն սթափիլը . , անոր արբեցութենէն յետոյ
բնօրէն ռամկութիւնն ապրիլը . , անոր անճառելի
տիեզերքէն էջքը՝ հասարակ կենցաղին վերածնե-
լու . , վտիտ , անգոյն , բայց այնքան հանդուրժելի
ու գործարանաւորութեանդ յատուկ կեանքին :
Խորունկ քունէն յետոյ որ կը յաջորդէ այն արբե-
ցութեան , իբր իր հայրենիքը վերադարձով մը կը
մտնէ մարդ իրականութեան մէջ . խեղճուկ հասկին
հանգիստն է ան : — Եւ հաշիշի ողորմելի սրճա-
րանին խեղկատակ դուռն իրօք կ'արգահասի , կը
հեզնէ , քան կը հրաւիրէ : Վասնզի ամէն մարդ
արժանի չէ անոր , անոր Ֆիլիքսապէս և իմացապէս
տոկալու չափ հզօր և արի չըլլալով : Եւ հաշ-
շային Պին Սապպահի մը մոլեղին աղանդը զոր հո-
շիշը քաջալերեց կամ ծնաւ երբեմն՝ ամէն վեհ կրօ-
նի շուրջ մոլարուանող մոլեռանդութեանց միայն
համարժէք է : Ազնուական հոգիներուն , ընտրեալ-
ներուն մէջ անիկա նա իրական կրակ մըն է . հա-
մակրօնային , տիեզերական յափշտակութիւն մ'է
գունիկ մարմնաւորութիւններէ անաղարտ , անա-
պակա՛ն , մինչդեռ այնքա՛ն սահմանափակ , այնքա՛ն
ժողովրդային , մտեղէն ըմբռնումով մը՝ Հաշիշի
Քահվէն՝ ելեւսեան , եղիպտական խորհրդագի-
տարա՛ն՝ , բողանոցներու ու երգեցիկ սրճարաններու
կը համասեռուէր՝ կինանային լիտի գուններուն մէջ
կորսուած : Այնքա՛ն պիտի վայլէր որ այն շրջավայ-
րէն դուրս՝ Քաղքին անդիի ծայրը , ծովափին վրայ
տեղ մը ըլլար ան . վասնզի այն միջոցին որ կեն-
սալի խուժանը լապտերազարդ փողոցներուն մէջ
կ'երգէր , կը գինովնար , կը զուարճանար , ու կ'ա-
նասնանար՝ շողշողուն պարերգուհոյն պորաին ու
ստինքներուն դէմ կը խայտար ծնծղացող դափե-

բուն հետ, ու կիսալոյս ներքերու խորը մութ կի-
ներուն հեշտանքին մէջ կը շաղղամուլէր՝, անդին,
Քաղքին եզրը, մենաւոր աւաղափունքին վրայ կու-
գար իյնալու մեծ Մովը, ծանր ու մեծվայելուչ
չկահիւնով որ ասաղալի անջրպետին ամբաւ լաժ-
ուարդ աղջին մէջ կը բարձրանար:

Առաջին լուսնազիշէրը... երբոր մեծ նաւը կը
հասնէր, կը մօտենար դեռ աներեւոյթ երկրին...
դէպի եզկ ու խռովիչ շունչը որ ըղձացեալ ցամա-
քէն կը թռչէր գիշերին մէջ: Բոլոր վիշտերը անէա-
ցած, չքացած...: Միթէ այն ժամը, այն կապուտակ
անջրպետը երկրագունդին կը վերաբերէր: Միթէ
երկրագունդին վրայ էր անձանօթ տարաշխարհը,
որու նախագիտուած, հեռազգացուած հմայքին կը
կը մերձենայի, իբրև հէքեաթի կեանքի մը ցանկա-
լի անկարելութեամբ: Ո՛ւրկէ էր այն այերային
անուշահոտութիւնը. մեծանուն երկրին աստուա-
ծարեալ, խնկարոյր անցեալին յաւերժութենէն, թէ
անոր մշտագարուն, յաւերժագեղ կենսաւէտութե-
նէն կուգար ան. մի՛թէ մանաւանդ իրագործ-
ուող աննչերուն անպատում հիացումը չէ՛ր անիկա,
ներդաշնակուած էութեան երանութիւնը որ ինձմէ
կը ծաւալէր:

Ա՛հ. երթա՛լ, երթա՛լ, թափառական: Այս
խուցը զիս կը ճնշէ. և չի կրնար պարունակել զիս:
Թափառի՛լ և երազել. և հիացում խորհիլ, հիացո՛ւմ
բարձրախոհել. ամպի մը պէս անցնիլ տարածու-
թիւններէն, հետզհետէ երկնախառնուող յուշերու
մեղանուշութեամբը լեցուն, որք երազներու կը փոխ-
ուին, հիր երազներու, ինչպէս իրականացող երազ-

հերը կը հմայափոխուին կապոյտ յուշերու : Վայելն է
երեւումներն և անհետացումները : Հրածեչաներն ու
ժամանումները սրտաարտին , , թափառական անց-
նի՛լ լեռներէն , ծովերէն , մեծ նաւուն թնտացող
տրտիւնին վրայ տարուի՛լ , գիշերներուն մէջէն ,
տուրնջեան մէջէն և լեզակ տիունքները հեռուն
լեռնացած՝ իրենց յաւիտենական ակճիւն ամպանա-
լով անցնին : Մեծ տարագնաց նաւուն աղաղակին
պէս յուզուիլ , ներքնապէս այն աղաղակը երգել :
Օ՛հ , որքա՛ն հնչին , ինքնին որքա՛ն հասարակ բան մ' է
բոլոր այն անաշխարհային երազը որ մաքիս մէջ կը
հեռարձակի . և որքա՛ն սակայն անկարելի է , որ-
քա՛ն զլացուած , իբրև թէ ազնուացումն ըլլար .
— բարէ , ի՞նչ է հաղա : Կա՞յ արդեօք կեանքի տիե-
զերապէս մարդկային , բնամարդկային ձև մ' այն-
քան կատարեալ՝ որքան թափառական երթալը հո-
րիզոնէ հորիզոն , տեսիլէ տեսիլ . գոնէ՛ բանաստեղ-
ծին թռչուն հոգւոյն համար միթէ աւելի կատար-
եալ եղանակ մը կա՞յ ապրելու :


Հանձարի անընկերական ներշնչում մ' ունե-
նալո՛ւ պէս հայրենիքէն դուրս ելլել . իբրև տիե-
զերականութեան աճմամբ մը՝ հանրէական հայրե-
նիքը , երկիրը վայելել . տիեզերքը տեսնել ամէն
լայնութիւններէն , ամէն սեռավայրերէն . և ինչպէս
մարդ հանձարեղ արբշուութենէն յոգնած կը դաս-
նայ կ'իյնայ հասարակ իմացականութեան հանդիս-
տին մէջ՝ այնպէս վերադառնալ ծննդավայրին ըն-
տանութեան : Ի՞նչ ընդարձակ մենութիւն քան թա-
փառումը : Հոգւոյն մեծ ծաւալմանց ու մեծ ամփո-
փումներուն անասի՛լ , ազատօրէն ներկայացնել
կեանքին մէջ՝ ինչ որ հոգին մարմնոյն անօթներուն
մէջ կ'ընէ . ծաւալիլ ու ամփոփուիլ , և այս խորին

խաղացքին մէջ չկաշկանդուիլ ու է ընկերային պայմանէ : Չգայութիւնք անհրաժեշտ են բանաստեղծին կեանքին, իբրև անուղ անոր իսկութեան, անոնց տիրացման համար ընել ինչ որ ամէն ոք կ'ընէ անուղին համար . — դուրս ելլել բնակարանէն, և քաջութեան, անյաղութեան համեմատ, տարողութեան և մանաւանդ պէտքին համեմատ հեռուներթալ, և վերադառնալ բոյնը՝ աւարն իւրացնելու, ներթափարասակու (élab.) : Եւ ստեղծագործութիւնը որքան տիեզերական ուղէ ըլլալ՝ կեանքը պէտք է այնքան ընդարձակ ըլլայ : Եւ ոչ ոք կը տառապի կեանքին համար այնչափ որքան բանաստեղծն ու ոչ ոք երջանիկ է աւելի երբ կ'ապրի, մեծ կենսամոլէն աւելի . վասնզի ոչ ոք կը սիրէ ապրիլ՝ այնպէս ինչպէս ինքը . պէտք է որ ապրի ստեղծողը : Գիտեմ որ Անհունին մէջ թեւածել թոյլատրող լուսամուտ մը կայ ամենուրեք, և միտքն է, խիղճն է այն . նոյն իսկ երբ վանդակի, դառազեղի մէջ զգայ մարդ ինքզինքը . ասիկա չի բաւեր անոր որ կ'ուղէ գործայնել, ապրիլ իր ներաշխարհը, իր երազներն, իր բոլոր վերացականութիւնն զգայարանել, թանձրացնել, հեշտասիրել կուզէ, և անոր որ իրերուն ընդհանուր օրէնքին ձգտելու հասի իրերուն պարագայական խորհուրդին կը միտի . կամ մանաւանդ Օրէնքը կը տեսնէ խորհուրդին քողերուն ընդմէջէն, որ ձգմարիտը կը սիրէ Գեղեցկին մէջէն, և թերևս Գեղեցկին պայմանաւ : Երեւակայութիւնը պէտք է յանդի թափառականութեան : Արքան ընտկան է որ բանաստեղծին դատականացած ախպարը արամագին ըլլայ յաւէտ, ինչպէս է կարծես սովորութեամբ . իր մտապառակերներուն իւրութիւնն ու ընդարձակութիւնը կը

պահանջներն որ ազատ ըլլայ ան շատերէ տուելի .
և ահա՛ ստէպ , կենսապայքարէն վեր՝ կեանքին
մեծ զրկեալը կը մնայ : Վայրապար չէ՞ որ կ'երա-
զեմ թափառիկ կեանքն , ու մախաղիս հօտը
կ'զգամ . , վայրապար չէ՞ որ կը տենչամ անոր վայրի
բոյրին մէջ՝ տարագնացութեան զաղափարին մէջ՝
հաշտութիւնը ընտ. թեան սիրոյն ու քաղաքակրթու-
թեան պէտքին , յոյզերու և անդորրութեան իղ-
ձերուն , քաղաքակեցութեան ու միանձնացման ,
զգայասիրելու և խորհրդասիրելու կիրքերուն : Եւ
սակայն չեմ դադրիր մամտալէ երբ առաւօտները
գողանշոյլ ու մարդարտափայլ ծագին լեռներուն
ետեւէն՝ և վերջալոյսները ծիրանեփայլին հոճինե-
րուն , հեռացայտ մինարէներուն ետեւէն , և հա-
մաստղայի երկնակամարը շողշողայ գիշերին լռու-
թեան մէջ , — բոլոր այն ժամերուն որ Անեղրու-
թիւնը կը յիշեցնեն , մամտալէ չեմ դադրիր հեռանա-
հեա տարագնացութիւններն , օրերով . , ցանցառա-
պէս ընդհատուած՝ գորովագին ու կարճատե կայ-
քերով՝ անժամօթ , խռովիչ ափունքներու վրայ
կամ սիրուած , ապրուած ափունքներու . , երբեմնի
սիրելի մը փնտուելու . , օղին մէջ հօտտակելո՛ւ՝ վերրա-
տին երազացած տարփանքի մը ժամանակները . . .
Ելե՛ք դրա . . , Ատելի՛նա , Վա՛սֆա . . :

Իռենա . . . : Ա՛հ , սակայն . անո՛ր գոյութեան
համար զգացած սարսուռիս մէջ բոլոր լեզակ հե-
ռատենչութիւնները կը ցնդին . . . ո՛վ իմ միակ
միատիքականութիւնս :





... ԱՐԵԻՒՅ շատոնց մարր մտաւ . և դեռ կը պարտիմ : Ճամբաներուն վրայ յետին անցորդները ցանցաւ , անձանաչելի , կ'երթան : Ամայի իրիկունին մէջ հեազհետէ աւելի մինակ եմ , և հեազհետէ կը լեցուիմ Անհունութեան մոյգ բալրջերանգ (mauve) թոյրով , համակ տարիանք , համակ սէր : Վերջին բոցավառումները մարեցան հեռաւոր հիր մզկիթներուն , մինարէներուն վերեւ , անհուն ամպասփիւռ Ստամպուլին վրայ . և վերջալոյսը դէպ ի ծովաժուարդ (outrem.) Մարմարան , ու ասդին , դէպ ի Վոսիորի լեւային առլեփները՝ վերջալոյսը վարդագոյն կը նուաղի , խաշխաշի հալքերով : Մինարէներուն ետին երկայն ծիրանի ծխիւններ ամպերու , երիզաձև երկարաձիգ շառայներ կը շեղագծուին , անդորր ու թոյլ սողելքով՝ ոսկեմոյգ արեւմուտքին խորը : Տարտամօրէն մանուշակ իրիկունն , անամպ , անապին , կը բարձրանայ , կուգայ արեւելքէն , ուր , հեռուն այտնող բլուրներուն վրայ ու անջրպետին մէջ այերային ծիրանի մը կը մարմրի , մինչ հոն անոնցմէ մէկուն զառիվայրին վրայ կը վառի , կարմիր՝ անյայտ քէօշկի մը պատուհանը : Բարձր ու հինօրեայ շոճիներն իրիկունին բոսորագոյն խորքին վրայ կը սփռեն իրենց կատարներուն

մութ սաւառնումը : Ա՛ն . վտախորին վերե դեղնա-
րակ սատափէ երկինքին մէջ ծագեր է Հովութն սատ-
ղը , և ա՛նա սողին , աղօսակի , Արքաորոսը կը փող-
փողի արդէն : Կերթամ , հիացմամբ , անծայրածիր
հերդաշնակութեան մը մէջ զոր զայսոյ հեռասուղ-
ւող օրը յաւաջացող գիշերին հեռ կը յօրինէ : Հեշ-
տապին կը հեռանամ աւանձնութեան մէջ . բլուրն
ի վեր կ'ելլեմ , դէպի գիշերը , դէպի գիշերացին սօ-
սախանները , բլուրին ծաւերուն մէջ : Իրիկուան
ստուերին մտր խաղանգութիւնը կը շնչեմ . . , միակ
յուզման մը , գորովի մը , ս'ի իմ Իսկնաս , միակ մեծ
խառվքի մը մէջ թրթ սայու խաղաղութիւնը կ'զգամ :
Սիւզը խոտերը կ'երերցնէ գեանին երեսը . խեղճ
մուկի-գարիներուն հասկերը կ'երերան , ու հուրը խօշ-
վարսակները կը սարսափն , արտերուն եզրը : Մթա-
գնող խրամներուն մէջ գաշափ ծաղիկները ստուերո-
տեր են , և անորոշ : Խրամներուն եզրին վրայ մանա-
հեխներն իրենց դեղնորակ ճիւղերը կը շարժեն : Անօսը
ու ընդհատ սրտիում մը կը հասի կը խաղաց զովապին
օղին մէջ . ա՛նա՛ չզճիկ մը կը թռչափ . գիշերամուտի
չզճիկը կը հասնի , թռթռապին , կուգայ , կ'անցնի ,
կը խատորի և վերջապոյտին վրայ կը խօշաղծէ իր
սեւուկ ելեւէջոս հիւր : Խորին կապոյտին մէջ բլու-
րին մթին եղանդ ոտները կը խարչափեն լեռան իրիկ-
ուան հովէն : Մարդ չկայ . երանի ինձի , երանի
թշուառութեանս : Հեռուներէն գորափ երդ մը կը
լսուի . մեզմ ու կուս , որնոյ օրէն խոխոջուն հուազն
հեռուներուն մէջ այս ժամուն երգող գորափ մը . ,
չզճիկը կը թռչափ ամայի գիշերամուտին մէջ . և
հովը գեանին երեսը կրսօսափէ , ծաւերուն մէջ կը
խարչափէ , կ'աճի , կը շնչէ , կը հեռանայ : Հէք մե-
հասէր որ անասման իրիկուսին մէջ կ'երթամ , յիմա-

բական : Ստուե՛ր ամէն բանի վրայ , կամ սէ՛ր իմ
մէջս՝ համասեռման անդորրութիւն մը ամէն բան
կը խառնէ Անհունութեան , ամէն բան անոր կը
վերաբերեցնէ : Իրիկունը միթէ ամէն բանի տիե-
զերականութիւնը չէ՞ : Ի՛նչ խորին է խաղաղու-
թիւնդ , Աստուած , Իրիկունն ի՛նչպէս զՔեզ կը յի-
շեցնէ . ի՛նչպէս , արդէն , սկիզբներն ու վախճան-
ները յաւիտենութիւնը կը պատմեն :

Ողորմեա , Տէր , ամենայն աշխարհի , վշտացե-
լոց , ճանապարհորդաց , ապաշխարողաց , և հոգ-
ւոցն հանգուցելոց : Ինչո՞ւ համար , մե՛ծ ազօթող
որ ես՝ , չես յիշեր տարիաւորները : Միթէ օտա՛ր
են անոնք այն տողումէն , անոնք որ , անգիտակից ,
յաւիտենութեան կը ձգտին՝ , ներդաշնացման ,
կատարելացման գերագոյն վիճակի մը զհետ անձ-
կագին : Ո՛վ Տէր , ողորմէ տարիաւորներուն , թա-
փառական ու սարսազին տարիաւորներուն . վասն
զի իրիկուն է . վասնզի Քեզի յառելու կատարեալ
եղանակ մ'է Սէրը :

Ահա կ'երթամ , ամայի անասման Իրիկունին
մէջ . և բանաստեղծն եմ , և սիրահարը :

Անեզրութենէն թափանցուած , անեզրութենէն
այսահար կ'երթամ : Ասաղերուն հեռաւոր նշոյլը ,
անշարժ ծառերուն մեղմ շշնջիւնը , խոտերուն դող-
դոջումը , իրիկունին մարող բոսորը , զենիթին վրայ
սահող ստուերի այերովկէանին ծաւալումը , լու-
թեան լատարդ ու խորին տարածութիւնն , ու
հէք գորտ քուրիկիս ալօթքը հեռուն , ահագին
ներդաշնակութիւնը որ կը պարուրէ զիս՝ , ա՛լ չապ-
ր՛ելու սրախումներ , հառաչալիր թելադրութիւններ

կը հոսեն ցաւագին մտքիս մէջ : Իմ բնազդիս լաւատեսութեամբը սիրած էակս ա՛լ իմ յուետեսութի՛ւնս է միթէ :

Անոր մեղամաղձութիւնը , երկբայականութիւնը , ստուերացումը կը տիրէ արտում , երկբայական , գիշերային էութեանս : Իռենային անաշխարհայնութիւնն ուր կը ձգտի ընկուզուելու իմ կիրքս , տակաւ միգամած տեսակէտ մը կը դառնայ իմ կեանքի հայեցողութեանս առջև . կարծես կը ծիւրի անիկա անորակելի անդրագոյն բնագաւառի մը հայրենախտով . և աշխարհը՝ ցորչափ չի սքողուիր ստուերով՝ ցորչափ չի նքնմաւորի՛ր և աստղայի Անեղրութիւնը չի գիտնար՝ , աշխարհը , ցորչափ իրիկուան հայեցողութեան մէջ չի խառնուիր Անհունին՝ , դժնդակ տեղ մը կ'երևայ ինձի որ անոր հողւոյն նոճեւղացքով կը յափշտակուիմ իր երազանքն ի վեր : Ներսս ամէն ինչ կը կորսուի , կը հրահալի անոր զգայնութեանը մէջ . անոր համար կ'ըլլայ անով կը բացատրուի , անոր կը յանգի , իր կուտութեան հիաստակալի ստուերին : Սիրտս ճշմարտութեան տեսակէտ մ'է . Իռենան սկզբունք մ'է . էութենէս բղխած անդրժելի սկզբունք մը : Յաւիտենական անդրեսութեանս ոգին է . կուսեղութիւնը . ա՛յն է ինչ որ եմ , ինչ որ կ'ըլլամ . իմ տառապանքներովս ու երանութիւններովս բաղադրուած հիակերտուած մեղեդի , ներաշխարհէն ելլող միաձայն ներդաշնակութիւն . ո՛վ իմ ներաշխարհիս գոյութեան շքեղ ու ստուերալի իմաստը : Պէտք էր որ իրօք , մարմնովին , էովին կորսուէի անոր անձին երանականութեան մէջ . անոր նշանակութեան խնկարոյր հեշտութեանը մէջ : Երաժշտական կենդանութեանը մէջ որ անկէ կը բղխի , կ'եթերհոսի

իմ մէջս, ու պատյա կուսայ հիանուազ սրտիս՝
խաւարին էութիւնս իրրե փայլակներու մէջ ինք-
նակորոյս կը բորբոքի. ամէն ինչ ներսս յանկարծ
կը տողորուի, կը լուսազանգուի անով. ամէն բան
գիւնջը կ'ըլլայ յանկարծ, յաւերժակենսութեան պա-
կուցիչ զգայութիւններու մէջ որք հանճարի լուսե-
ղէն ու համապարփակ վայրկեաններուն կը նմանին :
Եւ կ'երթամ փոսփորափայլ, Իսենա, Իսենա,
քենէ եկող արփային շառաւիղներէ հալածական
թափանցուած, քենէ եկող անդրամանիչակ ճառա-
գայթներէ շնչապառ փոսփորափայլիլ զգալով, ,
վառուելու, նշուլարձակելու հրեշտակային երա-
նութիւն մը, հոգեւին աստղափայլելու շլացքներ
զգալով :

Ձի գիտեր թէ ո՛ւր եմ, ի՛նչ կ'ըլլամ : Արրս-
փունս ամայի գիշերամուտին մէջ, միայնակ, ո՛վ
իմ մեղամաղձիկ խաղաղութիւնս, զքեզ կը տառա-
պիս, զքեզ կուլամ :

Իմ անձնաւորուած, իմ իտէանձնուած երկինքս,
գիշերս, ունենամ, ցնորակոծ արբենամ զքեզ .
կոյս մեղամաղձութեամբդ արբչուի, հիանաւանչ
անդորրի վայրենի խռովքս. մի՛ թէ իմ յաւեր-
ժական իրաւունքս չես դուն. դուն որ իմ կա-
տարելացումս ես, իմ սրբացումս, իմ հոգիա-
ցումս. մի՛ թէ պէտք չէ՛ որ խառնուիս, տարրուիս
ինձի. և ա՛լ ուրիշ կեանք չունենաս՝ իմ Եսս ըլ-
լալէ զատ. ուրիշ ձե՛ իմ հոգիս ըլլալէ զատ. ու-
րիշ վայր չունենաս բայց եթէ իմ անհուն անէու-
թիւնս. վերադարձիր ինձի. իմ արիւնէս, իմ մտա-
ծումէս, իմ հոգիէս ըզխած երազ. անյիշատակ ա-

տեններու մէջ ինձմէ խնկաթեւած հողի . կը ճանչնամ քեզի . միթէ կը կարծես որ մուցած ըլլամ անցեալ կատարելութեանս ատենի զմայլումս , աղօթքս որմէ դոյադար դուն . միթէ կրնամ մուսալ իմ կենդանութիւնս . թօշնած վարդը միթէ չի ճանչնար իր իւղի շիթը . թօշնած նարնջածաղիկը միթէ իր ներուակը չի՛ ճանչնար : Չքե՛զ հեացած , զքե՛զ միայն եղած՝ ե՛ս միայն կ'ըմբռնեմ զքեզ . ըմպեմ , շնչեմ զքեզ . իւրախառնեմ զքեզ . վերատինս նոյնանամ քեզի հետ . իմ երանութեանս անցեալիս հոյզը . ո՛վ իմ միւռնուացումս :

Շրթունքներս քու շրթունքներուդ մերձեցնելով , հպելով փայլատակելէ առաջ , թափանցկացած , թալկացած , շնչեմ զքեզ . հիաստսկմամբ զգամ զքեզ . , իմ խկութիւնս , իմ արփս , երանականութեանդ հասած , մերձեցած ըլլալու զգայութենէս դողդոջեմ , լուսնոտիմ , սարսափահար իմ մահեշտանքս խայտամ խորհուրդիդ արբեցնորոզ բոյրին մէջ : Քու ճշմարտութենէդ , քու դոյութենէդ աննանամ : Միթէ կարելի բան է որ իմ մատներս հպած ըլլան քեզի . միթէ կարելի է որ լսած ըլլամ ձայնդ , ու շունչդ շնչած , քու բոյր խմած ըլլամ , քու բերանդ համբուրած ըլլամ . ներէ իմ հէք կարօտիս . իմ պասքումիս . անյագենալի երջանկութիւնս , անյագենալի աղատագրումս , զերծումս : Իրա՛ւ , համբուրած եմ ես քու ծիրանի բերանդ . վա՛խ : Ներէ՛ քեզի հպելով զքեզ մարմնաւորած ըլլալուս : Ես վայելեմ զքեզ , այնպէս զքեզ շնչելով ինչպէս աղամանդը լոյսը կը շնչէ . ինչպէս նոճին գիշերը կ'ըմպ' : Ա՛հ . ո՛րքան քաղցր ես . և

ինչպէս կը տխրեցնէ՛ զիս քաղցրութիւնդ : Քու
յուշացմանդ պէս քաղցր ես դուն . զքեզ կը սի-
րեմ իբրև թէ աս յաւէտ յուշացած ըլլայիր . կը սի-
րեմ զքեզ իբրև թէ մեռած ըլլայիր :

Անգամ մը նայուածքս ձեռքիդ հանդիպեցաւ .
Քու ձեռքդ էր , տարօրինակ բան . հալած , սրժ-
գոյն , տարտամօրէն կանաչորակ ձեռք մը . նայաւի
ալբասարէ ձեռք մը , անտառային ստուերով մը
սքողուած , չեմ գիտեր ինչ էր ան . և աչքերս
լեցուեցան , արցունքս պղտորեց նայուածքս , և
լոյսին մէջ հոսեցաւ . քու գաղափարդ էր ան . հո-
գիս ողողող գաղափարդ . ճանչցա՞ր զինքը , ո՛վ
հրեշտակս : Ի՞նչպէս կը ժպտիմ , մտածելով որ ան-
տեղեակ ես ըրածներէս , գիշերը , երբոր լուսաւոր
պատուհաններդ տեսնեմ : Գիտե՞ս թէ գաղտագողի
կանգ կ'առնեմ ամայի փողոցին մէջ և պատու-
հաններուդ նշոյլին կը նայիմ , ամչնալով կը կենամ
հոն քու պատուհաններուդ նշոյլին նայելու հա-
մար . զքեզ չտեսնելու , զքեզ զգալու համար :
Պատուհաններուդ լոյսին զմայլումը դիտելու հա-
մար : Յետոյ կ'երթամ նոճիներու սենեակիս խաւա-
րին մէջ , սենեակիս բոլոր տարաբաղդութեանը մէջ
նստելու : Ըսե՞մ , հրեշտակս , թէ ինչ կ'ընեմ ես
այն սեղը : Ծուռնկի կուգամ . կը կծկուիմ . գլուխս
մահիճիս կը կրթնցունեմ , դէմքս գրկած , տառա-
պագին , քու վրայ մտմտալու համար : Մտքիս
լոյսերուն , յորձանքներուն մէջ կը կանչեմ զքեզ ,
կ'ընկլուզիմ , կը մղձկիմ քու ծանօթութեանդ շար-
շարանքին մէջ , ծանօթութեանդ խելացնոր սօնին
մէջ . սիրտս ցաւալի կերպով կը տրոփէ . պաղա-

տազինն կը մտածեմ քու վրադ : Ի՞նչ կը խնդրեմ
քենէ . ոչինչ . ոչինչ . իմ յաւիտենական ոչնչա-
ցումս . իմ կորուստս , իմ ծխութեամբս ու ցնդումս ,
վախճանս . և քու ծագումդ , զեղումդ իմ անէպո-
մանս մեծութեանս մէջ : Քեզի կը պաղատիմ որ . . .
մի՛ թէ ես գիտե՛մ ինչ որ կը պաղատիմ քեզի . զի՞նչ
կը պաղատիմ , ո՛վ իմ հոգիս . շնչասպառ և սարսու-
գին՝ բան մը չեմ ուզեր քենէ , կուլամ որ ըլլա՛ս
դուն . ահա ասանկ կ'աղօթեմ քեզի , ծնրադրած .
և ծունկերս ցաւ չեն զգար . գլուխս չաճիւնամար ,
կուրծքս չի կտորիր : Արդեօք այս աղօթքը զքեզ կը
հեղացնէ՞ . արդեօք զքեզ մաքիս մ'ջ կոչելով ,
չքանալով , զմայլած սպառելով՝ որպէս զի հոն
գաս դուն , չե՞մ բռնարարեր քու աղատութիւնդ .
քու կուսութեանդ խորհուրդը չե՞մ անարգեր իմ
արու թշուառութեանս մէջ կանչելով տեսիլդ :
Մի՛ թէ դուն կրնա՞ս աղարատիլ ասով , իմ լու-
սաննիւթ ոգիս , ո՛վ իմ արցունքովս ստեղծ-
ուած ստուերանոցս . իմ արցունքիս ստուերանոցը
սարսուռով , արցունքիս բարոյականովը բանաս-
տեղծուած երազս : Ի՞նչ ուրիշ բան չես . քու
մարմինդ ուրիշ բան չէ այլ քու հոգիդ , այլ
իմ հոգիս : Իմ տառապանքս , քայքայումս՝ կը
համադրէ զքեզ , ինձմէ լուռ հառաչներ կը քակ-
ուին , էութեանէս պատառներ կը բրդին զքեզ կաղ-
մելու , զքեզ աւարտելու համար . ինձմէ սպառե-
լով կտրուած լար մը քու դաշնակութեանդ մէջ
զմայլելի շեշտ մը կ'աւելցնէ . իմ տազնապէս ,
մոլորումէս կ'ելլէ երկնային խաղաղութիւնդ . ըզ-
մայլելութեանդ խաղաղութիւնը : Արքան շնչաս-
պառիմ , այնքան հոգի կ'ըլլաս դուն . կը հասնիմ ,
կը ցամքիմ , և կ'երկնածաղկիս դուն . ինչպէ՞ս իմ

խորին աշունս քու հեշտաբոյր գարունդ կ'երագէ ,
իմ փառութիւնս ինչպէս քու տաղուրային բոյրդ կը
սաստկացնէ . դուն իմ անէացմանս երանաւէտ
կեանքն ես . միթէ իմ գերեզմանէս բուսած դրախ-
տաբոյր ծաղիկ մը չն'ս դուն :

Եղիբ , իմ ցաւագին գոյութեանս մէջ քու
գոյութեանդ ժպիտն իբրև անդրաշխարհային յոյս մը
հոսելու . , գոյութեանդ հեռադու դաշնակութիւնը
հեղլու իմ բուխ լուութեանս խուռչներուն , իմ տա-
ռապանքի բաւիղներուս մէջ , ուր վայելններու
մենաւոր արձագանգ մը կ'երկննայ , անլսելի , ու
յաւերժական . , եղիբ , եկուր զիս արբշուութեանց
առաքինականութեամբ նորաստեղծելու . ներշնչ-
չումս , երազս , իմացականութիւնս . , ո՛վ իմ մե-
լամաղձիկ փառքս . , իմ իմաստս , իմ թրթռալու ,
ըլլալու գիշերային պայմանս . առ յաւէտ իմ մէջս
իջիբ , և մի երթար , իջիբ . , հոգւոյս անուշաբոյր
խորհուրդին մէջ , դուն որ անոր ոգին ես . ինչ
դող պիտի բղխի անկէ երբ հոն թափանցես դուն :
Քու գալուստդ , քու էջքդ տօնելու համար արբ-
շուութենէ մեռնի՛մ , ինչպէս դաղջութեան շառա-
ւիղի մը մէջ կը մեռնի արցունք մը :

Եղիբ ինչպէս որ ես , ինչպէս որ ծնրադրած
բանաստեղծութիւնս , իմ խակութիւնս կ'զգայ թէ
ես . մութ ու քաղցր եղիբ , և անուշահոտ՝ գար-
նային իրիկուան բոյրէ ստուերի մը պէս , զոր ճե-
նողկուզիներուն , լեղակներուն մելանուշութիւնն ,
այծտերուլիներուն ամօթլեածութիւնը , զոր յորդ
վարդերուն ծիրանի արբշուութիւնը լուութեանս մէջ
խորհրդածնին : Գարնան գիշերամուտի ստուերի մը

պէս զգլխէ զիս երազանքիդ ամօթլեած ու վըշտագին երանարաղծութեամբ, արամութեանդ մեղեդիով արցունքներու մէջ թալացուր, խաղաղէ հոգիս. սպառխմ, հանդչիմ, նիրհեմ չքնաղ արամութեանդ երանականութեան մէջ. քու արատօրիդ մէկ աննշմարելի շիթին մէջ հալին բոլոր տառապանքներս, ու բոլոր սգեղութիւնս ու անբարոյականութիւնս հալին, անէանան. իմ բոլոր Եսս անով օծուի. քու գոյութեանդ, քու կուսական տխրանուշութեանդ մէջ մկրտուի, նորաստեղծուի: Ներյատուկ, էական արամութեանդ նուիրականութեամբը պարուրէ իմ մոլեգնութեանս ցաւը, իմ բորբոքումս, սոչորուն խանդս սուղէ, ընկղմէ անուշաբոյր գիշերիդ պարուրման մէջ, իմ բոլոր բոցավառ առնականութիւնս ստուերային ու արտասուալի շնորհիդ մէջ քնացուր, ինչպէս օրը կը նիրհէ, կը մեռնի խնկաբոյր ատողալի գիշերին մէջ. ո՛վ իմ մահնշտանքս. վերջալոյսին պէս հատնիմ՝ զքե՛զ ըլլալու, քեզմով վերկենցաղելու համար, ի քե՛զ անէանամ. թշուառութեանս վերջին հառաչանքը, թափառայած կկուի վերջին հեծիւնը՝ աստղեր լացող լռութենէդ զմայլած հատնի, և արշալոյսի պիւլպիւլին պաղպաջուն հիացմամբը ծագի երանութիւնս: Վերջալոյսին պաշտամունքովը, զոհրայրքո՛վը, անհուն շառագոյն ծարաւովը կը տենչամ ստուերիդ, լռարատօսը, հեւարուրող ըստուերիդ մէջ կ'ըղձամ մարիլ, և յառնել. լռութեանդ ականակիտ արցունքին մէջ ընկղմիլ. մրտաբոյր անուշութեանդ դաշն հառաչանքին մէջ այերանալ. ո՛վ իմ կոյս յաւիտենութիւնս: Չե՞ս լսեր տրխրածայն ունացող սէրս որ կը կանչէ քեզի: Ահա գիշերը եկաւ. վերջալոյսը դեղներ է. վերջալոյսը

կ'ոգեւիարի . ա՛հ , վերջալոյսին իաղաղացումը , հոգիացումը , գիշերին սարսուռայի հեշտութեան մէջ . . :
Ինչո՞ւ հոս եմ դեռ . ինչո՞ւ այսքան իրական եմ
դեռ ես . մինչև ե՞րբ պիտի խռովի , սոսկայ հոգիս .
անաւասիկ օրը սպառեցաւ . երկնային սիրուն-
ւոյն ծոցը . և սակայն որքա՛ն վերջալոյսներ մարե-
ցան այսպէս . և ես որքա՛ն կանչեցի դայն :

Երթամ , ծածկաբար անոր մերձենալու . լուսաւոր պատուհաններն ի վեր սեւեռուելու . անոնց
հայիմ : Մի՛ թէ յանցաւո՛ր եմ : Խաւարամած սենեա-
կիս մէջ երթամ ծունկի գալու . սիրտս տատանի ,
բուրվառի պէս . և հոգիս խունկի պէս ժայթքէ
անկէ՛ մինչև որ հասնի . մինչդեռ սիրտս խելացնոր
դեռ ճօճի , դեռ ճօճի , մինչև որ կենա՛յ : Ա՛հ , լուսինը
կը ծագի լաժուարդ գիշերին մէջ . աստղերը կը թա-
լանան հաճոյքէ . ի՛նչ գեղեցիկ գիշեր , ի՛նչ աղուոր
կը մեռնուի հիմա . ո՛վ իմ Իռենաս , վասնզի ի՛նչ աղ-
ուոր ըլլալու է հիմա սէրը : Շոճիներուն խորին մըր-
մունջը կ'անցնի լռութեան մէջէն , լուսնագիշերին
մէջէն . ալեգոյն ու խնկագոյն , հոգիի գոյն լուս-
նագիշերին : Ո՛հ այս ձայնը . այս սիրելի ձայնը .
մի՛թէ Հալքիի անտառին շունչներէն առաջ չէի
ճանչնար ես այս ձայնը . շա՛տ , շա՛տ առաջ . . . :
Ահա նորէն կ'անցնի , փառաբանող , յաւիտենապէս
մեռնող մրմունջը : Կարծես թէ ինձմէ կ'ելլէ . խո-
կուն անաշխարհային սարսուռ . իմ տրամութենէս ,
իմ լարերուս խորհրդագգածութենէն կը հառաչուի .
իմ դաշնաւոր սպառումս է . իմ անդուլ մահէս , իմ
արբչիւ ու անմահ ոգեւարէս կ'իթերանայ . և բո-
լոր անցաւոր տենչանքներուն երգերէն կտքը յի-

տին ու անհուն տենչանքի մը ձայնն է. ա՛հ. առ
դամանդեայ, արփային մաքրութի՛ւնը զոր կը պատ-
մէ ան. երանազեղ երկրաժեշտը. մեծ լուսատարր
գիշերը. մեծ աղջը. մահուան, սիրոյ կուսութի՛ւնը՝,
լուսնագիշերին բիւրդապալատին, եթերէ պաղպա-
ջունքին մէջ: Ո՛վ իմ Իսենաս...:

Ահ, հա՛, ա՛հ է... շոճիին բարձունքը առ-
կախ, սարսուզին. Իսենան. լուսեղէն, թա-
փանցիկ, արփային, և իրական, իրական. իմ հոգ-
ւոյս աղջէն, լուսնագիշերէն հիակերտուած կոյսը,
վերեւ ծխաափիււ. , փայփայանքէ, սիւզէ շղարշի
մը մէջ պարուրուած, կերպարանքը ամպագոյն,
բուրումնային. , գիշերագոյն մազերու վէտքերով
խորհրդապսակուած. , անըջօրէն, հեւօրէն մե-
ղոյշ շրթունքն երանութեամբ նուազագին, անէա-
գին. , սքողուն արտեւանունքէն իմ պշնումիս
մէջ իր հայեցուածքին գիշերի օծութիւնը կաթե-
լով... — շոճիին սօսաւիւնին մէջ սաւառնած,
իր հոգեղինութեան բոլոր երկնայնութեամբը զուտ,
ու վերժ, այնպէս ինչպէս որ գոյացած է հոգիէս,
ինչպէս որ բղիւսած է Աստուծոյ Հոգիէն, և ինչպէս
իմ նոյն հոգիս զգացած, ընդհնմարած էր զայն,
իմ երկնային քոյրս: Եկա՛ր. իմս ես. այնպէս չէ՛.
կը սիրե՛ս զիս... Անհունին կորիւնը, հակայորդին,
որ կը կանչէր քեզի. կը լսե՛ս սրախ թոպումը. ես
քեզի կը ճանչնայի շատոնց. դարերէ ի վեր... Նայէ
ինչ պիտի ըսեմ քեզի. կը պաղապիմ քեզի. զքե՛զ
կը տառապիմ, զքե՛զ կը հեծկլտամ. զքե՛զ կը դո-
ղամ. մահուան պէս իրականացող բաղձանքս. մտիկ
ըրէ... զքեզ այնքան ատենէ ի վեր կը սիրեմ. իմ

ճշմարիտ, ճշմարիտ երանութիւնս. նայէ, Տիեզեր-
քին ներկայութիւնն է. . . թող անհուն թափանցիկ
զիշերը մեր առագաստն ու խորանը ըլլայ. մեր
անամունչ գրկախառնումը՝ թող մեր պակուցեալ
աղօթքն ըլլայ առ Աստուած. . . :



Վ Ե Ր Զ

Գ Լ Խ Ա Խ Ո Ր Վ Ը Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Էջ	29,	վարէն 10 ^{րդ} տղ.	— ձայն մըն որ պէտք է ըլլայ ձայն մ'է		
	» 81,	» 15 ^{րդ} » .	— <u>ու աշերով</u>	»	<u>ու աշներով</u>
	» * »	» 9 ^{րդ} » .	— <u>յամօրէն</u>	»	<u>յամօրէն</u>
	» 143,	» 7 ^{րդ} » .	— <u>խորշումները</u>	»	<u>խորշումները</u>
	» 155,	վերէն 4,5 ^{րդ} » .	— <u>կիկին</u>	»	<u>կիրակին</u>

٩١٦٦ ٤ ١٢ ٢١٤٤

معارف نظارت جلیله سنك ٣ ذی الحجہ ٣٢٣ و ١٦ كانون ثانی ٣٢١
تاریخی و ٤٦٧ نومرولی رخصتنامه سیه طبع اولمشدر